19634

[illegible]Վ. Ա[illegible]ՆՅԱՆ

ՎԵՊ
ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿՌԻՎՆԵՐԻՑ

ԿՐԱԿԵ ՈՂԱԿԻ ՄԵՋ

891.99
Գ-57

ՊԵՏՀՐԱՏ • 1930 • ՅԵՐԵՎԱՆ

19 NOV 2010
20 JAN 2006
891.99
Ա-57

ԿՐԱԿԵ ՕՂԱԿԻ ՄԵՋ

ՎԵՊ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿՌԻՎՆԵՐԻՑ

Վ. ԱՆԱՆՅԱՆ

ՊԵՏՀՐԱՏ * 1930 * ՅԵՐԵՎԱՆ

1.02.2013
19634

Շապիկը յեվ նկարները
ԱՐՍԱՐԱՏ ԳԱՐԻԲՅԱՆԻ

Պետական գրադարան
Гос. Библиотека
ՀՍՍՌ–Арм ССР
им. А. Мясникяна
Ա. Մյասնիկյանի անվան
21006-59

Հր. № 1452
Գրառեսվար № 6011 (ր): Տիրաժ 3000
Պետհրատի առաջին տպարան Վաղարշապատում:
Պատվեր № 160

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ՅԵՐԿՈՒ ԽՈՍՔ

<u>ՀՈԿՏԵՄԲԵՐԻ ՍԵՐՆԴԻՆ</u>

Սիրելի պատանիներ. *Այսոր նոյեմբերի 29-ն ե։ Այսոր ձեր կյանքն ավելի զիլ ե, շարքերն ավելի մարտական։ Խորհրդային պայծառ արեվի տակ արնանման ձեր դրոշներն են փողփողում։ Անհուն բերկրանքով, վարակող վոգեվորությամբ մեր պայքարի ու հաղթանակների* տասնամյակն *եք տոնում։*

Սակայն հազիվ թե բոլորդ գիտեք, վոր այսորվա ազատ ու պայծառ կյանքը չկար 10 տարի առաջ։ Ձեզնից շատերը չեն ապրել քաղցի, զրկանքի ու թշվառության տարիները։ Սակայն ձեզնից շատերն են այն որերին թոթով լեզվով «հա՛ց»... կանչել։ Շատերն են փոքրիկ տոտիկներով սողացել սարսափահար փախչող ամբոխի վոտների տակ, մինչեվ կարմիր նոյեմբերը, յերբ կուտակված զայրույթը պայթեց առավել ուժով յեվ ոդը ցընդեցրեց բռնակալ մաուզերիզմի լուծը։

Այսորվա գեղեցիկ կյանքը մենք ձեռք բերինք հերոսական պայքարի ու արյան գնով։

Ղամարլվի, Նոր Բայազետի, Դարալագյազի ֆրոնտներում քաղաքացիական կռիվների ծխի ու հրի մեջ ընկան մեր լավագույն ընկերները, վորպեսզի դուք աճեք, բոյ քաշեք ու մի նոր յերջանիկ աշխարհ կերտեք։

Յես փորձել եմ մի քանի եպիզոդներ տալ հերոսական այդ պայքարից։ Սա առաջին փորձն ե, գրված հապճեպ յեվ հետեվապես զերծ չե թերություններից։

Վեպի հերոսները իրական *են, դեպքերը՝ նույնպես։* Յես կուզեյի,—սիրելի պատանիներ,—վոր դուք այդ հերոսների նման կռվեք մեր կյանքի բոլոր ֆրոնտներում *յեվ ամրացնեք, անխորտակելի դարձնեք այն նվաճումները, վորի համար հորդ արյուն թափեցին Յենոքը, Ակոբը յեվ բազմաթիվ անանուն հերոսներ Դարալագյազի լեռներում, Ղազախի անտառներում յեվ Վեդիի մերկ ու գորշ բլուրների վրա...*

Վ. ԱՆԱՆՅԱՆ

Նոյեմբեր, *1930* թիվ։
Յերեվան

ԲԱՐՁՐԱԲԵՐՁ ԼԵՌՆԵՐԻ ԳՐԿՈՒՄ

ՀՈՎԻ ԿԱՐՈՏԸ

Այժմ յես հաճախ, շատ հաճախ եմ հիշում մեր լեռները:

Այս ամառ, յերբ արևը զենիթից կրակ էր թափում, յերբ գրասենյակում քրտինքը ճակատիցս ծորում էր թղթի վրա և յերբ գրասենյակ մտնելու ժամանակ Հրաչին տեսնում էի թառամած տերևի նման ընկած բազկաթոռին, ավելի շատ էր բորբոքվում իմ մեջ հովի կարոտը, մեր սարերի կարոտը:

Յեվ վո՞նց չկարոտես: Անցնում ես բուլվարով: Ահա կանաչը, ծաղիկները. տենչում ես ծառի հովում խոտերի մեջ թավալել, սակայն ինչ վոր փշալարեր իրենց անողոք ու մերկ ատամներն են քեզ ցույց տալիս: Արձակուրդ ես ստանում և կտրում հարյուրավոր վերստեր. ահա Սոչին, Յալտան, Անապան, ահա Ղրիմի անտառապատ ափերը: Սակայն նույն փշալարերը, թերևս ավելի սուր ատամներով բաժանում են քեզ ահա այն ափերից, կանաչից, մարգագետնից: Յեվ բորբոքվում է քո մեջ լեռների կարոտը, կարոտը գեթ մի շաբթով բնության գրկում հանգստանալու՝ ազատ փշալարերից, զգուշացումներից, տուգանքից:

Թավալի՛ր, վորքան կուզես...

Յեվ յես հաճախ եմ մտքով սլանում վաղուց անցած իմ պատանեկության անհոգ որերը՝ կանաչազարդ լեռների և անդնդախոր կիրճերի գրկում...



ԱՌԱՋԻՆ «ՋԱՐԴԵՐԸ»

Հիշում եմ մեր օբան[1]։

Վրանների կորագիծ շարքը, չայլի բռնած կանանց նման բռնել են հնուց, շատ հնուց հանգած հրաբխի բերանը։ Հրաբխի բերանը մեր պռունգը կոտրած քերեգանին է նման՝ մեջը փոս, յերեք կողմից չեգերված վոչ բարձր ափերով, իսկ մեկ պռունգը բաց։

Այդ բաց պռունգով եր, վոր ամեն առավոտ դեռ «աղամամուլթին» դուրս եր գալիս գոմեշների նախիրը, իսկ քիչ հետո յել՝ տավարն ու հորթերն առանձին-առանձին։ Այդ բաց պռունգով եր, վոր աղջիկները խմբերով գնում եյին «չուլթ քարի» սառնորակ աղբյուրից ջուր բերելու։

Յես հորթարած չեյի, բայց շուն հաչեցնելը ինձ այնքան մեծ հաճույք եր պատճառում, վոր դեռ լույսը չբացված վեր եյի թռչում անկողնուց, հագնվում, վրանի կողքով վազող վճիտ առվակում «չոփ-չոփ» լվացվում և չոմբախն ուսիս վազում եյի դեպի հորթարած Պետրոսի վրանը։

— Աղա, ճաշ դառավ, վեր կացեք է,— բղավում եյի ու չոմբախի ծերով բզում նրանց դռանը։ Յեվ մինչ Պետրոսը կհագնվեր, ընկերոջս՝ Հաննեսի[2] հետ շներին հաչեցնելով սկսում եյինք հավաքել գոմեշները։

[1] Օբա կամ բինա — վրանների խումբ սարերում, ուր ամառը ապրում են անասնապահները։

[2] Հաննես — Հովհաննեսն է՝ կրճատած։

Հաննեսի հայրը՝ գոմշարած Ամպակը շատ եր գոհ, վոր մինչև հացը բաշխում կապելը մենք գոմեշները հավաքում ենք, բայց միշտ սաստում եր շներին թակելու համար։

— Այ լակոտներ, ախր փորներդ կթափեն է...— տրնքում ու դժգոհում եր նա։ Ո՞վ է լսողը։ Ճիշտը պիտի խոստովանեմ, վոր Հաննեսը թեև ինձանից յերկու տարով փոքր եր (կարծեմ նա այն ժամանակ հազիվ տասը տարեկան լիներ), բայց նույնիսկ Պավլեյի Դամբարից չեր վախենում։ Իսկ Դամբարը, վագրանման այդ գազանը ամբողջ օբան ահի մեջ եր պահում։

Հիշում եմ մի օր, Հաննեսը Մելոնց Յեգորի վրանի առաջից գոմեշները բերում եր։ Նա մի ձեռքով բռնել եր գոմեշի պոչից, մյուս ձեռքի փայտով պաշտպանվում եր շնից։ Զառիվայրով իջնելիս շունը ռխել եր կոպալի ծայրն ու կատաղած քրքրում եր փայտը։ Հաննեսի վոտքերը մի կակող թրքի վրայով սողացին ցած ու վայրկենապես փռվեց գետին։ Շունը մի ակնթարթում ընկավ նրա վրա ու պատառոտեց աջ վոտքի վերի փափկամսերը։

Արխասիրտ պատանին իրեն չկորցրեց. նա բռնեց շան բկից, յետ շպրտեց, վեր թռավ տեղից ու փայտով մեկ-հինգ շան ատամները ջարդելով, տարավ իրենց վրանը կոխեց։

Գնացի նրանց վրանը, տեսնեմ մայրը ջուր է տալիս։

— Խմիր, բալա, խմիր, վախդ կտրի.— ասում է ու խնդրում հարևանուհուն.

— Աղջի, Սոնա, արի աղոթիր յերեխիս, վախն անցկենա։

Սոնան աղոթեց, վերքի վրա դրեց շան մազը և մի կիսած լոբի ու կապեց։

Մի քանի օր Հաննեսը չերևաց։ Մենակ եյի շներին ջարդում, դրա համար ել հաճախ անիրավներն ինձ գոռում եյին, յերբեմն ել շորերս պատառոտում, բայց մի կերպ ճղում եյի։

— Հեյ գիժի, Հանես հա՛, Զանգին առանց Զրանգիի ինչ անի։

Մի առավոտ, դեռ լույսը չբացված՝ զարթնեցի ինչ-որ աղմուկից։ Զաթանի արանքով մեղմ քամու հետ շների կատաղի աղմուկն ու մեկի գոռոցն եմ լսում։ Գլուխս հանեցի ալաչուխի[1] ծակով, տեսնեմ շների մի ահագին բոլուկ վրա լեն տվել խեղճ Ամպակին։ Մինչև յես տրեխներս կհագնեյի՝ դիմացի վրանից շապկահանց դուրս պրծավ Հանեսը, կոպալը վերցրեց ու առավոտյան շաղը բոբիկ ոտքերով տրորելով, հասավ հորը հենց այն րոպեյին, յերբ շներից մեկն արդեն Ամպակի չուխի փեշերը հավաքած՝ քաշ եր տալիս դեպի ցած, իսկ մյուսները արդեն վճռական «գրոհի» եյին դիմում։

Զոմբախը փռաց ոդի մեջ, լսվեց մի քանի աղեկտուր հաչոց ու շների խումբը ճնգստալով ու կալանչ-կալանչ գալով ցրվեց։

Հանեսն ազատել եր հորը։

Վողջ որան Թամաշի յեր դուրս յեկել հերոս մանուկին։

ՍԱՌՆՈՐԱԿ ՋՐԵՐՈՒՄ

Հաճախ եր պատահում, վոր կեսորվա շոգին գոմեշները քշում եյինք սարի լանջով ցած դեպի ձորը, ներքևում աղմկող լեռնային գետակի ափը։ Մի տեղ գետակը ուժգին թափով ժայռից թափվում եր ցած, խփվում քարերին, հազարավոր կաթիլները ցրում ոդի մեջ ու գեղեցիկ ծիածան կապում։ Ջրվեժի տակի գյոլի առաջը ճմբերով ու քարերով ամրացրել եյինք և գյոլն այնքան եր խորացել, վոր մեզ ծածկում եր։

Հիշում եմ, Հանեսը միշտ Մելոնց Լաչինի պոզերի վրա նստում եր ու քշում գյոլը։ Շոգից նեղված գոմեշները մեծ

[1] Ալաչուխ—հատկապես վրանի համար պատրաստած հաստ թաղիք։

հաճույքով թավալվում եյին սառնորակ ջրերում, փնչացնում, իսկ մենք մերկ մարմնով լողում եյինք նրանց արանքներում, թռչում մեջքներին, նստում պոզերի մեջտեղը կամ թե «հակլակուկի» խաղում։

Բայց ավելի հաճախ գոմեշները թողնում եյինք ջրերում ու գետակի ժայռոտ ափերով իջնում ցած՝ կիրճերը ձուկ բռնելու։

Աշունքամտին առավոտները Հանեսին յես խեղճ ու կուչ յեկած եյի տեսնում։

Ցրտել եր։ Կանաչի վրա դրած ղավը (յեղյամը) փետացնում եր մեր բոբիկ ոտները։ Մի գիշեր ել անսպասելի ձյուն յեկավ, բուք ու բորան արավ։ Թողեցինք վրաններն ու անասունների հետ իջանք ներքևի ձորերում, անտառների մեջ ծվար արած ձմեռանոցները։ Մյուս որը քոչն ել իջավ ցած։

ԿԱՐՄՐԱԽԱՅՏԻ ՀԵՏԵՎԻՑ

Մեր գործը լավացավ։ Անտառում ինչքան ուզես տանձ, խնձոր, շլոր, գկեռ, հաճար, կաղին, և ինչ ուզես վոր չկա։ Ամբողջ որը ծառերի ծերերից չեյինք իջնում։ Հիշում եմ, Հանեսը կապիկի ճուտի նման բարձրանում եր ծառի ամենաբարակ ճյուղերը և թափ տալիս անարատ մնացած տանձերը։

Այդ թողնենք, յես ուզում եմ ձկան մասին պատմել։

Ամբողջ որը բարակած աշնանային ջրերում կարմրախայտ եյինք վորսում։

Մեր կողմը թոռ (ուռկան) գցելու սովորություն չկա։ Լեռնային քչքչան գետակներն ինչ ուռկանի տեղ ե։ Յես, Հանեսը, Ղալմանց Ակոբը և Դարբնանց Գրիգորը վրա եյինք թափվում, քարերը, թմբերը յետ տալիս և «ճյուղն եյինք կտրում», այսինքն փոխում եյինք գետակի հունը։ Տեսնելու բան եր, թե վորպիսի հրճվանքով ու գոռում-

գոչումով էյինք հավաքում ցամաքող հունում թփրտացող կարմրախայտերը։

Մի օր էլ ճիշը վառոդ լցրինք, բերանը պինդ հողով ամրացրինք ու գնացինք Թխկուտի մեծ գյոլի մոտ։ Այդ գյոլի մասին հրաշքներ էյին պատմում։ Ասում էյին, որ նրա մեջ փթանոց ձկներ կան։ Գյոլը գետի ամենամեծ ջրվեժի տակ էր, որից վերև ձուկ չկար։ Ահագին բարձրությունից ջուրն այնպիսի ուժով էր թափվում, որ ձկները չէյին կարողանում բարձրանալ և աշնանամուտին գետի հոսանքն ի վեր գնացող ձկները կանգ էյին առնում ու ձմեռը ծվարում մեծ գյոլի քարերի տակ։ Մեր մեջ շատ թե քիչ վարպետը Դարբնանց Գրիգորն էր (ափսոս, դարդիման տղա էր, վերջերս կուլակները սպանեցին)։ Նա ֆիթիլը վառեց ու բղավեց.

— Փախե՛ք, գցեցի։

Մենք փախանք, տափ կացանք ծառերի տակ ու սրտատրոփ սկսեցինք գյոլին նայել։ Գրիգորը ճիշը գյոլը գցեց ու պառկեց։ Խուլ թնդյուն լսվեց, ջրի կաթիլները փշրվեցին օդում և արեգակի տակ շողացին ադամանդների նման։

Վայրենի աղաղակներով թափվեցինք գյոլը ու սկսեցինք հավաքել մեկիկ-մեկիկ ջրի երեսը դուրս եկող կարմրախայտերը։ Խեղճերը պայթյունից ու վառոդի հոտից շշմել էյին։ Նվաղած բերանները բաց ու խուփ էյին անում։

Այդ յերեկո մեր հարևան պառավները լավ տապակած ձուկը կերան ու փշերը բերաններում որհնեցին ինձ։

Հայրս՝ «Ուստա Ստեփանը» բաննահ էր։ Մի օր Դիլիջանից հետը մի վեդրո կիր բերեց տվեց մեզ ու ասաց։

— Դե որ ղոչաղ տղերք եք, կրով ձուկ բռնեցեք։— Նա սովորեցրեց կրով ձուկ բռնելու «սամբը»։ Կիրը վերցրինք ու վազեցինք Թթու ջրի կողմերը։ Հասանք գետին։ Մի ջրվեժի գլխին կրով լիքը վեդրոն թափեցինք սահանքի մեջ։ Կրաջուրը թափով լցվեց ջրվեժի տակի գյոլն ու ջուրը սկսեց խշշալ-եռալ։ Գետը սպիտակ թանի տեսք

ընդունեց։ Մեկ էլ տեսնենք ձկները դուրս թափվեցին ու կուրացած՝ խեղդվելով ջրի երեսն արին։ Դե տղա յես, հավաքիր ու վեդրոն լցրու։ Մեր ճիչերից ձորը թնդում էր։ Ի՜նչ լազաթին վորս էր...

ԳԻՇԵՐԸ «ԲԱԿԱՏԵՂԵՐՈՒՄ»

Մի օր էլ, յերբ գոմեշները տանձուտում խժռում էյին վայրի պտուղները, մենք բահը վերցրինք ու մութը ծմակները, քար ու չոլ կտրելով՝ հասանք «Բակատեղերը»։ Դա մի խուլ ձոր է, ուր լեռներից թափով յեկող յերկու գետակներ խառնվում են իրար ու կազմում Դիլիջանի գետի ձախ վտակներից մեկը։

Մտանք բարակ գետակը։ Քարերի տակը ձեռներով «ակը տալով» բարձրանում ենք վեր։ Մեկ-մեկ էլ ձուկը ընկնում է մատներիդ արանքը։ Դե տղա յես, ականջներից հուպ տուր, որ չփախչի։ Մեկ էլ տեսնում էյի՝ Հանեսը վայրենի ճիչերով քարի տակից հանեց մի թմփլիկ կարմրախայտ, օդի մեջ շողացրեց արևի տակ ու շպրտեց ափի կանաչուտը։

Ջրվեժի տակի մեծ գյոլում մի ահագին ձուկ աչքերը պլզցրած կանգնած է։ Մեկ էլ Հանեսը կուզեկուզ մոտեցավ գյոլին ու բահի սուր ծայրով ինչքան ուժ ուներ խփեց ջրին։ Մինչ յես ծիծաղում էյի նրա թրջված դոշի վրա, մեկ էլ տեսնենք ջուրը կարմրեց և ձուկը կիսված գլխով գյոլի յերեսն ընկավ։

— Հենց գլխի մեջտեղն էլ աչքել էյի,— ասաց Հանեսը և ուրախության ճիչեր արձակելով՝ շորերով մտավ ջուրը ու սպանված ձուկն ափը նետեց։

Կանաչների վրա ձկան մի կույտ էր գոյացել։ Համա ենպես ենք սովել վո՜ր։ Ձկնով տարվել ենք, չգիտենք, որ օրն արդեն մթնել է։ Ձկները շարեցինք մի դալար ճիպոտի վրա ու մութ ծմակով ճամբա ընկանք։

Խուլ մի ձորում ինչ վոր լույս ենք տեսնում։ Արխաջ[1] է։ Հասնում ենք կրակին, ձկների փորը թափում ու շարում թեժացած պեծերի վրա։

— Աղա, մի թաթարչախնի շաշլիկ արա։

Ու անաղ, անհաց խժռում ենք խորոված կարմրախայտը։ Յեվ կարող եք չերևակայել, վոր իմ կյանքում դեռ այնքան համով կերակուր չեմ կերել, անգամ Յերևանի պոլսական ճաշարաններում։ Յեթե «հանդի հացը համով է», բա հանդի խորոված կարմրախայտն ինչ կլինի։

Մութը հետզհետե թանձրացավ ու ահավոր ձորը անհատակ գերեզմանի նման սկսեց նայել մեզ։ Գնում ենք, բայց չգիտենք ուր։ Ջոր խաշամի[2] վրայով քայլել չի լինում։ Խաշամի տակ կուտակված կաղինը չի մնում վոտներիդ տակ ու սայթաքելով թրմփում ես մի քարի, ընկած մի կոճղի, կամ ծառի փտած մի ճյուղի վրա։

— Ուֆ...

Ու նորից չոքեչոք առաջ շարժվում, մագլցում զառիվայրերը, կախվում թփերից։ Իսկ ներքևում գետակն է խուլ ու տխուր վշշում։

ԳԱԶԱՆՆԵՐԻ «ՀԱՄԵՐԳԸ»

— Ո՜ւ... ո՜ւ... ո՜ւ... լսվում է հեռվից խուլ ու չարագուշակ։ Գայլերի բուլուկի ղեկավարն է։ Նրանց «կապելմեստերը»։ «Նվագի» ազդանշանն է տալիս։ Ու մեր դիմաց՝ գետի մյուս ափում, Ագռավաքար կոչվող հսկա ժայռի գլխին սկսվում է գայլերի «համերգը»։

Ջրերն ու մթին անտառները լցվում են վոռնոցով։ Նստում ենք ու լսում։ Մեծերը կոշտ ձայնով ու յերկար վոռնում են «ո՜ւ... ո՜ւ... ո՜ւ...», իսկ փոքրերը ճվճվում, կլանչում են։ Դժոխային ժխոր։ Սարսափից մարդու մազերը բիզ-բիզ են կանգնում։

[1] Արխաջ — վոչխարի հոտի գիշերելու տեղը։
[2] Խաշամ — խազալ, չորացած թափված տերևներ։

— Բա, վոր գա՞ն։

— Դրանց ժեներն անիծեմ, ինչ պիտի անեն։ Այ, ինչն է բոլ ծառը, ձեները մոտեցավ թե չէ, մոկռոշի[1] պես ծառի ծերը թռիր, հա թող ներքևում փնգստան, իրար գզեն։

— Դամբա՜ր, հասի՛ր, Ալմա՜շ, հասի՛ր, հե՜յ...— վորոտում ենք մենք ու հետն էլ շան պես վո՜նց ենք հաչում։ Յես կոշտ ձայնով եմ հաչում, իսկ Հանեսը թուլի նման կոնծկոնծում, կլանչում է։ Ծիծաղս չեմ կարողանում պահել։

Գայլերի ձայնը մի քանի րոպե ընդհատվում է ու ավելի ուժգին գալիս, բայց էլի նույն տեղից։ Եդ ամբողջ գիշերը մենք ով գիտի քանի սար ու ձոր անցանք, քանի-քանի անգամ գլխակոնծի տվինք խաշամի մեջ։

Յերեսներս, ձեռներս ու շորերս ծվատվել եյին։

ՋՈՌԲԱՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՐՎԱԾԸ

Լուսադեմին հեռվից ինչ վոր բղավոց ենք լսում...

— Հանես հե՜յ, Վախտանգ հե՜յ...

— Հե՜յ...— պատասխանեցինք մենք ուրախացած։

Մեր ձենի վրա չոբանները յեկան մեզ գտան։ Դու մի ասի, ամբողջ գիշերը մայրս տավարածներին ու չոբաններին չի թողել տուն գան։ Աղաչել, պաղատել է, վոր մեզ գտնեն։

— Յերեխեքը ո՜վ գիտի վո՞ր չոլում գելերի փայ յեղան.— ասել ու ծնկին տալով լաց է յեղել նա։

Տղերքը մեզ տխուր ու լուռ առաջնորդեցին մի մեծ քարափի մոտ։ Յեվ մեր աչքի առաջ բացվեց մի սարսափելի տեսարան։ Մելոնց Լաչինը քարափի տակ փշրված, արյունաթաթախ ընկած է, իսկ տերը, հարուստ Աթոն դանակը ձեռքին չոքած մաշկում է։

Մեզ տեսնելուն պես նա գազանացած վրա ընկավ,

[1] Մոկռոշ — սկյուռ։

բռնեց Հանեսի ոձիքից, խփեց քարոմն ու սկսեց ջուխտ վոտքով տրորել, ջարդել։

—Սատանի ճուտ, ծո՛ւր ես կորել, հը, քեզ համար եմ գոմեշ մեծացրել, վոր շան փայ անե՞ս, դե սատկի՛ր։ —Ու կսպաներ, յեթե ադերքը մեջ չընկնեյին, արյունաթաթախ յերեխային չխլեյին գազանացած Աթոյի ճանկերից։

Կատաղությունից դողում եյի, բայց ինչ անեյի, ձեռքիս ճար չկար։ Նույն որը ձմեռանոցի «քյադխուդեքը»[1] ծեծելով գոմշարածությունից դուրս արին նաև Հանեսի հորը՝ Ամպակին։ Մեր պատանի հոգում վրեժը գնալով բորբոքվում եր, բայց ինչ կարող եյինք անել։

[1] Քյաթխուդա—գյուղի ղոռբա։



ԿՆՅԱԶԻ ԲԱՂԸ

Դիլիջանից վերև, գետի հովտում, այսօրվա պետական ֆերմայի տեղը բուն եր դրել կնյազ Ճավճավաձեն՝ վրաց Հերակլ թագավորի ազգականներից մեկը։

Գետի ափին ընկած արգավանդ հովտում կանոնավոր շարքերով աճում եյին կնյազի պտղատու ծառերը, ոդը հագեցած եր նրա մեղուների բզզոցով, իսկ կնյազի յերկհարկանի ու թիթեղյա կտուրով գեղեցիկ «ամարաթը» վեհությամբ բազմել եր գետափնյա ծառազարդ բլրակի վրա։

Յեվ բլուրից կնյազն իշխում եր այդ ձորերին ու դիմացի հսկա անտառին։

— Ղուշն իրան թևովը, ուձն իրան պորտովը չի կարում կնյազի քոլի կողքովն անց կենա։

—Փա՜հ... դու հունարի մարդ ա. ասում են թագավորի ցեղից ա, թավադության[1] թուղթ ունի։

Յեվ գյուղացիները յերկյուղով ու ակնածանքով եյին նայում կնյազի բաղին, կնյազի անտառին։

Տանձը առատությամբ թափվում ու փտում եր խաշամի տակ։ Հաղարձն ու [illegible] եյին թփերի

[1] Թավադ—իշխան, ազնվական։

Գոս. Библиотека ЗУОТГ-Арм ССР им. А. Мясникяна Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

վրա։ Հաճարն ու կաղինը ձյունի տակ եյին մնում ու ծըլում հաջորդ գարնանը։ Ո՞վ կարող եր մի տանձ վերցնել, մի ճիպոտ կտրել ահագին այդ անտառից։ Կնյազի ծառաները գեղջկուհիներին մազերից քարշ տալով եյին անտառից շպրտում, իսկ փախչողների հետևից թնդում եր «բերդան» հրացանն ու սարսափ տարածում շրջակայքում։

Անտառն անարատ պիտի մնա։ Թող նրանում անդորր կյանք վարեն ու բազմանան վայրի յեղնիկներն ու պախրաները։ Զե՞ որ Թիֆլիսից ամառանոց յեկող ազնըվազարմ հյուրերը որսի պիտի գնան, զվարճանան…

—Ղուշն իրան թևովը, ոձն իրան պոչովը կնյազի բաղին չի մոտենում։

* * *

Բայց եդ բոլորից Հանեսը տեղեկություն չունի։ Սարում ծնված, սարում մեծացած տղա յե. նրա համար ինչ որենք, ինչ բան։

Թարսի պես ել Հանեսի պապի՝ Կոխկանց Մուանի տունը հենց կնյազի բաղի «ականջումն ե»։

Փոքրիկ Հանեսը մի քանի որ ե, վոր պապի յեզներն ե պահում։ Մոտակա անտառում տանձ-խնձորը վերջացել ե, իսկ գետի մյուս ափին՝ կնյազի բաղում գետինը դեղնին ե տալիս թափված մրգերից։

Հանեսը վո՞նց համբերի։ Իսկի համբերել կլինի։

Յեվ մի որ Հանեսն անցնում ե գետը, մտնում ե կընյազի անտառը և սկյուռի նման մագլցում վայրի տանձենու կատարը։

ԱԶՆՎԱԶԱՐՄ ՈՐԻՈՐԴՆԵՐԸ

Հենց այդ ժամանակ կնյազի ազգականներից յերկու որիորդներ, բստ յերևույթին քաղաքից յեկած, մերկացել ու մտել եյին հինավուրց Ջրաղացի «չառթանի» տակ։

Լեռնային վտակը մտնում ե փայտյա խողովակի մեջ, սրընթաց հասնում ե ծայրին ու չորս կողմը շողշողացող ադամանդի հատիկներ ցրելով, թափվում ե ցած, ուրախ քըրքիջով խփվում որիորդների մարմարի պես սպիտակ պարանոցներին, հոլանի բազուկներին ու խաղում յերկար, սաթի պես փայլող մազերի հետ։

Պատանին հեռվում թաքնված խիտ սաղարթների մեջ, գարան մտած հովազի նման նայում ե դեպի գետակն ու բավականությունից ձեռները շփում։ Նա թռվռում ե, ուզում ե ցած թռչել ու բղավել, կամ քար գցել մերկ կանանց վրա, բայց վախենում ե հոթակից։ Հանկարծ նա մի բան գտածի նման ուրախացավ, յերկու ձեռքի ցուցամատերը մինչև կեսը կոխեց բերանը, լեզուն յետ ծալեց ու փչեց վորքան ուժ ուներ։ Սուլոցը արձագանքեց անտառում։ Մերկ աղջիկները դես-դեն նայեցին, ծվծվալով դուրս թափվեցին ջրի միջից ու շտապ սկսեցին հագնվել։ Հանեսը մի կուշտ ծիծաղեց և սկսեց «կաթն ընկած» տանձերը ջոկել ու խժռել։

ԿՆՅԱԶԸ

Աղջիկներին մոտեցավ չերքեզկան հագին մի ձիավոր, իսկ նրա հետևից այգու պահակը յերկու նժույգներ եր քաշում։

Զուլալ ջրից թարմացած աղջիկները վազեցին առաջ և ճվճվալով գանգատվեցին, թե ինչպես «գյադեքից» մեկը վախեցրել ե իրենց։ Կնյազը փրփրեց։ Վրացի սպասավորը մի ձեռքով բռնեց ձիու սանձը, մյուսով ոգնեց որիորդներին, առաջ մեկին, ապա մյուսին նստեցրեց ձիերին ու հարգանքով յետ քաշվելով ճանապարհ տվեց։ Կնյազը թանգագին հյուրերին զբոսանքի եր տանում։

Հանեսը բազե տեսած ճնճղուկի նման կպավ ծառի բնին ու կուչ յեկավ։

Ներքևում փռվում է լայնատարած մի թալա (բացատ), մի ռազիս՝ համատարած անտառի մեջ։

Լեռնային կածանով ձիավորները սրընթաց բարձրանում են ու արշավում բացատի երկայնքով։ Առաջինը, շառատ նժույգով, ինքը կնյազն է, իսկ ետևից լայն ու բարակ սրունքներով սիրուն նժույգների վրա գողտրիկ նստած են երկու օրիորդները։ Երևում է, որ նույնպես ազնվական ընտանիքից են։ Ահա մոտեցան։ Համեսի արյունը եռում է ձիերի վազքից, թռվում է ծառի կատարին և ուժգին ճոճում ծառի բարձրաբերձ ճյուղը։ Տանձը թափվում է կարկուտի նման։ Կնյազը նկատեց։ Արշավում է ուղիղ դեպի ճոճվող ծառը։ Պատանին վազում է ճյուղի երկայնքով, հասնում ամենաբարակ տեղն ու մի ճարպիկ ցատկումով ընկնում հարևան ծառի վրա։ Ապա արագ իջնում է ու փախչում։

ԱՂԸ ԲԱՑՎԱԾ ՎԵՐՔԻ ՄԵՋ

Կնյազը հետապնդում է փրփրած ու հայհոյելով.

— Կանգնիր, խփեցի, շան որդի։— Ու ատրճանակը պայթում է «տրա՛ք, տրա՛ք»։ Անտառն արձագանքում ու կրկնապատկում է որոտը։ Համեսը առաջ է նետվում ծառերի, թփերի արանքով։

— Լիզոչկա՛, անպայման այս վայրենուճուտն էր մեզ վախեցնողը,— ասում է բարձրահասակ օրիորդը, ձին կանգնեցնում, «ռեդիկյուլը» բացելով նայում է փոքրիկ հայելուն ու մատների ծայրով զգուշությամբ ուղղում մազերն ու հոնքերը։

— Ֆե՛, գիտե՞ս ինչ գզվելներն են...— պատասխանում է ընկերուհին և հետաքրքրությամբ նայում փախչող «վորևի» ետևից։

Պատանին վազում է կատվի նման ճկուն ու արագ։ Բայց այս ինչ էր խորը, շատ խորը խրվեց նրա մերկ

վոտքի տակ։ Այլևս վազել չի լինում։ Ցավ պատանին աղիողորմ ճիչ արձակելով նստեց ու սկսեց քաշել մսի մեջ խրված սուր փայտի կտորը։

Կնյազի կատաղությունը գագաթնակետին հասավ, երբ մասրի փուշը նրա մետաքսյա չերքեզկայի փեշը պատռեց։

— Դե կեր, լակոտ,— մռնչաց նա և արծաթազարդ կոթով մտրակը մի քանի անգամ բարձրացավ օդում ու իջավ ցած։ Մանուկն ընկած է բորբոսնած մի փոսում՝ անըզգա և արյունլվա։

Մինչ օրիորդները հետաքրքրության համար դեպի դեպքի վայրն էին շտապում, կնյազը կոշիկի վզից արագ

դուրս քաշեց ֆիննական դանակը, կտրեց պատանու աջ ձեռքի մատը, փորսորդական պայուսակից հանեց տուփով լի աղը, ցանեց բացված վերքի մեջ և զզվանքով ձեռքին թքելուց հետո՝ դանակը տեղը դրեց։

— Ե՞ս ձեռքով ես գողություն արել չէ՞, ել կանե՞ս։

Իշխանուհիները բավականացան միայն կարեկցության յերկու խոսքով.

— Մեղք չէ՞ր, կնյազ, ինչ ել փոքրն է...

Ճիշտ այնպես, ինչպես մեր հարևան Հովսեփը, յերբ իրենց շան ճակատի մեջտեղը կրակեց, ասացի—«մեղք չէ՞ր, Ուսեփ, ինչի՞ սպանեցիր, ինչ ել լավն եր»...

Կնյազը՝ հաղթանակի արտահայտությունը դեմքին, խրոխտ քայլվածքով առաջանցավ ու ամուր, հատ-հատ ասաց.

— Եդ շը-նե-րին դուք լավ չեք ճանաչում, դրանց բոլորին պետք է սատ-կաց-նել։

Բացատում կանգնած ձիերն անհամբերությունից դոփում են գետինը և արշավելու տրամադրություն առաջացնում ազնվական խմբի մեջ։ Իսկ ներքևում բորբոսնած մի կոճղի տակ, խոնավ գետնին ընկած է բատրակ պատանին։ Արյունը աղին խառնվելով կաթում է ներքև բուսած մի սունկի վրա ու կարմիր ներկում նրան...

ԱՌԱՋԻՆ «ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ»՝ ԹՈՓՈՒՇԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Համեսը չի մոռացել կնյազի գազանությունը։ Ախր վ՞ոնց մոռանա, վերքը դեռ ցավում է։ Տատը ինչ վոր կանաչ է ծեծել ու դրել վերքի վրա։ Յեվ կսկիծը բորբոքում է վրեժը։

Կնյազի ազախինը նրա յերկու յերեխաների հետ ամեն որ արևմուտին դուրս է գալիս զբոսանքի՝ հենց Համեսենց տան տակ՝ գետի ափին։

Ահա և նրանք։

Համեսն առանձնակի հաճույքով է պատմում այդ դեպքը. «Շալվար չունեյի,—պատմում է նա,—մտքումս դրել եյի, ինչ ել վոր լինի, կնյազի տղի շալվարը հանեմ. դրանով համ վրեժ կառնեմ, համ ել կարգին շալվարի տեր կդառնամ։

Պապիս մի բրդոտ շուն ունի, անունը՝ Թոփուշ։ Նա ել է կարծես ատում հովտի հարուստ բնակիչներին։ Յերևի այն պատճառով, վոր մի քանի անգամ քոթակ է կերել կնյազի այգու պահապաններից։ Յեվ այդ րոպեյին ինձ թվում է՝ Թոփուշը հասկանում եր իմ տրամադրությունը։ Նա կատաղած նայում եր կնյազի յերեխաների կողմը և պոչը շարժում անհամբեր։

Յես ու Թոփուշը պապիս տան «ճնշված դասակարգն» եյինք, դրա համար իրար շատ եյինք սիրում և հաճախ կազմակերպված «յելույթներ» եյինք ունենում մեր ճնշողների դեմ։ Այսպես՝ որինակ, հաճախ, յերբ տանը մեզ շատ ծեծում ու քիչ հաց եյին տալիս՝ հանդում «գործադուլ» եյինք անում։ Յեզները քշում եյինք մի արտ ու փախչում ձմեռանոց՝ հորս մոտ։ Իհարկե, դրա համար պապս մեր մեջքին փորձում եր հոնի գավազանի զորությունը. դե ինչ արած, հիմիկվա խոսքով ասած՝ «դասակարգային պայքար» եր։

Այս անգամ ել լուռ նայեցինք իրար աչքերի մեջ ու նշանացի հարձակվելու համաձայնություն կնքեցինք։ Հենց վոր ազախինը յերեխաների հետ մոտեցավ մեզ, անհարեկող ձայնով վորոտացի.

— Թոփո՛ւշ, հասի՛ր, Թոփուշ...—Յեվ փայտն ոդում ճոճելով վրա տվինք ազնվական «դասակարգի» վրա։ Թոփուշն ազախնի փեշերից հավաքեց ու ֆռռացրեց ներքև, իսկ յես գլորեցի կնյազի մեծ տղին, վորն ինձանից մեծ և ուժեղ եր և արագությամբ շալվարը հանեցի ու փախա, մտա մեր գոմի կարտոֆիլի հորը։

Ճիչն ու աղմուկը վողջ հովիտը բռնեց։ Կնյազն իր բոլոր պահեստի ուժերը «զորահավաքի» յենթարկեց և արշավեց մեր խրճիթի վրա։ Հորի հատակում կուչ յեկած լսում եմ հրացանների պայթյունը և մորս ու քրոջս ճիչն ու աղաչանքը։ Սրտումս գլուխս ե խփում։ Չհամբերեցի, ուզեցի դուրս գամ ու յերկաթե յեղանով կռվի բռնվեմ, ինչ կուզեն, թող անեն, բայց հորից առանց յելարանի դուրս գալ վոչ մի կերպ չեր կարելի։ Սուս արի։

Հետզհետե ձայները հանդարտվեցին։ Հավաքված ամբոխը ցրվեց։

Գազազած կնյազին խաբել եյին, թե «եդ լակոտը փախել ե չոլերը, մենք ինքներս կգտնենք ու շանսատակ կանենք»։ Մայրս ու քույրս կնյազի վոտներն եյին ընկել, աղաչել, վոր խնայի։ Իսկ պապս հենց նույն որն իմ մի տարվա բատրակության վարձը՝ գառը տակին մի վոչխար «նվեր» եր տարել խանումին։

Աչքերիցս արյուն կաթեց, յերբ լսեցի, վոր իմ չալոիկ գառը կնյազին են տվել։

Չգիտեմ, կնյազի ճանկից ազատելու համար, թե՞ իր ոգտի համար, պապս հենց նույն որն ինձ ուղարկեց Գառնաքարի ձորը՝ անասունները ձմեռն այնտեղ պահելու։

Մեր տան հետևի բլուրի լանջով բարձրանալիս՝ յես նայեցի և տեսա, վոր կնյազի յերեխաները գետափին խաղում են իմ չալոիկ գառան հետ։ Պնչերքիցս ծուխ դուրս յեկավ ու աչքերիցս յերկու կաթիլ արցունք քամվեց։

— Ա՜խ, կնյա՜զ, թե ուժս կպատի…

Ու գլխիկոր, անզոր կատաղությունը սրտումս՝ առաջ շարժվեցի դեպի լեռների գիրկը՝ անասունների, գայլերի ու արջերի հետ ձմեռելու…

«ՔԱՇԱՆՆԵՐԸ»

Վրա հասավ դաժան ու խստասիրտ ձմեռը։ Հետագայում յես քաղաքներում շատ մարդկանց պատահեցի, վորոնք մեծ հաճույքով են խոսում ձմեռվա մասին։

«Ո՜, ձնագնդի՜, ձնագնդի՜», հաճախ եմ լսել տաք ալրոդ, ելեկտրական լույսի տակ մեծացած մանուկների բերկրանքով լի կանչը։ Իսկ մեզ մոտ՝ լեռների լանջերին ծվարած ձմեռանոցում, ձմեռը խնդություն չեր բերում։ Կյանքը կարծես մեռնում եր անտառում։ Թռչունների յերգը լռում եր, խոխոջող առվակները պապանձվում եյին հաստ սառույցի տակ։ Յեվ այնքան սիրուն, այնքան գրավիչ իմ լեռների ծաղիկներն ու թավշյա մարգագետինները մնում եյին սառը ձյունի տակ։

Իսկ այդ ձմեռ ինչ վոր առանձնակի մռայլություն եր տիրում մեր ձորերում։

Գյուղի բկին չոքել եր դաշնակցական բանակի վաշտերից մեկն ու ծծում եր, հա ծծում։ Գյուղում խոտ ու դարման չմնաց։ Զինվորների ահից խոտը թողեցինք սարահարթերում ու լեռների լանջերին։ Ձյունը յեկավ ու հաստ շերտով ծածկեց մեր անասունների պաշարը։

Ամեն առավոտ բաշլըղներում պինդ փաթաթված ճըղում եյինք ծնկահար ձյունը, բարձրանում լեռն ի վեր, հասնում ձյան տակից վեր յելնող խոտի բլրակներին։ Սարահարթերումը, լեռների լանջերին մոթալ փափախների նման շարված են խոտի «կլոտուկները»։

Յետ ենք տալիս ձյունը ու ներս ծծում խոտի, չորացած ծաղիկների բուրմունքը։

— Ինչ լազաթ ե՜,— հրճվում ենք այնպես, վոր կարծես մենք ենք ուտելու։ Խոտը բարձում ենք ծառի ճյուղերին, ծայրից բռնում ու ձյունի վրայից քարշ տալիս դեպի ձորը, դեպի ձմեռանոց։

Հաճախ «քաշաններն» իրարից եյինք կապում, թառում փափուկ խոտի վրա ու քշում մեն-մենակ լծված Հանեսին կամ Մելոնց հաստավիզ Արամայիսին։

ԳԻՇԵՐԸ ՎԱՆՔԻ ՁՈՐՈՒՄ

Յերեկոները հավաքվում եյինք Մայիսենց խրճիթը ու մինչև ուշ գիշեր շուրուխ անում։

Մեկ էլ տեսար Դարբնենց Գրիգորը քոքեց իր սովորական յերգը։

Աղջի, քո հերը քեզ մի սել փեսի ծախել ա՞,
Միտք ես արել, ռանգդ[1] փախել ա՞,
Սիրուն յարդ քեզնից վախել ա՞,
Դեպի քաղաքը փախել ա՞.
Աղջի, արի մունջար[2] արա:

Աղջի, դեպի ջուրը յերիշ[3] կանե՞ս,
Թուխ-բուխ մազերդ քաշ կանե՞ս,
Աղջի ջան, դու ինձ հալ ու մաշ կանե՞ս.
Աղջի, արի մունջաթ արա...

Ակոյանց Գիքոն մի ծակ վեդրո ուներ, թմբուկ էր շինում, իսկ Նիկալն էլ Թութակն եր զլում։ Ամբողջ գիշերը «քոչարի» եյինք թռչում։ Մեր ոտների դոփյունից խարխլած ոջորքից հողը մաղում եր։

Մի յերեկո Գրիգորը թե՝

— Տղերք, ով ես շամփուրը կտանի «Ջուխտակ վանքերի» մեծ վանքի մեջ կանկի։

Մոտ յեկող չեղավ։

Ջուխտակ վանքերը գտնվում եյին ձմեռանոցից բավական հեռու, անտառոտ ու մռայլ մի ձորում։

¹ Ռանգ—գույն։
² Մունաջաթ արա—խնդրիր։
³ Յերիշ—քայլվածք։

— Ով որ տանի, յես նրա համար մի շալակ խոտ կբերեմ սարից,—խրախուսեց նա։ Պատանի Հանեսն առաջ յեկավ, շիշը վերցրեց և սուս ու փուս դուրս գնաց։ Գնաց, բայց փոշմանեցինք։

— Ադա, ինչ սարսաղություն ենք անում,—գոչեց Նիկալը, վորը բոլորից հասակավոր եր։—Դրանից մի փորձանք կգա։—Յեվ նա պատմեց, թե ինչպես Բոզի գյուղի ջահելջհուլն ելի եդպես մի շուլուխ են արել ու շատ փիս փոշմանել։ Անապատեյի գոմերումը (ձմեռանոց) մի ղոչաղ—սըրտոտ տղի «նամուսի յեն գցել» ուղարկել գերեզմանատունը։ Շատ են սպասել՝ չի յեկել։ Խմբով մաշալ (ջահ) են վառել, գնացել տեսել գերեզմանի վրա փռված-մեռած, իսկ շամփուրը անկված է չուխի ծայրին։ Դու մի ասիլ շամփուրը հողաթմբում անկելիս մթնում չի տեսել, վոր չուխի փեշն էլ հետն է անկում։ Յետ է դառել, վոր գնա, տեսել է, վոր չուխի փեշը գերեզմանիցն է կպել. ճչացել է ու տեղն ու տեղը կաթվածահար յեղել. խեղճ սնահավատ լեռնեցին կարծել է, թե մեռելն է փեշիցը քաշում։

Այդ պատմությունը մեզ վրա շատ ծանր տպավորություն թողեց։ Ճիշտն ասած, մենք բոլորս էլ մի խմորից եյինք։ Զոլերում ապրում եյինք, գազանից, ավազակից, գողից, գայլխեղդ շներից մազաչափ անգամ ահ չունեյինք, բայց սրբից, սատանայից, չարքերից, գերեզմանատներից սարսափում եյինք։ Յերեկոները հենց վոր խոսք եր լինում չարքերի մասին, ոջախի շուրջը խորհրդավոր լռություն եր տիրում և իրար աչքերի մեջ սարսուռ եյինք կարդում։

— Չէ, տղերք, յետևից գնացեք, դրա հոր ջուղաբը ով կտա,—ասաց Նիկալն ու հարցական նայեց մեզ։

Յես ու Մայիսը դուրս յեկանք և ծառերի հետևից գաղտագողի հետևեցինք պատանուն։ Հանեսը շտապ կտրեց անցավ դիմացի բլուրը, իջավ ձորի մութ ու անտառոտ ան-

տառը և մոտեցավ պառաված ու մամռակալած վանքերին: Հիմի էլ որ հիշում եմ՝ զարզանդս գալիս է:

Նա շատ հանգիստ մտավ գլուխը քանդված մեծ վանքը, շիշը անկեց բեմի մեծ խաչքարի առաջ և առանց շտապելու դուրս յեկավ ու քայլեց ձմեռանոցի ուղղությամբ:

Ուզեցի ձեն տամ՝ Մայիսը ձեռքով բերանս բռնեց ու ականջիս շշնջաց.

— Սուս, լեղին կճաքի յերեխի…

Մի քանի օր առաջ այստեղ, Յերևանում ինձ յերկու կարմիր-բանակայիններ պատահեցին: Նրանց շինելների վզին փայլող կարմիր քառակուսիներից հասկացա, որ ջոկապետներ են: Հազիվ ճանաչեցի:

— Հը՛, քաղաքացի յես դառել, մոռացե՞լ,—ասաց լայնաթիկունք ու թուխ բանակայինը:

Մելոնց Արամայիսն է: Ելի էն հաստավիզն է, իսկական կաղնի քոթուկ: Մյուսը Ղարմանց Ակոբն է, որին իր սևության համար Մամուխ եյինք կանչում:

Յերեկ—տավարածներ, այսոր—կարմիր հրամանատարներ…

Կոմունարների այգում նստած շատ շուլուխ արինք: Նրանք մեր պատանեկան օրերից այնպիսի զվարճալի բաներ պատմեցին, որոնք յես վաղուց մոռացել եյի: Ասում են. «Արամայիս, բանակում լավ են պահում»:

— Բա կատվի միս ուտողը բանակից կդժգոհի՞:

— Ի՞նչ կատվի միս,—զարմացած հարցնում եմ յես:

— Այ բեզովլած, հլա անմեղ ես ձևանում հա՞:—Յեվ նա իրեն հատուկ յումորով պատմեց իմ ջոլինբազություններից մի քանիսը:

Յես նույնությամբ գրի յեմ առնում մի քանի զվարճալի դեպքեր այն ժամանակվա գոմերի տավարածների վարք ու բարքից:

ԿԱՏՎԻ ԽՈՐՈՎԱԾԸ

Լավ հիշում եմ, որ այդ ձմեռ մենք հացի յերես չըտեսանք: Ցերեկը տավար եյինք պահում, իսկ գիշերը շաբաթը մեկ-յերկու անգամ գնում եյինք գյուղ, շորներս կարկատել տալիս և յուղ բերում, որ կարտոֆիլի հետ ուտենք:

Միառժամանակ յես, Պավլեյի Սուրենը, մեկ էլ Մելոնց Արամայիսը իրար հետ եյինք ապրում:

Մի օր Մաղնանց չոբանը յերեկոյան մի ահագին վայրի կատու բերեց ու գցեց մեր տուն:

— Ադա, Բագրատ, ես ի՞նչացու ա,—հարցնում եմ յես:

— Շները խեղդեցին, համա անտերը վագրի պես ծըվատում եր շներին, մաշկեցեք. մորթին կտանենք Դիլիջան, նավթի կտանք:

Իսկապես վագրի մորթի ուներ: Մորթու կրակագույն յերանգները աչք եյին շլացնում: Շատ ուրախացանք:

— Ես հո սպիչկա չել կտան,—վեր-վեր թռչելով ասաց Սուրենը:

Բայց մեզ ամենից շատ զարմացրեց կատվի չաղությունը: Մարմնի կեսից ավելին յուղ եր:

— Ինչ խորոված կլինի՜:

Մենք, պատահում եր, որ ամիսը մեկ-յերկու անգամ մսի համ եյինք տեսնում, բայց միշտ էլ լղարությունից սատկած-կապտած միս:

— Ես իսկական Մելոնց Մայիսի բանն ա, դու չխոսաս,—ասացի յես ու կատվի պոճիկները, սիրտը, ջիգյարը շարեցի փայտե շամփուրին ու Սուրենին պատվիրեցի.

— Մի վազի Մայիսին կանչի, համա որ ծիծաղել ես, գործը խափանել՝ շան քոթակ կտամ:

Նա թռչկոտելով գնաց կտրին կանգնեց ու սկսեց կանչել.

— Մայիս հե՜յ… ադա դառան խորովածը գնաց, արի

է՜...։—Իսկ յես չէշը շուռ ու մուռ եմ տալիս, վոր յուղը կրակը չթափվի։

Մայիսը հեհեն ներս ընկավ և յերբ շշով խորոված դեմ արի, նա չհավատաց։ Խեղճը զարմացել էր մեր բարության վրա, մեկ էլ այդպիսի յուղոտ միս վո՞րտեղից էր։

— Ե՜, դե հանաք մի անի է՜,—ասաց նա նեղացած։

— Վեր կալ, տո, շաշ հո չես, բա էլ ընկերությունը վո՞ր օրվա համար ա, քեզ եմ տալիս, վոր եսոր գոմը դու քերես,—արխայնացրի յես։ Սրամայիան էլ յերկար բացատրությունների չսպասեց, չէշը հափշտակեց ու մսի կտորները սաղ-սաղ ներս տվեց։ Դե 1918 թվի մարդը վո՞նց կուտի։ Սուրենը յերեսը դենն արավ, թիքը բերանը կոխեց ու սկսեց խեղդվել ծիծաղից։ Նրա ձայնը դուրս չէր գալիս, բայց ուսերը ուժգին ցնցվում եյին։ Յես էլ չկարողացա ինձ պահել՝ փռթկացի։

Մայիսի ջաղացը կանգ առավ։

— Աղա, էս անտերը շան համ ա տալիս,—ասաց ու թքեց։

Փորներս բռնեցինք ու վո՞նց ենք ծիծաղում։ Նա չորս կողմը նայեց, կատվի մորթին տեսավ ու հայհոյելով արջի քոթոթի նման մեզ վրա ընկավ։ Ճղեցինք։

«ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ» ԳԱՂԱՓԱՐԸ

Մի որ էլ նույն Բագրատը մի շալակ խոզի միս բերեց։ Նա պատմեց, թե ինչպես դաշնակցական զինվորները Ղուկասի խոզերից մեկը մորթել են, մի քիչ խորովել կերել, իսկ մնացած լավ տեղերը տարել եյին, մի մասն էլ թափել ձյունի վրա։ Նա հավաքել էր ու բերել։ Խմբի պովրը յես եյի։ Մի քիչ գարու ալյուր ճարեցինք. յես ուզեցի մաղեմ, տղերքը ուժեղ դիմադրեցին.

— Սարսաղ ես, տո, կեռն էլ չի մնալ։

— Եդ թեփն էլ մի ավելքի բերան կկապի, թող մնա,—

հակաճառեց Սուրենը։ Յեվ իսկապես, թեփն այնքան շատ էր, վոր յեթե ազայինք, ահագին կպակասեր։

Խոզի յուղով մի լավաթին կրկենի[1] արի։ Են էլ կիսայեփել կրակից հանեցինք ու գայլի նման կերանք՝ առանց մոխիրը սրբելու։

Այդ ալյուրով վորոշեցինք հալվա յէլ անել, բայց քաղցըր չկա։ Այդ ժամանակ շաքարը «սև աղվես էր դառել», իսկ «սատանի թշշանի» (այդպես եյին ասում նոր լույս ընկած ամերիկական սախարինին) անունն եյինք միայն լսել։

— Չէ, տղերք, հալվեն պետք ա գլուխ բերենք, բա տարենը մի անգամ էլ կարգին բան չուտենք։

Անցած-գնացած բան է, լավ կլինի, վոր խոստովանվեմ մեր մեղքերը.—վորոշեցինք մեղր գողանալ։ Այդ այսպես յեղավ։ Յես մի ճառ ասացի, վորքան հիշում եմ՝ այս բովանդակությամբ.—տղերք, Ղուկասն ասում ա, թե բոլշևիկները վոր գան, հարուստների ունեցած-չունեցածը խլելու յենք, չունքի մենք ենք նրանց համար աշխատել...

— Ե՜, դե ձենդ կտրի է՜, հա, աշխատել ես, վոնց չէ, հարուստը չէր, մենք կորած ենք,—խոսքս կտրեց Մայիսն ու գլխիս բամփեց։ Յես սկսեցի նրանց «դասակարգային գիտակցություն» բերել և համոզեցի, վոր կուլակ Աթոյի մեղվանոցից մեղր գողանալն ամոթ չի։ Նրանք համաձայն չեյին այն տեսակետին, թե աշխարհիս յերեսին կուլակ կա և շահագործում է մեզ։ «Անխելք ենք՝ աղքատ էլ կմնանք, մարդիկ խելք ունեն, հարստացել են», ասացին նրանք։ Բայց հենց վոր մեղրի անունը իմացան՝ համաձայնվեցին։ Ճիշտն ասած՝ մինչև այդ յես կյանքումս յերկու, թե յերեք անգամ եյի մեղր կերել, մի անգամ «կռո» փեսաս էր յեկել, «Նրա ջրերն ընկա», մի անգամ էլ հիվանդացա, բախտս բանեց, մայրս մի գդալով մեղր ճարեց։ Սիրելի ընթերցող,

[1] Կրկենի—յուղով հունցած խմոր, վոր թխում են օջախում կեծացած մոխրի մեջ։

յես քեզ շատ կասեմ, որ գողություն անես, բայց մեր ժամանակները ուրիշ էր, մենք էլ բոլորովին ուրիշ մարդիկ էինք։ Ինչ որ է։ Հենց այդ գիշեր վրա տվինք մեղվանոցի վրա, մի արկղ բացեցինք, շրջանակները զգուշությամբ ծանր ու թեթև արի և ամենածանրը ջոկելով, մաթալ փափախով սրբեցի սառած մեղուներին ու տվի տան կարան ծակի մոտ դարան մտած Սուրենին։ Կերանք ու, յերբ Աթոն իմացավ, մեղքը գցեցինք դեզերտիր զինվորների վրա, որոնք դաշնակցական դժոխք բանակից փախչում էին ու մեր ձորերով ձգում դեպի Լոռի, իրենց քաղցի մատնված հարազատների մոտ։ Նրանցից շատերը գայլերի բաժին դառան, կամ մեր խստասիրտ լեռներում բքի բռնվեցին ու ձյուների տակ մնացին...

Այդ գարնան մենք սարերում հաճախ էինք պատահում սև ղուզղունների[1] խմբերի, որոնք մեծ ախորժակով հոշոտում էին անտեր ու անանուն յերիտասարդների այլանդակված մարմինները՝ մաուզերիստական բռնապետության զոհերին...

ՆՈՔԱՐԻ ՎՐԵԺԸ

Մեր շուլուխներից մեկն էլ պատմեմ ու վերջացնեմ։

Յես ուզում եմ պատմել այն ոյինների մասին, որ մենք բերում էինք մեր վախկոտ ընկերների և մանավանդ տավարածներին ճնշող վախկոտ խազեյինների գլխին։

Պիտի ասեմ, որ մեզ՝ լեռնեցիներիս համար ավելի անպատվաբեր, ավելի սոր ու խայտառակ բան չկա, քան վախկոտությունը։

— Գնա, գնա հարսների՞ փեշերի տակ մտի, — այսպիսի խոսքերով էինք նախատում նրանց, ովքեր գիշերը չեյին ուզում գնալ կորած անասուններին փնտռելու։

1 Ղուզղուն—ուրուր։

Մեր ձմեռանոցում ամենից վախկոտը Մելոնց Կիկոն էր։ Ճաղատ գլխով ու մանր աչքերով մի ծերունի։ Մի օր նրա բարակը՝ գաղթական Վարդանը լաց լինելով յեկավ մեզ մոտ, պատառոտված շորերը հանելով ցույց տվեց մեջքը։ Հոնի փայտը կապույտ ակոսներ էր քաշել դեղնած մաշկի վրա։ Կատաղեցինք։ Վորոշեցինք արյունարբու խազեյինի գլխին ենպես մի ոյին խաղալ, որ «խելքը գլուխը գա»։

Նույն օրը յերեկոյան, յերբ Կիկոն մտավ գոմը, Փեո Սողոմը ձմեռանոցում յեղած բոլոր ճրագները հավաքած՝ գաղտագողի մտավ նրա ալաչուղը (գետնափոր խրճիթը), ամեն պատից չորս ճրագ կախեց, վառեց ու դուրս յեկավ։ Պառկեցինք խոտի դեզի հետևն ու նայում ենք։ Կիկոն դուրս յեկավ գոմից, խրճիթը մտավ և ճրագների շարքերը տեսնելով, յերեսին արագ-արագ խաչակնքելով, շուռ յեկավ, որ փախչի։ Այդ ժամանակ ճրագների լույսի տակ մենք տեսանք նրա սարսափած դեմքը։ «Հիսուս-քրիստոս» մրմնջաց նա ու սկսեց յետ-յետ նայելով փախչել։

Կիկոն մի շաբաթ եդ խրճիթը չմտավ։ Բայց դեռ վրեժը հանած չեյինք համարում։

Ութերորդ օրը նա իր ալաչուղում գիշերեց։ Գիշերվա կեսին շրջապատեցինք խրճիթը, դուռը զգուշությամբ կողպեցինք, բոլոր ծակերը խոտով պինդ բռնեցինք ու թագ կացանք։ Հանեսը բարձրացավ կտուրը և մի տոպրակ կաղին շուռ տվեց բուխարիկի ծխնելույզի մեջ։ Կրակը թեժ էր։

Ցրտատար կաղինը սկսեց «տրաք», «թրուխկ», «շրխկ» տրաքտրաքել և մոխիրն ու պեծերը ցրիվ տալ։ Ներսից աղիողորմ ճիչ ու հետն էլ հայհոյանք լսվեց։ Հանեսը մի ահագին սալ քար դրեց ծխնելույզի ծակին ու փախավ։ Ծուխը լցվեց խրճիթն ու փակված ծակերին խփվելով, սկսեց յելք վորոնել։

3

Ներսում Նիկո բիձեն ծուխ դրած արջի նման սկսեց վազվզել ու կերկերան, թլվատ ձայնով բղավել.

— Ամի հե՜յ, ձեր տունը քանդվի, Ախլքալակի քրդերը եկել են տավարը տանում են հե՜յ։— Ապա սկսեց հազել։ Մի քանի վայրկյան չանցած տեսնենք՝ պարկել ե, դունչը դրել դռան տակի մկան ծակին ու հևում ե.

— Վայ, նանի ջան, վա՜յ, տարա՜ն, հասեք, թալանեցին, մեջքդ կոտրի, Վարդան, յես քո ծծած ծիծը...

Իսկ Վարդանը ձեռքը սրտին եր քսում ու կամաց «ոխայ» անում։ Բավական զվարճանալուց հետո, յերբ տեսանք մռութը խուխուացնելով չանգռտում ե դռան տակի հողը՝ ծակ բացելու համար, վազեցինք սալը վերցրինք ծըխնելույզի ծակից ու ծիծաղելով փախանք։

Վայրենի կատակներ եյին, բայց շատ եյինք զվարճանում, շա՜տ։ Յեվ ամեն որ նույն կատակներն ու վայրենի ոյինբազությունները։ Դա մեր թե թատրոնն եր, թե ցիրկը, թե կինոն և թե դպրոցը...

ԱՆՏԱՌԻ ՅԵՎ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ԿՈՏՈՐԱԾԸ

Փետրվարի վերջերին սարերում մեր ունեցած խոտն ել վերջացավ։ Զոքեցինք անտառի բկին։ Դարավոր կաղնիներն ու բոխիները մեր կացինների հարվածներից ճարճատելով վայր եյին ընկնում։ Քաղցից կմախքացած անասուններին քշում եյինք կտրատած ծառերի վրա և ուտեցնում բուրջը—ճյուղերի ծայրի կոկոններն ու դալար փոսերը։

Անասունները սկսեցին կոտորվել։ Սատկեց նաև մեր Մաշկան, այն կովը, վորին քանի՜-քանի տարիներ փայփայել մեծացրել եյի, գառունքները հանդում ծնացրել, հորթը ձեռքերիս վրա տուն տարել և սիրել ինչպես մեր ընտանիքի անդամի։ Հայրս տանջանքը դեմքին Մաշկայի փորից մի մեծ ու պոչը ծաղիկ հորթ հանեց։

Պավլեյի վոչխարը սկսեց կոտորվել տասնյակներով։

Հազիվ մորթիները վերցնում ու կմախքացած մարմինները թաղում եյինք։ Այդ որերին ամենից լավ ապրեցին շները, վորոնք լիուլի միս եյին ուտում։

Մնացած անասուններն ել նստում ու վեր չեյին կենում։

Ամեն առավոտ իրար ձեն եյինք տալիս։

— Ադա, Մայիս, Նիկոլ, մի լինգը բերեք, ընգենք։—Յեվ փայտը գցում եյինք կմախքացած անասունի տակը, լծվում ծայրերից, յերկու հոգի յել՝ մեկը պոչից եր բռնում, մյուսը գլխից ու տնքալով հազիվ վեր եյինք քաշում և բուրջը դնում առաջը։ Այդ ձմեռ մեր անտառների կեսն ել պակսեց, անասունների կեսն ել։

Լեշերը հազիվ եյինք թաղում...

Յեվ անզոր կատաղությամբ եյինք լցվում դեպի այն մարդ-գազանները, վորոնք հափշտակեցին մեր խոտն ու հացը։



ՍՐՆԳԻ ՄԵՂԵԴԻՆ

Նորից գարուն։

Անտառը տերևակալեց ու մուգ տեսք ընդունեց։ Ձյունն արագ նահանջում է դեպի լեռան բարձրունքներն ու հալ ընկած շերտերով ջրում կյանք առնող լեռան լանջերը։

Նորից քոչի քարավանը ձորերից ձգվում է դեպի լեռները, դեպի Թավշյա սարահարթերը։

Այս տարի Հանեսը դառնարած է, մի ահագին մոթալ փափախով և ծայրը չերկաթած չոմբախով դառնարած։

Գարնանային լուսնկա գիշերները չես անկողնում պառկած շատ եյի սիրում դունչս դեմ անել չաթանին[1] ու ներս ծծել լեռան գագաթից փչող մեղմ զեփյուռը, որն իր հետ հազարավոր ծաղիկների բուրմունքն էր բերում։ Իսկ շատ հաճախ չես ականջ եյի դնում չոբանների սրընգի մելամաղձոտ նվագին։ Հանեսը շատ լավ շվի[2] նվագել գիտեր։ Նա առանձնապես հաջողությամբ նվագում էր բռնված Թուրք չոբանի մոր «բայաթին», յերգը՝ ուղղված անտեր մնացած հոտին՝

Այ վոչխար, սեվամազ վոչխար,
Ցեթիմ[3] մնացած իմ սուրու,[4]

[1] Չաթան—յեղեգից հյուսած «պատ»։
[2] Շվի—սրինգ։
[3] Ցեթիմ—որբ։
[4] Սուրու—վոչխարի հոտ։

Ձիգյարս սարերում մնաց,
Ցուրդը քոչեց, այ վոչխար։
«Ա գոյի՜ն... ա գոյի՜ն...
Ցուրդը քյոչդի, գոյին հե՜յ...[1]»։

Յեվ սրնգի սրտաճմլիկ ու տխուր մեղեդին լեռնային մեղմ զեփյուռի հետ տարածվում էր օդում, իսկ գառները մո՜ւշ-մո՜ւշ ննջում եյին կամ մեղմիկ փնչոցով վորոճում արխաջում։

Յես կարծում եյի, թե միայն և միայն չես եմ, վոր տարվում եմ լեռների չնաշխարհիկ հեքիաթային գիշերով ու սրնգի մելամաղձոտ նվագով։

Բայց պարզվեց, վոր մեր հարևան Վարսիկը նույնիսկ արթուն «գիշերներ է լուսացնում»։

Այդ իմացա հետևյալ կերպ.

Մի գիշեր, շատ ուշ, մեր վրանը խիստ ցնցվեց։ Տաշտերում կաթը սկսվեց ալեկոծվել, դուրս գալ ափերից, իսկ ուլերը սկսեցին ճրթճրթալ։ Մայրս վեր թռավ իր տեղից, չես էլ հետը։ Հասկացա, վոր մեր գոմեշն է, մեջքը քորում է։ Վոտաբոբիկ դուրս յեկա ու քշեցի գոմեշին։

— Վախտա՞նգ,—լսվեց Վարսիկի ձայնը չաթանի արանքից։

— Հ՞ը, աղջի, դեռ չես քնե՞լ։

— Չէ, լսում եմ։

— Ի՞նչը։

— Արխաջիցը շվու ձեն ա գալիս։

— Ո՞վ ա ածողը,—դիտմամբ հարցրի չես։

Վարսիկը ծիծաղեց։ Յեթե լույս լիներ, հենց չաթանի արանքից էլ կնկատեյի, վոր նա խիստ կարմրեց։

— Աղջի, շվին շա՞տ ես սիրում։

— Ենքա՜ն...—ծոր տվեց նա այնպես խորը կարոտով, կարծես այդ շվին ինչ վոր անհասանելի, ինչ վոր «մուրազ» էր։

[1] Գոյին—վոչխար։ Ցուրդը քյոչդի—յուրդը քոչեց։

— Մինչև լիսը ականջ եմ դնում,—ասաց նա կամաց ու տխուր շեշտով։

Վերադարձա վրանն ու մորս տաք ծոցը մտա։ Մտածում եյի։ Ախր Վարսիկը ինչու՞ չի «գիշերներ լուսացնում»։ Ցերեկ սիրում ե գառնարած Համեսին։ Բայց ի՞նչ ե սերը և ինչու՞ չի սիրում, յես այդ չեյի հասկանում։ Յես ել հաճախ կարոտում եյի միակ քրոջս, որին հայրս գոռով մարդու յեր տվել «կռոյի յերկրում»։

— Հալբաթ նա ել Համեսին ե կարոտում,—մտածեցի յես և սիրո «պրոբլեմը» վճռած համարելով, աչքերս խփեցի։ Հովը չալթանի արանքով բերում եր սրնգի նվագն ու շների հատ ու կենտ հաչոցը՝ մոտակա ձորում...։

ԱՐԵՎԱԾԱԳԸ

Առավոտը շուտ դուրս թռա վրանից ու թափ տվի Վարսիկենց վրանի «սյուներից» մեկը։

— Հո՛, հո՛, հո՛, այ գոմեշ, այ սատկես դու հո՛, անտերը քանդեց դագեն,—ներսից աղմկեց Վարսիկի մայրն ու փայտը ձեռքին դուրս յեկավ. հենց են ե, գլխիս վրա յեր բերում՝ փոթկացի։

— Այ դալի, ելի շաշությունդ բռնե՞ց,—ասաց ու ականջիցս քաշեց՝ մայրական գգվանքով։

— Մոքիր, Վարսիկին եմ ուզում, Վարսիկին. վեր կացրու շուտ։

Ել չսպասեցի։ Ներս մտա ու վերմակը Վարսիկի վրայից դեն քցեցի։ Նա սարսափահար վեր թռավ, տեսավ, որ յես եմ, կարմրեց ու ծիծաղեց։

— Դե, շուտ վեր կաց, սարի գլուխը բարձրանանք, տեսնենք արևը վո՞նց ե դուրս գալիս, տոպրակը վերցրու, համ ել սոկոն[1] կբերենք։

Մի քանի րոպե չանցած՝ կազմ ու պատրաստ դուրս

[1] Սոկոն—սունկ։

յեկանք ոբայից։ Քայլում ենք սարնիվեր փափուկ կանաչի միջով։ Ցողը ջրում ե մեր մերկ վոտները մինչև ծնկները։

Ահա և գագաթը։ Ինչքան բարձր ե։ Դառնում ենք դեպի արևելք ու նայում։ Ինչ վոր ամպի սպիտակ կտորներ բռնել են արևի «դուռը»։ Նրանք սկսում են կարմրել ու արագ ծվեն-ծվեն լինել, նոսրանալ։ Արևի առաջին շողերը հանդիպակաց սարի լանջից պատռում են վաղորդյան ցուրտ ոդն ու հասնում մեզ։

Ներքևի անդունդներից, անտառներից մառախուղի մանր կտորներ արագ մեծանում ու խտանում են։ Մեր վոտների տակ են Լոռին, Ղազախը, հեռվում կապտին ե տալիս Սևանա լճի մի կտորը, իսկ հարավում, շատ հեռվում ինչ վոր սպիտակ, շաքարի գլխի նման բան ե յերեվում։

— Են ել Մասիսի ծերն ա, Վարսիկ, մտիկ։

Լեռան կատարը մի սիրուն տափարակ ե։

Ծաղիկնե՜ր... ծաղիկնե՜ր, անհամար ծաղիկներ փռված են գրկված նոր ծլած խոտերի հետ։ Կարծես այս տափարակը հեքիաթային մի հսկա գորգ լինի, ապրշումե մի գորգ։

Վոտաբոբիկ վազում ենք «գորգի» վրայով, թավալվում, իրար մազերից, փեշերից քաշքշում։

Վարսիկը ծաղիկներից սիրուն պսակ պատրաստեց ու անցկացրեց մեկն իր՝ մեկն ել իմ գլուխը։

— Տո, ես հո թագավոր ու թագուհի դառանք,—կատակեցի յես։

Ներքև, ձորերում մառախուղը գնալով խտանում ե։ Կարծես մենք կղզու վրա յենք, իսկ մեզնից ցած լեռան չորս կողմը տարածվում ե սպիտակ ծովը, մառախուղի ծովը։ Մոտեցանք լեռան պռունգին ու նստեցինք մի քարի վրա։ Ցած, դեպի ձորն ենք նայում։

Մեկ ել ներքևից յերկու շուն նկատեցին մեզ ու հաչելով վո՞նց են գալիս։

— Փախչենք,— ասաց Վարսիկը սարսափով:

— Չէ, չէ, կհասնեն, կպատառոտեն, սուս ու փուս պառկիր, հեչ մուկ չանես շների վրա ու ժաժ չգաս,— կարգադրեցի յես ու պառկեցի բերնիվայր: Վարսիկը հետևեց իմ օրինակին: Շները հասան մեզ, պտտվեցին մեր շուրջը, հոտոտեցին ու հեռացան: Ահից չենք շարժվում:

Հանկարծ կողքիս ցավ զգացի: Մեկը փայտով բզում է կողքիս: Գլուխս բարձրացրի՝ տեսնեմ Հանեսն է:

Վարսիկը գլուխը կամացուկ բարձրացրեց, նայեց Հանեսին, ժպտաց ու կարմրեց:

— Լավ ֆանդով պտտվեցիք, չպառկեյիք՝ գզելու եյին,— ասաց Հանեսն ու պառկեց մեր կողքին:

Վարսիկն իսկույն վեր թռավ, ծաղիկներից մի պսակ շինեց ու դողացող մատներով անցկացրեց Հանեսի գլուխը:

Աղջկա մատների հպումի՞ց, սրտագին այդ նվերի՞ց, թե Վարսիկի ժպիտից չոբան պատանին շփոթվեց ու շառագունեց: Այնուհետև սկսեցինք խաղալ գառների ու չարաճճի ուլիկների հետ և գոչերին մի լավ կռվեցրինք ու բոլ զվարճացանք:

ԱՌԱՋԻՆ «ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ» ԳԱԶԱՆԻ ՀԵՏ

Մի քանի րոպե չանցած՝ յերկինքը մռայլվեց... կարկուտ տեղաց: Վազեցինք մտանք քարայրը: Գառները աղիողորմ մայելով թափվեցին ձորերն ու ապաստանեցին սաղարթախիտ կաղնիների տակ: Մեր դիմացն են: Մեկ էլ գառների կույտի մեջ կարծես դինամիտ պայթեցրին: Հոտը վայրկյանապես ցրվեց վողջ ձորով մեկ: Հանեսն իրեն քարից ցած նետեց և նետի նման թռավ դեպի ձորը, ուր մի ահագին գայլ սկսել էր կատաղի հունձը:

«Ամլիկ»[1] գառան դմակիցը բռնելուն պես՝ չոբան պատանու մահակը ճռճվեց օդում ու թափով իջավ գայլի թիկունքին՝ ապա գլխին, մեջքին, վոտքին: Գայլը վոռնաց ու կաղալով, կոնձկոնձալով սկսեց փախչել: Խեղճը գլխի հարվածից շշմել էր: Մինչ նա հազիվ քարշ էր տալիս ջարդված վոտը՝ շները Հանեսի հետ վրա հասան ու սկսվեց տուր ու դմբոցը, որհասական կռիվը: Մենք հարայ տալով ներքև իջանք և տեսանք գազանին անշնչացած ընկած:

[1] Ամլիկը— հոտում ամենաուշ ծնված գառն է:

Յերեկոյան գայլի մորթին շալակած տուն գնացինք:

Ամբողջ բինան հավաքվեց մորթու շուրջը: Վարսիկի մայրը Հանեսին գովեց ու ճակատիցը համբուրելով ասաց.

— Իգիթ ա, իգիթ,— ու դարձավ մորս կատակով.

— Աղջի, Թառլան, Վարսիկիս ես շարմաղ տղին եմ տալու:

Մենք լիաթոք ծիծաղեցինք, իսկ Հանեսը գլուխը կախ գցեց, կարմրեց: Վարսիկը ծիծաղելով փախավ, վրանը մտավ:

Այդ գիշեր Հանեսի սրինգն ավելի գիլ ու մարտական էր հնչում. մելամաղձոտ «բայաթին» չէր սազում նրա բերկրանքով լի հոգուն:

Իսկ մեր հարևան վրանի չալթանի արանքից յերկու սև ու անմեղ աչքեր նայում եյին դեպի լուսնի լույսով վողողված արխաջը...

ՎԱՅՐԻ ՆԺՈՒՅԳՆԵՐԻ ՎՐԱ

Վորպիսի հաճույքով եմ հիշում մեր ձիարշավները, մեր լեռների կանաչազարդ բաց տափարակներում:

Մելոնց ու Աստուրենց ձիերը գարնանամուտին դուրս եյին արվում ախոռից և իրենց քեֆին մինչև աշնան վերջը արածում եյին սարերում: Մայիսին նրանց մազը թափվում էր, իսկ գարնանային անձրևը հաճախ էր լողացնում նրանց: Ձիերն ամիսներով մարդու յերես չեյին տեսնում և վայրի բնության մեջ վայրենանում եյին պախրաների նման:

Հաճախ եշերին նստած քշում եյինք սարահարթերում:

ՈՂԱԿԸ ԳՐԿՈՒՄ ԵՐ ՎԱՅՐԵՆԱՑԱԾ ՆԺՈՒՅԳԻ ՎԻԶԸ

Դանդաղաշարժ իշին «Չուլախ» քշելու համար, փայտով խուտուտ էինք անում մեջքները։

— Հանես, բալամ, իշով բան չի դառնա, տղա յես Գոքորի բոզ մադյանին[1] նստի։ Եշից ձեռք էինք քաշում, մի խումբ տավարածներով հավաքվում էինք ու մի փոսում, մի քոլի տակ շրջապատում ձիերի յերամակը։ Թոկը ֆռռում էր օդի մեջ և օղակը գրկում էր վայրենացած նժույգի վիզը կամ վոտքը։ Քյամանդ քցած[2] ձին փրփրում է վագրի նման։ Մենք վեց-յոթ հոգով լծվում էինք պարանին, կամ հաղթում էինք կատաղած նժույգին և նստում մեջքին, կամ նա բոլորլս եւ քարշ էր տալիս փափուկ տափաստաններում այնքան, մինչև վոր քափ-քրտինքի մեջ կորչում էր ու յենթարկվում մեր քմահաճույքին։ Իսկ հաճախ եւ կուզեկուզ մոտենում էինք, մի քարի կամ մի թփի տակից դուրս պրծնում ու թռչում ձիերից մեկի փափուկ մեջքին։ Վայրենացած նժույգը վագրի նման ծառս էր լինում, փռնչացնում, կանգնում էր հետևի վոտների վրա, քացի էր քցում օդում. դու տղա յես՝ բաշիցը պինդ կպիր։ Յեվ նժույգը խելակորույս քամու նման սլանում էր փափուկ մարգագետիններով, յեղջերվի նման սուրում էր սարն ի վեր, թռչում փոսերի վրայից, մինչև վոր ամբողջ մարմինը փրփրում էր և իջնում էին կատաղած կենդանու կողքերը։

Հաճախ էինք ձիերից գլորվում, բայց տափաստանի մարդաբոյ խոտը մեզ չէր թողնում ջարդվենք։

Հանեսը հաճախ էր ասում․

— Ադա, իշից վեր ընկնելն ավելի փիս ա, է։ — Յեվ իսկապես, են ցածլիկ էշերից վեր ընկնելն ավելի վատ է, քան կատաղած նժույգից։

Բայց՝ ձի նստելը մեզ եժան չնստեց։ Գոքորի կապույտ

[1] Եգ ձի, զամբիկ։

[2] Քյամանդ գցել — հեռվից պարանով բռնել ձիուն։

նժույգով արշավելիս՝ ձիու առաջին վոտները կպան մի քարի, գլխակոնձի տվեց ու Հանեսին շպրտեց 10-15 վոտնաչափ հեռու, խիճերի մեջ։ Պատանուն հազիվ ուշքի բերինք և կապեցինք գլխի բացված լայն վերքը։ Քանի որ եր՝ նա վրանից դուրս չեր գալիս։

Այնուհետև յես Հանեսին չտեսա։ Լսեցի, վոր գնացել ե Դիլիջան և Դավթանց Միխակի տանը բատրակություն ե անում։

Սովորելու համար նա հաճախ եր սարից փախչում Դիլիջան։ Ես անգամ ել ասում եյին, վոր Միխակի տունը սովորելու համար ե գնացել։ Ծագեյինը խոստացել եր ձմեռը նրան դպրոց ուղարկել, բայց հետո փոշմանել եր ու ասել.

— Հինգ տարի մեր տանը կաշխատես, մի մոզի կստանաս և նրա գնով դպրոց կգնաս։—Պատանին գլուխը կախ աշխատել եր մի քանի շաբաթ և մի գիշեր սայլը թողել եր հանդում ու փախել։

Այդ վերջին ամառն եր, վոր մեր լեռներում յես անցկացրի Հանեսի հետ։ Յեվ ինձ թվում ե, վոր այդ ամառ մենք ավարտեցինք մեր պատանեկության շրջանը, մեր կյանքի ամենաքաղցր շրջանը։

Հետագա դեպքերը կարճ ժամանակում մեզ կազմակերպեցին ու հասունացրին։ Քաղաքական կյանքի մրրիկը գլխապտույտ արագությամբ մեզ դեպքերի խռովահույզ ալիքների մեջ նետեց։

Յեվ կարճ ժամանակում ջարդուփշուր եղան մեր պատանեկական անհոգ կյանքի վերջին բեկորները...

ԿԱՐՄԻՐ ՊԱՐՏԻԶԱՆՆԵՐԻ ՀԵՏ

ՑԵԽԸ ՀՈՍՈՒՄ ԵՐ...

1918 թիվ...

Այդ տարվանից հիշողությանս մեջ ամենից թարմ մնացել ե ցեխը։

Այո, ցեխը, վոր այդ գարնանը հոսեց մեր լեռների լանջերից դեպի վար, դեպի անդնդախոր ձորերը և իր ճամբին տակով արավ, սևացրեց, ապականեց մեր կանաչ արտերը, թավշյա մարգագետիններն ու նոր բացված ծաղիկները։

Ախր ինչպե՞ս գոյացավ ու հոսեց ցեխն այն լեռներից, վորոնց լանջերում յես միայն ծաղիկ ու կանաչ եմ տեսել և մեկ ել ձյուն, յերբ աշնանը վրանները պոկում եյինք ու քաշում ձմեռանոցները։ Բայց ցեխ, ցեխի հեղեղ, յես միայն 18 թվին եմ տեսել։

Ցեխը գոյացավ մարդկային հեղեղից, ահաբեկված թշվառ ամբոխի հեղեղից, վոր մեր կանաչազարդ ու անտառապատ լեռներից հոսեց դեպի վար, դեպի մեր աղքատիկ ու հյուծված գյուղը, վորը կուչ եր յեկել լեռան ստորոտին՝ Դիլիջան տանող ճանապարհի վրա։ Ահա ինչու մայիսյան մառախլապատ ու անձրևոտ որերի մարդկային հեղեղն անցնելուց հետո, մեր գյուղը մնաց ցեխը— մեր սարի սև ցեխը։

Ցեխը հանդարտ եր հոսում և տեղ-տեղ դեմ եր առնում մարդկանց ու կմախքացած անասունների դիակների կամ մի խորտակված սայլի, լճանում եր, իր գիրկն առնում և վրայով շարունակում հոսել ցած...

ՄԱՐԴԻԿ ՆԱԽԱՆՁՈՒՄ ԵՆ ՁԻԵՐԻՆ

Ղազախում մայիսը գեղեցիկ է։ Լեռները կանաչազարդ, թավիշ, սակայն այդ տարի սովի, մերկության, խեղճության հետ մայիսը մեզ անձրև ու մառախուղ բերեց։ Կարծես յերկինքն էլ եր դառնացած հրոսակային այն խմբի դեմ, վորը բույն դրեց մեր գյուղում, հնձեց մեր կանաչ արտերը, մորթոտեց մեր անասունները, հափշտակեց մեր ցորենի ու կորեկի վերջին հատիկը և հարյուրավոր մարդկանց սովի ճիրանները նետեց…

Լավ եր, մառախուղն անցավ, անձրևը դադարեց և քաղցած ամբոխը տավարի հետ դաշտ դուրս յեկավ արածելու…

Լավ եր, շատ լավ, վոր Դիլիջանում բույն դրած Սեպուհի հրոսակները չեյին կարող հանդի կանաչն էլ խլել քաղցած բերաններից։

Յեվ այն ժամանակ, յերբ Ղալմանց Յեփրեմի, Մելոնց Ամնի և նրանց պես հարյուրների տատմները կանաչել եյին «բանջար» ուտելուց, յերբ անասնապահը կաթի մեջ հացի փոխարեն պանիր եր բրդում, այդ նույն ժամանակ Արսենի տներում «Վանակի պոկը» խրախճանքի գիշերներ եր լուսացնում և հոշոտում աղքատի թառից վերցրած վերջին հավը, արխաջից գենքի ուժով հափշտակած վերջին վոչխարը։ Անդրանիկ փաշայի, զորավար Սմբատի և մյուսների ձիերի համար գարուց հաց եյին թխում։ Մարդիկ նախանձում եյին ձիերին և կուզեյին իրենք էլ ձի լինել։

Այդպես եր տասներկու տարի առաջ, 18 թվի մայիսին։

ՀԱՑԻ ՏԵՂ ՄԵՌԵԼՆԵՐ

Տարուց ավելի հրոսակախումբը չոքած մնաց մեր գյուղի բկին։ Ամեն առավոտ դաշնակցական կոմիսար Ա-

սատուրը դուրը կտրում եր ու մարդկանց պլետի տակ տալիս։

— Շան վորդիք, մարդիկ Ֆրոնտում կոտորվում են, դուք կռու էլ չեք գնում։— Յեվ կմախքացած յեզներն արձակվում եյին գութանից, արորից, խոտի սայլը բարձած մնում եր կես ճանապարհին։ Այսօր Սեպուհի խմբի համար անտառից փայտ են տանում, վաղը կոմիսարը վեց սայլի կարիք ունի։ Իսկ ամեն որ ռազմամթերք պիտի տանենք, դա մեր անվիճելի պարտականությունն է։

Յերբեմն էլ սայլը խլում են և քշում ուղիղ դեպի կազարմա։

— Այ, լազաթ կտա սոմի[1]՝ բարձեն,— անցնում է մրտքովդ ու բերնիդ ջուրը թափելով սպասում ես, թե ես ա, կգա մեշոկներով սոմին, միսը կամ ամերիկական կաթը, հույս ունես մի կտոր էլ դու ճանկդ քցես։

— Չէ, բալամ, մեռելներ են բերում։

Զանդ փշաքաղվում է, սիրտդ կծկվում, ցավում, իսկ նրանք սառնասիրտ կերպով սայլիդ բարձում են ափից, քաղցից կոտորված զինվորներին ու քշում դեպի գերեզմանատուն…

Յեվ մահը անխնա իր հունձն եր անում կազարմաներում, գյուղում ու անգամ կանաչազարդ իմ սարերում, ուր առաջ մահն այնքան վարանոտ քայլերով եր մոտենում։

[1] Սոմի — հաստ հաց։

ՅԵԶՆԵՐԸ ԽՐՎԵԼ ԵՆ

Կոռն[1] էլ ավելի տաժանակիր էր, յերբ ձմեռվա սառնամանիքներին գեմ եյինք տանում Սեմյոնովկայի կեռմաններին։ Մի գիշեր կեռմանների կեսը չհասած՝ բքի բռնվեցինք։ Դա «անհրաժեշտ էր», վորովհետև Բասարգեչարի թուրքերին ջնջելու համար սայլերով փամփուշտ, գնդացիրներ ու լայնաբերան թնդանոթներ եյինք հասցնում։ Սայլերը, թնդանոթները խրվում եյին ձյան կույտի մեջ, մաուզերիստները հայհոյանքի տարափ եյին թափում ու ջաններս դաղում պլետով։ Իսկ ցուրտը կտրում էր թրի նման։ Ակոյենց Քոչարի յեզները խրվել են։

— Քշի, շան վորդի։

— Ախր, բալա ջան, հայվաններին կոտրեցի, առաջ գնալու ճար չկա,— մղկտում է ծերունի Քոչարը։ Մտրակը շաչում է օդում ու պառ գալի Քոչարի թիկունքով։

[1] Կոռ—ասում եյինք այն հարկադրական աշխատանքին, վոր ձրի կատարում եյինք պետության համար։

Մի քանի օր առաջ, յերբ մեր ավտոն կեռմաններից թափով դուրս յեկավ ձորի բերանը, և նորակառույց պանրագործարանը հաղթականորեն ցցվեց մեր առաջ, նորից հիշեցի Ակոյենց Քոչարի տանջված դեմքը, պլետի տակ կուչ յեկած նրա վիթխարի մարմինը...

ՊԱՏԱՆԵԿՈՒԹՅՈՒՆԸ ԹՆԴԱՆՈԹԻ ԲԵՐԱՆՈՒՄ

Գյոգչա տանող խճուղով ձգվում է անհամար սայլերի շարանը՝ բարձած խալիչաներով, կարպետներով ու տնային այլ իրեղեններով։ Գյուղացիներն իրենց ունեցած-չունեցածը տանում եյին Գյոգչա՝ գարու հետ փոխանակելու։ Դաշնակցական պաշտոնյաները մի քանի փութ ամերիկական ալյուրով ամբողջ տուն գույք եյին առնում գյուղացիներից։

Համատարած սովը, հիվանդությունները, ամենուրեք զորհավաքներն ու մաուզերիստների մտրակների ու գնդակների շրմփոցը սարսափ եյին տարածել Ղազախի ձորերում։ Մահվան սպառնալիքի տակ, զենքի ուժով ֆրոնտ եյին քշվել զենքի ընդունակ բոլոր տղամարդիկ—16 տարեկան պատանիներից մինչև 50—55 տարեկան ծերունիները։ 60-ն անց վորսկան Շաքարն էլ էր կռիվ գնացել։

Մռայլ ու անարևոտ մայիսյան մի օր ֆրոնտից փախած զինվորները գուժեցին Ղարաքիլիսայի անկման մասին։ Այս անգամ մաուզերիստները գյուղերում մարդ չըգտնելով, Դիլիջանի դպրոցի աշակերտությանը քշեցին ֆրոնտ։ Ազգայնական թույն էր սրսկված պատանեկության գիտակցության մեջ։

Ճակատից շատերը յետ չեկան։ Յետ չեկան և իմ դասընկերներ՝ Սիսակը, Տիգրանը և ուրիշ շատերը։

ԱՅՍՊԵՍ ԼՈՒԾԵՑԻՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑԸ

Բո՛մ, բո՛մ, գը՛ռ, ու՛ռ, ու՛ռ... վորոտում եյին թնդանոթներն ու խուլ արձագանքում հսկա անտառում։ Մեր

հարցան Սլաբոդկա մալական գյուղն էր ռմբակոծվում։ Մալական աշխատավորները գնդակների տարափի տակ անտառներն էին փախչում։ Գյուղը թալանվեց։ Նրանք «բոլշևիկներ» էին, նրանք հայ չէին։ Յեվ դրա համար էլ հարկավոր էր նրանց բնաջինջ անել։

Կարմիր գյուղի, Ծամբարկի ու Սլաբոդկայի մալականներին թալանելուց հետո մաուզերիստական խմբակները չոքեցին թուրք աշխատավորության բկին։ Յեվ Ղարադոյլի ձորի Գյոլքյանդ, Բաշքյանդ ու այլ բազմաթիվ թըրքական գյուղերն ավերվեցին ու թալանի յենթարկվեցին։ Քանի որ էր մեր սարերից լսում էինք թնդանոթների հեռավոր խուլ որոտն ու պատկերացնում այդ ձորերում տիրող դժոխային դրությունը։

Դասալիք զինվորները հայտնեցին նաև Նոր-Բայազետի, Դարալագյազի ու Զանգիբասարի թրքական գյուղերի ավերման մասին։

Դաշնակցությունը «լուծում է» ազգային հարցը։

ԱԿԱՄԱ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆ

Վերջերս գյուղ էի գնացել։ Այնտեղ, ուր 12 տարի առաջ քաղցն ու թշվառությունն էր տիրապետում, աճում ու վեր է յելնում խորհրդային գյուղը։ Նորակառույց հրակա դպրոցը հաղթանակորեն նայում է գյուղին։ Իմ նանն արդեն կաթը սեպարատորով է քամում։ Գյուղի առաջ ծփում ու քամու հետ «հերանց էն գնում» կոլխոզի արտերը։

Պատահեցի Ակոյենց Քոչարին։

— Քոչար բիձա, քանի գնում ջահելանում ես,— ասում եմ ու հիացած նայում նրա լայն թիկունքին, լեռնեցու խրոխտ կեցվածքին։

— Ստեփանի ողա, միաք ա Սիմյոնովկի կեռմանները, ախր վո՞նց չջահելանամ։— Ու գոհունակության ժըպիտը խաղում է նրա առողջ դեմքին։

Բարձրացա սարը, վորտեղից տասներկու տարի առաջ հոսեց ցեխի և մարդկանց հեղեղը։

— Ես ճամբեքի կողքին մարդաբոյ խոտ ա կանգնում,— պատմում է պատանի հովիվը։

— Հողը պարարտացել է անասունների ու մարդկանց դիակներից,— ասում եմ կես մտախոհ,— քանդիր գետինը, անպայման վոսկորներ կգտնես։

Պատանին զարմացավ, փշաքաղվեց։

Խորհրդային պայծառ արևի տակ աճած ու մեծացած պատանին ի՞նչ իմանա, վոր տասը տարի առաջ մարդու և ցեխի հեղեղն է հոսել մեր կանաչազարդ ու ծաղկավետ բարձրունքներից։ Ի՞նչ իմանա, վոր հեղեղն իր գրկում թաղել է մաուզերիստական իրավակարգի թշվառ զոհերին։

Ահա ինչու մարդաբոյ խոտը նրա մեջ առաջացնում է բերկրանք, իսկ իմ մեջ նողկանք, վրեժ այն իրավակարգի հանդեպ, վոր մարդկային միսը պարարտանյութ դարձրեց...

Ընթերցող, նյութից շեղվեցինք, նորից վերադառնանք ու քրքրենք սև անցյալը։

ԲՈՒՆՏԸ[1]

Գարուն էր։ Նոր ցողուն արձակող արտերը մեր մեջ հացի համ տեսնելու հույսեր էին զարթեցնում։ Ահա ինչու սոված ամբոխը զազազեց, դուրս յեկավ ափերից, յերբ մի առավոտ դաշնակցական հեծելազորի ձիերն արտերը քանդելիս տեսավ։

Համբերության բաժակը լցվեց։ Դանակը վոսկորին հասավ։

— Տղերք, բա փափախ չկա՞ ձեր գլխին, եզուց մեր

[1] Բունտ—ապստամբություն։

աղջիկներին և կանանց, բա տղամարդկություն չկա՞ ձեր մեջ։

— Տիգրան, թվանքդ մեյդան հանիր, մեռնելը սրանից լավ ա։— Ու փրոնտից փախած մի խումբ տղերք վրա ավին մաուզերիստական խմբերին։ Մաուզերիստները ձիերը, զենքերը, շաներն և գլխարկները թողած մինչև Դիլիջան մի շնչում ճղեցին։ Գյուղում «Վանկի պոկի» հետքն էլ չմնաց։

Ապստամբներին ամեն կողմից խրախուսում էին։ Մենակ նոր կոմիսար Մուկուչն էր կատաղել, փրփրել, մեկ էլ ծերերից վոմանք հանդիմանում էին ջահելներին։

— Այ դանդագներ, տերություն ա, թոփ ու թոփխանա ունի, դուք քա՞նի գլխանի յեք, վոր թվանք եք քաշում տերության վրա։

— Ձեզ եժան չի նստի, սրիկաներ, սպասեցեք,— սպառնում էր կոմիսարը։

Յեվ եժան չնստեց։ Մի քանի ժամ չանցած՝ Սեպուհի հրոսակները շրջապատեցին գյուղը։ Բլուրներից ու գյուղի դիմացի գերեզմանատներից սկսեց տեղալ արճճե կարկուտը։

— Տը՛ը, տը՛ը, տը՛ը, տրա՛, տրա՛, տրա՛... Կղմինդրները տանիքից սկսեցին կարկտահար տերևների նման ցած թափվել։ Գյուղացիք լեղաճաք՝ տները թափվեցին։ Մի խումբ ձիավորներ սրերը մերկացրած արշավեցին սարի դոշին կանգնած բունտի ղեկավար Տիգրանի վրա։ Սև նժույգը խռովարարին մի քանի րոպեյում սարն անցկացրեց։

Ապստամբությունը ճնշված էր։ Զինվորները թափվեցին գյուղը։

Նորից թալան, նորից խուզարկություն։ Խռովարարներին են փնտռում, սակայն նրանք չկան. փախել են լեռներն ու թաքնվել քարանձավներում, կիրճերում, անառիկ քարափներում։

ԴԱՐԱՆԱԿԱԼ ԹՇՆԱՄԻՆ

Արխային ճամբեդ գնում ես, մտածում ընտանիքիդ, ցավիդ ու դարդիդ մասին. մեկ էլ հատաբուն մի կողնուլանջով, կամ թփերի արանքից քեզ վրա ուղղված ես տեսնում հրացանի զարզանդ ազդող փողը։

— Բինաթմա՛փ։

— Ձեռքերդ վե՛ր։

— Բեռդ վայր դիր, շորերդ հանիր ու կորիր, թե չե ծուխը փորդ կլցնեմ։

Յեվ թալանում էին բաց-աշկարա, որը ցերեկով։

Մեր տանն ապրող դաշնակցական զինվոր Բաբկենն ամեն յերեկո մեծ հաճույքով էր պատմում դեպի Մալականի հանդը կատարած իրենց խմբի «մանևրայի» մասին։

— Ռուս աղջիկները լավն են, շա՜տ լավը...

«ԳԵԼԸ ԾՆՈՒՄ Է»

Անձրևը դեռ չէր կտրել, յերբ հունիսյան թեժ արեգակը պատռեց ամպերի քողը։ Կարծես վերևից մի աներևույթ ձեռք բյուրավոր ադամանդներ մաղեց օդի մեջ։

Այդ՝ կաթիլներն են արևի տակ փայլփլելով իջնում ցած։ Արևախառն անձրևը որքան բերկրալի, որքան գեղեցիկ էր, այնքան չար նշան էին համարում մեր տատերն ու պապերը։ «Գելը ծնում է», ասում է սնահավատ խաշնարածն ու ատելությամբ լցվում դեպի բնության այդ հրաշալիքը։ Յեվ ամեն անգամ, յերբ անձրևի հետ միասին սևակնած յերկնքի մի ջինջ կտորից արևն իր պուտերն էր հանում, պառավները գլուխներն օրորում էին՝ «Հիսուս-քրիստոս, դու չարը խափանես, գելը ծնում ա»։

— Դրա ծինն անիծվի, յարաբ քանի լակոտ բերեց, եգուց մեկ-էլ որը էլի վրա կտան արխաջին։

Չնայած տիրող այդ աննպաստ կարծիքին, արևը յերևալուն պես մենք ուրախության ճիչերով դուրս թափվեցինք քարայրից, ուր պատսպարվել էինք անձրևի ժամանակ։

— Ջան, ջան, գելը ծնում ա, գելը ծնում ա,— բացականչեցինք մենք ու բոբիկ ոտներով սկսեցինք վազվզել կանաչ բլուրներում։ Ներքևում, հսկա անտառի վրա ոլից կախվեց յոթ գույնի կամարը։ Մենք զմայլված նայում էինք։

— Տղերք, ո՞վ կարա կանաչ-կարմրի[1] տակովն անց կենա։

— Ճաշ ե՞ս, տո, ով որ անց կենա, աղջիկ կդառնա, խաչը վկա,— համոզված տոնով փիլիսոփայեց հորթարած Տիգրանը։ Մենք հավատացած էինք դրանում, ուստի լռեցինք։

— Տղերք, նշա՜նի, նշա՜նի,— բացականչեցի ու վազեցի քարայրից «կազաչի» հրացանս դուրս բերի։ Ճիշտն ասած՝ մենք 11—12 տարեկան հասակից արդեն զենք էինք գործածում։ Իսկ այդ ժամանակ յես 14 տարեկան էի և կարգին նշան էի խփում։

[1] Կանաչ-կարմիր—մեզ մոտ ծիածանին են ասում։

Մեր մեջ ամենից միամիտն ու խեղճը Ալխանանց Ակոփն էր, ուստի հրացանս միշտ նրա մոթալ փափախի վրա էի փորձում։

Ես անգամ էլ, որպես ավագ տավարած, հրամայեցի փափախը դնել ութսուն քայլի վրա։ Նա դժգոհությունը թագցնելով (խեղճը վախենում էր քոթակից), ութսուն քայլ չափեց ու դրեց։ Կրակեցի։ Մի վոչխարի չափ փափախի վրա գնդակի ծակն ի՞նչ պիտի լինի։ Ասի՝ «Ակոփ, թե ուզում ես փափախդ վնաս չհասնի, մի քար դիր միջին ու դիր քոթուկի վրա»։ Մեկը փռթկացրեց, աչքերով սաստեցի, որ լռեն։ Ակոփը սկզբում տատանվեց, ապա սիրտ արավ, քարը մեջը դրեց և 100 քայլ չափելով դրեց մի կոճղի վրա։

Ծիծաղս հազիվ զսպելով, կրակեցի։ Քարը գնդակի հարվածից պայթեց դինամիտի նման և փափախի կտորները յերկինք թռան։ Ծիծաղից կոտրվեցինք։

ՀԵՎԱՑՈՂ ՁԻԱՎՈՐԸ

Մենք դեռ կանաչի վրա թափված ծիծաղում էինք, մեկ էլ մեր ներքևից սրարշավ մի ձիավոր անցավ։ Ճանաչեցինք, Հանեսն էր։ Յեվ սկսեցինք մեր սովորական յերգը՝

Այ տղա Հանե՜ս,
Մատդ տանե՜ս
Փայլդ հանե՜ս... և այլն։

Նա ձին մի կողմ թեքեց և զարմացանք, որ չհայհոյեց։ Շտապ մոտեցավ։ Դեմքն այլայլված էր։ Ինքն էլ էր հևում, ձին էլ։ Լրջացանք. մի բան կար։ Նա հեռու կանգնեց և առանց բարևելու ինձ կանչեց։ Տղերքից միքիչ հեռացանք։ Նա ուզեց խոսել, բայց շունչը կտրվում էր.

— Ասա, փորս պատռեց, դե ասա է՜,— բղավեցի յես համբերությունից դուրս յեկած։ Նա անհանգստությամբ չորս կողմը նայեց և շտապ ասաց.

— Չէ, էստեղ կտեսնեն, արի փոսն իջնենք։ Իջանք Նովավորի ձորը։ Յերբ իրեն ապահով զգաց, շնչակտուր ասաց.

— Մարդ եմ սպանել, հավատում ե՞ս։

Յես չզարմացա, վորովհետև սպանությունները այդ տարիներին «խաղ ու պար» էր։ Որ չէր անցնում, վոր մի ծառի, մի թփի տակ չընկներ մի դասալիք զինվոր, խաղաղ գյուղացի կամ «վորսի» դուրս յեկած մի մաուզերիստ։

— Խի չէ, մարդի գլուխը սոխի գլուխ ա դառել,— ասացի յես հանգիստ։

— Չէ, սա ուրիշ բան ա, սա կառավարության մարդ ա, դրանից եմ վախում։— Նրա կցկտուր ասածներից յերևաց հետևյալը.

Գարնանից Արթենանց Նիկոլի գառնարածն է, ինարկե, «մի փոր հացի»։ Սարից ձիով ուղարկում են գյուղ հաց տանելու համար։ Հացը վերցնում է, մի քանի հավ էլ կապում ձիու թամբից և գյուղից դուրս գալիս։ Ղշտողանի գետին չհասած՝ տեսնում է մի բան շարժվեց թփերի մեջ և հրացանի փողն ուղղվեց իրեն։ Մի մաուզերիստ դուրս է գալիս թփերի միջից, հրացանը մեկնում ու հրամայում.

— Կանգնի՛ր։

Ձին կանգնեցնում է։

— Զինաթա՛փ, հավերը վայր դի՛ր,— նորից հնչում է հրամանը։ Արխաիրտ պատանին իրեն չի կորցնում։ Մի ակնթարթում վզից հանում է տաճկական կարաբինը։

— Այ քեզ զինաթափ,— գոչում է նա, կրակում մաուզերիստի ճակատի մեջ տեղը, փռում և ձին մտրակելով սլանում մթին ծմակով ձգվող խորդ ու բորդ ճանապարհով։ Դաշնակ զինվորները հետևից ապարդյուն կրակելուց հետո «հերոսաբար» ընկած ընկերոջ դիակը քարշ են տալիս դեպի ձորն ու գետի ափին ընկերաբար մերկացնում, շորերը հանում։

— Բա՛, էսպես ույն յեկավ գլուխս,— վերջացրեց նա հոգոց հանելով։

Յես նրան հանգստացրի և դեռ գովեցի յել նրա արածը։

— Մի՞տդ ա, վոր դոնդաղով շնքիս տալով մեր Զեյրանի երինջը խլեցին մորթեցին, մի՞տդ ա, վոր մեր կանաչ արտերը հնձեցին, խոտն ու գարին թալանեցին։ Լավ ես արել, հեչ գարդ մի անի։— Յես խորհուրդ տվի նրան գնալ Հաղարծին ու միանալ փախած տղերքին (պարտիզաններին[1])։ Նա ուրախացավ։

— Դուզն ասած՝ նոքարությունից էլ եմ զզվել, խազեյինների ուշունցից էլ, սրանց էս ալան-թալանից էլ։ Պետիկը, Ակոփը հունարով մարդիկ են, կգնամ, ինչ վոր կլինեն, յես էլ հետները,— վճռեց Համեսը։

Այդ օրը Համեսին իր ձիու հետ միասին պահեցինք մի մութ քարայրում։ Յերեկոյան, յերբ խավարը թանձրացավ անտառում, չոլերով նրան ճամբու դրինք և գլուխներս կախ, տխուր-տրտում սկսեցինք քայլել տուն գնացող նախրի հետևից։

ՄԹԻՆ ՔԱՐԱՅՐԸ

Գիշեր է, խավար ու ցուրտ գիշեր։

Լեռնային կածանով պատանին ձիու սանձից քաշելով, բարձրանում է դեպի վեր, դեպի քարայրում բոցկլտող լույսը։

Կրակի մոտ ինչ վոր ստվերներ են շարժվում։ Մեկն ահագին մի շալակ փայտ դրեց խարույկի վրա։ Կրակը բորբոքվեց, կայծերի խուրձեր արձակեց և լուսավորեց մթին լեռան լանջը։ Ներքևում հաստաբուն մի կաղնու հետևից հրացանի փողը մեկնվեց ցած՝ դեպի ձիավոր պատանին։

[1] Պարտիզաններ— ապստամբ գյուղացիների խմբեր։

— Ո՞վ ես, կանգնի՛ր։

Պատանին կանգ առավ։ Ձին անհանգստությամբ սկըսեց շարժել ականջները։

— Յես եմ, Արթենանց գառնարածը։

— Ադա Հաննես, դու չես, ադա, ու՞ր ես գնում ես չախին։

— Հենց ձեզ մոտ եմ գալի, լավ եմ գտել։ — Պատասխանեց պատանին և աշխուժությամբ շարժվեց առաջ։

Թեժացած խարույկի շուրջը, գետնին ծալապատիկ նստած մարդիկ պատասխանեցին պատանու բարևին։ Նրանցից մի քանիսը ճանաչեցին։

— Իգիթ ադա յա, իգիթ, յերեկ են շներից մեկին Աբրահամի գոգն ուղարկեց, — ասաց Վահանն ու հաստ հոնքերի տակից սկսեց խանդաղատանքով նայել պատանուն։

— Հաննես, նստի՛ր, ի՞նչ խաբար կա։

— Մեր գեղը արդեն մաքրել են ու եսոր մալականի գեղի բլին են չոքել։ Ճաշին Ղուրդադից մարդ արի, ինչ ասենեմ — զորքերը շրջապատել են գյուղն ու թոփով, պլիմոտով կրակում են խեղճ մալականների վրա։ Սեպուհն ասել ե, յեթե եսոր եսքան հազար փութ կարտոֆիլ չտաք, բոլորիդ սուրը կքաշեմ։

Տղերքը մտատանջության մեջ ընկան։

— Հա, են եյի ասում, — շարունակեց վաղուց ընդհատված խոսակցությունը Ակոփը — ֆրոնտից փախած աչքարաց մի յերիտասարդ, վոր ըստ յերևույթին պարտիզանական խմբի ղեկավարն եր, — Պետիկ, դու եգուց քեզ գցի Տամշադնի կողմերը, ասում են Անանյեն եդ կողմերում յերևացել ե, տես ինչ խաբար ունի...

— Մենք ել... — Նիկոլը աչքով ու կեղծ հազով հասկացրեց՝ լռել։

— Չե, յես Հաննեսին լավ եմ ճանաչում, նա մերն ե, մեր մեջ նրանից շատ ո՞վ ե ճնշվել։ — Հաննեսը հասկացավ ու քաշվեց՝ դեպի իրեն յեղած վստահությունից։

ԿԱՐՄԻՐ ՊԱՐՏԻԶԱՆՆԵՐԻ ՄՈՏ

— Յես էլ գնալու տեղ չունեմ,—ասաց նա,—ինչ վոր անեք, ձեզ հետ եմ, եդ շներն ինձ հոտոտալով փնտռում են, վորտեղ գտան, կսպանեն, ենպես վոր յես ձերն եմ։

Յեվ նա այնպես ամուր ու վստահ շեշտեց վերջին բառերը, վոր այլևս կասկած չմնաց։

— Տղերք, Համեսի փոքր ու կորիճ լինելը մեզ շատ պետք կգա։ Նաղդի վրա մեզ հրահանգներ ու գրականություն ե պետք, մեկ էլ՝ ստույգ տեղեկություն, թե ինչ ե մտածում կենտրոնը, ինչ լուր կա Ռուսաստանից։ Յես մի թեթև լսեցի, վոր մերոնք Բաքվին մոտեցել են, չգիտեմ վորքան հաստատ ե։

Յեվ մինչև ուշ գիշեր խումբը յերկար ու բարակ քննեց մոտիկ որերի իր խնդիրները։ Հենց նույն գիշեր ընկերներից մեկը ցուցմունքներ ստացավ և ճանապարհվեց դեպի Սև-քար։

— Թողեք յես գնամ ելի,—բուռն ցանկությամբ ասաց Համեսը, յերբ Զատնանց կաղ Գրիգորը թուղթը գուլպի տակ դրեց, տրեխը հագավ և աշխուժությամբ անցավ թփերի արանքով ու անհետացավ անտառի մթության մեջ։

— Մի վռազի, եգուց էլ դու կգնաս, քո շորերն ու շորբը փոխելու յենք, թե չե կբռնեն, մեծ թիքեդ ականջըդ կթողնեն։

Յերկար ժամանակ պատանին աչք չեր հեռացնում հաճարի այն ծառից, վորի հետևն անհետացավ կաղ Գրիգորը։

ԱՅԼԵՎՍ ՎԵՐԱԴԱՐՁ ՉԿԱ

Տղերքը յափունջիները փռեցին ու պառկեցին, իսկ Համեսը դեռ յերկար ժամանակ նստել եր խարույկի մոտ, աչքը հառել մեղմ բոցկլտող կրակին ու մտքերի ծովն եր ընկել։

Մի քանի տարի առաջվա կենսուրախ պատանին այլևս չկար։ Չնայած նրա 13—14 տարեկան հասակին,

վերջին յերկու տարվա դեպքերը նրան հասունացրել եյին։ Այժմ նրա ուղեղը ուրիշ բաներով եր զբաղված։

Վերջերս նրան ինչ վոր մի ուժ մղում եր դեպի աղմկահույզ տարերքը։ Տարիների ընթացքում նրա պատանի հոգում ամբարված մաղձը ալեկոծվում, յելք եր փնտռում։ Յեվ այսոր յետ քաշվող վարագույրի հետևից կարծես այդ յելքը ավելի պարզ, ավելի պայծառ ե յերևում։

Դեռ մոտիկ անցյալում կյանքը, ձմեռանոցի տերերը նրան անձեռնմխելի ու որենքի մարմնացումն եյին յերևում։ Նա տեսնում եր իր և իր նմանների ու նրանց միջև գոյություն ունեցող վիհը։ Նա տեսնում եր մի խումբ «բախտավորների», վորոնք անդունդի մյուս կողմը, անհասանելի բարձրունքներում ապահությամբ ծծում են կյանքի բարիքները։ Յեվ նրան թվում ե, վոր դա հնուց, շատ հնուց «պապենական որենք ե», ինչպես իր հայրն եր ասում՝ «Բալա, մենք մեր վոտները նրանց հետ չենք կարա մեկնի, նրանք մեծ մարդիկ են, նրանց աստված եդպես ե ստեղծել»։ Յեվ բարակ պատանին գոմշարած ու գառնարած ժամանակ այդ համոզմունքով էլ անմռունչ տանում եր բոլոր զրկանքները։ Իսկ այժմ նա ինչ վոր ըմբոստացել ե։ Մի շաբաթ առաջ եր, վոր նա մի քանի խոսք լսեց «բալշևիկ» Ղուկասից և այդ մի քանի խոսքը թրի նման ծվատեց վարագույրը։ Այժմ՝ թեև կարծես մըրշուշում, բայց նա նշմարում ե վարագույրի հետև թագնըված իրականությունը և՝ վոր գլխավորն ե, տեսնում ե դեպի նոր կյանք տանող ճանապարհը։ Գյուղի ապստամբությունը և մաուզերիստին խփելը նրան վոչ միայն ահագին քաղաքական փորձ տվեց, այլ և վերջին այդ դեպքերը հզոր ուժով նրան շպրտեցին մյուս ափը, վորտեղից նա վերադառնալ կարող եր միայն զենքի ուժով, արյունոտ պայքարով։

Նա տեսնում ե, այժմ արդեն պարզ ե տեսնում ար-

յունոտ ու քարքարոտ այդ ճանապարհը, տեսնում է մահվան դաժան կերպարանքը, սակայն և պարզ կերպով նշմարում է մոտեցող վարդագույն արշալույսը։

Խարույկը հետզհետե իջնում է, մեղմ բոցկլտում։ Երբեմն այրվող մի փայտ գլխվում է հենարանից ու ճարճատելով ընկնում։ Ցրվող կայծերի լույսի տակ փայլում են պղնձագույն նիրհող դեմքեր, փամփշտակալներում փայլող պղնձյա փամփուշտների և քարին դեմ տված հրացանների պողպատյա փայլի նման։

Յեվ պատանին արևավառ ու բրոնզյա այդ դեմքերի վրա յերկաթյա վճռականություն ու մոտալուտ հաղթանակի խորը հավատն է կարդում...

ՀԱՐՅՈՒՐԱՊԵՏ ՄԿՈՅԻ ԿԵՆԱՑԸ

Գինու, կերակրների ու ծխախոտի ծանր հոտով հագեցած է Մկրեյի նեղլիկ ու կեղտոտ ճաշարանը։

Խմում, ծխում ու աղմկով վիճում են գավառական քաղաքի գառնիզոնի օֆիցերները—ադյուտանդները ու ֆեդֆեբելները։ Վեճի տաք ժամանակ հաճախ է ձեռքը բնազդաբար դեպի մաուզերի շնիկը գնում, մանավանդ այն սեղանի մոտ, ուր յերկու որիորդներ կոնյակի բաժակը ձեռներին, ժպտում են յերիտասարդ օֆիցերներին, շոյում նրանց առնական յեսը ու բորբոքում գազանային կրքերը նրանց մեջ։

Գինին ու կոնյակը տիրապետում են։

Հարևան սեղանից յերիտասարդ մի ֆեդֆեբել որորվելով մոտենում է աղջիկների սեղանին, վերցնում է գինով լի բաժակը ու կոչ անում.

— Պարոններ, խմենք հարյուրապետ Մկոյի կենացը, վորը խիզախորեն խեղդեց ազգի դավաճանների կազմակերպած խռովությունը։

Բաժակները շրխկում են հարյուրապետ Մկոյի բաժա-

կին, որից հերոսն իրեն յերկնքի յոթերորդ հարկումն է զգում։

— Տղերք, ձեր սուրը կտրուկ լինի, — ասում է նա հանդիսավոր, — իսկ յես արյունս դրել եմ բազմաչարչար մեր ազգի համար։ Շները թեև ամարդի կերպով խփեցին մեր ընկերներից մեկին, բայց տղամարդու խոսք եմ տալիս՝ մեկի փոխարեն յերեք բոլշևիկ տիկ հանել։—Ասաց, կոնծեց և ձեռքերը կողքերին կանթելով, հպարտ կանգնեց որիորդների առաջ։ Նրանք սիրալիր ժպիտներ շռայլեցին։

Անկյունում մի սեղան աղմուկով ընկավ։ Բոլորն այն կողմը նայեցին։ Ցնցոտիներով մի պատանի, գունատված ու կատաղությունից դողալով, նայում է դեպի հարյուրապետ Մկոն։ Նրա հոնքերը բնականից հաստ են, իսկ աղվամազոտ վերին շրթունքի վրա ինչ վոր անբնական բեխեր կան։

— Ո՞ւմ ես տիկ հանելու, մարսեցի՞ր մեր գեղի թալանը, —վորոտաց՝ պատանին ու ճիչը շպրտեց հարյուրապետի

յերեսին։ Որևորդները ծվծվացին։ Ճաշարանում ամեն ինչ խառնվեց իրար։

— Ո՞վ ե այս լակոտը, շպրտեցեք դուրս,—լսվեց ոֆիցերի հրամանը։ Հարվածներից պաշտպանվելու համար՝ պատանին ճարպկությամբ վերցնում եր աթոռները, սեղաններն ու դեմ անում իջնող բռունցքներին ու աքացիներին։ Միքանի զույգ ձեռներ արյունոտված հետ գնացին։ Մեկն ոդում կրակեց, առաստաղից հողը թափվեց սեղանների վրա։ Ժխորի մեջ պատանին ցատկեց մի ամուր թիկունքի վրա և պատուհանից իրեն գցեց դուրս ու ընկավ մի խումբ մաուզերիստների վրա, վորոնք մի ակնթարթում նրան վոտի տակ առին ու սկսեցին տրորել։ Ֆեդֆեբելը հրամայեց բանտարկել։

— Չարժե, Կոլյա, լակոտ ե,—միջամտեց ոֆիցերներից մեկը, բարի և դուրեկան մի յերիտասարդ։

Տեղացիներից մի խումբ ընկերներ արյունլվա պատանուն տարան գետնափոր մի տուն։

— Այ պիճ,—սկսեց կատակով գինվորական համազգեստով մի յերիտասարդ,—դու քանի՞ գլխանի յես, վոր շիշ ես քաշում հարյուրապետի վրա։ Գնանք տուն։

Յեվ տանը նա խրատեց, վոր «քյալլագյոզությունները» չանի, թե չե կբռնվի։ Նա այնպես եր խոսում, վոր կարծես լավ ճանաչում եր Հանեսին ու հենց նրան ել սպասում եր։

— Ձեր անունն ինչ ե, ընկեր,—հարցրեց պատանին։

— Սիմոն։

— Վահ, յես քեզ եմ փնտրում։

— Գիտեմ։

— Վո՞րտեղից գիտես։

— Դու հլա խամ ես, նամակը մի դեսը տուր տեսնեմ։ —Պատանին զարմացավ, ապա մեքենայորեն հանեց վոչխարի բրդից գործած բլուզը, քանդեց նրա թևի տակը և մի կտոր ճխլված թուղթ մեկնեց Սիմոնին։

Սիմոնը խորասուզված կարդում եր ու գլուխը խորհրդավոր շարժում։

— Լա՛վ, շատ լավ։ Նո՛ւ, միթնեց թե չե՝ կբարձրանաս շամուտը, վերևը մի փոքր թալա կա, գի՞տես։

—Ինչի՞ համար գամ,—հարցրեց պատանին, ինչ վոր բան նախագուշակելով։

— Կգաս՝ կիմանաս, իսկ առայժմ այնպես արա, քեզ չճանաչեն. այ, եդ բեխերը քեզ չի սազում, անշնորքները լավ չեն սարքել. մոտ արի մի դզեմ։—Յեվ նա արկղից ինչ վոր դեղեր հանելով՝ սկսեց աշխատել պատանու յերեսի վրա։

— Հիանալի յե,—բացականչեց նա ավարտելով,—հիմի սատանեն ել քեզ չի ճանաչի։

ԿԱՍՅԱՆԻ ՀԵՏ ԱՆՏԱՌԻ ԺՈՂՈՎՈՒՄ

Թփերի, ծառերի արանքներով, խոտերի ու բռնկուտների միջով փորսող տալով, ինչ վոր մարդիկ են բարձրանում դեպի բացատը։ Հսկա մի հաճարենու տակ արդեն հավաքվել են 30-ի չափ մարդիկ։

Խոսում են շշուկով և ծխում են շինելների տակ։

Մեծ մասը գինվորականներ են։

Ահա յերեկվա ոֆիցերը, վորը պատանուն ազատեց բանտարկությունից։ Մոտենում ե մի խումբ ես։ Խոսում են ռուսերեն. մեջտեղը քայլում ե ցածրահասակ ու ակնոցավոր մի մարդ։

— Ընկ. ԿԱՍՅԱՆՆ ե,—շշնջում են ծառի տակ նստածները։ Պատանին աչքերը չռում ե մթության մեջ ավելի լավ տեսնելու այն մարդուն, վորի մասին Ակոփը յերեկ այնքան վոգևորությամբ եր խոսում։ Դեռ Ակոփը մի գիրք ել բարձրաձայն կարդաց՝ «Ուր ե յելքը» վերնագրով, և ասաց,—«Ես գիրքը Կասյանն ե գրել»։ Ինչ լա՛վ եր գրած։ Ճամբեն ենպես պարզ ցույց եր տալիս, յերևի դրա հա-

մար են անունը դրել «Ուր է յելքը»: «Համա գիտնական մարդ կլինի հա՛», մտածում է Համեսը ու աչքը կարճահասակ մարդուց չի հեռացնում:

Ժողովն սկսվում է:

— Իսկ սա ո՞վ է, այս փոքրիկը:

— Սարից է յեկել, մերոնցից նամակ է բերել. կրտրիչ տղա յե. եսոր լավ մկրտություն ստացավ, կարող եք վստահել:

— Եդ առաջինը չի,—վրա բերեց պատանին կարմրելով:

— Բռավո, ճուտիկ, Ե՞լ ինչ են արել քեզ:

— Դա չե արել,—ասաց մեկը պառկած տեղից.—մի քանի որ առաջ մեկին սատկացրել է. եսոր էլ ճիշտ հարյուրապետի գլխին փշրեց:—Մի քանի ձեռքեր վոգևորված բարձրացրին պատանուն:

— Ղոչաղ կաց, եղպես էլ պետք է:

Պատանուն ամենքից շատ շփոթեցնում էյին ապակու տակից հայրական խանդաղատանքով փայլող զույգ աչքերը:

Ժողովում շատերը խոսեցին և շատ բանի մասին խոսեցին: Այդ բոլորից Համեսը քիչ էր հասկանում, բայց բնազդորեն նա զգում էր, վոր բոլոր ասածները, նրանց բոլոր ծրագրերը այն են, ինչ վոր կա իր ներսում, ինչ վոր ամբարված է իր, Պետիկի, Սիմոնի, Ակոփի, կաղ Գրիգորի և մյուսների ներսում: Առանձնապես հափշտակված նա լսում էր Կասյանի ասածները:

— Հիմնականն այժմ դաշնակցական բանակը քայքայելն է,—ասում էր նա:- Զինվորները—դրանք շինել հագած գյուղացիներ են, իսկ գյուղը յերեկ ձեր աչքի առաջ ապստամբեց: Ծայրահեղ ճնշումը, հարստահարումը, վոր կատարում են դաշնակներն այս գյուղերում, չի կարող հուզմունք առաջ չբերել նաև ֆրոնտներում չորս-հինգ տարի

անասելի տանջանքներ կրած զինվորների մեջ: Այդ դժգոհությունը կա. հարկավոր է ուժեղացնել կուսակցական աշխատանքը բանակում, գրականություն, կոչեր տարածել կազարմաներում և կազմակերպել հեղափոխական այդ տրամադրությունները:

Բուռն վոգևորություն է առաջացնում Ադրբեջանի խորհրդայնացման լուրը: Մթության մեջ միքանի տասնյակ աչքեր հրճվանքից հրդեհվում են: Ուրեմն հերթը Հայաստանինն է, ուրեմն տարիներ շարունակ փայփայվող յերազներն իրականանում են: Ուրեմն պետք է կրկնապատկված յեռանդով գործի կպչել:

Իսկույն կատարվում է աշխատանքի բաժանում: Հատուկ ագիտատորներ են նշանակվում բանակի և գյուղերի համար: Ներքին գյուղերից յեկած պատգամավորը յերկու խոսքով պատմում է դաշնակների գազանությունների մասին:

— Գեղի տղերքի մեծ մասը սարերն են փախել ու եստեղ-ենտեղ կռվի յեն բռնվում դաշնակցական խմբերի հետ: Ցույմունքների և գրականության մեծ կարիք ունենք: Շամշադինում արդեն վեց յաչեյկա ունենք:

Հենց այդ գիշեր յերկու հոգի ուղարկվում են Ղազախի ներքին գյուղերը՝ ապստամբական շարժումները ղեկավարելու համար:

— Իսկ ո՞վ է ցրելու թռուցիկներն ու պլակատները,—դառնում է ժողովականներին բոլշևիկ ֆեդֆերել Հակոբջանովը և ծաղկատար հոնքերի տակ փայլող աչքերը ման է ածում հարմար թեկնածու գտնելու համար:

— Տվեք, յես կտանեմ,—անվստահ ձայնով ասում է «ճուտիկը» ու մութ անկյունից առաջ է գալիս և վերցնում է թռուցիկներով լիքը տոպրակը:

Բոլորը հայացքները սևեռում են պատանու վրա: Կասյանը ժպտում է և մի ինչ վոր բան շշնջում կողքին կանգնած մարդու ականջին: Ապա դառնում է պատանուն.

— Ապրես, տղաս, տար, բայց չբռնվես, յեթե բռնեն, տես՝ թուղթ է, գտել եմ, տանում եմ գյուղերը կարտոֆիլի հետ փոխեմ։

Առաջ են գալիս յերկու զինվորականներ ևս և թռուցիկներ խնդրում կազարմաներում ցրելու համար։

Հանեսը տոպրակը թևերն է անցկացրել, բայց չի շարժվում։

— Տվեք նամակ և գրքեր, գնում եմ մեր խմբի մոտ, հետո յել ես թղթերը կտանեմ գյուղը։

— Չես կարող մի գիշերումն եդքանն անել,—պնդում է Ակոբջանովը. բայց պատանին համառում է։

— Թողեք Ադրբեջանի հեղափոխության խաբարը տղերքին հասցնեմ, հետո գնամ գյուղերը,—թախանձում է նա։

Համաձայնվում են։ Պատանին «մնաք բարև» է ասում և ցատկոտելով անհետանում է մթին անտառում։

ԽԼՐՏՈՒՄԸ ՄԻԼԻՑԻԱՅԻ ՇՏԱԲՈՒՄ

«Մեծ կամրջի» ծայրին, միլիցիայի շտաբի առաջ համաչափ քայլերով հետ ու առաջ է շարժվում պահակը։ Պատանին մի րոպե կանգ առավ։

Գարնանային պղտոր գետը վիշապի նման մռնչալով զարնվում է պատերին, ամբարտակներին։

Պատանին շոսեյի կողքով ձգվող կանալով կուզեկուզ առաջ է շարժվում, աննկատելիորեն մտնում է կամուրջի տակն ու յերկաթե ճաղերից կախված՝ ճոճվելով, ճարպկությամբ առաջ է գնում, դուրս է գալիս մյուս ափը և ըզգուշությամբ քայլում դեպի բլուրը։ Մի քար վոտքի անզգույշ հարվածից աղմկելով գլորվում է ցած։

— Ո՞վ ես, կանգնիր,—հրամայում է պահակը կամուրջի ծայրից։ Պատանին յեղնիկի նման սլանում ու անցնում է բլուրը, իսկ յետևից հրամանը յերկու անգամ կրկնվելուց հետո՝ վորոտում է հրացանը։ Միլիցիայի մոտ ինչ

վոր խլրտում է ընկնում, ձայներ են լսվում, իսկ պատանին դուրս գալով ճանապարհից, մտնում է անտառը և թփերից, քարերից կախվելով, մագլցում է դեպի վեր, դեպի կարմիր պարտիզանների բունը։

Կես գիշեր է։ Ահա և քարայրերն իրենց սև, գերեզմանի նման բերաններով։ Լույս չի յերևում։ Ձեն-ձուն չկա։ Վտանգ է յեղել, տեղափոխվել են, դե արի ու գտիր։

Ի՞նչ անել, ո՞ւր գնալ։ Չէ՞ վոր խոստացել է այս գիշեր թռուցիկները գյուղերը հասցնել։ Խավարը պատի նման կանգնել է նրա առաջ։ Իսկ հոգնածությունը հաղթում է նրան։ Աչքերի կոպերը ծանրանում են։—Ես, թե հեղափոխությունը ես կոչերով պիտի լինի, թող մի որ ել ուշ լինի,—ինքն իրան համոզում է նա։ Յեվ հոգնած ու ջարդված վոսկորները հանգստացնելու համար կուչ է գալիս մի փոսում, վրան հավաքում է ձյան տակից նոր դուրս յեկած չորացած տերևները և իսկույն քուն է մտնում...

ՊԱՐՏԻԶԱՆՆԵՐԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Նա զարթնեց գարնանային արևի առաջին ճառագայթների փաղաքշանքից։

Նոր է տեսնում, վոր անտառն սկսել է տերևակալել, մթին տեսք ընդունել։ Կոկոնները նոր սկսել են բացվել ու կանաչ տերևները համբուրվում են ապրիլյան արևի հետ։ Կանաչ թփերի տակից մանիշակը ժպտում է քեզ, իսկ անտառի յերգիչները դեռ լուսածագից գարնան յերգն են յերգում։ Յեվ այս բոլորը այսոր առանձին գրավչություն ունի։

Պատանին բացում է տոպրակն ու հանում մի քանի պլակատներ։

Պա՛հ, չես քո ռեխն անիծեմ, ես հո խսկական մեր կնչագն ա,—բացականչում է նա բուրժուայի ճարպակալած փորին նայելով։ Մի ուրիշ պլակատում բանվորն ու գյուղացին հաղթ բազուկներով տապալում են ցարի գահը։ Յերրորդում՝ Վրանգելը գնդակահարում է ապստամբ բանվորներին ու դիակների կույտերի վրայով արնաթաթախ սուրը ձեռքին արշավում է։ Պատանու արյունը գլուխն է տալիս։ Նա Վրանգելին չգիտի, բայց Սեպուհին է նմանեցնում, զգում է, վոր դրանց ցեղից է։ Ու յեղունգներով պատռում է Վրանգելի աչքերը։

— Յես քո էն… էն… էն… ուխ դուզերին ես սովոր հա՞, թե մեր ծմակներում կպատահես, տես վոնց եմ չոմբախով գլուխդ ջարդում։

Թղթերը ծալում է, աշխուժությամբ վեր թռչում ու քայլում անտառով։ Նա գիտի, վոր ընկերները նշաններ թողած կլինեն. ծանոթ է պարտիզանների պայմանական նշաններին։ Անցնում է ձորն ու բարձրանում դիմացի լեռան լանջով։ Ահա սառնորակ բչբչան մի աղբյուր։ Չոքում է ու խմում։ Աղբյուրի մոտ մի տերև խրված է չոփի ծայրը։ Պատանու աչքերը փայլում են ուրախությունից, հետքը գտել է։ Տերևի սուր ծայրը դեպի սարի գագաթն է ուղղված, ուրեմն տղերքը հենց այս առվակի ափերով են վեր բարձրացել։ Ահա և առվակի ափին ձիու պայտի տեղը։ Զափում է վոտնատեղը, իսկ և իսկ իր ձին է, վոր կա։

Կես վերստ չանցած՝ հաճարի ծառի կեղևի վրա փորված մի սլաք է նկատում, վորի սուր ծայրը ցույց է տալիս փախուստի ուղղությունը։ Պարտիզանների հետքերով նա կեսօրին հասավ Հաղարծնի վանքի մոտերքը։ Մի ծառի վրա տեսավ հենց նոր փորագրած մի խաչ։ Դա նշան եր, վոր բույնը մոտ է, պետք է զգուշանալ։ Հանեսը ծըռ-

վում է կածանից՝ ընկերների բույնը անզգուշությամբ չըմատնելու համար։ Նա արդեն գուշակում է, թե ուր կլինեն նրանք։

ՀՍԿԱ ԳԵՐԵԶՄԱՆՈՒՄ

Ահա և քարայրը։ Նեղլիկ անցքի առաջ դրված քարը զգուշությամբ յետ է հրում ու փորսող տալով ներս մըտնում։ Գետնի տակը ահագին մի տարածություն դատարկ է։ Հեռվում ճրագն աղոտ լուսավորում է քարայրի լպըրծուն պատերը։

— Ո՞վ է,—լսվում է մի ձայն ու հրացանի չըխկոց։

Յես եմ, Գիքո, Հանեսը։

Այրում յերկուսն են մնացել. առաջ են գալիս ու ժըպտադեմ դիմավորում պատանուն։ Հանեսը բեռը ցած է դընում ու զննում այրի ներսը. կես վերստից ավելի շըրջագիծ ունեցող ստորերկրյա այդ աշխարհը հսկա մի գերեզմանի յե նման։ Քայլում ես պատերի տակով, շուրջդ թափթըփված են մարդկանց վոսկրներ, գանգեր։ Պատմում են, վոր սելջուկների արշավանքի ժամանակ մի ամբողջ գյուղ տեղավորվել է այրում. թշնամին շըրջապատել է ամիսներով, և այդ ապաստարանը հարյուրավոր մարդկանց համար գերեզմանոց է դարձել։

«Ուրեմն ես ա Մակիչի ասած երը»[1]։ Մակիչը մեր չքավոր հարևաններից եր։ Կուլակ Աթոյից դաս առած՝ նա խորհրդավոր փսփսում եր հարևանների հետ. «Յերկինքը վկա, Սիբիր կքշեն, քրիստոնեյի բանն ա դժար, թե չէ անհավատ մարդը ինչ ասես կանի.—ասում եր նա միամիտ հարևաններին։—Հենց Քարվանսարա մտան թե չէ, հազիր կացեք, վոր ձեզ տանեմ Հաղարծնի մեծ երը։ Եր հո չի, մի սաղ գեղ կտեղավորի։ Բերդ ա բերդ։ Սաթայեն ինքն էլ չի կարա գտնի»։ Այժմ այդ «բերդին» կարմիր պարտիզաններն են տիրացել։

[1] Եր—այր, քարայր։

Քիչ հետո գալիս են նաև Ակոբը, Մխոն և ուրիշները։ Նրանցից մեկը ուսից վայր ե բերում նոր սպանած չեղնիկը և սկսում ե մաշկել, մյուսները վրա յեն ընկնում լոզունգներին, գրքերին ու գույնզգույն պլակատներին։

— Գիքո, մենք ել Խատիսովին ես երկրը եսենց շուռ կտանք,—ասում ե Մխոն ու մատը դնում ցարի տապալման պլակատի վրա։ Լենինի նկարը ճրագի լույսի տակ նրանք առաջին անգամ տեսան լուռ ու ակնածությամբ։ Կարծես յուրաքանչյուրը մտքում խորին անկեղծությամբ յերդվում եր մեծ ղեկավարի առաջ՝ պայքարել մինչև արյան վերջին կաթիլը։

— Ցո թող մի եդ լեն ճակատը պաչեմ ե, յես դրա հոգու ճղերին մատաղ,— ու չոփուռ Մելիքը վրա ընկավ Լենինի նկարին, վո՛նց ե համբուրում։ Տղերքը խնդում են.

— Ադա, մաշացրիր, բոլ ա յե, դեսը տուր մի պատիցը կպցնեմ։

Մի քանի րոպեյում այրի պատերը զարդարվեցին պլակատներով ու լոզունգներով։

— Ադա, ես հո կարգին խորհրդային իշխանություն սարքեցինք,—կատակում ե տղերքանցից մեկը։

— Ես ահագին յերկրից թող գոնե մի քունջը խորհրդային լինի ելի։

— Տղերք, կրակը թեժացրեք, խորովածն եկավ։ Ադա Հանես, մի դուրս արի, մասրի թփերից միքանի շամփուրներ շինի բեր,—կարգադրեց Հաթամը ու սկսեց կտրատել չեղնիկի միսը։ Մի քանի րոպե չանցած խորովածը պատրաստ եր։

— Ընկերներ,—սկսեց Հանեսը դեմքին հանդիսավոր տեսք տալով,—ուտելուց առաջ թողեք որհնեմ ձեր սեղանը։ Տղերք ջան, պինդ կացեք, Ադրբեջանը խորհրդայնացել ե, մեր զորքերն արդեն Աղստաֆա յեն հասել։ Դե մի ուռա քաշեցեք։

— Ուա՜-ա՜,—թնդաց այրը: Հանկարծ բոլորին ել անտանելի վրդովություն տիրեց:

— Այդ, այ լակոտ, մի արի ճակատդ պաչեմ ե:

Յեվ ուրախության արցունքն աչքերին՝ տղերքը մեկ-մեկ համբուրեցին պատանու վրդովությունից այրվող ճակատը:

— Հո անհաց չե՞ք ուտելու,—լսվեց կանացի մի ձայն այրի մուտքի մոտ: Բոլորը հանկարծակիի յեկած հետ նայեցին:

— Վարսիկ ջա՜ն, եդ վո՞նց ընկար եստեղ.—և Հանեսը քիչ եր մնում գրկախառնվեր շշկլված աղջկա հետ, բայց ամաչեց ու բավականացավ միայն ձեռքն ամուր սեղմելով:

— Բալամ, Վարսիկը քյոհնա բոլշևիկ ա, դա վոր չլինի, մենք սովից կկոտորվենք. համ ել գեղից մեզ համար խաբարներ ա բերում,—բացատրեց Վարսիկի փեսան՝ դարբին Մուխելը:

Ծալապատիկ նստեցին խարույկի շուրջը և վորսի խորովածը մեծ ախորժակով կերան: Վարսիկը պատմեց, վոր «Լոռվա Պավլե աղեն յեկավ, գյուղամիջում Պապանի Յագգյուլին ու Ակոանց Քոչարին պլետի տակ չորացրեց, ասում ե՝ «սրիկա շան վորդիք, ձեր տղերքը Փրոնտից փախել են, տվեք, թե չե բոլորիդ կսատկացնեմ»: Շատերից յեզները հավաքեց տարավ, ասում ե՝ «ձեր տղերքին կբերեք, յեզները կտանեք»: Գրիգորենց ու Պետիկենց յեզներն ել տարան»,—վերջացրեց Վարսիկը:

— Նրանց պնչերքիցը ես ա կհանենք, դու արխային կաց. թե ղոչաղ ես, կգնաս սարը ու մեր տղերքին կասես՝ պատրաստվեցեք, մերոնք Աղստաֆա յեն հասել:—Վարսիկն այդ լուրից այնքան ուրախացավ, վոր սկսեց վերվեր թռչել:

Մթնում եր:

— Յես ուշացա,—ասաց Հանեսը, լոզունգներն ու

պլակատները տեղավորեց տոպրակում, ամրացրեց թիկունքին ու բոլորի հետ ձեռք տվեց:

— Ով գիտի ձեզ մեկ ել յերբ տեսնեմ, մնաք բարև,—ասաց նա: Նրա աչքերը թրջվեցին, յերբ նայեց Վարսիկի խեղճացած դեմքին, ապա արագ շուռ յեկավ, վճռական քայլերով դուրս յեկավ քարայրից ու անհետացավ մամխի թփերի մեջ: Վարսիկն այրի մուտքի մոտ քարացած յերկա՜ր-յերկա՜ր նայում եր դեպի մթին ձորը, ուր անհետացավ համարձակ պատանին:

«ՍՊԻՏԱԿ ԹՌՉՈՒՆՆԵՐԸ»

Ելեկտրական աղոտ լույսը չի հասնում միլիցիայի շենքի դեպի ձորը նայող պատին, վորտեղից մեկը ճարպկությամբ մագլցում ե վեր: Ահա նա հասավ նեղլիկ պատուհանին ու ջարդված ապակու արանքից զգուշությամբ ներս խոթեց մի փաթեթ թուղթ:

Գորշ շինելի տակից մի գլուխ բարձրացավ ու լսվեց խռպոտ մի ձայն՝ «ո՞վ ե», և միլիցիոները փաթեթն ու պատանու այլայլված դեմքը տեսնելով՝ աղմուկով վեր թռավ տեղից: Պատանին կատվի նման թռավ ցած ու կորավ գիշերային խավարի մեջ:

Ջրաղացների տակով գետի ափով նա կուզեկուզ վազում ե ու շուտ-շուտ յետ նայում: Ահա միլիցիայի շտաբում ճրագները վառվեցին: Սկսվեց խլրտումը: Պատանին արագությամբ անցնում ե բլրի մյուս կողմը, մտնում գավառական քաղաքի ծայրամասերի խուլ, ծուռումուռ փողոցները ու պատերին, դռներին թղթեր կպցնելով՝ զգուշությամբ առաջ ե շարժվում: Շոսեյում լսվում ե ձիերի դոփյուն: Նա դուրս ե գալիս քաղաքից, թռչկոտելով անցնում ե այգիների ցանկապատերից ու կորչում անտառի խավարի մեջ:

Մինչև առաջին գյուղը—13 վերստ ե: Ու վազում ե

պատանին քրտնքի մեջ կորած։ Անա և Զարխեշը, քարափների տակ, գետի ափին կուչ եկած. իսկ գետի մյուս ափին, շոսեյի մոտ գծագրվում է փոդրաթչի Յեփրեմի հոյակապ շենքերը։ Գյուղն ընկղմված է խոր քնի մեջ, շներն էլ չեն յերևում, հոտերի հետ սարն են գնացել։ Փողոցներում այստեղ-այնտեղ քամու թևերով օդի մեջ ճախրում են սպիտակ թղթերը, սպիտակ թռչունների նման ու հանդարտ իջնում ցած։

Անա յերկհարկանի մի շենք։ Պատշգամբում մեկը քնած է յերկաթյա գեղեցիկ մահճակալի վրա։ «Ա՛յ, սա լավ կկարդա»—անցնում է պատանու մտքով և նա շալակի տոպրակից հանում է միքանի թռուցիկներ, զգուշությամբ մագլցում է պատշգամբի սյունն ի վեր ու թղթերը կամացուկ դնում քնած մարդու քթի առաջ։ «Վարժապետ մարդ է յերևում, համա խեղճն եդուց լավ քոթակ կուտի իմ պատճառով»—մտածում է նա ու վոտների մատների ծայրերով առաջ գնում։

Վոր շատ անմեղ մարդիկ այդ չարաբաստիկ թղթերի պատճառով բանտ են նստելու կամ մաուզերիստների պլետի համը տեսնելու յեն, դա պատանուն շատ է մտահոգում։ «Հենց եդ է լավ, է՛, թող քոթակ ուտեն, վոր բալշևիկ դառնան»,—մխիթարում է նա ինքն իրեն։

Այդ գյուղի բաժինն էլ վերջացնելուց հետո, մութ ծմակով նա շտապում է դեպի մոտակա գյուղը՝ Կող։ Հսկա անտառի մեջ այս գյուղը ագռավի քանդված բնի յե նման։ Չորս կողմից բարձրանում է մութ անտառը և հինավուրց վանքի կամարներից չարագուշակ ու ահավոր մի սառնություն է փչում գյուղի վրա։

Գիշերային խորհրդավոր անդորրը խանգարում է միայն բուի զարզանդ ազդող կանչը ու մեկ էլ պատերի տակով կուզեկուզ քայլող պատանու վոտնաձայնը։

Գյուղում թռուցիկները ցրելուց հետո՝ պատանին մոտենում է վանքին, գետնից առշեղով վերցնում է գոմշի

կակուղ թրիքը՝ քսում է վանքի դռանը, խաչքարերին և պլակատներն ու թռուցիկները փակցնում։ «Մեկ է, ես գյուղում կարդացող չի ճարվի, գոնե վարդապետները կկարդան»,—մտածում է նա, հրճվում է իր ոյինբազության վրա և ծռվելով, Ղարաղոյլի ճամբան է բռնում։

ԱՂՔԱՏ ՀԱՍԱՆԻ ՄՈՏ

Անտառով ձգվող ճամբան ցեխ է ու հարուստ անձրևաջրից գոյացած լճակներով։ Պատանին չփչփացնելով քայլում է ջրերի միջով։

Իջնում է ձորն ու վազով քայլում գետի հոսանքն ի վեր։ Ահա և Ղարաղոյլու թրքական գյուղը։ Լուսադեմ է։ Անտառի մուգ կանաչագույն ֆոնի վրա գծագրվում են գյուղի գորշ խրճիթները՝ մեծ մասամբ ավերված դաշնակցական թնդանոթների ռումբերից։ Պատանին այս գյուղում իրեն ավելի ապահով է զգում, այնքան ապահով, որ երբ գյուղացիներից մեկը դուրս եկավ անից ու շարժվեց դեպի գոմը, նա առանց վախի մոտեցավ ու բարևեց.

— Ղարիբ մարդ եմ, եսոր տեղ կտա՞ք,—ասաց պատանին։

— Մեր աչքի լույսի վրա, գնա՛նք,—պատասխանեց մարդն ու պատանուն խրճիթը տարավ։

Այդ օրը ցերեկով Հանեսը լավ քնեց, ապա տան տիրոջից իմացավ, որ գյուղացիների դժգոհությունը գագաթնակետին է հասել։

— Աղալարները մի կողմից են մաշկում, դաշնակներն ել՝ մյուս կողմից. ել պուճախում մի կտոր բան չմնաց,

տարան անիծվածները,—գանգատվեց տանտերը և ցույց տվեց մերկ երեխաներին։

Շատ խոսեցին։ Հասանը (տանտերը) հայերեն մաքուր խոսում էր։ Հանեսը նրան պատմեց վերջին դեպքերի մասին, այնպես, ինչպես ինքն էր հասկանում։ Տանտերը լուռ լսում էր և երբ տեսավ Լենինի նկարը, պլակատներն ու լսեց, թե ինչ է լինելու մոտիկ ապագայում, նրա մեջ նոր կյանքով ապրելու աղոտ հույսեր զարթնեցին և աչքերի մեջ ուրախության փայլ երևաց։

— Յոլդաշ Հանես, եդ գործի համար մենք արյուններս կդնենք,—ասաց նա ամուր շեշտով և Լենինի նկարը խնամքով պահեց ծալքի տակ։

Մութն ընկնելուն պես Հանեսը գյուղամիջում թռուցիկներ ու պլակատներ ցրեց և լուսադեմին շարունակեց ճանապարհը։

ԿԱՐՄԻՐ ԼԵՋՈՒՆԵՐԸ

Ահա և Ներքին Ծամբարակ գյուղը։

— Եդ ինչ ես ծախում, բալա ջան,—ասաց մի կին պատանու շալակի բեռը շոշափելով։

—Թուղթ եմ բաժանում, մայրիկ, չարտիկ թղթեր գնանք. ձերտուն, երեխաներիդ միքանիսը կտամ։—Մտան խրճիթ։ Հանեսը տոպրակից հանեց պլակատներ ու տվեց կնոջը։ Երեխաներն ուրախության ճիչերով վրա թափվեցին։

—Վա՜յ, տղա ջան, ես ինչ սիրուն զատեր

են, տուր պատերին կպցնեմ, մի քիչ հետո պրիստավը գալու չէ ողնաղ, թող տունս շնորքն ընկնի։

— Պրիստավը,—հանկարծակիի չեկած բացականչեց Հանեսը։

— Հա, բալա ջան, պրիստավն ա, մարդս գնացել է ողնաղ բերի։ Դե գիտես, ելի,—ծամծմեց նա,—չերեխի տեր ենք, դրանք էլ որը հինգ անգամ դուռը կարում են թե՝ կոռ գնա, կռիվ գնա, դե... պրիստավի հետ բարեկամանալուց վնաս չկա։

Պատանին անհանգիստ շարժում արավ և մինչ միամիտ կինը պլակատները փակցնում էր տան պատերին, նա ծլկվեց ու իրեն քցեց անտառը։

Քիչ անց՝ միքանի ձիավորներ սրարշավ հասան գյուղ և իջան անծանոթ կնոջ դռան առաջ։ Այնուհետև լսվեց աղմուկ, գոռգոռոց, իսկ քիչ անց թանձր ծուխ բարձրացավ ու կրակի կարմիր լեզուները կլանեցին տունը։

Փրփրած պրիստավը հրամայել էր խրճիթը հրդեհել...

ԽԵՉՈ ԲԻՁՈՒ ՀԵՏ՝ ԾՈՒՂԱԿՈՒՄ

Ծառերի թափված ճյուղերին ու կոճղերին ընդհարվելով, պատանին վազում է անտառով։ Նա վախենում է իրեն հետապնդեն, սակայն չերկար քայլելուց հետո, չերբ համոզվեց, որ հետևող չկա, իջավ ձորն ու Զարխեչի ճամբան բռնեց։ Նա ծրագրում էր վարարած գետն անցնել Զարխեչի կամուրջով և հասնել ընկերներին։

Մի մարդ 20—25 անասուններ առաջն արած գնում էր։ Հասավ։ Բարևեց։ Այդ մարդու ամեն ինչը հաստ է,, և՛ վիզը, և՛ փորը, և՛ բեխերն ու հոնքերը։

«Տուզերից է», անցավ պատանու մտքով։

— Բիձա, վո՞րտեղացի չես,—հարցրեց նա։

— Ալափարսեցի։

— Անունդ կարելի չէ։

— Ի՞նչի չէ, Խեչո։

— Տավարը վո՞րտեղից է, Խեչո բիձա։

— Նոր եմ առել Ճամբարակից։

— Ի՞նչ ես տվել։

— Քոփողլու մալը թանգ եղավ, ամեն մեկին 2—3 փութ գարի։

Պատանին չզարմացավ. սովի ճիրաններում տառապող գյուղացին ստիպված էր յերկու փութ գարու ծախել իր կովը, իր աչքի լույս յեզը։

— Իսկ դու ու՞ր կերթաս, տղաս։

— Անտեր տղա յեմ, գյուղերում թափառում եմ, ուզում եմ մի տեղ մշակ դառնամ։

— Գնանք իմ տավարը պահիր։

— Շատ լավ,—կեղծ ուրախացավ պատանին։ Համաձայնությունը կնքվեց։

Մի հնար պիտի գտներ Զարխեչի պոստն ազատ անցնելու համար։ Յեվ շատ ուրախացավ, որ Խեչո բիձեն է պատահել։ Նա ծռվեց ճանապարհից, հացի ծառից մի կոկլիկ գազանակ կարեց ու սկսեց «հո, հո» անելով անասունները քշել։ Ցանի թե աշխարհքից բեխաբար տավարած եմ։

Զարխեչի կամրջի մոտ սովորականից շատ զինվորներ կան։ Պատանին հասկացավ, կանգ առավ, բայց փախչելու հնարավորություն չկա։

— Կանգնե՛ք,— հրամայեց պահակը և հրացանը մեկնած՝ յեկավ ուղիղ պատանու կողմը։ «Հոտն առել են», անցավ պատանու մտքով։ Պահակը պատանու շալակից պոկեց տոպրակը և հանեց պլակատներն ու լոզունգները։

— Էս վորտեղից է, լակոտ,— բղավեց նա ու մի ծանր ապտակ տվեց։

— Էս բիձեն է տվել, յես էլ սրա մշակն եմ։

Խեչո բիձեն սարսափից աչքերը չռեց ու դողդողալով կմկմաց.

— Յես, յես... խաբար չեմ... աստծու սիրուն...

— Սուս, քալլթառ շուն, սրան հիսուն ռոզգի տվեք։

Զինվորները Խեչո բիձին պառկեցրին շոսեյի մեջտեղը, հանեցին շալվարն ու սկսեցին հարվածել ծանր ու անողոք։

— Վա՜յ, մեռա՜, աստծու սիրուն, ինձ մեք սպանի, յես խաբար չեմ, եդ լակոտը, յես դրա մերը...— բղավում էր

Խեչո բիձեն։ Հանեսի քեֆին քեֆ չի հասնի, լիաթոք ծիծաղում է ու մտքում ասում. «Դե, կեր, յեզը յերկու փթով կառնես, հա՜»։

— Ի՞նչ ես հռհռում, լակոտ,— բղավեց միլիցիոներներից մեկն ու հրացանի կոթով պատանու վզին այնպես խփեց, վոր նա գլորվեց ցած։ Միլիցիոներները վրա թափվեցին ու սկսեցին տրորել։ Պահակի պետը փրփրած սկսեց աքացիներ տալ։ Նա վոտնամանի պողպատյա շպորով

(խթան) ուժեղ հարվածեց պատանու ձախ հոնքին։ Արյունը ներկեց տասնապետի կոշիկը և հողն ու փոշին ակոսելով, պատանու յերեսից սկսեց հոսել ցած։

Ձեռները յետևից ամուր կապկպեցին ու յերկուսին էլ առաջ արին. Դիլիջան են տանում։

Խեչո բիձեն կաղալով հազիվ էր առաջ շարժվում, իսկ Հանեսի ձախ հոնքից արյունն առատությամբ հոսում էր ցած և ծնոտից կաթում ցնցոտիների վրա։ Կալանավորներին տարան Դիլիջան ու նետեցին բանտ։

— Պետք է վերքը կապել,— ասաց բանտի ֆելդշերը, մոտենալով պատանուն։

— Պետք չէ, թողեք իժի ծնունդը սատկի,— հրամայեց բանտապետը և դուռը շրխկացրեց յետևից։ Լսվեց բանալու չխկոցը և հեռացող բանտապետի ոտնաձայնը։ Ցավ պատանին մութ, ցուրտ կամերայում մնաց մենակ՝ խոնավ հատակին անոգնական ընկած...

«ՀԱՆՈ՛ՒՆ... ՀԱՅԱՍՏԱ՛ՆԻ... ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱ՛Ն»...

Միքանի որից հետո նա նստած է մեղադրական աթոռին։ Թեև յերեք որ է բանտում նստել, սակայն զգալի գունատվել ու նիհարել է։

Դատախազը փրփրած ճառում է, մեղադրում է պատանուն պետական դավաճանության և բոլշևիկյան «հրոսակներին» պատկանելու մեջ և պահանջում է գնդակահարել։

Պատանին սառնասրտությամբ լսում է մեղադրական ակտը. «Հանուն Հայաստանի Հանրապետության յև այլն... ապացուցված համարել, վոր մեղադրյալը պատկանում է բոլշեվիկյան հրոսակներին, թռուցիկներ տարածելով ազգադավ գործ է կատարում... յև այլն... ուստի կիրառել պատժի գերագույն չափը՝ գն-դա-կա-հա-

ու-թյուն»։ Դաժան վճռի յուրաքանչյուր վանկը մուրճի նման իջավ պատանու ուղեղին։ Վերջին բառը նրան թեթև ցնցեց։ Դատախազը ուղղեց պենսնեն, շունչ առավ և հանդիսավոր տոնով շարունակեց. «Սակա՜յն, ի նկատի ունենալով անչափահաս լինելը, այլեվ այն, որ հանցանքն առաջինն է, վճիռը մեղմացնել յեվ աքսորել Սեվ-Քար—հինգ տարով»։

Հարևան գյուղացիք, վորոնց մեջ ապրել ու մեծացել է Հանեսը, խմբերով յեկել ու հետաքրքրությամբ հետևում են դատավարության ընթացքին։ Դատավճիռը կարդալուն պես՝ դահլիճի մի անկյունում դժգոհությունն աճում է։ Շատերն աղմկում են։

— Ազատել պատանուն,—բղավում է մեկը, վորին միլիցիան իսկույն բռնում է տանում։

Պատանին պահակի ուղեկցությամբ անցնում է դահլիճի մեջտեղով գլուխը բարձր բռնած ու հանդիստ և դահլիճում հավաքված գյուղացիներից շատերի աչքերում կարդում է համակրանք ու վրեժ։

Հաջորդ որը արևամուտին մի խումբ ձիավորներ գետափով ձգվող վոլորապտույտ խճուղով տանում եյին կալանավոր պատանուն դեպի աքսորավայրը—Սև-Քար գյուղը։

«ԲԱՅԼՇԵՎԻԿԻ ՔՈԹՈԹԸ»

Սև-Քարի կոմիսարը (քյոխվան) հաստ հոնքերի տակից աչքերը խոժոռեց, յերբ ձիավորները նրան ներկայացրին աքսորական պատանուն։ Քյոխվան հենց եդպես մի հոտաղ եր փնտռում։ Միլիցիոները հակիրճ զեկուցեց, թե ով է կալանավորը և ինչու յե աքսորվել։

Քյոխվան բեխի տակից մռլտաց.

— Յես դրան ենպես պրեսի տակ դնեմ, վոր ինչքան ծուռ տեղ ունի, դզվի։—Յեվ մարագի դուռը բացելով, պատանուն հրեց ներս ու փակեց։

Յերկրորդ որը նրան իրավունք տրվեց հեռու աղբյուրից տասներկու դույլ ջուր բերել։ Ըստ յերևույթին քյոխվի տանը լվացք ունեյին։

Իսկ յերրորդ որն արդեն կարելի յեր քյոխվի տղի հետ անտառից փայտ բերել։

Քյոխվի կինը հա ճղղում եր.

— Այ լակոտ, խալխը կարասներով մուրաբա յեփեցին, մեջքդ կկոտրի՞, վոր միքանի խուրջին հոն բերես։— Հանեսն էլ հենց այդ եր ուզում։ Վազում եր անտառ, մագլցում ծառերը։ Անտառը կարմրին եր տալիս տասա հոնից։ Ճյուղն ուժգին թափահարում է և կարմիր կարկուտ է տեղում ներքև կանգնած քյոխվի տասներկու տարեկան աղջկա՝ Սոնիկի գլխին։ Յերբեմն էլ ծառի ծերից աչքով է անում Սոնիկին ու ծիծաղում։ Սոնիկն էլ է ծիծաղում։

Գյուղամիջով անցնելիս, գյուղացիները գլուխները հանում եյին ու այնպես հետաքրքրությամբ նայում, կարծես շրջիկ կրկեսը փողոցում արջի ճուտ է պտտցնում։

Սկսվեց գյուղում առասպելներ տարածվել պատանու մասին։

— Աղջի Շուշան, ասում են, եդ լակոտը պրիստավ ա սպանել։

— Չե, չե, պողեր։ Լսել եմ, վոր բալշևիկ ա։

— Բալշևիկի քոթոթ ե, դրան մատաղ, խի բալշևիկը ինչ գեշ բան ե, բալշևիկը հավասարություն ե ուզում։ Են ա Զոզարոն, Աղասին, մյուսները բալշևիկ են, խի գե՞շ մարդիկ են,—պաշտպանում ե պատանուն կարմիր պարտիզան Սհակի կինը։

Այդ օրվանից Հանեսի անունը կպավ «Բալշևիկի քոթոթ»։

Յեվ պատանին մի արտասովոր արարած եր յերևում և՛ բալշևիկների կողմնակիցների, և՛ նրանց հակառակորդների աչքում։

«ՅԱՉԵՅԿԱՆԵՐԸ»

Միքանի օր ե, վոր Հանեսը հանդում քյոխվի յեզներն ե պահում։ Հոտաղների հետ կարճ ժամանակում մտերմացավ։ Նրանք սկզբում խորշում եյին աքսորականից ու հաճախ ել քար եյին նետում, ծաղրում։

— Բալշևիկի քոթոթ, բալշևիկի քոթոթ,—բղավում եյին նրանք։

— Սրանից շատ կգա, բալամ,—ասում եյին վոմանք ու հեռու քաշվում,—ո՞վ գիտի ինչ պատուղ ա։

Հանեսը հոտաղների ամենաթույլ յերակից բռնեց։

— Ձեզ մոտ եղպե՞ս են ընկերություն անում,—ասաց նա վրդովված։

Տղերքն ամաչեցին, հոտաղը-հոտաղի թիկունքը պետք ե լինի, այդ սովորությունն արմատացած ե նրանց մեջ։

— Հանես, դուզն ասա, քեզ խի՞ յեն եստեղ բերել։

— Բալշևիկ եմ։

— Բալշևիկն ինչ ջանավար ա։

— Բալշևիկն են ա, վոր հավասարություն ա ուզում։

— Եդ հո լագամթին բան ա,—բացականչեց մեկը։

— Համա հեչ գլուխ գալու բան չի,—լրացրեց մյուսը։

— Բալշևիկները վոր գան, հարուստների ունեցածչունեցածը խլելու յեն ու հավասար բաժանեն ժողովրդին. հողը բեկերից, գոռաներից խլելու յեն ու տան իրենց քրտինքով ապրող մարդկանց, ել աղա ու մշակ չի լինելու։—Ավարտեց իր քաղաքական ճառը նա։ Զգում ե, վոր դրանից ավելի չգիտի։ Գիտի միքանի գաղտնիքներ պարտիզանական խմբերի մասին, բայց ասել չի կարող։

Հոտաղների խումբը շատ հավանեց այդ ծրագրին, մանավանդ ծրագրի այն կետին, վորի համաձայն հարուստների կովերն իրենց եյին տալու, բայց բատրակ Տիկոն սրտով չեր կպչում նոր ծրագրին։

— Եդ վոր բոլորը խառնելու յեք, թազա բաժանեք, բա վոր իմ Սլաշն ուրիշի ընկնի։ Չե, բալամ, իմ շունն ինձ թողնեն, ուրիշ գառ չեմ ուզում,—ու համբուրում ե բրդոտ շան խոնավ դունչը։

Հոտաղների խումբը բավական վոգևորվել եր նոր գաղափարներով ու թշնամանքով լցվել դեպի քյոխվան ու խազեյինները։

— Հանես ջան, դու պինդ կաց, թե վոր ուզենաս ճղել, մենք պատրաստ ենք։—Ու մեծ բավականությամբ նայում եյին հոնի կոպալների յերկաթած գլուխներին։

Հոտաղների խումբը հանդում իրեն «յաչեյկա» հայտարարեց։ Այն ժամանակ բոլոր կոմունիստներին ու կոմյերիտականներին «յաչեյկա» (բջիջ) եյին ասում։

Կանաչ տափարակներում շարք-շարք կանգնում եյին, չոմբախները հրացանների տեղ ուսերին դնում, քայլում ու հետն ել խմբով յերգում Հանեսի սովորեցրած հեղափոխական յերգը։

Հրաժարվենք, ընկերներ, հին ռեժիմներից.
Նրանից փոշին թափ տանք մեր վոտներից։

Յեվ հազարերորդ անգամ կրկնում եյին այդ յերկու

տողը ու շատ տխրում, որ դրանից ավելի չգիտեն։ Հետագայում իրենցից միքանի կարկատան ևս քցեցին և այսպես դուրս եկավ.

Կոպալներով կջարդենք ֆյոխվի գլուխը,
տավար, վոչխար դիփ կբաժանենք,
հարուստ-աղքատ կհավասարեցնենք... և այլն։

«ՂԵՂԵՂ ՊԻՏԻ ԱՌԱՋԱՑՆԵԼ»

Մի օր էլ հանդից վերադառնալիս՝ գյուղի ծայրին պատահեց վայելչակազմ, թուխ ու գրավիչ աչքերով մի մարդ ու մտերմաբար հարցրեց.

— Աղա, քեզ ինչի յեն աքսորել։

Հաննեսը ճանաչեց բոլշևիկ Զոգարոյին ու առանց քաշվելու պատասխանեց.

— Թռուցիկներ տարածելու համար։

Զոգարոյի աչքերում գգվանքի փայլ նկատվեց։

— Ես իրիկուն արի մեր տուն, գործ կա,— ասաց նա ու մատով ցույց տվեց իրենց տունը։

Քեֆ անելու պատրվակով Զոգարոյի տանը սեղանի շուրջը նստել էին 20—25 հոգի։

— Աղա, բոլշևիկի քոթոթ, դեմն արի մի տեսնեմ, եդ ինչ ջանավար ես, վոր դաշնակների իշխանությունը քեզ վրա դատ է բացում.— ու բարի դեմքով մի զինվորական, ըստ յերևույթին «քեֆի թամադան», բարեկամաբար սեղմում է պատանու ձեռքը։ Բաժակները լցրած պատրաստ՝ շշուկով խոսում են ինչ-վոր ծանոթ հարցերի մասին։

— Աղա, Հաննե՛ս, դու եստե՞ղ,— ու մեկը գրկեց պատանու գլուխը։

— Ճանաչում եմ, բայց չգիտեմ, վո՞րտեղ եմ տեսել։ Հա, հիշեցի, էն գիշերը Դիլիջանի անտառում, Կապյանի ժողովում...

Զարմացած նայում են բրդից շորերը հագին, շալվարը տաս տեղից կարկատած պատանուն և «Կապյա՛ն, գաղտնի ժողո՞վ»։ Ու նրանց աչքում ցնցոտիապատ պատանին բարձրանում, մի հսկա յե դառնում։

Կամացուկ խոսում են ինչ-վոր ապստամբության մասին։

Միքանի օրից հետո՞։ Պատանու սիրտը խփում է ուժգին։ Դեմքն այրվում է, իսկ աչքերը հրդեհվում։

— Առաջ պետք է եդ հաստավզին սատկացնել, հետո անցնել Դիլիջան, են արնախում շան վորդուն։

— Մեկ-մեկ պետք է տանձի պես կաթացնել, են աշխարհն ուղարկել։

— Հենց եգուց գիշեր եդ հաստավզի (խոսքը քյոխվին է վերաբերում) գլուխը պիտի տափակացնել,— պընդում է առաջինը։

Յեվ շատերն այդպես են պատկերացնում հեղափոխությունը։ Սակայն Զոգարոն չի տարվում «կենտ-կենտ խփելու» ծրագրով։

— Պրիստավին ու քյոխվին սատկացնելով բան չի դառնա, սաղ գյուղերը պիտի հանենք, վոր հեղեղի, ինչքան զիբիլ կա, քշի տանի.—համոզում է նա։ Շինելավոր տղեն էլ այդ տեսակետին է։ Նա ինչ-վոր կարևոր հրահանգներ է բերել։

Տեղնուտեղը գրքեր է բաժանում։ Վորոշումներ են հանվում։ Միքանի հոգի ուղարկվում են Շամշադինի, Կարմիր գյուղի շրջանները, մյուս խմբերի հետ կապ պահպանելու, իսկ Հաննեսը մի ընկերոջ հետ հենց այդ գիշեր մագլցում եր սարն ի վեր՝ քարանձավներում դարան մտած կարմիր պարտիզաններին գրականություն ու հրահանգներ հասցնելու համար։

ՊԱՐԼԱՄԵՆՏԻ ԱՆԴԱՄԸ ԽՈՍՔ ՎԵՐՑՐԵՑ

Դպրոցը լցված է քրտինքի հոտով ու դառը թութունի ծխով։ Ծխում են մեծագլուխ չիբուխներն ու հեգնանքով նայում բեմին, ուր մաքուր փողպատով, հարթուկած ամերիկյան սյուրտուկով մի մարդ մեծ, պետական, ազգային գործերից է խոսում և շուտ-շուտ թաշկինակը դեպի ճակատը տանում։

— Պառլամենտի անդամ ա։—Շշնջում է Բագվից նոր յեկած մի յերիտասարդ հարևանի ականջին և կատաղի հայացք է նետում դեպի տաքացած հռետորը։

— Պառլամե՞նտ, բա՛ա...—և գյուղացու հոնքերը վեր թռան ու ճակատի կաշին 5—6 տեղից ծալվեց։

Լուտանքներ թափելով «ազգի դավաճանների», «թուրքերից կաշառված» բոլշևիկների գլխին, նա տրամադրություն շահելու համար գործ դրեց իր վողջ պերճախոսությունը.

— Պարոննե՛ր, քաղաքացինե՛ր։ Դարավոր թշնամին մեր դուռն է թակում, դարերով յերազած ազատության թռչունը բարբարոսները նորից ուզում են վանդակի մեջ դնել, իսկ այս գյուղերում, դո՛ւք, այո, դո՛ւք մոլորված մի քանի բախտախնդիր ավանտյուրիստների պրովոկացիային յենթարկվելով, բոյկոտ եք հայտարարում ձեր կառավարությանը, վռնդում եք գյուղից ձեր բանակի համար հատիկ հավաքող գործիչներին...

— Մեզ զորքը պետք չէ,—բղավեց մեկը անկյունից։

— Թե դու յել պուճախս մանես, ցորենի ման գաս, քեզ էլ կխռկենք։

Դահլիճում աղմուկ բարձրացավ։ Հռետորի խոսքը բերանում մնաց։ Նա վիրավորված նայեց նախագահին, իսկ սա աչքով փնտրում էր «խռովարարներին» ու բղավում.

— Տո, իշխանություն է, ձեզ համար է յեկել, լսեցե՛ք է,—ապա նա սպառնաց «բոլշևիկների ագենտներին» բանտարկել, յեթե չլսեն։ Դահլիճն ալեկոծվեց։

— Տո դու ո՞ւմ ես բանտարկում.—բղավեց մեկը և մի ահագին բռունցք ճոճվեց օդում։

— Պարոն Աստվածատրյանը վերջացնում է, լսեցեք։—Հռետորը ճակատը մեկ էլ սրբեց, առաջ յեկավ և սպառնալի ձայնով ասաց.

— Խռովարարներին պատժելու, վողջ հասարակության ուժերով կարգը պաշտպանելու և անակնկալ հարձակումներից գյուղը պատրաստ պահելու համար առաջարկում եմ հենց այժմ կազմակերպել Ինքնապաշտպանության կոմիտե. այդպիսի կոմիտեներ կազմակերպված են նաև ձեր հարևան գյուղերում։

—Սուտ է, հարևան գյուղերը ձեզ բոյկոտ են արել.—ծանր ու ազդու հայտարարեց Զոզարոն, ապա նախագահից ձայն խնդրեց։ Նոր հուզմունք առաջ չբերելու համար նախագահը կեղծավոր ժպիտը դեմքին «համեցեք» արավ։

Նա մեծացել էր նավթաշխարհում։ Նրա դեմքը նավթի թուխ-շագանակագույն փայլ ուներ, իսկ ձայնը գրընգում էր իր գավոզի պողպատի նման։

Նա շատ հասկանալի լեզվով խոսեց տիրող դրության մասին, հայտարարեց, վոր Ադրբեջանն արդեն խորհրդայնացել է, Ալեքպոլում ու Ղարսում բանվորներն ապստամբել են (դահլիճում բուռն վոգևորություն և վորոտնդոստ ծափեր)։

—Անվերջ կոտորածից, սովից ու թալանից փրկվելու միակ յելքն այն է, վոր զենքի ուժով շուռ տանք սրանց իշխանությունը։—Յեվ նա մատը մեկնեց պարլամենտի անդամի և հետո առաջին շարքերում նստած գյուղի «քյադխուդեքի» կողմը։ Տեղից մի քանի հայհոյանքներ լսվեցին։ Առաջին շարքից մեկը կատաղած վրա թռավ, վոր խփի։ Դահլիճը յերկու մասի բաժանվեց։ Սկսվեց իրարանցումը։ Նախագահը հարյուրավոր կատաղի հայացքների հանդի-

պելով, նորից կեղծավոր ու խորամանկ ժպիտ խաղացրեց դեմքին և հասարակությանը հրավիրեց հանդարտվել։

—Ընկերներ,—ամբոխի միջից նորից լսվեց պողպատե ձայնը.—այս անարգ լուծը թոթափելու համար Աղաջուր, Լալի գյուղ, Ուզունթալա և այլ գյուղերում, կոմունիստների առաջարկով և նրանց ղեկավարությամբ կառավարության առաջարկած ինքնապաշտպանության կոմիտեների փոխարեն գյուղացիք կազմել են Հեղափոխական կոմիտեներ Առաջարկում եմ մերժել պարոն Աստվածատրյանի առաջարկը, մերժել թալանչիների կառավարության առաջարկը և ընտրել Հեղափոխական կոմիտե և իշխանությունը վերցնել։—Դահլիճում լսվեց խառնիխուռն ուռաներ և համակրանքի բացականչությունների հետ միասին ծանր հիշոցներ։

Պարլամենտի ներկայացուցիչը գունատվեց քաթանի նման։ Նա շվվոցների տակ դուրս յեկավ դահլիճից իր թիկնապահների հետ միասին և գնաց դեպի տեղական կայազորի պետ կապիտան Խաչատրյանի բնակարանը։ Սպառնալիքներ կարդալով հեռացան նաև նախագահն ու դահլիճի առաջին շարքերից բուխարա փափախավոր և արծաթե գոտիներ կապած մարդիկ։

Բազմում լցված բոլշևիկներից կազմվեց Հեղափոխական կոմիտե։

ՇԱՐԺՈՒՄԸ ԳԼԽԱՏՈՒՄ ԵՆ

—Հանձնվի՛ր, շո՛ւտ։

—Դե առաջ անցի՛ր։—Յեվ փայտաշեն խրճիթից մաուզերիստներով շրջապատված դուրս յեկավ մեզ ծանոթ շինելավոր բոլշևիկը։ Լուսինը աղոտ կերպով լուսավորում էր գյուղի փողոցները։ Մոտիկից լսվեցին վոտնաձայներ և խոթանների զրնգոց։ Զոզաբողին են բերում։ Հարևան բակերում թեթև աղմուկ է. այդտեղից էլ մի խումբ դուրս

յեկավ։ Քնի մեջ ընկղմված գյուղը չիմացավ էլ, թե ինչպես դարանակալ թշնամին թփի տակ թաքնված հովազի նման մի ակնթարթում ցատկում է իր լավագույն զավակների վրա, անշնչացնում և նորից դարան մտնում։ Միայն ցնցոտիներով մի պատանի շնչասպառ վազում է ստվեր ձգած պատերի տակով, թռչում է կտուրից կտուր և յերդիկներից, դռների ճեղքերից կամաց կանչում.

— Սարգիս, Համայակ, Աղասի, փախեք, գալիս են բռնեն։—Նա շատերին փրկեց. մի քանի տասնյակ հոգի կիսահագնվել, կուզեկուզ իրենց անտառը գցեցին։ Սակայն պատանին ուշ էր գլխի ընկել, հեղկոմի անդամները, լավագույն կոմունիստներն արդեն ջարդված, արյունլվա թափված էին բորբոսնած մարագում։ Իսկ գարնիզոնի շտաբում կապիտան Խաչատրյանը բեխերը ոլորում էր և ինքնաբավականությամբ ժպտում սեղանի շուրջը բոլորված փեդֆեբելներին։

— Նո՛ւ Կոլյա, պատրաստվի՛ր «դրանց» վաղը և յեթ Դիլիջան փոխադրելու։

— Ինչու չեք շտապում, պարոն կապիտան, մենք դեռ ժամանակ շատ ունենք, բացի դրանից դեռ Վոսկեպատի հաշիվը պետք է մաքրել,—հանդարտ առարկեց պորուչիկը։

— Վոչ, վոչ, Վոսկեպատի հետ յեթե տասը Վոսկեպատ ապստամբի, վոչինչ անել չեն կարող, ստրատեգիական պունկտը Սև-Քարն է, օձի գլուխն այստեղ է. շարժումն այստեղից պետք է գլխատել,—պնդեց կապիտանը։ Ապա հենց այդ գիշեր գարնիզոնից յերեք խումբ ձիավորներ ուղարկեց շրջանի գյուղերը և խիստ հրահանգեց՝

— Անմիջապես ձերբակալել բոլոր բոլշևիկներին և բոլոր հեղկոմներին։

Այդ գիշեր սև ձիավորները սև ուրուների նման արշավեցին ծմակներում ծվարած գյուղերի վրա...

ԳԵՐԱՆԴԻՆԵՐԻ ԱՆՏԱՌԸ

Լուսացավ։

Վողջ կայազորը զենքի տակ մտած՝ շրջապատել է այն տունը, ուր նստած են շարժման ղեկավարները։

Ամբոխը հործանք տալով մոտենում է բանտին և հետզհետե նեղացնում օղակը։

Բանտի դուռը բացվեց և պահակների ուղեկցությամբ դուրս յեկան նրանք։ Ջոզարոն գլուխը թափ տվեց, գանգուր մազերը յետ գցեց և շանթահարող մի հայացք գցելով հրապարակում կանգնած կապիտանի վրա, զվարթ նայեց ալեկոծվող ամբոխին։ Գլուխների ծովը յերերաց, հուզվեց։ Արեգակի առաջին ճառագայթների տակ պսպղացին գերանդիները, յեղաններն ու սրաբերան կացինները։ Կալանավորների խումբը հաղթական ժպտաց։ Նրանց յերեսների կնճիռները հարթվեցին և դեմքերը փայլեց ներքին հրճվանքից ու հուզմունքից։ Կապիտանը հրամայեց կալանավորներին քշել Դիլիջան։

—Մի փորձեցե՛ք... մի փորձեցե՛ք ...—բղավեց մեկն ու գերանդին ճոճեց օդում։ Կալանավորների կանայք հերարձակ առաջ յեկան և սկսեցին քաշքշել պահակների զենքերից։

— Զվ՜ո՜ո՜դ... պլի՛,—հրահանգեց փրփրած կապիտանը։ Ամբոխի կողմն ուղղված հրացանների փողերը յերերացին և դանդաղ խոնարհվեցին ցած։ Կապիտանը շանթահար յեղավ։ Մի լայնակուրծք առողջ յերիտասարդ առաջ յեկավ, հենվեց յեղանին և հատ-հատ ասաց.

— Դրանց մի մազը ծռվի՝ բոլորիդ թիքա-թիքա կանենք։—Դա պահանջ չեր, այլ մռնչյուն։ Յերիտասարդի աչքերը փայլատակում եյին և մկանները ուժգին հղվում եյին յեղանի կոթին։ Կապիտանը վերև նայեց և պատահելով հարյուրավոր զայրույթից վառվող հայացքների, գլուխը

կախ գցեց, շրթունքները կրծեց անզոր կատաղությունից և դառնալով պահակներին, հրամայեց.

—Բա՛ց թողեք։ Ապա վերին շրթունքը ծամելով, ատամների արանքից փշշացրեց՝ «մենք դեռ կտեսնվենք»։ Ամբոխը սպանիչ ծիծաղով ճանապարհ դրեց ամոթահար ու գլխիկոր հեռացող կապիտանին։

ԽՄԲԱՊԵՏ ՄՈՒՐԱԴԻ ԲԱԽՏԸ

Գետափով ձգվող խորդ ու բորդ ճանապարհով քայլում են հարյուրի չափ զինվորներ մարտական դրությամբ։ Վաշտի առաջից, սև նժույգը տակին, ընթանում է լայնաթիկունք, արևից խանձված յերեսով և ամբողջովին զենքի մեջ կորած խմբապետը։ Իշխանությունը դրան է հանձնարարել «կարգը վերականգնելու» այդ ձորերի գյուղերում, վորոնք արդեն գործում են հեղափոխական կոմիտեների ղեկավարությամբ։

Ինքնավստահության դրոշմը ճակատին՝ նա մտքում վորոշում է իր որվա ծրագիրը—շրջապատել և հիմնահատակ անել Սև-Քարը, ամեն գույնի «խռովարարների» այդ վորջը։

— Ի՞նչ, խլել բոլշևիկներին կազմակերպված զորքի ձեռքի՞ց։—Նա բեխերը կրծում է հուզմունքից և մտքում հայհոյանք թափում «թուլամորթ», «վախկոտ» կապիտանի գլխին։

Արևը հենց նոր պռունգը սարի թավուտների մեջ դրեց և իր փեշերը հավաքեց անտառոտ ձորերից։

Վոլորապտույտ շավեն հասավ սելավից վարարած գետին, վորի վրա ձգված է յերկաթապատ հսկա կամուրջը։

Ռեվազլվի կամուրջն է։ Վաշտը կանգ առավ, բաժանվեց ջոկերի, օղակների և մարտական դրությամբ առաջ շարժվեց՝ աչքը տնկած սարի լանջին թառած գյուղի վրա։ Զինվորները մտքներում դեռ հավի համեղ միսն եյին ծամում, յերբ չգիտես վոր ծառի յետևից վարպետորեն արձակված մի գնդակ բզզաց օդում։ Վաշտը սարսափով տեսավ, թե ինչպես խմբապետ Մուրադը—թրքական ֆըրնտում սարսափ տարածող այդ «աննահանջ հերոսը»

կոտրված ճյուղի նման կախ ընկավ ձիուց։ Սկսվեց համազարկերն անտառի վրա։

Թիկունքի լեռան լանջից ահագին ժայռեր գլորելով, սարսափ ազդող գոռում-գոչյունով վրա տվին ապստամբած գյուղացիների խմբերը։ Վաշտը բաց շոսեյում պաշտպանվելու տեղ չուներ։ Ձիերը կրակելով փախչելու փորձ արին, սակայն դեպի մյուս ափի ծառերի արանքից հնավուրց «բերդանկաները» իրենց ծխով ու դղրդոցով սարսափ գցեցին մոլորված զինվորների ջանը։ Վորոտները արձագանքեցին, բազմապատկվեցին ահավոր ձորում և վաշտին թվաց, թե բոլոր ծառերը ապստամբած, վայրենի կատաղությամբ լցված գյուղացիներ դառան։ Յեվ նայելով ձիուց կախ ընկած խմբապետին, նրանք զենքերը վայր թափեցին ու գերի գնացին մոտակա գյուղը։

Ճանապարհին ամոթահար տեսան, որ իրենց ուղեկցում է քսան-քսանհինգ հոգուց կազմված պարտիզանական մի խմբակ, ժանգոտած ու ջախջախ հրացաններով։ Ապստամբներից մի քանիսը Մուրադի խմբում յեղել էին տաճկական ֆրոնտում։ Նրանք իրենց նախկին պետի հիշատակը հավերժացնելու համար սկսեցին քաջ Մուրադի յերգը յերգել.

Կարմիր գործը յերբ ճաշացավ,
Պառոն Մուրադն ուրախացավ.
Ասաց՝ տղերք, դուք պար բռնեք,
Յես կչարղեմ կարմիր[1] բանակ:

[1] Իսկական յերգը վոչ թե կարմիրների, այլ տաճիկների դեմ է ուղղված։

ՄՐՐԻԿՆԵՐԻ ՄԵՋ

ԱՌԱՋԻՆ ՎՈՐՈՏԸ

Քարափներից, մթին այրերից, թփուտների հետևից զգուշությամբ գլուխները հանում ու կուզեկուզ առաջ են շարժվում։

Լեռնային նեղլիկ շավիղներով, հրացանների կեռերից ամուր բռնած, ցած են իջնում մեզ ծանոթ պարտիզանական խմբերը։ Մթին ծմակներից ու բարձրաբերձ լեռներից յեկող փոքրիկ այդ առվակները միանում են վտառապտույտ ճանապարհներում, ձորերում, պատահում են գյուղերի կատաղած ամբոխին, իրենց զիրկն առնում, ուղղում ու դառնում հսկա մի հեղեղ՝ պղտո՛ր ու ահարկո՛ւ...

Կազարմաներում յեղս կայծերը թեժանում են, հրդեհվում։ Նշանակված ժամին մի քանի վաշտեր ապստամբում են։ Առաջին անգամ մառախլապատ այդ ձորերում, մայիսյան պայծառ արեվի տակ փողփողում է կարմիր դրոշը։

Պայթում է ամբարված վառոդը յեվ կործանիչ ուժով թափ տալիս տիրող կարգերի խարխուլ շենքը...

ԿԱՏԱՂԻ ԸՆԴՀԱՐՈՒՄԸ

Մի խումբ ձիավորներ սրարշավ մտնում են գավառական քաղաքը։ Տների, նեղլիկ փողոցների արանքներում կուզեկուզ առաջ են շարժվում շինելավոր, արխալավոր, չուխայով, ու շատերն էլ մոթալ փափախով մարդիկ։ Անձրևն ու արևը քշել, տարել է նրանց դեմքերի ու շրթերի բնական տեսքը։ Ամիսներ շարունակ ապրելով խոնավ ու անհյուրընկալ քարայրերում, այժմ գավառական կեղտոտ ու խարխլված այդ գյուղաքաղաքը նրանց այնքան պայծառ, այնքան հոյակապ է թվում։

Եվ արտակալած աչքերով նրանք խուժում են իրենց այնքան գեղեցիկ թվացող քաղաքը։

Տրմ, տմ, տմ, տմ... մի քանի րոպե ճարճատեց գնդացիրն ու լռեց։ Մի քանի մաուզերիստներ թողեցին գնդացիրն ու իրենց անտառը նետեցին։ Քաղաքի միակ և գլխավոր փողոցով հաղթական «ուռա»-ներով առաջ է շարժվում ապստամբած վաշտը։

Կարճլիկ, լայնաթիկունք ու ծաղկատար յերեսով մի զինվորական ընթանում է խմբի առաջից։ Գեներալ Բաղդասարովին զինաթափ անող խիզախ բոլշևիկ Ակոբջանովն է։ Նրա աջ կողմից գնում է մեզ ծանոթ պատանին։ Նրա դեմքը վառվում է վոգևորությունից, իսկ սվինի ծայրին մայիսյան արևի տակ փայլփլում է գնդապետի վոսկեթել նախշերով պագոնները (ուսադիրները)։

Խմբերը մեկը մյուսի հետևից գրավում են քաղաքի կարևոր կետերը։ Այս ու այն տնից դուրս են պրծնում, «Սպարտակ» Յերիտմիության անդամները՝ Գրիգորը, Բադիշը, Աշոտը և ուրիշները, հրացանների կոթերից բռնած խառնվում են խմբին։

Մաուզերիստական խմբերն իրենց նետեցին յեղնու անտառն ու ապահով դիրքերից սկսեցին գնդացիրներից ու հրացաններից գնդակ տեղալ ապստամբների վրա։

— Տրաք-տրաք, տրաք, տը՛-տը՛-տը՛, տմ-տմ-տմ։ Եվ մաղում է արճճի կարկուտը սարսափած ազգաբնակչության վրա։

Ապստամբների խումբը ցրվեց ու սկսեց տների արանքներով կրակելով առաջ շարժվել։ Գնդակը ծակում է սվինի ծայրին ամրացրած ուսադիրն ու վզզում օդում, շամփրում ծառերը, ճյուղեր ցած բերում։ Գնդապետի պագոնի մի յերեսը վառոդը վառեց. հանելու ժամանակ չկա, պետք է կրակել անընդհատ։ Ահա նրանք առաջ են շարժվում, նրանց ուժերը շատանում են, յերևի ոգնական զորքեր են ստացվել... Եվ քարքարոտ զառիվայրով կուզեկուզ մագլցում է պատանի պարտիզանը ու կրակում, հա կրակում։

ՆՈՐԻՑ ՅԵՌԱԳՈՒՅՆԸ

Փամփուշտը վերջանում է, ուժերն սպառվում, բայց անտառը վերցնել դժվար է, գրեթե անկարելի։ Ծառերի հետևում դարան մտած թշնամին հետ է շպրտում կարմիր պարտիզանների խիզախ գրոհները։

Մեկը ջուխտ ձեռքով բռնեց կողից ու նստեց պատի տակ... Տեղացող գնդակների տարափի տակ պատանին վազեց դեպի վիրավորը։ Անտառից «ուռա»-ներով ներքև են վազում թշնամու ջոկերը։ Պատանին վիրավորին քարշ տվեց դեպի հարևան տունը, պառկեցրեց և շտապ փաթաթեց ընկերոջ փորն ու կարաբինի կոթից բռնած՝ դուրս վազեց։

Այս ինչ է. հրապարակում արդեն յեռագույն դրոշն է ծածանում։ Փողոցներում մաուզերները հանած մարդիկ են վազում ու կրակում աջ ու ձախ։ Պատանին իրեն գցեց փողոցի կողքին զառիվայրում թառած տան պատշգամբն ու պառկեց։

«ԽՂՃԱՑԵՔ, ՊԱՐՈՆՆԵՐ»

Փողոցում մի քանի մաուզերիստներ գլորեցին բարակ ու յերկար մի յերիտասարդ մարդի ու սկսեցին հարվածել հրացանի կոթերով։ Սպարտակի անդամ Բագիշն է։ Քիչ անց՝ քարշ տալով փողոց նետեցին նրա յեղբորը՝ բոլշևիկ Արմենակին և վոսկորները ջարդելուց հետո՝ քարշ տվին դեպի բանտ։ Պատանին սողալով անցավ հարևան բակը։ Միլիցիայի շտաբի մոտ սոսկալի մի տեսարան բացվեց.— Թոքախտավոր ու բարալիկ մի յերիտասարդի՝— բոլշևիկ Իշխանի յերկար մազերից բռնած՝ գլուխը խփում են հեռագրասյունին։ Նրա բժիշկ հայրը, իր վորդու ճիշտ հակապատկերը, հաստլիկ ու չաղլիկ մի մարդ, վազվզում է դիմացի պատշգամբում ու աղիողորմ ճչում.

— Խղճացեք, պարոններ, թոքախտավոր է։

Պարտիզան պատանու արյունը գլխին է տալիս։

«Տրա՛ք, տրա՛ք, տրա՛ք», կրակում է մեկը մյուսի յետևից ու թռչում հարևան բակը։ Մաուզերիստներից մեկի թևը քարինման կախ ընկավ ու հրացանն ընկավ ցած։ Խումբը շփոթված ցրվեց ու ապա մերկացրած մաուզերներով վազեցին կրակոցի ուղղությամբ։

ՑՐՎԱԾ ՈՒՂԵՂԸ

Պատանին բակից-բակ անցնելով հասավ «վոսկի աղբյուրին»։ Յեվ հենց ուզում եր վազել ցած՝ տեսավ մեկը փռված եր սալահատակին՝ աղբյուրի մոտ։ Նրա չեչոտ դեմքի մի կողմն եր մնացել միայն. իսկ ջախջախված գանգից ուղեղը թափվել եր աղբյուրի թաց քարերի վրա...

Շինելից ու ծաղկատար դեմքից ճանաչեց... Ակոբջանովն է։ Պատանու սիրտը կծկվեց կսկծից. պետք է փախցնել, վճռեց ու հենց կռացավ, վոր վերցնի, հետևից լսվեց հրացանների պայթյուն։ Ջախ թևից ինչ վոր սուր

բան անցավ։ Նա արագ շուռ յեկավ, թռավ մոտակա պատի գլուխը, մոտեցող մաուզերիստական խմբի վրա կրակեց վերջին յերկու փամփուշտը, հրացանը նետեց ցած և իրեն շպրտեց առաջը բացվող ձորն ու անհետացավ մարդաբոյ բռնկուտի[1] մեջ։

Քիչ անց հաս ու կենտ կրակոցներ ել լսվեցին և ամեն ինչ լռեց։

Ապստամբությունն արյան մեջ խեղդվել եր։ Դաշնակցական բռնապետությունն իր «հաղթանակի» խրախճանքն եր կատարում։

---

[1] Բռնկուտ—իրար խճճված թփեր, խոտեր, բարձր աճած վայրի բույսեր։

ԲՈՐԵՆԻՆԵՐԸ ՀԵՐԹԻ ՅԵՆ ԿԱՆԳՆԵԼ

Մռայլ ու ամպամած երկինքն իջավ գյուղի վրա։ Ձեթի ու մարխի[1] ճրագները շատ աղոտ սկսեցին վառվել խրճիթներում։ Գյուղում գրեթե տղամարդ չկար։ Շատերին մաուզերի ուժով քշել են փրոնտ, մի մասն էլ ապըստամբությունից հետո փախել է լեռներն ու ապաստանել քարանձավներում, կիրճերում, ձորերում։

Մի վաշտ մտավ գյուղը։ Խուզարկեցին տները։ Սովորական թալանն անելուց հետո, վաշտը շրջապատեց գյուղի ծայրին կուչ յեկած խրճիթը։ Դուռը ծեծում են հրացանի կոթով։

— Ո՞վ է։

— Բաց արեք, շո՛ւտ,—լսվեց հրամանը։

Չեն բացում։ Գազազած խմբապետը մի քանի աքացի յե խփում, խորտակում դուռն ու ներս մտնում։ Ներսում Ակոբի կինը՝ Սիրանուշը, ոջախի մոտ նստած՝ գուլպա յե գործում։ Յերեխան խաղում է բրդոտ կատվի հետ, իսկ ծերունի կեսրարը մտախոհ չիբուխն է ծխում։

— Սրանց վերցնել,—հրամայեց խմբապետը, մատով ցույց տալով ծերունուն ու յերեխային։ 4—5 հոգի ծերունուն ու ճչացող յերեխային գրկած դուրս տարան ու փակեցին հարևան տանը։ Կինն իզուր է սարսափահար ճչում։

— Մարդդ ո՞ւր է։

— Չգիտեմ։

— Գիտես,—վորոտում է խմբապետը։

— Ասում են՝ փախել ա Բագու։

— Բագո՞ւ, յես քեզ հիմա Բագու ցույց կտամ։

— Դո՛ւրս։—Զինվորներին դուրս անելուց և խրճիթի դուռը ներսից ամրացնելուց հետո՝ մոտենում է սարսափահար կնոջը։ Նա խելակորույս վազում է, պատերին է զարնվում ու ճչում անընդհատ։ Դրսում հրացանների կոթով քշում են հավաքվող հարևաններին։

Գազազած խմբապետը ձեռքը գցում է կնոջ մազերը, խփում գետնին։ Կրքից կրծում է նրա յերեսը, կուրծքը… Կինը դիմադրում է կատաղությամբ։ Ճանկռոտում է նրա դեմքը, շորերը։ Բայց իզուր։ Նրա ուժերն սպառվում են։ Ամեն ինչ խառնվում է աչքի առաջ ու թուլացած թևերը փռվում են հատակին… Լսվում է հեծ…

Գազանային կրքերին հագուրդ տալուց հետո՝ խմբապետը հանում է կնոջ շորերը, դուռը բանում ու հրամայում.

—Շա՛ր-քի՛։ - Յերեսունի չափ զինվորներ զույգ-զույգ շարքի յեն կանգնում։

— Բայ՛ո՛վ… մարշ։ -Շարքի կեսը մնում է խրճիթ, իսկ ծայրը դրսումն է։

Առաջին զույգը կանգ է առնում հատակին մերկ ընկած կնոջ մոտ։

Անցնե՛լ գործի,—հրամայում է խմբապետն ու շեմքի մոտ կարգադրում ջոկապետներին.

— Իսկույն կապկպել և ինձ ներկայացնել նրան, ով կհրաժարվի… դե, գործի անցեք։

Յեվ մինչև լույս գազանացած մարդիկ հերթով հոշոտում են մերկ ու անզգա ընկած կնոջ պատիվը…

* * *

Մյուս օրը հարևանները դառը կսկիծով հողին հանձնեցին Սիրանուշի անշնչացած ու անարգված մարմինը։

Հողով ծածկելիս, յերեխան՝ փոքրիկ Ռուբիկը ճչաց ու բռնեց բահի կոթից։

— Մամայի վրա հող մի ածի,—թախանձեց նա…

Ամբոխի աչքերից աղի արցունք քամվեց և վրեժը բորբոքվեց նրա հոգու խորքում…

[1] Մարխ—յեղևնու յուղոտ արմատը, վոր նավթի տեղ վառում եյին 1918—19—20 թվերին։

ԼԵՌՆԱՇՂԹԱՅՈՎ

Լոռիից դեպի Կուրի հովիտը ձգվող լեռնաշղթաներից մեկն աչքի յե ընկնում իր բարձր ու քարքարոտ գագաթներով և լանջերի մթին ու անհարկու ծմակներով։

Վայրի խոզերն ու արջերը, յեղջերուներն ու յեղնիկները խժռում են անտառի բարիքները՝ տանձը, խնձորը, կաղինը և ամեն աշնան յուղակալում, չաղանում։

Յեվ վայրի այդ բնության մեջ յեղնիկի նման թռչկոտում է փախստական պատանին։ Նա շապկի թևով պինդ կապել է ձախ ձեռքի թեթև վերքը։

Հոգնած է ու քաղցած։ Սակայն աշխույժ է, շատ աշխույժ։ Նրան թվում է, թե նոր է ծնվել։ Մահը, վոր այնքան մոտ, շատ մոտ անցավ նրա կողքով, ապրելու բուռն տենչ առաջ բերեց նրա մեջ։

Մինչև Ակոբջանովի, Յենոքի, Վաղինակի սպանվելը նա չէր էլ մտածում մահվան մասին։ Բայց յերբ հրացանները պայթեցին և ձախ թևը տաքացավ, նրա մեջ ապրելու բնազդն առաջ յեկավ անսովոր ուժով։

Նա կանգ առավ մոռի թփերի առաջ։ Դեռ խակ են, իսկ քաղցը վորդի նման կրծում է նրա ներսը։ Գոնե աշուն լիներ։ Մազեյենի անից փախած ժամանակ նա որերով անտառումն էր ապրել և սնվել վայրի պտուղներով։ Իսկ այժմ վոչինչ չկա։ Ահա մասրենու նոր բուսած ճյուղը։ Կակուղ է ու ջրալի։ Պոկոտում է խժռում է մեծ ախորժակով ու դանդաղ առաջ է շարժվում անտառով։

Վերջին դեպքերը նրան շշմեցրել էին։ Ո՞ւր մնացին ընկերները։ Ախր չէ՞ վոր նրանք հաղթանակի խոր հավատով մտան գավառական քաղաքը։ Չէ՞ վոր լուրեր էին

պտտում, վոր Ղարսը, Սարիղամիշը, Ալեքպոլը, Բայազետը կարմիրների ձեռքն են անցել։ Յեվ նա վոչինչ չի հասկանում այդ բոլորից։ «Յերևի մերոնք պարտվեցին, յերևի Ակոբին և մյուս ընկերներին բանտ նստեցրին և գուցե գնդակահարեցին։ Իսկ յեթե Վարսիկին մատնե՞ն, յեթե նրան մեղադրեն պարտիզաններին աջակցելու մե՞ջ»։

Յեվ նրա յերևակայության մեջ գծագրվեց սարի դոշին կպած աղքատիկ գյուղը, Վարսիկենց հողե խրճիթը, վորի առաջ բեխերը հաստ մի խմբապետ պահանջում է աղջկան դուրս կանչել։ Ասում են՝ «տանը չէ»։ Խմբապետը գյուղի կոմիսարի հետ մտնում է ներս ու աղջկա մազերից բռնած՝ քարշ տալիս դեպի գյուղամեջ։

Պատանին կատաղությունից ծամում է ձախ ձեռքի ցուցամատը։

— Զե, ինչ ուզում են անեն, մերոնք կհաղթեն,— բացականչեց նա և աչքի առաջով անցան պարտիզանական խմբերը, Շամշադինի տղերքը՝ փղանման Գորդաշվիլին, Վասիլը, Խեչոն, բոլորն էլ հուժկու, բոլորն էլ գազազած ու անհաշտ։ Նա Ղազախի շատ գյուղերում էր յեղել և գիտեր, թե ինչ աստիճան էր աճել գյուղացիության դժգոհությունը։ «Ընկեր Ժենյան» նրան պատմել էր Ալեքպոլի դեպոյի բոլշևիկացող բանվորության մասին, արագ աճող կոմունիստական գաղտնի բջիջների մասին։ Ահա ինչու նա չէր ընկճվում առաջին պարտությունից։ Այժմ հարկավոր է լեռնաշղթաներով իջնել մինչև Կուրի դաշտը, սահմանն անցնել։ Դա շատ է դժվար, բայց այրերում ապաստանած ընկերները հանձնարարել են սատանայի ճամբով անգամ գրականություն հասցնել և Գանձակից բերել այն թղթի պատասխանը, վոր այնպես քնքշորեն իրեն զգացնել է տալիս ձախ թևի տակ, կարկատած շապկի մեջ։

Մտքերի մեջ խորասուզված՝ նա դեմ առավ մի ահագին ժայռի։ Արագությամբ մագլցեց ապառաժի խորդ ու բորդ ճակատով և կանգնեց գագաթին ու սկսեց շուրջը

նայել։ Յերկու կողքից անտառապատ լանջերի վրայով նրա հայացքը սահեց դեպի ցած, ձորը, ուր գետակն էր փայլփլում գարնանային արևի տակ։ Գետակի ափին ինչ վոր խրճիթներ են յերևում։ «Յերևի ձմեռանոց է, գուցե հաց ունենան». ապա նայեց ձախ կողմը, ուր հեռվում տարածվում է Քուռի հովիտը՝ կանաչ ու թավշանման։

Նա, վոր սովոր էր լեռների ծերպերին և կյանքում տափարակ չեր տեսել, այժմ զմայլված նայում էր կանաչ տափաստանին և մայիսյան արեգակի տակ փայլփլող «Քուռ» արծաթե գոտուն։ Յարաբ ինչ է կատարվում ներքևում, ով է իշխում այդ լայնարձակ արգավանդ հովտում։ Բայց Բագվի և Գանձակի խորհրդայնացումից պարտիզանական խումբը վոչ մի տեղեկություն չուներ հարևան գավառներից։ Գիտեյին միայն, վոր Շամշադինից փախած տղերքը Գանձակումն են և գրականություն, հրահանգներ ու զենք կարող եյին ուղարկել իրենց։

ՍԱՀՄԱՆԻՑ ԱՅՆ ԿՈՂՄԸ

Նա վոստոստելով իջավ ցած, դեպի գետակը։

Անտառում թրխկոց է լսվում։ Ծառ են կտրում։ Պատանին քայլեց ձայնի ուղղությամբ։ Հսկա կաղնին ճարճատյունով թեքվեց ու հարևան ծառերի ճյուղերը փշրելով, ահագին դղրդյունով ընկավ ցած։

Ծառը կտրողը գլուխը բարձրացրեց ու մոտեցող պատանուն նկատելով, հարցրեց.

— Քի՞մ սան։ (Ո՞վ ես)։

— Ղարիբ ադա յեմ. ես վո՞ր գյուղն է։

— Ղայմախլու։

«Հըմ, ուրեմն արդեն Ադրբեջանում եմ», մտածեց նա ու սիրտն ահ ընկավ։

— Ի՞նչ գործ ունես ես կողմերում, —հարցրեց թուրքը։

Նրա վոչ դեմքի վրա, վոչ աչքերում, վոչ էլ ձայնի մեջ չարության նշույլ չկա։ Պետք է ճիշտ ասել։

— Յես փախել եմ դաշնակների կառավարությունից, —պատասխանեց պատանին համարձակ։

Գյուղացու ճակատի կնճիռները հարթվեցին. նա դարմացած վոտից գլուխ չափեց պատանուն ու մի քանի գլխի ընկնելով, բացականչեց.

— Հա՜մ... գիտեմ, քեզ պետք է տանել Ոսմանի մոտ։

—Պատանին անհանգիստ շարժում արավ։

— Ինչի՞ համար, ո՞վ է էդ Ոսմանը։

— Հ՜մ, —արավ ու ժպտաց գյուղացին. —դու են սաս, դու ձեր կառավարությանը վնաս տվե՞լ ես։

— Հա, բո՞լ...

— Դե ուրեմն գնանք Ոսմանի մոտ։

Պատանին լուռ հնազանդվեց և քայլեց գյուղացու հետ՝ կողք կողքի։

«Այ թե բռնվեցի հա՜», մտածեց նա և սկսեց աչքի տակով ճանապարհի կողքերը հետազոտել՝ ծլկվելու համար։

Գյուղացին շատ մտերմաբար հարցեր էր տալիս Հայաստանի գյուղացիների դրության մասին։ Պատանին պատմեց ամբողջը, ինչ վոր գիտեր։ Նա նույնիսկ պատմեց գյուղացիների և զինվորների ապստամբության մասին։ Մհարլամը (այդպես էր նրա անունը) շատ ուրախացավ, յերբ ապստամբության լուրը լսեց։

— Ես ա, քիչ մնաց, շուտով մեր գյուղն էլ կհասնենք, —ասաց նա ու ավելի զվարթացավ։

— Բա Ոսմանն ո՞վ է, —հարցրեց պատանին։

— Ոսմա՞նը, ո՜, Ոսմանը շատ ազնիվ մարդ ա, իսկական քյասիբի թիկունքում կանգնած մարդ ա։ Բունտի[1] տարուց մինչև հիմի էդ մարդը արյունը դրել է էդ գործի համար։

Թեև Մհարլամը դրանից ավելի վոչինչ չասաց, բայց պատանին ամեն ինչ հասկացավ ու սրտապնդված մտավ գյուղ։

[1] Բունտի տարին—1905 թվի հեղափոխության տարին է։

Ոսմանի տանը նրան լավ ընդունեցին։ Քիչ անց ներս մտավ շինելը հագին սափրված ու համակրելի դեմքով մի մարդ։

—Մի կարմիր կտոր եմ բերել,—ասաց Մհարլամը պատանուն ներկայացնելով։

— Յանի կարմիր ա՞,—ժպտալով ասաց Ոսմանն ու ձեռքը մեկնեց պատանուն։

— Յոլդաշ Ոսման, կտեսնես՝ կարմի՛ր եմ, թե կանաչ,—պատասխանեց պատանին։

Ապա նա պատմեց իր ճամբորդության նպատակը և Ոսմանից աջակցություն խնդրեց։ Ոսմանը նրան ասաց, թե ինչ պիտի անել սահմանն անցնելու համար, ու նստեց փռած թաղիքի վրա։

ԿԱՐՄԻՐ ՏՈՄՍԸ

Ոսմանի տանը Հանեսի համար կյանքը բավական հետաքրքիր էր անցնում։

Քեֆի, հարսանիքի և այլ պատրվակներով հաճախ էին ժողովներ կայանում։

«Յոլդաշ Ճուտիկին» բոլորին էլ գիտեյին և առանձին համակրանքով էյին խոսում նրա հետ։

Ոսմանը հաճախ էր տնից բացակայում։ Նա շրջում էր գյուղերը և գաղտնի ժողովներ կազմակերպում։ Առանձնապես վերջերում նա հաճախ էր լինում գյուղերում և վերադառնում էր բավական բարձր տրամադրությամբ։

—Քիչ մնաց, հա՛, յոլդաշ Ճուտիկ,—ու ժպտալով ձեռքը խփում էր պատանու ուսին։—Գործերը լավ են գնում, ես է կքշենք։—Յեվ ուրախ շվշվացնում էր։

Մի օր էլ նա ցույց տվեց կարմիր մի տոմս, Ճուտիկը (նրան արդեն այդպես էյին կանչում) առաջին անգամ խորին ակնածությամբ նայեց բոլշևիկյան տոմսին և յերկար կանգ առավ հուշակավոր մարդու՝ Շահումյանի ստորագրության վրա։

Ոսմանը պատմեց, որ 1918 թվին Բաքվից Շահումյանից հատուկ հանձնարարություններ է ստացել։ Պատմելու ժամանակ նա մռայլվեց ու խորը հոգոց հանեց։

— Հեյ դունյա, դունյա, ի՜նչ յերկաթե մարդիկ կորան. Շահումյան, Ազիզբեկով, Ջափարիձե, Ֆիոլետով. մենք աննամուս պետք է լինենք, որ մեկին հինգ չհանենք,—մռնչաց նա անսովոր կատաղությամբ։ Ճուտիկը լսել էր այդ անունները, բայց Ոսմանից միայն իմացավ Բաքվի Կոմունայի պատմությունը։

«Ի՜նչ մարդիկ էյին, ափսոս, ափսոս», ինքն իրեն կրկնում էր Ոսմանն ու նայում կարմիր տոմսի կարմիր ստորագրությանը։

«ՅՈԼԴԱՇ ՆԱՐԻՄԱՆԸ»

Մի օր ամբողջ գյուղը հավաքվեց։ Ասում էյին, որ Բաքվից մարդ է յեկել։

Մի քարի վրա բարձրացավ ճաղատ գլխով, լայն ու հաղթ ճակատով և բարի դեմքով մի մարդ ու սկսեց խոսել որվա այրող հարցերից։

—Նարիման Նարիմանովն է։—Յեվ շշուկն անցավ ամբոխի միջով։ Նա յերկար խոսեց հայ-թրքական վերջին ընդհարումների պատճառների մասին և շատերի համար առաջին անգամ պարզվեց, որ այդ կոտորածները մուսավաթականները - բեկերն ու դաշնակներն են սարքում՝ իրենց օգտի համար։

— Թուրք աշխատավորի իսկական թշնամին,—ասում էր նա,—թուրք բեկն է, որ ծծում է ձեր արյունը, թուրք մուսավաթականն է, որ ձեզ դեպի կործանումն է տանում, իսկ հայ աշխատավորի թշնամին՝ հայ հողատերերը, հարուստներն ու դաշնակներն են։ Վերջ պետք է տալ յեղբայրասպան կռվին, միանալ հայ աշխատավորների հետ և կռվել ընդհանուր թշնամու դեմ։

Նարիմանովը կոչ արավ հետ տալ այն հողամասը, վոր խլել եյին հարևան հայկական գյուղից։

Մի քանիսը վրդովվեցին։

— Հայերից կաշառված ե, — բղավեց մեկը։ Հաստափորերից մեկը մի անկյունում ինչ-վոր ձեռով-վոտով խոսում եր։ Սակայն Ոսմանը, Մհարլամը և ուրիշ շատերը տաքացած պաշտպանում եյին ճառախոսի առաջարկը։ Միտինգը վորոշեց հողը վերադարձնել և վողջույնի ու համերաշխության նամակ ու մի պատգամավորություն ուղարկել հարևան հայկական գյուղը։ Մեծ վոգևորությամբ ընդունվեց Ոսմանի այդ առաջարկը։

Նարիմանովը նույն հարցերով Ոսմանի հետ անցավ հարևան գյուղերը։ Յերկու որից հետո՝ գիշերը Ոսմանը յեկավ շատ տխուր։

—Նարիմանովին բռնեցին, յես հազիվ փախա, — ասաց նա։

ՄՈՇԻ ԹՓԵՐԻ ՏԱԿՈՎ

Ծուտիկի համբերությունը վերջանում եր անգործությունից։ Նրան թվում եր, թե կարմիր գիծն անցկացնելու համար այդքան դես-դեն ընկնելը, կեղծ վկայականներ սարքելը և այն, վոր անում եր Ոսմանը, բոլորն ավելորդ են։

— Մի գիշեր ճղիր անցկաց, վերջացավ գնաց, — ասում եր նա։ Իսկ Ոսմանը հեռուն եր նայում։ «Սա ձեր յերկիրը չե, բավական ե, վոր բռնվեցիր, գազազած մուսավաթականները կխփեն», և համոզում եր, վոր մի քիչ ել համբերի։

Անցավ մի քանի որ։ Ոսմանը շատ անհանգիստ եր։ Նրան հետևում եյին։ Մի որ ել նա ներս մտավ, ձեռք բերած փաստաթղթերը հանձնեց և անհանգստությամբ ասաց՝

— Ծուտիկ, քեզ քիչ հետո կբռնեն, փախիր բաղը, հարևանները մատնել են։ — Այնուհետև սովորեցրեց, թե ինչպես պետք ե զրանիցը անցնել։

Ծուտիկը տների արանքով ծլկվեց Ոսմանենց խաղողի այգին և կուչ յեկավ թփերի տակ։

Մի քիչ անց մի խումբ զինվորներ շրջապատեցին Ոսմանենց տունն ու ձերբակալեցին Ոսմանին։

— Են գյավուրի լակոտի՞ տեղն ասա, թե չե կսատկացնենք։

— Փախել ե, չկա։

Յեվ զինվորներն անոգուտ հարվածում եյին։ Հարևան Հասան աղի տղեն մտավ ցույց տվեց դեպի այգին։ Զինվորներն այգին շրջապատեցին։

Ծուտիկը թփերի տակով փորսող տալով, դուրս յեկավ ցանկապատի տակով և մտավ առվի ափերին բուսած խիտ մոշի թփերի տակ ու սուս արավ։ Նա շունչը պահած՝ մի քանի ժամ պառկեց, և յերբ մութը ընկավ, թփերի տակով սողալով հասավ անտառին ու կորավ խավար ծմակի մեջ...

ԿԱՆԱՉ ՀՈՎՏՈՒՄ

Սարդավանդ տափարակում, թեժ արևի տակ բոլ են քաշում ցեղխպտացորենի արտերն ու կոշտ թևերն իրար քսելով, մեղմ խշխշում են լեռներից փչող հովից։ Դաշտ է՝ վորքան աչքդ կտրի, հարթ ու անծայր դաշտ։ Չկան վոչ հաստաբուն կաղնիները, վորի խիտ ճյուղերի մեջ թաղնվում էր միլիցիայի խումբն անցնելիս, չկան ժայռերի ծոցում բնության ձեռքով պատրաստած կոկիկ ու մութ ապաստարաններն, ուր նրանք ապրում էին շաբաթներով, չկան անթափանցելի թավուտներն, ուր նա մի ակնթարթում կորչում էր հետապնդող թշնամու աչքից։

Այստեղ լայն է ու հարթ, վորքան աչքդ կտրի։

Ահա ինչու ծերպերից բաց դաշտ ընկած լեռնիկի Նրման նա դողով բռնված աշխատում է գլուխը հավասարեցնել ցեղխպտացորենի արտին և առաջ գնալ, աննկատ մնալով դաշտ դուրս յեկած ջրվորներից։

Նա հոգնած նստեց առվի կանաչ ափին ու սկսեց նայել դիմացի դաշտին, ուր գորշ գանգվածներից դենը, հեռվում, դաշտի կանաչ ֆոնի վրա սպիտակին է տալիս մի բարձր շենք։ Յերկաթուղու կայարանն է։ Հետևում ցեղխպտացորենի ցողունները խշխշացին և մի մարդ բահը ձեռքին կանգնեց նրա գլխավերևը։

Մարդը մի կասկածելի հայացք ձգեց պատանու վրա և նստեց կողքին։

— Ո՞վ ես, վո՞րտեղից ես գալի,— հարցրեց նա։

Ծուռիկը թուրքերեն գիտեր դեռ գառնարած յեղած ժամանակ։ Նա մաքուր թուրքերենով ասաց.

Ղայմախլվեցի յեմ, գնում եմ Գյանջա նոքարություն անեմ.

— Հա, տերը մեռնի նոքարությանը,— հարեց ջրվորը կարծես ինքն իրեն։ Ապա աչքը հառեց առվի պղտոր ջրերին։

— Հը՞, չլի՞ թե դու յել ես նոքարություն արել։

— Ենքա՛ն,— ծոր տվեց ջրվորը, աչքը առվից չհեռացնելով։ Ապա գլուխը վեր քաշեց ու ձեռքը մեկնելով, ոդում մի կոր գիծ քաշեց։

— Տեսնո՞ւմ ես էս դուզը, ինչքան վոր աչքդ կտրի, փեղամբարբուրդատու (ցեղխպտացորեն) էս արտերը թամուզ Ալլահբեգինն ա։ Ինձ պես հինգ հարիր նոքար ունի։— Յեվ նորից գլուխը կախեց, աչքը գցեց վազող ջրերին ու լռեց։

— Խի՞ չես քեզ համար սիմինդ ցանում,— հարցրեց պատանին։

Մարդը գլուխը վեր քաշեց և զարմացած նայեց նրան.

— Խի՞, էս աշխարքից չե՞ս, տա,— ապա մի քիչ լռելուց հետո դանդաղ խոսեց, կարծես իր համար.— «Տերդ մեռնի դունյա. է՜ է՜ ... աթաղան, բաբաղան մենք հող չունենք։ Ալլահբեգի պապը շահից թուղթ ա բերել ու էս սաղ դուզերը քսան-քսանհինգ գեղ հետը տիրացել։

Քիչ լռելուց հետո շարունակեց. «Էդ թուղթը, ասում են, գոռ ղվաթ[1] ունի, բեգը իրեք հարիր տարի ա վոսկի սնդուկի մեջ ա պահում։ Հմի փառք ալլահին, տանով-տեղով բեգի մուլքն ենք, վորը իմ պես տարով նոքար ա, Թիացածներն էլ կոռ ու բեգար են տալիս, աղբրս ասեմ՝ փեղամբարի խալվարից մի ջվալն են տալիս։

Ապա չորս կողմը նայելուց հետո բերանը պատանու ականջին մոտեցրեց ու ցած ձայնով հարցրեց.

— Ձեր կողմերը չե՞ն յեկել։

— Ովքե՞ր։

— Բոլշևիկը։ Ասում են Աստամբեգլու, Սալահլու, Թաթլու թամուզ բեգերին քշել են, հողերը խլել, հը՞։

---

1 Ղվաթ—ուժ։

— Մաքսը չեմ,— կեղծ չքմեղ ձևացավ պատանին։— Էստեղից ստանցին ինչքա՞ն է,— խոսքը փոխեց նա։

— Հլա մի չվանաբուչ սրև կլի, որ հասնես։— Ցեվ Ճուտիկը վեր կացավ, մեսս բարև արավ ջրվորին ու դիմեց դեպի կայարան։ Քիչ անց հեռու դաշտում մի սև կետ յերևաց և ծուխը ժապավեն կապեց օդում։ Գնացքն եր։ «Են, հիմիկվա պոյեզդը սելի պես ա գնում, կհասնեմ», ինքն իրեն ասաց ծպտյալն ու աչքը սպիտակ շենքին գցած՝ քայլեց յեգիպտացորենի արտերով։

ԱՏԱՄՆԵՐԸ ԶԱՐԴՎԱԾ ԿԱՆԴՈՒԿՏՈՐԸ

Նա կանգ առավ կայարանի կառամատույցի վրա և սկսեց զննել կոկարդավոր մարդկանց։ Նրանցից մեկը, մի բարձրահասակ թուխ յերիտասարդ հազիվ է պահում դեպի գիծը վազող մարդկանց հոսանքը։ Մոտեցավ նրան ու նայեց յերեսին։ Ներքին ծնոտի վրա պարզ յերևում է մեծ սպին։ Ով գիտե վո՞ր ֆրոնտում մոլորված մի գնդակ ջարդել է ծնոտն ու իր հետ տարել ատամների առաջին շարքը։ «Իսկը սա յե, վոր կա»,— վճռեց պատանին և մոտենալով հարցրեց.

— Պոյեզդը յե՞րբ կգա։

— Քառորդ ժամից,— պատասխանեց պաշտոնյան անտարբեր և շարունակեց կարգադրություններ անել։

«Իսկ յեթե սա չլինի, կորած եմ»,— մտածեց Ճուտիկն ու մի փոքր տատանվելուց հետո նորից մոտեցավ և հարցրեց.

— Կանդուկտո՛ր, աղվեսի մորթի չե՞ս առնի։

Մարդը ժպտաց ու պատասխանեց.

— Գյանջա ես տանո՞ւմ։

— Հա, ումնից պետք է անցագիր վերցնեմ սահմանըն անցնելու համար։— Անկյունից արծաթյա կիսալուսինը կրծքին մեկը կանգնած է հրացանը ձեռքին և կասկածան-

քով նայում է նշանացի խոսող զույգին։ Նա վճռական մի շարժում արավ և շարժվեց դեպի զույգը։ Թուրք յերիտասարդն այդ նկատելով, սկզբում անհանգստությամբ չորս կողմը նայեց, ապա բղավեց պատանու վրա.

— Ի՞նչ Գյանջա, լակոտ, ձերոնց մոտ ես գնում հա՛, յես քեզ Գյանջա ցույց կտամ։— Ցեվ նշան արավ պատի տակ կանգնած միլիցիոներին։ Ճուտիկի վզակոթին տալով ներս գցեցին։ Մուսավաթական «Ոխրանկայի» գործակալը կատաղի հայացք գցեց պատանու վրա, ծնոտներն ամուր սեղմած մռլտաց.

— Գյանջա ի՞նչ գործ ունես։

— Մշակ տղա յեմ, աղա ջան, Ղայմախլվի կողմերից եմ գալի։ Գյանջայում քեռի ունեմ, գնում եմ նրա տանը մշակություն անեմ,— կեղծ մղկտաց պատանին և ծոցից հանելով վկայականները, ցույց տվեց։ Պետը շուռ ու մուռ տվեց թղթերն ու կասկածանքով վոտից գլուխ նայեց պատանուն։ «Կոնդուկտորը» ևս նայեց, մեղմացավ ու դիմելով պետին՝ ասաց.

— Հա՛, մեր կողմերիցն է, նոր հիշեցի, անշառ խեղճ տղա յե։

— Հո՛, յերաշխավորում ե՞ս, լավ,— ասաց պետն ու այդ «կուչ յեկած տղրակի» մեջ վոչինչ վտանգավոր բան չնկատելով, մի թղթի կտորի վրա գրեց, կնքեց ու տվեց պատանուն։

— Դե կորիր, աչքիս չերևաս։

Գնացք նստելիս «կոնդուկտորը» գաղտնի նայեց Ճուտիկին, աչքով արավ ու ժպտաց։

Սահմանագծում նրան խուզարկեցին և մոտը վոչինչ չգտնելով, բաց թողեցին։

Լուսադեմին գնացքը սուլեց ու ճռնչալով կանգ առավ Գյանջա կայարանում։

— Այ լավ գիլա՜ս, լա՜վ թութ... պա՜հ... պա՜հ... պա՜հ...

— Այ շիրին գիլաս, յալուզի գիլաս...

կայարանի դժոխային ժխորից միայն գիլասի ձայնն էր նրա ականջին դուրեկան հնչում։ Ցերեկ որ էր հաց չէր կերել։ Նա ոգնեց կեռասի սայլի դատարկելուն, մի մաթրափ կեռաս ստացավ, թթենու հովում նստեց, պինդ կերավ և հիացած նայելով միլիցիոների կրծքին փայլող մուրճ-մանգաղին, հարցրեց.

— Գավկոմը վո՞րն է։—Միլիցիոները մատը մեկնեց քաղաքի գլխավոր փողոցի կողմը։

ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ ԲԱՅԼՇԵՎԻԿՅԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒՄ

Սեղանի հետև նստած է լայն ճակատով, սպիտակ-դեղնավուն դեմքով, հաստ շրթունքներով մի մարդ և արագ-արագ ինչ վոր բան է գրում։

Ծուտիկը կանգնեց նրա առջև և թուրքերեն ասաց.

— Ընկեր, բարև։

Մարդը գլուխը բարձրացրեց, ժպտաց և նույնպես ասաց.

— Բարև ընկեր։

— Ընկեր, մի բան հարցնեմ, կարելի՞ է։

— Ադա, հայ ես, բա ինչի՞ չես հայերեն խոսում, —ծիծաղեց մարդը և նրա բաց յերկնագույն աչքերը կծկըվեցին.

— Հը՞, ինչ կա, ասա, վո՞րտեղից ես գալիս։

— Ղազախից, Շամշադինի տղերքից եստեղ չկա՞ն։ —Յեվ նա կարճ պատմեց իր գալու նպատակը։ «Յոլդաշ Սեդրակը» (այդպես եյին անվանում նրան) նայեց պատանու ծուռ ու մուռ վոտների տրեխների ծայրին, վորտեղից բութ մատը ծակել էր կաշին և դուրս յեկել, նայեց տանու գործած կոշտ բլուզին և ուրախ ու բարի ժպտաց։

— Նստիր, հանգստացիր,—ասաց նա և դառնալով գործերի վարչին ասաց.

— Մուրթուզա ջան, սրան մի զույգ կոշիկ տվեք։

Մուրթուզան իջավ պահեստը և մի զույգ «սալդաթի բատինկա» բերեց։

— Առ, անձրև գալիս շորերդ հանիր և մեջը մտիր, —ասաց ծիծաղելով ընկեր Սեդրակն ու բատինկաները մեկնեց Ծուտիկին։

Մինչև նա հանում էր տրեխները, վոր կոշիկները հագնի, միքանի զինվորներ սրածայր «կոմունարկաներով» ներս մտան և ուրախ-ուրախ սկսեցին Սեդրակի հետ խոսել ինչ վոր զինավարժության մասին։

— Տո բոլ է տղերքին «մեկ-յերկու» անել տաք, մենք պարապությունից կոտորվեցինք ախր։— Ապա անկյունում նկատելով պատանուն, հանկարծակիի յեկած բացականչեց.

— Տո Ծուտի՛կ, դու եստե՞ղ։

Ջերմ ձեռ տվին։

— Հա Ակոփ, քեզ հետ ա գործս։

— Ձեզ մոտ գործերը վո՞նց է, հիմի Դիլիջանն ում ձեռին է, Ալեքպոլից ինչ տեղեկություն կա, Պետին, Գիքորը սաղ-սալամա՞թ են...—Վրա տվեց Ակոփն ու անհամբեր պատասխանի սպասեց։

— Ձեր տունը վորն ա, գնանք՝ կպատմեմ։—Խումբը դուրս յեկավ և ուղևորվեց դեպի կազարմաները։

ԽՈՐՀՐԴԱՎՈՐ ԱՐԿՂՆԵՐ

Սպիտակ պատերով սենյակում այդ յերեկո Ծուտիկն առաջին անգամ տեսավ ելեկտրական լամպն և հիացմունքից ու զարմանքից բերանը բաց մնաց։

Ապա ընկերների պահանջով պատմեց Սև-Քարի, Դիլիջանի դեպքերի մասին։ Ծանր տպավորություն թողեց Քրդևանցի Յենոքի, Վաղինակի և Ակոբջանովի, այդ յերեք խիզախ մարտիկների ու ղեկավարների գնդակահարությունը։

— Այ թե տղերք եյին, հա՜... ափսոս, Յենոք, ափսոս,—

մռնչաց Ակոփն ու արցունքի կաթիլները ցոլացին նրա սևակնած աչքերում...։ Ծուտիկը ոչ մի բառ չկարողացավ ասել Ակոփի կնոջ ողբերգական մահվան մասին։

Ներս մտավ լայն թիկունքով և հաստ վզով վիթխարի մի մարդ։ Ընկերները հարգանքով տեղ տվին։ Ծուտիկի պատմածներին ծանոթանալուց հետո նա, որ ինչպես յերևում էր ղեկավարել էր Շամշադինի ապստամբությունը, կարևոր հրահանգների հետ մի նամակ գրեց ընկերներին։ Ապա կարգադրեց պատրաստել յերկու արկղ հայերեն գրականություն և մի արկղ նագան սիստեմի ատրճանակներ ու ձեռքի նռնակներ։

— Ակոփ ջան,— ասաց նա հաղթ բազուկը նրա ուսին դնելով։— Այս «ամանաթները» դու պիտի սահմանն անցկացնես էս փոքրիկի հետ միասին։— Ակոփն ուրախացավ։

— Շան որդիքը սահմանում բուրդներս չգտե՞ն,— ասաց նա։

— Հո խամ չես, սահմանապահների մեջ լավ տղերք շատ ունենք, կապ կհաստատես ու կանցկացնես։— Ապա ահագին հասակով մեկնվելով չոր տախտակների վրա, մատով Ծուտիկին նշան արավ նստել։

— Հիմի, այ պուճուր, տեղ որ հասար, գտնելու յես չէ՞ մերոնց։— Յեվ դրական պատասխան ստանալով, ասաց.— Շամշադինի ապստամբության մասին յես քեզ ինչ որ պատմեմ, են էլ կասես, համա չլինեմ չիմանամ ուրիշների մոտ բերնիցդ բան թռցնես։— Ծուտիկը վիրավորվեց, իսկ Ակոփը միքանի խոսքով ծանոթացրեց Ծուտիկին։

— Հա, շատ ուրախ եմ, որ այդպես կտրիճ ես, հենց որ Հայաստան մտանք, քեզ կոմսոմոլների կազմակերպիչ ենք նշանակելու,— կատակեց վիթխարին և լրջանալով, սկսեց իր պատմությունը։

ԱՐՅՈՒՆՈՏ ՊԱՅՔԱՐԻ «ԼԵԳԵՆԴԱՆ»

«Տղերքին կասես, որ ապստամբությունից առաջ Ղրդի գյուղում շրջանային կուսակցական խորհրդակցու-

թյուն հրավիրեցինք։ Այդտեղ տեղական կոմունիստները մեզ՝ կենտրոնից յեկածներիս մեղադրում եյին դանդաղկոտության մեջ։ Այդ օրն արդեն Ղրդիում հեղկոմ կար և ընկերները որոշեցին շրջանի կենտրոնը՝ Բերդը վերցնել, որից հետո հեշտ կլիներ մյուս գյուղերին տիրելը, որովհետև գյուղերում մեծամասնությունը մեր կողմն էր։

«Ի՞նչ տղերք ունեյինք, ախպեր, ցրվե՛ցին, փչացան»։ Յեվ Անանյեն (այդպես եյին կոչում նրան) դառնացած սրտով մի պապիրոս փաթաթեց, վառեց, ծուխը ագահությամբ ներս ծծեց, քուլա-քուլա դուրս բերեց քթածակերից և շարունակեց։

«Գնացինք գյուղերը։ Կարմիր Աղբյուր, Մովսես և այլ գյուղերում բազմամարդ միտինգներ արինք և համոզվեցինք, որ ապստամբության ժամը հասել է։

«Գիշերով լեռներից իջանք դաշտ։ Սահմանը անցանք և կապ հաստատեցինք 3-րդ հեծյալ գնդի քաղդեկի հետ։ Գնդից մեզ տվին մի լավ ղարաբաղցի կոմունիստի և մի ագիտատոր՝ ընկ. Սոկոլովսկուն։

«Գիշերով հասանք Թովուզ գյուղը և իջանք տեղական ուսուցիչ Վասիլի մոտ։ Այստեղ յեկան Ղրդի գյուղի կոմունիստներից Նիկոլը, Մարկոսը, Ներսեսը, Ոհանեսը։ «Հենց էսոր Բերդում փոստը գրավեցինք», հայտնում են նրանք։ «Ախր ինչո՞ւ չեք շտապում ու քյալլագյոզություն անում», ասացի յես։ Նրանք պատմեցին, որ փոստի աշխատակիցը հայտնել է, որ գավառի իշխանությունը պատրաստվում է կալանավորել հեղափոխական գյուղացիներին։ «Փոստը գրավել ենք, որ կապը կտրենք գավառի հետ», պատճառաբանեցին նրանք։ Ուզեցինք համոզել, որ սպասեն, մինչև որ յես անցնեմ Իջևան և Ռազմհեղկոմից կարգադրություն բերեմ։ Ղրդեցիք դրա մասին լսել անգամ չեյին ուզում։ Ուրիշ ելք չկար։ Յես մնացի ու սկսեցի ղեկավարել շարժումը։ Մի անհնեյիր, թե դաշնակ-

ները վռնց էլին գլխարկները թողած ճղում»։ Յեվ Անանյեն կարծես նոր շունչ առնելով, աչքերից կայծեր ցայտեցնելով պատմեց, թե ինչպես գյուղերից պարտիզանական խըմբերը կոմունիստների գլխավորությամբ իջան Բերդ, արագ գինաթափ արին միլիցիոն զորամասերը, ձերբակալեցին պրիստավին, գավմիլպետ Լևոն-բեգին և օֆիցերներին։

«Այսպիսով գրավեցինք շրջանի 14 գյուղերը, ուր կուլակները մեզ դեմ էլին և մենք նրանց զինաթափ էլինք անում, բայց մեզ էլինք վարվում, մե՛ղմ։ — Նա վերջին բառն արտասանելիս մռնչաց վագրի նման։

«Յեթե բոլորին էլ սատկացնեյին, նոր կխրատվեյինք. սամ՝ աննամուսներ, ենպես մի պրծսի տակ դրեք, վոր չկարողանան տեղներիցը շարժվել»։ —Նա մի դառնացած ախ քաշեց իրենց սխալի համար, մի ծխախոտ էլ վառեց ու շարունակեց.

«Լուրը հասավ դաշնակցության կենտրոնին։ Մեր դեմ ուղարկվեց Սեպուհի խումբը, բայց նրա հրոսակներին չըթողինք շրջան մտնել։ Պապիս տարվա քավթառած, ժանգոտած թնդանոթները բերել էյին և շարել շրջակա բարձունքների վրա, վոր վախեցնեն, զինաթափ անեն։ Վախեցող չկար։ Մենք կատաղած ծառս եղանք։ Յետ շպրտեցինք թշնամուն և առանց զոհ տալու խլեցինք թնդանոթները, վորոնցից յերկուսը նվեր ուղարկեցինք Ադրբեջան՝ Ղազախի հեղկոմին։

«Սալանի պես կռվող տղերք ունեյինք», —և նա ընքշանքով նայեց զինվորական նառերի վրա ծալապատիկ նստած շամշադինցիներին, վորոնք տարված լսում էյին այն մեծ կռվի մասին, վորի վառողտ մթնոլորտից մի քանի որ է, վոր դուրս են յեկել և վորն այնքան քաղցր ու կարծես անվերադարձ անցյալ է թվում նրանց։

«Կապ պահպանեցինք Բաքվի հետ, վորտեղից զինամթերքներ ու պարեն էյինք ստանում։ Բերդի նման ա-

մուր կանգնած էյինք Բերդ գյուղի դիրքերում և մինչև վերջն էլ կպաշտպանվեյինք, յեթե միայն չլիներ Հայաստանի Ռազմահեղափոխական կոմիտեյի հեռագիրը, վորով կարգադրվում եր նահանջել դեպի թրքական Ղազախ և մինչև փոխարինվելը պաշտպանել Խորհրդային Ադրբեջանի սահմանները։ Այսպես յեղավ»։ Ավարտեց իր պատմությունը Շամշադինի «պարտված» ապստամբության ղեկավարը։

Զորս հոգի տնքալով ներս բերին ամուր փակված արկղներն ու գլորեցին նառերի տակ։

Արդեն ուշ եր։ Վտարանդի զինվորները ննջում էյին նառերի վրա, իսկ Անանյեն, Ակոփը և Արտուշը դեռ յերկար ժամանակ խորհրդակցում էյին մոտակա որերի անելիքների մասին։

Իսկ Ճուտիկը Ակոփի բերած սև կրուպի կաշի ուտելուց հետո մեկնվել եր մի անկյունում ու անուշ քուն մտել։ Վերջին չորս որում նա առաջին անգամն եր ապահով ու հանգիստ քնում։ Յեվ իր կյանքում առաջին գիշերն եր, վոր լուսացնում եր խորհրդային հողի վրա, բայցեվիկ մարտիկների շրջանում։

ԾԻՐԱՆԻ ԿՈՂՈՎՆԵՐԸ

Եշերի քարավանը լեռնային շավիղով ձգվում է դեպի վեր։

Յերկու գյուղացիներ, մեկը լայնաթիկունք, հին «լաստիկ» արխալուղով և մոթալ փափախով մի թխադեմ մարդ, իսկ մյուսը հնամաշ մի գլխարկով և ոտքերը մխած ահագին բատինկաներով մի պատանի—հա բզում են եշերին և յերբեմն էլ կանգնեցնելով, ուղղում են նրանց վրայի բեռը, «ծիրանով» լեքը կողովները։

Նրանք մոտեցան բլրի լանջին թառած սպիտակ վրանին։ Թփերի տակ, ծառերի հովերում այստեղ, այնտեղ պառկած են կարմիր սահմանապահները։ Վորը ծուլ-ծուլ

հորանջում է, վորը վառներն է լվանում քչքչան առվակի մեջ, իսկ մի քանիսն էլ մի ահագին կաղնու տակ հավաքված՝ թերթի ընթերցանություն են լսում:

Քարավանը տեսնելով, պահակն առաջ անցավ և կանգնեցրեց:

—Մեզ տար վաշտապետի մոտ,-- խնդրեց գյուղացին:

Մտան վրանը: Փամփուշտի արկղը աթոռի տեղ տակը դրած՝ փոքրիկ ծալվող սեղանի առաջ նստել է նա՝ կարմիր հրամանատարն ու վոսկեգույն «քաքյուլը» խռիվ տված՝ խորասուզվել է մի գրքի ընթերցանության մեջ:

Նա գլուխը բարձրացրեց, յերկնագույն աչքերը հառեց գյուղացու վրա: Գյուղացին գրպանից հանեց մի կնքած ծրար և մեկնեց նրան: Հրամանատարը ծրարը պատռեց, արագ աչքի անցկացրեց Չեկայի գրությունն ու զվարթ ժպտաց: Ապա վեր կացավ, ամուր սեղմեց գյուղացու ձեռքը:

— Միրգդ հաջող ծախելու համար հաջողություն եմ ցանկանում,—ուրախ ասաց նա և դարձավ զարմացած պահակին.

— Տար անցկացրու:

Եշերը նորից շարժվեցին: Դիմացում յերևում է հակառակորդի պոստը:

«ԽՈՒԶԱՐԿՈՒԹՅՈՒՆ»

Սահմանում հնամաշ շինելներով ու հոգնած դեմքերով մի քանի զինվորներ ծուլ-ծուլ հարցրին.

— Բիձա, ու՞ր ես գնում:

— Կոթի գեղ:

— Եսիկ գրանից ա, խասկանում ես.— բղավեց մեկը և ձեռքը տարավ մաուզերին:

— Գեղացի չեմ, ախպեր ջան, ծիրան եմ տանըմ Կոթի գեղըմը իմ ցավին ու դարդին անեմ:

— Ապի, բեռները վեր դնե՞նք,—հարցրեց «վորդին» «հորը»:

— Դե չավաշ մի տենամ գլուխս ինչ ա գալի չէ, գահրուզխկում ըլի դա քու գլխին,—դառնացած ասաց գյուղացին և աչք ածեց հեռվում ծառի տակ թափված զինվորներին: Նրանցից մեկը ցնցվեց, վեր թռավ տեղից, ապա իրեն զսպելով, դանդաղ առաջ յեկավ, աչքի տակով նայեց գյուղացուն, աննկատելի ժպտաց, մոտեցավ կողովներին ու սկսեց զննել: Մի կողովի բերանը բացեց: Դեղին կարմրավուն ծիրանը կարծես չորս կողմը լույս սփռեց:

Զինվորներն սկսեցին նայել ագահությամբ: Յերկու հոգի յել առաջ յեկան և բացեցին մյուս կողովները: Պատանին սարսափած նայում եր «հորն», իսկ սա հանդարտ ժպտում եր:

—Կերեք, տղերքին էլ տվեք,—առաջարկեց գյուղացին: «Խուզարկող» զինվորները զգուշությամբ յերեսի ծիրաններից վերցրին ու մի-մի բուռ բաժանեցին զինվորներին:

— Ո՜հ, ոհ, ոհ, ինչ ծիրան ա,- ծոր տվեց առաջին զինվորականը, վոր ըստ յերևույթին պահակի պետն եր և ծիրանը քիչ յետ տվեց: Ցիկնի արկղի կողքը բացվեց: Նա շփոթված ծածկեց արկղը ծիրանով, մի քանի բուռն էլ բաժանեց և «խուզարկությունը» վերջացած համարելով, մյուս կողովները «խուզարկող» զինվորներին հրամայեց.

— Տարեք էս մարդուն պոստը հանձնեցեք, թող նորից խուզարկեն և пропуск տան։—Յեվ հետո էլ աննկատելի աչքով արավ։

Զինվորներն առաջ արին իշավորներին։ Բլուրն անցնելուն պես զինվորներից մեկը վեր ընկավ թփի տակ ու փորը բռնած վոնց ե քրքջում։

— Այ մեռնես դու, Ակոփ, իսկական կոթեղեղցի յես դառել,—բացականչեց նա։

— Աղա սարսաղ, կտեսնեն,—շշնջաց «գյուղացին» և ակամայից ինքն էլ սկսեց ծիծաղել։ Պատանին նոր միայն ճանաչեց հագուստը, գույնը և ամեն ինչը փոխած Պետիկին ու ինքն էլ սկսեց խնդալ, թռչկոտալ։ Մյուս զինվորը, վորին Ակոփը Ռեացվից գիտեր, բարությամբ ժպտում եր ու գլուխն օրորում։ Գործերից մի քիչ հարց ու փորձ անելուց հետո «գյուղացին ու իր տղան» մնաս բարի ասացին սահմանապահներին և պոստը տանող ճանապարհից դուրս գալով, եշերին սկսեցին քշել սարն ի վեր, դեպի ծերպերն ու քարանձավները։ Իսկ ներքևում յերկու զինվորներ նայում եյին չորս կողմ ու աչքով ուղեկցում ծպտյալներին։

ԴԵՊԻ ՔԱՐԱՆՁԱՎՆԵՐԸ

Գետակների ափերին, լեռների գոգավորություններում, այս ու այն քարափի տակին ծվարած են հայկական աղքատիկ գյուղերը, շրջապատված վայրի անտառներով։

Մեր «ծիրան ծախողները» վոչ մի գյուղ չմտան։ Նրանք հացի տեղ այնքան ծիրան եյին կերել, վոր կողովներում պարզ յերևում եյին փամփուշտի ու ռումբերի թիթեղյա արկղները։ Անցան մեծ լեռնաշղթան և գիշերեցին մի ընդարձակ քարայրում։

Լուսադեմին արդեն նրանց վոտների տակ փռված եր ահավոր ձորը՝ փարթամ անտառներով։ Պատանին մագլցեց

մի հսկա կաղնու, հասավ գագաթին ու սկսեց աղիողորմ վոռնալ։

— Ու... ու... ու...—պատասխան չստացվեց։ Վոռնոցը կրկնվեց։ Նորից պատասխան չկա։

— Յերևի տեղները փոխել են։—Ասաց նա ծառից իջնելով։ Յերեկոյան դեմ հաջորդ լեռան կատարից նա սկսեց իր վոռնոցը։

— Ու... ու... ու...—լսվեց լեռան լանջից։

Պատանին սկսեց կաչաղակի նման կչկչալ։ Ներքևից լսվեց պատասխան կչկչոցը։ Դա նշան եր, վոր վտանգ չկա, կարելի յե տեսնվել։

Քարավանն իջավ ցած և կանգ առավ մի վիթխարի ծառի դեմ ու դեմ։ Մութ քարանձավից դուրս յեկան յերեսները մազոտած—այլանդակված յերկու հոգի և ուրախ դիմավորեցին նրանց։ Բարձրաբերձ հաճարենու կատարից իջավ քիչ առաջ «վոռնող» մարդն ու սկսեց ագահաբար խժռել ծիրանը։

Բեռները ցած դրին։ Աղալոն այրի անկյունին կարծես պատահաբար ընկած քարը շուռ տվեց։ Մի մութ ու նեղլիկ անցք բացվեց։ Նա ներս սողաց ծակից և կորավ ստորերկրյա նկուղներում։ Մյուսները զգուշությամբ կողովներից հանեցին փամփուշտներով, ատրճանակներով և ձեռքի նռնակներով լիքը արկղներն ու մեկ-մեկ մեկնեցին Աղալոյին։

ԿՅԱՆՔԸ ՔԱՐԱՅՐՈՒՄ

Պետք ասեմ, վոր միաժամանակ այդ քարանձավում մեր կյանքը բավական հետաքրքիր եր անցնում։ Մեզ մոտ եյին գալիս Շամշադինի, Կարմիր շրջանի կողմերից կարմիր պարտիզանները, ստանում եյին գրականություն, զենք ու իջնում գյուղերը և յերբեմն էլ ընդհարվում մաուզերիստական խմբերի հետ, վորոնք վորսորդական շների նման պտըտում եյին ամեն տեղ։

Նրանք ըստ յերևույթին մեր հոտն առել եյին։

Ամենից շատ մենք հացի պակասությունից եյինք նեղվում։ Բայց վորսի մսով ապահովված եյինք։ Գող-գող սարի լանջերը, ուր ապաստանել եյինք մենք, հարուստ եր յեղնիկներով։

Ահավոր մի անդունդ բաժանում է սարի լանջը յերկու մասի։ Անդունդից վերև դարավոր կաղնիների մեջ գլուխը վեր է ցցել մամռոտած մի ժայռ, վորի լանջերով իրենց արմատները մեկնել ու խուլ պայքար մղելով ժայռի դեմ, աճել են ազնի, ցռանցի, ալաժանի թփերը։ Ժայռի տակով, անդունդի վերևով անցնում է այն միակ շավիղը, վոր սարի յերկու լանջերը կապում է իրար հետ։ Թագնըվում եյինք ժայռի թփուտների մեջ և շունչներս պահում։ Ահա մի վայրի այծ դիմացի քարափից թռչկոտելով իջավ ցած և չորս կողմը նայելով, վռստվռստելով գնում է շավղով։ Նրա փոքրիկ մարմնի և էլ ավելի փոքրիկ գլխի վրա տեղավորված են յերկու հսկա յեղջյուրներ, յուրաքանչյուրը աժդահա տղամարդու մի բազուկի չափ։ Այդպես է վորձ վայրի այծը։ Վորոտում եր մեր մոսին հրացանը։ Վորսը բղավում եր ու ընկնում։

Ավելի շատ յեղնիկներ եյինք սպանում։ Դրանք գարնանը իրենց դժգույն (դեղնա-մոխրագույն) մազերը թափում եյին ու գեղեցիկ կարմիր ծիրանի հագնում։ Ընկնում եյին նաև նրանց յեղջյուրները, և բուսնում եյին նոր, փափուկ թավշանման մազով պատած յեղջյուրներ։

Յեղնիկների մորթիների մեջ խոտ եյինք լցնում և մեզ համար անկողին պատրաստում։ Այդպես բավական ազատ ու հանգիստ եյինք ապրում վայրի բնության մեջ, հեռու մարդկից, կռվից, զորահավաքից ու հալածանքից։ Բայց մի դեպք տակն ու վրա արավ մեր հանգիստ կյանքն ու մեր բոլոր ծրագրերը։

Այդ այսպես յեղավ։

ԿԱՍԿԱԾԵԼԻ ՎՈՐՍԿԱՆԸ

Մի որ մեր այրը մտավ յափունջավոր, յերկար բեխերով մի մարդ, վորսորդական հրացանը ձեռքին։ Նա մի նապաստակ եր խփել և կրակ եր փնտրում խորովելու համար։ Ի՞նչ կասես վորսկան մարդին, յեթե նա մի քիչ կրակ խնդրի։ Նախ՝ հարց ու փորձ արինք։

— Աչաջրեցի յեմ, գոմերից եմ գալիս, ասի հետս մի կխտար[1] առնեմ, են էլ չպատահեց, - ասաց նա ու նստեց կրակի մոտ։ Նապաստակը խորովեցինք։

— Ինչպես յերևում է եստեղ շատ եք հրացան կրակում, վոր վորս չի յերևում,— ասաց նա և սկսեց զննել այրի պատերը։

—Չէ, մենք ենք՝ մի ջախջախ մոսին,—ասաց Ակոփը։— Գոշեցոնց վոչխարն ենք պահում, - ավելացրեց նա անծանոթի կասկածները փարատելու համար։

Անծանոթ «վորսկանը» շնորհակալություն հայտնեց, ձեռքներս ամուր սեղմեց ու գնաց։

Նրա հետևից սկսվեց մեր վեճը։

— Աչքիս բարի պտուղ չի յերևում, չթողնենք գնա, —պնդում եր Ազալոն։

— Ջանըմ վորսորդ մարդ ա, թող գնա իրան բանին, —ասում եր Ակոփը։ Ընդհանրապես Ակոփը շատ արխային մարդ եր։

— Թե դրանից մի շառ չեկավ, բեխերս կկտրեմ,—ասաց Ազալոն ու խռոված հոգով մի անկյուն քաշվեց։ Յերեկոյան նա առաջարկեց ուրիշ այր տեղափոխվել։ Ընկերներն սկսեցին ծաղրել նրան «վախկոտության» համար։

— Բալամ, Ոսմանլվի զորքն էլ գա, ես բերդը չի առնի։—Յեվ արխային քնեցին։

ԱՀՌԵԼԻ ՊԱՅԹՅՈՒՆԸ

Նոր բացվող լույսի հետ այրի բնակիչները դիմացի քարի վրա տեսան գնդացիրների փողերն իրենց վրա մեկնված։

Ակոփը փորսող մտավ զենքի պահեստը, նռնակներով լիքը մի արկղ հանեց և ծակն այնպես սարքեց, վոր սատանան էլ չեր հասկանա, վոր դրա տակը մի ամբողջ արսենալ է։

[1] Կխտար—յեղնիկ։

— Զե՛նքի՛… — վորոտաց նա և դիրք մտավ։ Տղերքը քնաթաթախ վեր կացան և արագ գլխի ընկնելով, թե բանն ինչումն է, վայրկյանապես բացեցին լցրած հրացանների փակերը։

Դիմացի քարի յետևից մի գլուխ բարձրացավ և լսվեց հրամանը։

— Հանձնվեցե՛ք, թե չե կկոտորենք։ — Դրան վորպես պատասխան այրի միջից վեց գնդակ միանգամից դուրս թռավ։ Գնդացիրներն սկսեցին քրքրել լերկ ապառաժի պատերը։ Պաշտպանվելու տեղ չկար։

— Բոմբի ռեխը տվե՛ք, յես դրանց են… են… — գոչեց Ակոփը ու դատարկելով ռումբի արկղը, յուրաքանչյուրին յերկու նռնակ տալով, հրամայեց։

— Մամենտալնի շղթան պատռեցե՛ք։

«Դո՛ւմբ - դո՛ւմբ…», դղրդաց լեռան լանջը։

Կարծես ահագին ժայռը պայթեցրին։ Դիմացի քարը բյուրավոր կտորներով յերկինք թռավ, գնդացիրները մարդկանց հետ միասին անսելի ուժով ցած շպրտվեցին և մի քանի վայրկյան թանձր ծուխն ու փոշին բռնեց այրի առաջը։ Շշմեցնող հարվածն անցնելուց և ծուխը քաշվելուց հետո թփերի տակից գոռում-գոչումով քանի չափ զինվորներ դուրս թափվեցին և այրի առաջ միայն դեռ թփրտացող մի մարդ տեսան։ Նրա թավամազ յերեսից առատ արյուն եր հոսում, իսկ լեզուն կախ եր ընկել մորթած յեզան պես։ Ազարոն եր։

ՄԱՈՒԶԵՐԻՍՏՆԵՐԻ ՃԱՆԿԵՐՈՒՄ

Զորրորդ որը Ճուտիկը դուրս յեկավ մեզ ծանոթ լեռնաշղթայի հյուսիս-արևմտյան ծայրում, ուր յերկաթուղին բաժանում է լեռնաշղթան յերկու մասի։ Նրա ականջները դեռ դժժում են։ Ո՞ւր մնացին ընկերները։ Արդյոք ազատվեցի՞ն, թե՞ ընկել են գիշակերների ճանկը։ Նա վոչինչ չգիտի. հիշում է միայն, վոր խլացուցիչ պայթյուններից շշմած՝ ծխի միջով խելակորույս իրեն նետել է ցած ու շնչասպառ առաջ վազել առանց յետ նայելու։ Զորս որ է նա թափառում է անծանոթ վայրերում և այժմ «Այրում» կայարանումն է։ Նա մեկնվում է կայարանից քիչ հեռու մի ծառ տակ և քուն մտնում։ Շատ է հոգնել, իսկ քաղցից աղիքները կորավում են։

Լսվեց սուլոց։ Վեր է թռչում ու նայում։ Գնացքը վաղուց յեկել է, իսկ այժմ դանդաղ, յեզան սայլի նման շարժվում է դեպի Սանահին։ Վագոններում տեղ չկա, շատերը կախվել են վագոնների ճաղերից, կանգնել են աստիճանների վրա, վոմանք էլ պառկել են վագոնների կտուրներին։ Մի քանի զինվորականներ հասնում են գնացքի յետևից և սրան-նրան ներքև են շպրտում ու ներս խուժում։ Ջաջուռցի կոնդուկտորը բղավում է.

— Ծո՛, ո՞ւր կքշես, բլեթ ունե՞ս։

— Բլեթ՝ բլեթ, խոր ե՜լ բլեթ, — ասում է խոժոռադեմ շինելավորն ու ձեռքը դնում մաուզերի կոթին։ Կոնդուկտորը մրմռթալով հետ է քաշվում։

— Ախպեր, պարյադկա չմնաց։ Են, ջայնամ, թող սերյոդկա եղնին. խասեմ՝ մարդի գլուխը սոխի գլուխ ա դառել։

Ծուտիկը մտնում է անտառի խորքն ու վազում առաջ, հասնում է մոտակա թունելի պռնգին ու բարձր մի քարի հետև թաք կենում: Գնացքը դանդաղ առաջ է գալիս: Բանվորներից մեկը անդադար փայտ է լցնում շոգեշարժի կրակարանը: Նավթն ո՞վ կտա:

Ահա շոգեշարժը մտավ թունելը: Պատանին դուրս է գալիս զարանից ու հովազի նման ցատկում յերկրորդ վագոնի վրա և անմիջապես պառկում:

Սանահնում ինչ-որ պատճառներով ամբողջ գնացքը խուզարկեցին: Մեկը մաուզերը հանած կանգնեց պառկած պատանու գլխավերևը:

— Առաջ անցիր,—յեղավ հրամանը: Իջան վագոնի կարից:

— Տո՛, ես վո՞րդուց գտար ես բայղուշին լակոտին,— բղավեց մի զինվոր և խնդալով բզեց ընկերոջը:

— Տո՛, Մացո, ես են լակոտը չի՞, վոր Դիլիջանում գտեցին:

— Տո, բաս վե՞վ է. տո տվեք, յես դրա յեկած ճամբին…

Ու քոթակելով տարան, գցեցին աղբի դիմացի բուտկան: (Այն բուտկան, վոր այժմ «Զակուսոչնի» կրպակն է, առաջ բանտի տեղ եր ծառայում):

«Ես անիրավները կգնդակահարեն, պետք է ճար անել», մտածեց պատանին ու սկսեց գննել պատերը: Պատուհանի ապակիներից մեկը չկա:

Գիշերվա ամենաթունդ ժամանակ պահակը կուչ յեկավ շինելի մեջ ու նստեց դռան առաջի քարին: Ննջում է: Պատանին զգուշությամբ դուրս սողաց պատուհանից ու իրեն շպրտեց ձորը: Պահակը քնաթաթախ վեր թռավ, հրացանից կրակեց դիմացի ժայռին:

Պատանին արդեն գետն անցել եր և ապահով քայլում եր դիմացի լեռան լանջի թփուտներով: Քիչ առաջ գնալուց հետո՝ նա մոտեցավ յերկաթգծին ու թաք կացավ մի

ծառի հետև: Ահա ապրանքատար գնացքը: Փայտ է տանում: Պատանին կախվեց ճաղերից, բարձրացավ բաց վագոնը և պառկեց փայտերի արանքում: Կողերը ջարդվում են, բայց ինչ արած:

Լուսադեմին նա գնացքից դուրս թռավ Ղարաքիլիսայի մոտ ու գետն անցնելով՝ մտավ քաղաք:

«ՔՍԱՆՀԻՆԳ ՃԻՊՈՏ…»

— Ստո՛պ, ձեռքերդ վեր,—հրամայեց մեկը:

Պատանին սթափվեց մտքերից և տեսավ հրացանի սառը փողն ուղղված դեպի իրեն:

— Առաջ անցիր:

Ղարաքիլիսայի այսօրվա խորհրդային հյուրանոցի տեղը դաշնակցականների շտաբն եր: Գրասենյակում ֆեդֆերելը հանկարծակիի յեկավ, յերբ նրան ներկայացրին ձերբակալված պատանուն:

— Ես լակոտին մենք հո աքսորեցինք Սև-Քար. փախել է հա՛, պառկեցրեք:—Չորս հաղթ բազուկներ ցած գլորեցին պատանուն:

Ծուտիկը վայրկյանապես մտաբերեց ալափարացի Խեչոբիձին: «Այ թե ինձ էլ նրա որն են գցելու», մտածեց նա ու բղավեց, ճանկռտեց յերեսները, բայց իզուր: Քսանհինգ մտրակ տալուց հետո՝ բանտ նստեցրին:

Այն կամերան, ուր ընկավ պատանին, լիքն եր քաղաքական բանտարկյալներով: Նրանցից շատերի յերեսն այ-

լանդակված էր ծեծից, մի քանիսի չեղ գլուխները կապած էին թաշկինակով: Նրանցից նա մանրամասն տեղեկացավ վերջին դեպքերի մասին: Ապստամբությունը ճնշվել էր, գնդակահարել էին Ալահվերդյանին, Սևոյանին, Ղարիբջանյանին, բժ. Մելքոնյանին, Բաշգեղում՝ Սարուխանյանին. սպանվել էր Ղարսի՛ ապստամբության ղեկավարը՝ 20 տարեկան «սպարտակյան» Ղուկասը: Յեվ ուրիշ շատ-շատերը զոհ էին գնացել գազազած մաուզերիզմին: Սևանում, Դիլիջանում, Լենինականում մի շարք տներ բանտերի էին վերածել՝ կալանավորներին տեղավորելու համար: Այս կամերան էլ իսկական բանտ չէր, հասարակ խոնավ սենյակ էր, իսկ լուսամուտներին յերկաթի փոխարեն փայտե ճաղեր էին ամրացրած:

Գիշերվա կեսին, Թաթուլը—բրդոտ արջանման լոռեցի մի մարդ, ձեռքը դցեց պատուհանի փայտերին, մեկ-մեկ զգուշությամբ պոկեց ու շշնջաց.

— Տղերք, դուրս թափվեցեք:—Լայնաբերան պատուհանով մի վայրկյանում բանտարկյալները դուրս թափվեցին ու ցրվեցին խավար փողոցներում: Պահակն իզուր կրակեց, հարայ-տվեց, զինվորներին հավաքեց, բան դուրս չեկավ: Կալանավորները փախել էին դեպի մոտակա անտառը:

«ՄՆԱՔ ԲԱՐԵՎ, ԻՄ ՎՈՉԽԱՐՆԵՐ»...

Յերկու որ է, վոր Ճուտիկը Յաղախլի հարուստներից մեկի վոչխարն է պահում: Յերրորդ որը նա վոչխարը քշեց մինչև Համզաչիմանի սարերը:

«Զորանը յես չեմ, վորտեղ ուզենամ, էնտեղ էլ կարածացնեմ»: Ու իր ոյինբազության վրա հրճվելով, քշում էր հոտն ավելի ու ավելի հեռու: Նա արդեն զգում էր, վոր այդ կողմերում յուրաքանչյուր թփի տակ թշնամին է դարան մտել: Սկսվել էին մասսայական ձերբակալություն-

ներն ու խուզարկությունները: Բանտից փախած կոմունիստներին բռնելու համար վոտքի յեն հանված դաշնակցական ժանդարմերիայի վողջ վոհմակը: Այլևս յերկաթուղով ճամբորդել անկարելի յե: Յեվ Ճուտիկը մտքի մեջ իր նոր ծրագիրն էր վորոճում...

— Դե, մնաք բարի, սիրելի վոչխարներ, յեթե գայլի բաժին դառնաք, ինձնից չնեղանաք,—ասաց նա ու թռչկոտելով բարձրացավ լեռնաշղթայի գագաթը, վորտեղից հեռվում յերևում էին հայրենական լեռների անտառապատ լանջերը:

Ընդամենը մի քանի ամիս է, վոր գյուղը չի տեսել, բայց թվում է՝ թե յերկար, շատ յերկար տարիներ և նույնիսկ մի ամբողջ տասնյակ տարիներ են անցել: Ինչքա՜ն դեպքեր են անցել նրա գլխով: Ինչքան հասունացել է նա վերջին մի տարվա ընթացքում: Կյանքի աղմկահույզ ծովը նրան այնքան է այս ու այն ափը նետել, վոր ժամանակ չի յեղել անգամ ընկերներին՝ Վարսիկին, Գիքորին, Պետրոսին մտաբերելու: Ժամանակ չի յեղել հիշելու գոնե գեղածիծաղ այն լեռները, վայրենի գեղեցկությամբ օժտված այն բնությունը, ուր անց էր կացրել նա իր մանկությունը:

Յեվ այժմ նա քայլում է անտառոտ սարալանջով, մտնում է առատ խոտի, անհամար ծաղիկների մեջ ու կարոտով հիշում իրենց բինան, վրանների շարքը, գառները և վճիտ ջրերում արևի ճառագայթների տակ փայփլող նախշուն կարմրախայտ ձկները...

ՆՈՐԻՑ ԾԱՆՈԹ ՄԱՐԳԱԳԵՏԻՆՆԵՐՈՒՄ

Ահա և մեր լեռների թավշյա մարգագետինները։ Ներքևում լեռան լանջերին ու սարահարթերում – Սաղափիվում, Ավլուկուրդում արդեն սկսվել է խոտի քաղը։ Պողպատը սվվալով անցնում է խոտերի տակով և լեռան լանջը վերից վար ակոսվում է խուզվող գլխի նման։

Դիմացի դաշտում մի խումբ սպիտակ շալավոր յերիտասարդներ՝ գլուխներին կանաչից «գլխարկներ» դրած՝ «հոփ» են անում ու աշխատում իրար անցնել։ Իսկ հարևան «փայում» որայից յեկած կանայք ու աղջիկները յերգելով, ծիծաղելով, կատակներ անելով, չորացած խոտը փոցխում ու կիտուկներ (բլրակներ) են կազմում։

Հեռվում ընկած մի գերանդի պսպղում է արևի տակ, իսկ տերը խոտի դեզի տակ մածուն է ուտում։

Պատանու մկաններում յեռում է արյունը, տենչում է գնալ, խառնվել ընկերներին, «բաս» մտնել հետները շուլուխով, հնձել ու թավալվել փափուկ կանաչի մեջ։ Յեվ կարոտով նայում է նա ուրդի աշխատավորներին և մտամոլոր քայլում է սարն ի վեր։

Ահա և որան։ Անցյալ տարվա տեղն է։ Վրաններն այս անգամ արդեն քարափի տակին են շարվել։ «Յերևի քամուց պաշտպանվելու համար են տեղափոխվել։ Տեսնես Վարսիկենց վրանը վո՞րն է», մտածում է պատանին ու սրտատրոփ նայում։ Ահա սեվ ալաչուխը, հենց են է, վոր կա։ Վրանի առաջ հորթը կապող աղջիկը գուցե հենց Վարսիկն է։ Վո՞նց տեսնվել։

Մի խումբ յերեխաներ խաղում են ներքևում։ Կանչում է մեկին։ Մոտեցողը Յենոքի տղեն է։

— Պետո ջան, մի գնա Վարսիկին կանչի, համա, վոր մեկն ու մեկին ասել ես՝ Հանեսին տեսա, ականջներդ կքաշեմ։

Յերեխան թռչկոտելով վազում է հորթ կապող աղջկա մոտ։ Աղջիկը գլուխը բարձրացրեց, ձեռքը դրեց ճակատին ու նայեց յերեխայի մեկնած մատի ուղղությամբ։

— Ո՞վ է կանչում։

-- Գիտեմ վոչ։

-- Գիտես վոչ, յես էլ գնալ չեմ։

— Կացի ականջիդ ասեմ,—թռթռվում է յերեխան ու փսփսում աղջկա ականջին։ Վարսիկը կարմրում է, շտապ մտնում է վրանը, կարմիր թաշկինակը գլուխը կապում ու շտապում է դեպի բլուրը։

Մինչ այդ Վարսիկենց Զամբարը պոչը խաղացնելով հասավ նրան, փաթաթվեց վոտներին ու սկսեց ուրախ կառանչել, պտույտ գալ շուրջն ու պոչը բարեկամաբար շարժել։ Պատանին կարոտով փարվեց շան վզին։

Նա յերեսը շուռ է տվել ու շփոթված մատն է կրծում ու նայում դեպի դիմացի լեռը։ Իբր թե չի տեսնում մոտեցող աղջկան։ «Թմփ-թմփ, քրթ-քրթ» կարծես մեկը քայլում է նրա սրտի միջով ու նրա վոտների տակի խոտը խշխշում է այնքան դուրեկան։

— Հանես, –լսվում է հետևից կամաց։ Հայացքները հանդիպում են իրար, ապա խոնարհվում, սահում յերեսով դեպի վար։ Ու լուռ, շփոթված նայում են գետնին։

Պատանին անհամարձակությամբ բռնում է աղջկա սառը ձեռքը։ Դուրեկան մի տաքություն անցնում է նրա յերակներով։

— Վարսիկ, ինչքան ես մեծացել։

Վարսիկն ավելի յե շփոթվում։

— Նստիր։

Անխոս նայում են ներքև հնձվորներին։

— Որտե՞ղ ես կորել, այ տղա,— հարցնում է Վարսիկն ու կողքին բաց մի նարգիզի հետ խաղում։

— Հեռու աշխարհներում եմ, շատ հեռու։ Էն տեղ ինչ կա, ինչ չկա։

— Գործերը լավ չեն, մեր գեղին շատ նեղեցին։ Տղերքն էլի փախել են, ով գիտի ուր։

— Բա դու ինչ ես անում, կո՞վ ես կթում,— հարցրեց պատանին ու շեշտակի նայեց աղջկա աչքերին։

—Մենակ կով չեմ կթում, մի՛ բարկանա, քեզ չենք հանի, բայց էլի քիչ-միչ գործ անում ենք,— պատասխանեց թեթև հեգնելով պատանուն։ Նա պատմեց, որ գյուղում արդեն 6—7 հոգուց բաղկացած գաղտնի բջիջ կա։

— Մեզ «սպարտակ» են ասում. մեն-մեն քաղաքից մարդ ա գալիս, գրքեր ա բերում, ժողով անում,— վերջացրեց նա։

Հանեսի տրամադրությունը բարձրացավ, ոգևորվեց։

— Լավ աշխատեցեք, տեսնենք՝ դուցե յես էլ մնամ ձեզ հետ, իսկ առայժմ ինձ վոչ վոք չպիտի տեսնի, եդ շների բերանից մի քանի անգամ հազիվ եմ ազատվել։ Մեկ էլ որ բռնեցին, բուրդս լագաթին կգցեն։

Խոսեցին յերկար ու քաղցր։ Հիշեցին մանկական անհոգ կյանքը, անհոգ ու չարաճճի...

Արևն արդեն թեքվել էր։ Լեռան կատարից փչում էր սառը քամին։ Ծուտիկն սթափվեց և արագ վոտքի կանգնելով, ձեռքը մեկնեց։

— Դե, մնաս բարի, յես գյուղ եմ գնում, էնտեղից կամ յես կգամ ես քարափներում ժողով կանենք, կամ թե կճղեմ մի տեղի վրա, յեթե հետևելիս լինեն։ Վարսիկը խեղճացած նայեց նրա յերեսին։

— Դե լա՛վ, ինչ ես ջիգյարս երում, խռովում, այ քու ջիգյարն երվի,— կատակեց պատանին ու աղջկա ձեռքը սեղմելուց հետո իջավ սարի լանջով։

Ներքևի բլուրն անցնելիս բնազդաբար յետ նայեց. Վարսիկը թաշկինակը շարժեց, իսկ Զամբարը մի քարի վրա պպզած յերկա՛ր-յերկա՛ր նայում էր աչքից ծածկվող պատանու հետևից...

Նա ցերեկը մտավ անտառ, բարձրացավ մի հսկա տանձենու, մի պինդ տանձ կերավ, ապա մտավ մոռի թփուտները, կերավ, կշտացավ, պառկեց թփերի մեջ և իսկույն քնեց։

Գիշերը զարթնեց ու մթան մեջ խարխափելով շավիղ գտավ ու շարժվեց առաջ։ Այդ կողմերի յուրաքանչյուր թուփը, յուրաքանչյուր ծառը ծանոթ էր նրան։ Աքլորականչին հասավ գյուղ, անցավ ամայի փողոցներով, հասավ ամուսնացած քրոջ տունն ու դուռը ծեծեց։

— Ո՞վ ա,— լսվեց ներսից։

— Յես եմ, բաց արա, Սաթենիկ։

Սաթենիկն ուրախության արցունքն աչքերին՝ փարվեց յեղբոր վզովը։

— Վա՜յ, կորած ախպեր ջան, յես քո ջանին մատաղ,— մղկտաց նա։ Խոսեցին մինչև լուսադեմ։ Սաթենիկը պատմեց, որ մի քանի անգամ տունը խուզարկել են։

— Վույ, քոռանամ յես, քեզ որ բռնեն, թիքա-թիքա կանեն, գնա, գնա մի տեղի վրա, գնա, բալամ, գլուխդ պրծացրու եդ գելերի ձեռքից։

Պարզվեց, որ գյուղում մնալ անհնար է։ Յեվ հենց եդ գիշեր Հանեսը թողեց քրոջն արցունքն աչքերին ու գնաց նորից լեռները...

Արփավուտի ծմակում նա պատահեց կաղ Գիքորին և նրանից իմացավ, որ պարտիզանական խմբերն սահմանն անցել են և գնացել Բագու։ Յեվ լեռներով ու ձորերով, քաղցած ու անքուն նա որեց-որ սկսեց մոտենալ կարմիր սահմանին։

ՍԱՀՄԱՆԱԳԼԽՈՒՄ

— Կանգնի՛ր, ո՞վ ես։—Յեվ սահմանապահ յերկու կարմիր-բանակայիններ հրացանները մեկնեցին անտառից դեպի պոստը վազող պատանու կողմը։

— Ինձ տարեք ձեր հրամանատարի մոտ,—խնդրեց նա ու առաջ անցավ։

Սպիտակ վրանում նստած, կանաչ կասկան[1] գլխին մի զինվորական զննում է սեղանի վրա փռված քարտեզն ու կապույտ մատիտով նշաններ անում։ Պահակը ներկայացրեց պատանուն։

— Սահմանում բռնեցինք,—զեկուցեց նա թուրքերեն։ Հրամանատարը վոտից գլուխ զննեց պատանուն և հարցրեց նրա ով լինելը։

— Դու բոլշևիկ ես,—հարցրեց պատանին ու նայեց կասկայի վրա փայլող խոշոր հինգճյուղյան աստղին։ Այդպիսի աստղ նա առաջին անգամն էր տեսնում։ Հրամանատարը ծիծաղեց։

— Դո՞ւ չես ինձ քննում,—ասաց նա։

Չէ, ասա, բոլշևի՞կ ես, թե չէ, մինչև չասես, չեմ կարող իմ ով լինելն ասել։

— Չես ասի՝ կըբանտարկենք,—կեղծ լըջանալով ասաց թուրք հրամանատարը։

— Դո՞ւք գիտեք, բանտարկեցեք։

— Հա, բոլշևիկ եմ, յես էլ ու ես զինվորներն էլ, հետո՞։

Պատանին զվարթացավ։

— Ինձ դաշնակներն աքսորել են թռուցիկներ տարածելու համար,—սկսեց պատանին,—փախել եմ աքսորից, մի քանի անգամ բանտարկվել եմ, յեղել եմ Ղարմախլու ընկ. Ոսմանի մոտ։ Ահա։—Յեվ նա մեկնեց Ոսմանի տված

[1] Կասկա—կոմունարկա։

վկայականը, վորի մեջ ասված էր, վոր ներկայացնողը բոլշևիկ է և մասնակցել է գաղտնի աշխատանքներին։ Զինվորականներն իրար յերեսի նայեցին ու ժպտացին։ Լուրն իսկույն տարածվեց պահակատեղիում։ Հավաքվեցին վրանի առաջ։

— Տո, Ճուտի՛կ,—և մի ահագին թուխ մարդ գրկեց պատանուն։ Ոսմանն էր։

Նա կարճ պատմեց, վոր իր գնալուց մի քանի որ հետո գյուղերն ապստամբել են, իրեն ազատել են բանտից և այժմ ինքը բանակում քաղդեկ է։

Ոսմանը պատմեց, վոր Շամշադինի ու Դիլիջանի գյուղերից մի քանի պարտիզանական խմբեր անցել են սահմանն ու գնացել Բագու, վորտեղ և կազմվել է առանձին հայկական զորամաս։

— Յես էլ եմ ուզում Բագու գնալ, ուղարկիր ինձ, Ոսման,—խնդրեց պատանին։

Ոսմանը կարմիր-բանակայիններից մեկին հանձնարարեց պատանուն տանել Աղստաֆա, ապա շտաբից մի գրություն տալուց հետո՝ ճամբա գցեց։

— Ստանցում եդ թուղթը ցույց տուր ու պոյեզդ նստիր,—պատվիրեց Ոսմանը։

ՆԱՎԹԱՇԽԱՐՀՈՒՄ

— Տո, մի վեր թողրեք է։

Յեվ մի խումբ պարտիզաններ, Ճուտիկին ոդում թռցնելով, ձեռքերի վրա տարան շտաբը՝ բատալյոնի հրամանատար Բաղդասարյանի մոտ։ Տղերքից մեկը կարճ զեկուցեց, թե ով է Ճուտիկը։ Պատանին առաջ յեկավ և աչքերը խոնարհելով, խնդրեց իրեն կամավոր ընդունել։ Հրամանատարը հայրական խանդաղատանքով նայեց պատանուն և հարցրեց.

— Կարո՞ղ ես բանակային լինել։

— Լավ…

— Կարո՞ղ ես զենք գործածել։

— Էն էլ վո՜նց,— ծոր տվեց պատանին ու Ակոփին աչքով արավ.– չէրևի կամենում էր մաուզերիստին սատկացնելը հիշեցնել։

— Ընդունեցեք 3-րդ Հայկական վաշտում,— կարգադրեց հրամանատարը։

……………

Այստեղ որը բավական տաղտկալի չէր անցնում։ Հեշտ չէ կանաչ լեռներից ու թավուտ անտառներից ընկնել Բաքու և ծծել նրա մուրը, նայել մռայլ տներին, մրի մեջ թաղված վիշկաներին։ Այդտեղ, թեև ամեն ինչ փոխված էր, զգում ես, վոր վողջ քաղաքը, վողջ յերկիրն այժմ արդեն մերն է, խորհրդային է, բայց հայրենի գյուղից վաղուց կտրված պարտիզաններն անհանգստությամբ մտածում եյին ընտանիքի, յուրայինների մասին։ Ով գիտի, կոտորեցին, թալանեցին, ինչ արին։

Տղերքի վրա շատ ծանր տպավորություն թողեց Ակոբի կնոջ վողբերգական մահը։ Ակոբին մի կերպ հանգստացրել եյին։ Նա արնակալած աչքերով քանի որ էր տախտին ընկած մռնչում էր ու հրացանի ղայիշը կրծում։

Բոլորի մեջ էլ միևնույն ցանկությունն էր բորբոքվում.– «Ախր յե՞րբ են հրաման տալու մի շարժվենք է»։

— Աղա, թվանքներիս լուլեքը ժանգոտեց է՛։

Յեվ որական յերեք-քառորդ ֆունտ կոպեկլի ցեխ հացը, աղի սելյոդկի հետ խժռում եյին ու տաք ջուրը խըմում հա, խմում։

Յերբեմն դեմոնստրացիաներ էր կազմակերպվում, խըմբով քայլում եյին մուզիկայի նվագակցությամբ։ Հանեսին առանձնապես վոգևորում էր «Ինտերնացիոնալն» ու Смело мы в бой пойдем-ը։ Նրա արյունը յեռում էր այդ յերգերից։ Բայց տղերքից շատ քչերը հեղափոխական յերգեր գիտեյին։ Յեվ մեկ էլ տեսար սկսեցին «Մեր հայրենիքը» կամ Զեյթունի յերգը։ Իզուր չէր յերիտասարդ քաղ-

ղեկ Զուբարը նախատում տղերքին։ Յերգ չկար, ինչ անեյին։ Յեվ նա ստիպված յեղավ մի գիշեր լուսացնել ու յերգ գրել։ Հաջորդ որվանից արդեն յերգում եյին հայերեն առաջին հեղափոխական յերգը.

Ով չի տեսել ազատ յերկիր՝
թող գա Հայաստան,
մաուզերիստին ազատ մեյդան,
իսկ մեզ՝ կախաղան.

ՄՆԱՍ ԲԱՐԻ, ՍԵՎ ՔԱՂԱՔ

Վերջին որերն ինչ վոր աշխուժություն էր տիրում զորամասում։ Լուրեր եյին պտտվում Հայաստան գնալու մասին։



Մի օր էլ շտաբի առաջ հսկա միտինգ կայացավ։ Ծուռիկը բերանը բաց առաջին անգամ ամբիոնի վրա տեսավ ապագա Խորհրդային Հայաստանի ղեկավարներին՝ Հեղափոխական Կոմիտեյի անդամներին։ Ահա Հայկազը՝ բարակ, նրբակազմ ու ժպտերես մի յերիտասարդ։ Ահա Ավիսը՝ գլխաբաց և ահագին սև գանգուրներով, ահա և իր անտառի ծանոթը՝ Կասյանն՝ ակնոցների տակ բարությամբ փայլող աչքերով։ Խոսում են վոգևորված ու յերկաթյա համոզմունքով։ «Հայաստանում աշխատավորության բողոքն ու զայրույթը խեղդվում է արյան ծովի մեջ։ Խմբապետների կառավարությունն ազգամիջյան կոտորածներ է սարքում ու ավերում յերկիրը։ Ապստամբող աշխատավորությանը պետք է օգնության հասնել»։

Մուզիկան նվագում է «Ինտերնացիոնալ», իսկ բատալիոնը վորոտընդոստ ուռաներով դղրդացնում է քաղաքը։ Մթնոլորտն էլեկտրականանում է։ Վաշտերը հեղափոխական մարշ յերգելով, մնաս բարև են ասում Նավթաշխարհին ու բարձրանում մրոտ վագոնները։

ՅԵՂԵԳՆՈՒՏԻ ԲՆԱԿԻՉՆԵՐՆ ԱՆՀԱՆԳՍՏԱՑԵԼ ԵՆ

Տափաստաններում ցուրտը թրի նման կտրում է։ Կուրի ափով ձգված լայնարձակ յեղեգնուտները դողում ու սվսվում են տափաստանի աշնանային հողմի առաջ։

Յերեկոն իր սև թևերն է փռում դաշտի վրա։ Ղամշկոտաներից դնչերը յերկնքին արած, հառաչելով, զգուշությամբ դուրս են գալիս դեղին չախկալները (շնագայլերը) ու սկսվում է աղմուկն ու կռնձկռնձյունը։ Վայրի խոզերը դեպի շեներն են շարժվում, թրքի կույտերը քրքրելու համար։

Առանձնապես այդ գիշեր ղամշկոտի բնակիչներն անհանգիստ են։ Նրանք վեր են ցցում դնչերը, լուսնի աղոտ լուսով նշմարում սպիտակ վրանները, լսում են պողպատի չրխկոցն ու մրթմրթալով պահվում յեղեգնուտի խորքերում։

Մեծ, սպիտակ վրանում մի խումբ զինվորականներ խորհրդակցում են.

— Արդեն սահմանին մոտ ենք, սակայն դեռ լրիվ տեղեկություններ չկան։

— Ստրատեգիական բոլոր կետերը գրավված են,— զեկուցում է դասակապետներից մեկը,— մեր դիտակներն ուղղակի թշնամու քթի տակ են, իսկ հետախույզներն արդեն անցել են խնդրի կատարման։

— Դա այնքան կարևոր չէ,— ընդհատեց հրամանատարը,— հավանաբար մենք առանց գնդակ արձակելու մտնենք յերկիրը։ Ղազախի գյուղացիությունը մեր կողմն է, մնում է ճշգրիտ տեղեկություններ ստանալ սահմանապահ

գորամասերից, հայտնել, որ չկրակեն մեզ վրա և զենքն ուղղեն խմբապետների վրա, այս է խնդիրը։

— Նու, մարդ պիտի ուղարկել,— խոսեց քաղդեկը։

— Այո, և՛ մարդ, և՛ թռուցիկներ, և՛ դրականություն։ Ահա մեր նամակն, ուղղված սահմանապահ զինվորներին. բավական է հասցնել, ցրել այս կոչերը և արդյունքը խոշոր կլինի։ Նու, շտապ տվեք մի կտրուկ տղա։

— Ծուտիկը, ամենից հարմարը նա չէ։

— Կանչեցեք Ծուտիկին, կարգադրեց հրամանատարն ու դարձավ պարտիզաններին,— ձեր Ծուտիկով շատ եք պարծենում, հիմի կտեսնենք։

Քիչ անց ներս մտավ Ծուտիկը և զինվորական բարևեց։ Ահագին շինելի փեշերը գետնին քարշ եկին գալիս նրա հետևից, այնպես, որ քայլելիս շինելի ծայրը մի քայլ հետ էր մնում ոտներից։ Շինելի թևերը կախ էին ընկել ձեռներից շատ ցած, իսկ կոմունարկան այնպես էր ընկել ականջները, որ չերևի միայն ներքևի մասն էր չերևում։ Իսկ և իսկ կարիկատուրա:

Հրամանատարը չկարողացավ ծիծաղը զսպել։

— Նու, Ծուտիկ, կարո՞ղ ես անցնել սահմանն և էս թռուցիկներն ու գրքերը բաժանել զինվորներին։

— Պատրաստ եմ, ընկեր հրամանատար,— աշխուժ պատասխանեց նա և հրահանգներ ստանալուց հետո բարևը շալակեց ու դուրս չեկավ վրանից։

Սահմանն Ուզունթալայի կամուրջն էր։

Պատանին կամրջից քիչ ներքև դուրս եկավ շտեյից ու մտավ անտառ։ Ձյունի սառած կեղևը ջարդվում է նրա ահագին զինվորական բաթինկաների տակ և դժվարացնում վերելքը։

— Ո՞վ է, կանգնիր,— լսվում է հրամանը և հրացանի փողն ուղղվում է ծառի լանջով։ Մի քանի զինվորներ, փաթաթված հնամաշ շինելների մեջ, պառկել են ձյունի վրա ու անընդհատ ծխում են։ Պատանին մոտեցավ, բևոր վայր դրեց խմբի առաջ։ Զինվորներն սկսեցին ագահությամբ կարդալ ու անհանգստության նշաններ ցույց տալ։

— Ես վո՞րտեղից է, այ տղա. ես որ բռնեն՝ քեզ էլ, մեզ էլ կգնդակահարեն,— ասաց վախեցած ջոկապետը։

— Ինձ են գյուղերում տվին, չգիտեմ էլ, թե ինչ ա,— կեղծ միամտացավ պատանին։ Բայց նանկատում էր, որ զինվորների դեմքերն ինչ որ արտասովոր ուրախությունից փայլում են։

Խումբը պատանուն ազատ թողեց։ Նա սարի լանջով իջավ ցած, պատահեց եսաեղ-ենտեղ պառկած զինվորներին և գրքերի ու կոչերի կեսից ավելին բաժանեց։ Նա հաստատ համոզված էր, որ կձերբակալվի, բայց ուրիշ կերպ կոչերը ցրել չէր կարող։ Միևնույն է, ձերբակալելու չեն, պետք է որքան կարելի չէ շուտ բոլոր կոչերը ցրել վոշ ճակատով։ Ցեվ խմբից խումբ անցնելով, ցրում էր նա, ցրում։ Զինվորները կմկմալով կարդում էին Հեղկոմի կոչերը, նայում էին տպված հնգաթև աստղին, ժպտում ու պատանու ուսին բարեկամաբար խփում։

— Ասում ես, գալիս են ելի՛։

— Են էլ վո՜նց,— ծոր էր տալիս պատանին ու անցնում։ Զարմանալին այն էր, վոր նրան չէին ձերբակալում։ Կարծես դա ֆրոնտ չէր, այլ քարավանի յաթաղ[1]։

Գետակն անցնելիս պատահեց մի խումբ զինվորների և կոչերից ու գրքերից մի քանի հատ տվեց։ Չեչոտ երեսով մի տասնապետ ուժգին ապտակեց պատանուն և հրամայեց ձերբակալել։ Զինվորներից մեկը Ճուտիկին տարավ գլխավոր ուղեկալը (застава)։ Ճանապարհին պատահող զինվորներին թռուցիկներ էր տալիս։ Իզուր էր զինվորը հրացանի կոթով խփում ու սպառնում.

— Շան վորդի, կխփեմ այ, մի բաժանի։ — Զինվորները հետաքրքրությամբ խլում էին թռուցիկներն ու արագ աչքի անցկացնելով, հուզվում։

Գլխավոր ուղեկալում խոժոռադեմ մի օֆիցեր, խթանները գրնգացնելով, հետ ու առաջ էր քայլում։

Պահակը կարճ զեկուցեց կալանավորի մասին։

— Ի՞նչ, սահմանն անցե՞լ է, կոչե՞ր է տարածել։ — Զարմանքից ու կատաղությունից աչքերը չռեց ցրտից կապտած պատանու վրա։

— Սրիկաներին պետք է բոլորին գնդակահարել, սա զորք չի, սա դավաճանների ու բոլշևիկների ագենտների շայկա յե, սա... սա, սա... յես դրանց...— ու օֆիցերը փրփրած, հրամայեց ձերբակալել բոլոր նրանց, ում ձեռքին թռուցիկ կգտնվի, իսկ «լակոտին» տանել Իջևան և հանձնել շտաբին։

Չորս զինվորներ պատանու ձեռները հետևից կապեցին ու մերկ սվինների առաջն արին։

— Էդ սատանի ճուտն ուսումնասիրում է մեր ուժերի դասավորումը, աչքերը կապիր,— հրամայեց պահակապետը։ Յեվ վորպեսզի պատանին չիմանա, թե ուր են

[1] Յաթաղ—գիշերելու տեղ։

տանում իրեն, հանեցին ճանապարհից ու քշեցին սարի լանջով, քարերի, ծառերի արանքներով։ Անտառում շարժվել չէր լինում։ Աչքերը կապած պատանին կույրի նման ձեռներն առաջ պարզած՝ ընկնելով, վեր կենալով, ձեռն ու վոտը փշերին բաժին անելով, հազիվ է շարժվում։

Մթնեց։ Մտան շոսեն։ Այնքան մութն է, վոր մատդ մարդու աչք կոխես, չի տեսնի։

Ճանապարհին ճռնչալով տասնյակ սայլեր ու ֆուրգոններ ռազմամթերք էին փոխադրում ֆրոնտ։ Սայլերի աղմուկի մեջ պատանին հետևը մի սայլի արավ, կապած ձեռները դցեց սայլի ճաղին ու թափ տվեց ինչքան ուժ ուներ։ Ձեռքերի կապը կտրվեց։ Չնկատեցին. շատ է մութ։ Նա կամացուկ աչքերից ցած քաշեց թաշկինակն ու աննկատելիորեն մտնելով սայլի տակ, կուզեկուզ քայլեց սայլի հետ ու մյուս յեզան փորի տակով անցնելով, անցավ ճանապարհի պռնգին կանգնած հսկա կաղնի կոճղի հետևը։ Քիչ անց՝ աղմուկն ընկավ։ Սայլերը կանգնեցրին, սկսեցին խուզարկությունը, իսկ պատանին նայում էր կոճղի տակից ու հազիվ զսպում ծիծաղը։ Ինքնիրեն բավական զվարճանալուց հետո կամացուկ անցավ գետն ու առաջ շարժվեց դեպի մոտակա գյուղը՝ Իջևան։

ԻՋԵՎԱՆՑԻ ՄՈՒԽԵԼԻ ՀԱՐՍԱՆԻՔԸ

Տոպրակը պատժի համար թողել էին մեջքին, վորի մեջ դեռևս բավականաչափ կոչեր էր մնացել։ Նա կամացուկ մտավ գյուղի խուլ փողոցներից մեկն ու խառնվեց հարսանիքի հետևից աղմուկով գնացող ամբոխին։

— Էս ո՞ւմ հարսանիքն ա,— հարցրեց նա մեկին։

— Մուխելինն ա, խի՞, էս աշխարհիցը չե՞ս, ադա։

— Վոնց չէ, Ղուլարանց Միխակի հոտաղն եմ. յես էլ հենց Մուխելի հարսանիքն եմ ուզում էլի,— ասաց նա ու մտավ հարսանքատուն։

Կերակուրների հոտը, ծուխը, աղմուկը, դժոխային ժխորը շշմեցնում է մարդու: Ճուտիկը տոպրակից հանեց թռուցիկներն ու սկսեց ցրել: Զահել-ջուհուլը կուտակվեց սիրուն պլակատների գլխին: Մի հարբած մարդ, որորվելով առաջ յեկավ, խլեց տոպրակը, բարձրացավ սեղանի վրա ու թափ տվեց: Թղթերը թռթռացին օդում: Հարյուրավոր ձեռքեր պարզվեցին դեպի վեր ու սկսեցին իրարից խլել կոչերը:

— Ահա, գալիս են, գալիս են, բայլշևիկները գալիս են,- բղավեց մեկը, և թռուցիկը թաշկինակի տեղ սկսեց օդում թափահարել ու «շալախո» թռչել:

Խլրտումն ընկավ հարսանքատուն: Վոչվոք չնկատեց, թե ինչպես հարսանքի թամադան մի յերիտասարդի ականջի բան փսփսաց և ուղարկեց դուրս...

— Տո, թող գան է, յես դրանց կարմիր աստղին մատաղ,— բղավեց սեղանի վրայի մարդն ու մինչև Ճուտիկն ամբոխի արանքով ծլկվել եր ուզում, հարբած մարդը թռավ ցած, գրկեց նրան, ամուր համբուրելով կոմունարկայի աստղը, - քաշեց մեյդան ու զուռնաչիներին հրամայեց.

— Ահա, մի քոչարի բռքեցեք:

Մի խումբ տղերք վրա թափվեցին, կախվեցին իրար ուսերից ու Ճուտիկին «յալլաբաշի» դնելով՝ սկսեցին քոչարի թռչել: Ճուտիկը հենց են է, ուզում եր դուրս պրծնել շարքից և անհետանալ, յերկու զինվորներ ներս մտան, հրամայեցին աղմուկը դադարեցնել և պատանուն հրացանների առաջ արած՝ տարան:

Պասի տակին 5-6 հոգի աժդահա մի տղամարդի հազիվ են զսպում:

— Յես դրանց են-են-են... Դրանք քանի՞ գլխանի յեն, վոր իմ զոնաղը զենքով են տանում. բայլշևիկը գալիս ա՞, չուզողի աչքն ել ա հանում, բայլշևիկին հո են յերեխեն չի բերում. մենք ենք բերում, մենք:- Յեվ ամեն «մենք» ասելով՝ ահագին բռունցքը խփում է լայն դոշին:

Զինվորները հրացանի կոթերով Ճուտիկին հրեցին, դցեցին շտաբը:

Բուխարա փափախով և կոկիկ չերքեզկայով մի խմբապետ, կատաղությունից սպրդնած, մի քանի վայրկյան չի կարողանում խոսել: Ել ինչ խոսի. 14 տարեկան մի «լակոտ» ճղել է ֆրոնտը ու անարգել ավիրում է թիկունքը:

— Շո՛ւն, թռուցիկները վո՞րտեղից ես բերել:

— Բայլշևիկների մոտից, հանգիստ պատասխանեց պատանին. այլևս սուտ անհնար եր: Ատրճանակը թափով դուրս յեկավ բնից և ճրագի լույսի տակ փայլեց նրա վողորկ փողը: Պատանու մարմնով սառը դող անցավ: Մի ձեռք հետ հրեց ատրճանակն ու ոֆիցերներից մեկը ինչ վոր բան փսփսաց խմբապետի ականջին:

— Լավ, կյանքդ քեզ եմ տալիս, յեթե ասես վորտեղ են ձեր զորամասերը:— Պատանին քմծիծաղ տվեց:

— Ինձ մի հոգի թղթեր է տվել ու ճանապարհ դրել, — ասաց նա:

— Ուրեմն դու յե՞լ բայլշևիկ ես, լակոտ, — վորոտաց խմբապետը:

— Կարող է պատահել, ինչ կա վոր,— պատասխանեց պատանին, — բայց զորամաս չեմ տեսել, — ավելացրեց նա:

Խմբապետն այլևս չհամբերեց.

— Առավոտը կատակացնեք հրապարակով և ցույց կտաք, թե ինչպես պետք է վարվել բայլշևիկների ագենտների հետ, - հրամայեց նա: Պատանու արյունը գլուխը խփեց.

— Ավազակ, մենք քեզ ձեռք չենք տա, քո զորքն է քեզ սատկացնելու, քո զորքը,—բղավեց նա և ուշագնաց ընկավ գլխին իջած ծանր հարվածից:

ԿԱՐՄԻՐ ԱՐՇԱԼՈՒՅՍԸ

Նա ուշքի յեկավ ականջի վրայով սողացող ինչ վոր թաց բանից: Շուրջը վոչինչ չեր յերևում: Որորվելով ա-

ռաջ գնաց ու շոշափեց պատերը: Ցուրտ ու խոնավ քարեր:

Յերկաթապատ մի փոքրիկ անցքից հեռու խրճիթում ինչ վոր աղոտ լույս եր շողշողում: Դրսում ինչ վոր մեկի համաչափ քայլվածքի ձայն է լսվում: Պահակն է:

Ցուրտ է, սոսկալի ցուրտ: Ձախ կողքը, վորի վրա ընկած է յեղել հողե հատակին,—փայտացել է: Գլուխն ինչվոր ծանր է ու թաց: Շոշափում է. արյունոտ կակուղ վերքը ընկնում է նրա մատների տակ:

Դրսում խավարը հետզհետե նոսրանում է: Պատանու սիրտը ճմլվում է, կծկվում: Յերազում է մի տաք ու պայծառ արև: Ինքն ու Վարսիկը պառկած են գետափի սալին ու նայում են ջրում փայլփլող կարմրախայտներին. իսկ արևն այնպես դուրեկան է տաքացնում...

Լույսը բացվում է ու մահապարտը մի դող բերում պատանուն: «Չե, սպանեն ել վոչինչ, մի քանի որ հետո մերոնք կմտնեն, գուցե հենց այս կոչերը մի քանի հարյուր մարդ մեր կողմն անցկացրին»: Յեվ տրտմած հոգու մի անկյունում առկայծում է բերկրանքը:

Գոնե գիշերը չերկարեր: Սակայն մութն արագությամբ նահանջում է. լույսի առաջին շողերը նեղլիկ պատուհանով ընկնում են բորբոսնած պատին. լույսը հազարներին կյանք ու բերկրանք է բերում, իսկ նրան մահ: Յեվ նրան պատկերանում է կախաղանը սապնած թոկով...

Դրսում վոտնաձայներ են լսվում: Ապա ձիերի դոփյուն: Ատրճանակի մի քանի կրակոցներ, և հետո՝ գնդացրային ու հրացանային համազարկեր...

Մեկը հրացանը ձեռքին արագ անցավ պատուհանի առաջից: Լսվեց վոտնաձայներ և մեկն ուժգին հրեց դուռը: Պատանու շունչը բռնվեց: Հրացանների կոթերի ուժգին հարվածներից դուռը խորտակվեց և չորս հոգի կասկաները գլխներին ուրախ ներս մտան:

Պատանին ուրախությունից ճիչ արձակեց ու նետվեց ընկերների գիրկը...

Գյուղամիջում բազմամարդ միտինգ է: Մի խումբ կարմիր-բանակայիններ թևերի վրա թռցրին Ծուռիկին և հասցրին միտինգի նախագահ Բաղդասարյանի մոտ: Հրամանատարը հուզվեց, ջարդված պատանուն տեսնելով:

— Այսպես գազանությամբ են վարվում դաշնակները մեր ընկերների հետ,—բացականչեց նա ու արյունլվա պատանուն ցույց տվեց ժողովրդին:

Ամբոխը հուզվեց, ալեկոծվեց: Հեղկոմի նախագահ ընկ. Կասյանին ամբոխը դիմավորեց խանդավառ «ուռա»-ներով: Նա բարակ ու թույլ ձայնով, բայց ամուր ու համոզիչ շեշտով խոսեց նոր կարգերի մասին, աշխատավորությանը սովից, կոտորածից ու ավերածություններից դեպի նոր ու լուսավոր կյանք տանելու մասին, ապա ուժեղ ներշնչեց առավոտյան զով ոդն ու հատ-հատ, մուրճի հարվածների նման ասաց.

Հեղափոխակա՛ն... Կոմիտեյի՛ անունի՛ց Հայաստանը հայտարարում եմ Սոցիալիստակա՛ն Խորհրդա՛յին Հանրապետությո՛ւն:

Նրա վերջին խոսքերը կորան «ուռաների» վորոտի ու «Ինտերնացիոնալի» նվագի մեջ:

Բոլշևիկյան թնդանոթները ուրախ թնդյունով ավետեցին բռնապետության տապալումը...

Տերևաթափ անտառով ձգվող վոլորապտույտ շոսեյով առաջ շարժվեցին կարմիր վաշտերը: Յեվ սվինների անտառը շողշողաց արեգակի առաջին շողերի տակ...:

ՄԱՍՆ ՅԵՐԿՐՈՐԴ

ԺՈՒՏԻԿԸ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿՌԻՎՆԵՐԻ ԾԽԻ ՈՒ ՀՐԻ ՄԵՋ

ԲԱԴԵՐԸ ՍԱՌԵԼ ԵՆ

Բուքը վոռնում է ամայի դաշտերում։ Նոր իջած ձյան թեթև փաթիլները ոդն է հանում, և ձյունի ամպերով արշավում մերկ ու անպաշտպան գյուղերի վրա։

Ջուրն այլևս չի խոխոջում դաշտն աջ ու ձախ ակոսող կխտավեր ջրանցքների մեջ։ Փետրվարյան սառնամանիքը կաղապարել է ամեն ինչ այնքան խստությամբ, վոր շամբուտների բնակիչները՝ վայրի բադերը, սագերն ու արագիլները յերամներով յեկել լցվել են Սև-Ջրի ու Այգըր-գյոլի տաք աղբյուրները։ Ամեն առավոտ ջրանցքների սառույցի վրա պատահում ենք ցրտից կուչ յեկած վայրի բադերի։ Մոտենում ենք կուզեկուզ։ Նրանք փախչելու վոչ մի փորձ չեն անում։

— Կրակել չարժե, սառած են,— ասում է ընկերս։ Մոտենում ենք, մեկ-մեկ վերցնում, գլուխները քաշում պոկում ու լցնում զինվորական պայուսակի մեջ։ Հաճախ առավոտը շուտ Սև-Ջրից թռցնում ենք բադերին։ Տաք ջրից դուրս յեկած բադը իսկույն սառչում եր 35 աստիճան ցուրտ ոդում և որորվելով ընկնում ձյան վրա։

Ապրում ենք Արաքսի այս ափին ընկնող գյուղերում և

չնայած անտանելի սառնամանիքին՝ յերբեմն վորսի գնում։

Հաց չկա։ Վայրի բադի միսը դարձավ մեր գլխավոր սնունդը։

Գյուղամիջով անցնելիս յերբեմն աչքիդ ե ընկնում շտապելով տուն ընկնող մի հարս, մի յերեխա, կամ կիսաբաց դռան արանքից դեպի մեզ ուղղված ենք տեսնում գեղջկական անմեղ ու յերկյուղած հայացքներ։

— Աղջի, դեսը կորի, դուռը փակի, սալդաթ ա գալի— հաճախ լսում եյինք հարևան բակից յերկյուղ արտահայտող ձայներ։

Այդ մարդիկ վերջին տարիները սովոր եյին տեսնել զինվորներին թալանելիս։ «Հորդ հոգին, գարի տուր», «հաց տուր», «բիձա, սիրուն խարս ունե՞ս», «հոս պառկիր», խուզարկություն, մտրակ, ամեն որ մոբիլիզացիա։ Այդպես եյին սովոր տեսնել այն գյուղում, ուր ապրում եր սահմանապահ մեր վաշտը։ Յեվ յերկու ամսվա մեր խաղաղ համակեցությունը գյուղացիների հետ, դեռ տեղահան չեր արել «սալդաթի» մասին արմատացած բացասական կարծիքը։ Մարդիկ չեյին կարողանում հաշտվել այն մտքի հետ, վոր մենք՝ սալդաթներս կարող ենք ապրել առանց վերցնելու։

ԽՈՓԸ ԴԵՌ ՀՈՂԸ ՉԻ ՄՏԵԼ

Մարդիկ նույնիսկ խորթ եյին նայում իրենց ստացած իրավունքներին։

Սկսվող նոր կյանքն այդ ձմեռվա պես բավական խառն ու մշուշապատ եր։ Յերկար-յերկար տարիների յերազածը այժմ ասում են, վոր իրականություն ե դառնում, ասում են, վոր հողը հավասար չափով պիտի տրվի բոլոր աշխատավորներին։

«Հողն աշխատավորինն ե», ինչքան քաղցր են հընչում այդ բառերը։ Սակայն կարծես այդտեղ ինչ վոր ան-

հասանելի բան կա։ Մարդիկ ցրտից կուչ յեկած, վոտները թոնիրը կախած՝ լուռ խորհում են գարնան մասին, հողի մասին։

— Գլուխ գալու բան չի, ջանըմ, մեզ ո՞վ հող կտա։

Կատարված իրականությունը թվում եր մի իդեալ, անիրական մի յերազ։ Յեվ մարդիկ դեռ յերազում եյին հողի մասին, վորովհետև քաղցած եյին, շա՜տ քաղցած... Հողը դաշտում ե և թաղված արշինանոց ձյունի տակ։ Դե յեկ համոզիր, վոր հողը քոնն ե։ Խոսիր վորքան կուզես, դեռ նա չի շոշափել, դեռ արորի խոփը չի խրվել հողի մեջ...

Յեվ մարդիկ յերազում են գարնան։ Արդյոք չուլթը առանց արգելքի, առանց ծեծի ու տուգանքի կգնա՞ այն կտոր հողի մեջ։

ՅԵՐԳԸ

Հիշում եմ գրեթե ամեն որ բջիջի ժողով եր գումարվում։ Ժողովը սկսելուց առաջ և վերջացնելուց հետո ամեն որ «Ինտերնացիոնալ» եյին յերգում, այն ել այնքան աղավաղված, վոր ռուսերեն իմացողը ծիծաղը զսպել չեր կարող։ Յերգում եյին անգրագետ, չոբան մարդիկ։

Յերգում եյին աններդաշնակ, խռպոտ, աղավաղված։

Բայց ինչ վոր նոր շունչ, ինչ վոր թափ եր ներշընչում այդ նոր յերգը մարդկանց մեջ։ Մեզանից գրեթե վոչ մեկը չեր հասկանում այդ յերգի միտքը, բայց չգիտես ինչու անտաշ այդ դեմքերին հուզմունք և աչքերի մեջ արտասովոր փայլ եր նկատվում։ Յեվ այդ փայլը պայծառանում, բոցավառվում եր, յերբ շրջանից յեկած ագիտատորը, կամ մեր վաշտի քաղղեկը կրակոտ խոսքերով նկարագրում եր յերջանիկ ապագան, այնքա՜ն պայծառ, այնքա՜ն խոստմնալի...

Իսկ ուրիշները հյուղերը քաշված կուչ եյին յեկել և կասկածոտ նայում եյին նոր անց ու դարձին ու սպասում

եյին գարնանը, յերբ «հողի վրա կփորձվի կարգերի պիտանիությունը»...։

ԿՐԱԿՈՑԸ ՉԱՐԱԲԱՍՏԻԿ ՏՆԻՑ

Գիշեր է։ Սպիտակ հարթությունը պսպղում է լիալուսնի տակ։ Արաքսը ջանում է լայնացնել իր սառցե պատյանը և խուլ վշշում է հաստ սառույցի տակ։ Նրա ձախ ափին, ուռենու կոճղին թիկն է տվել սահմանապահ պատանին փաթաթված գորշ ու իր հասակին անհամեմատ մեծ գրատի[1] մեջ։ Բերանից ու քթածակերից դուրս յեկող գոլորշին իսկույն սառչում է ու սառույցի փշրանքներ գոյացնում թավ հոնքերի վրա։

Գաղտնի ժողովներ, թռուցիկներ, բանտ, աքսոր, ծեծ և ահա նորից ցուրտ, նորից քաղցը։ Ի՞նչն է փոխվել։ Դիլիջանում մաուզերիստների վրա կրակում եր այն հույսով, վոր «հավասարություն լինի», իսկական հավասարություն, բայց այժմ սառնամանիքում դողում է, իսկ դիմացի յերկհարկանի տանը կուշտ փորով մռափում է այն հաստափորը, վորն այսոր պատի տակ մի խումբ մարդկանց մոտ ինչվոր խորհրդավոր բաներ եր քչփչում։

— Կոլյա,— ձայնեց նա ռուս ընկերոջը։

Կամուրջի մոտից հրացանն ուսը ձգած նրան մոտեցավ շիկահեր մի բանակային։ Նա հայերեն արդեն մի քիչ ջարդում եր։

— Ի՞նչ... Ծուտիկ։

— Կոլյա, ինչի՞ հեղափոխությունն արինք, վոր հիմի սոված ենք։

— Դուռակ,— ծիծաղեց նա,— դուռակ, խաց ցանել ես, գավոդ շինե՞լ ես, վոր ուտես, է, տավարիշշ, դեռ իսկական ռեվոլյուցիան նոր պիտի սկսվի, մենք մեր ձեռքով պետք է մեզ համար լավ կյանք ստեղծենք, ամեն ինչ

[1] Գրատ—շինել։

պատրաստ չի լինում, դու պինդ կաց, սահմանը պաշտպանի, եդ էլ կանենք.— ասաց նա ռուսերեն ու ամուր տոնով։ Ծուտիկը հասկացավ ու ամաչեց իր տված հարցից։

— Դե Կոլյա, սաս ինչի՞...— Նա խոսքը կտրեց ու վեր թռավ. հեռու ուռիների արանքով լուսնի լույսով մի ըստվեր յերևաց, վորը անհետացավ մոտակա բակում։ Քիչ անց դեմացի տան վերին հարկում աղոտ մի լույս վառվեց։

Ծուտիկը կուզեկուզ առաջ գնաց, բարձրացավ տան առաջի բարդենին և ճյուղերի արանքից սկսեց ներս նայել։ Ներսում մի խումբ զինված մարդիկ ինչ վոր ցած խոսում են ու անհանգիստ շարժումներ անում։ Նա ճանաչեց խմբապետ Այվազին, վորը վերջերս բանտից փախել եր և գաղտնի շրջում եր գյուղերն ու դավադրություն կազմակերպում։

Պատանին զգուշությամբ իջավ ծառից, կարճ պատմեց Կոլյային և յերկուսն էլ շտապեցին ընկերների մոտ։ Քսան քայլ չարած՝ չարաբաստիկ տնից լսվեց կրակոց։ Դրան վորպես պատասխան կրակոցներ լսվեցին նաև մի քանի թաղերից և մոտակա գյուղից։

ՍԱՌԱԾ ՋՅՈՒՆԻ ՎՐԱՅՈՎ

Փողոցով մի քանի կարմիր-բանակայիններ մոլորված դես ու դեն են վազում։

— Տղե՛րք, էս կողմը,— բղավեց Ծուտիկն ու պատի տակից սկսեց կրակել այն տան վրա, վորտեղից թշնամին համազարկ եր տալիս։ Հարևան գյուղից յեկող կրակոցի ձայները մոտենում են։ Մի քանի հոգով դիմադրելը միտք չունի։ Յեվ ծուռ ու մուռ փողոցներն շտապ անցնելուց հետո, վազում ենք բաց դաշտով։ Ջյունի յերեսը սառել, ամրացել է։ Յեվ մենք թեթև վազում ենք, ինչպես սալահատակած կոկիկ փողոցով։

Մեզ նկատեցին ու սկսեցին կրակել։ Գնդակները

ըզգալով կտրում են ցուրտ օդն այնքան մոտ, որ կյանքներս թելից է կախվում։

— Տղերք, ծուռ ու մուռ վազեք։—Ցրվում ենք ու վազում ծուռ ու մուռ։ Գնդակները վրիպում են։ Սակայն թշնամին կանոնավոր հետապնդում է։ Ըստ յերևույթին նպատակ է դրել մեզ թույլ չտալու, որ լուրը շտաբին հասցնենք։

— Պավլիկ, Ծուտիկ, իսկ դուք վազեցեք,—հրամայում է Կոլյան։ Յերկուսով պառկում են ու արագ-արագ 20-25 փամփուշտ դատարկում ձյունի վրա պարզ յերևող թշնամու վրա։

Մեկն որորվում է և իր ստվերի հետ մեկնվում ձյան վրա։

Հետապնդող խումբը տաս րոպեյի չափ պառկում է ու կրակում։ Մենք հինգ հոգով բավական հեռու պառկում ենք և Ծուտիկի ու Կոլյայի գլխի վրայով կրակ բացում թշնամու վրա, իսկ մերոնք վեր են կենում և կուզեկուզ վազում։ Թշնամուն հետապնդելու հնարավորություն չենք տալիս։ Փոխեփոխ կրակելով և փախչելով, հասանք յերկաթգծին ու սկսեցինք կռվել ամբողջ ուժով։ Այլևս փախչելու հնարավորություն չկա, մի քիչ հեռու ընկած են Սևջրի ճահճուտները։ Կամ պետք է կռվել, կամ խեղդվել ճահճում։

Յեվ կրակում ենք հուսահատ։ Փամփուշտները վերջանում են։ Շարվել ենք յերկաթուղու թմբի յետևն ու կրակում ենք։ Ծուտիկը բարձրացավ վերև, պառկեց գծի վրա ու ականջը դրեց ռելսին։

—Գլխիցդ կխփեն, տո շան որդի,—բղավեց Ղազնափարցի Հմայակն ու քաշեց շինելի փեշից։

— Տո մի սպասիր է, վախկոտ կռո, պոյեզդը գալիս է, գնացքը չես լսում։

Ուրախացանք ու սկսեցինք խնայողաբար կրակել։ Մի քանի րոպեյից հետո Սարդարաբադի կողմից յերևացին

փրկարար ճրագները։ Ամայի անապատով ալրանքատար գնացքը վշշալով ու սուլելով մոտեցավ մեզ։ Դիրքերից դուրս թափվեցինք ու կախվեցինք վագոններից։ Մեքենավարը կրակողներից սարսափած՝ մինչ ուզում էր գնացքը կանգնեցնել, Կոլյան սվինը դեմ արավ։

—Սուկին սին, խոդը տուր, թե չէ կգնդակահարեմ։— Թարխլած պարավոզը իր վերջին ուժերը հավաքեց ու նետվեց առաջ, իսկ մեր հետևից վզզում էին գնդակները...

ԱՆՍԻՐՏ ՈՒ ԳԼԽԻԿՈՐ...

— Ի՞նչ, ավանտյուրա. փողը հնչեցրեք,—վորոտաց գնդի հրամանատարը սահմանապահ ջոկապետի կարճ զեկուցումը լսելուց հետո։ Գիշերային լռության մեջ հնչեց սիգնալը՝ զիլ ու մարտական։ Շտաբից ու մոտակա տներից դուրս թափվեցին գորշ շինելավոր մարդիկ։ Յեռամյա հանգստից հետո արյունը նորից յեռաց նրանց յերակներում։ Փակաղակները յետ քաշվեցին և փամփուշտները աշխուժ շխկշխկոցով իջան փամփուշտատուփերի մեջ։ Սահմանապահ վաշտերը կազմ ու պատրաստ էին։ Հրամանատարն արդեն հեռախոսով խոսել էր Յերևան ու հրահանգներ ըստացել։

— Շտրվի՛ր...—յեղավ հրամանը։

Յեվ կարմիր զորքերը կես գիշերին շարժվեցին դեպի Յերևան։ Այդպես էր կարգադրվել վերևից։

Տղերքի թափն իջավ։ Կոլյան թույլ-թույլ հրացանը կախ տվեց ուսից ու անսիրտ, գլխիկոր քայլեց՝ շարքից յետ չմնալու համար։

— Տո աննամուսներ, ու՞ր եք գնում է,—բողոքեց Շամշադինեցի Կարոն։ Սակայն դասակապետը նրան լռեցրեց։

— Յես քեզանից պակաս չեմ ուզում, բայց ինչ արած, հրաման է՝ պետք է կատարել։

Լուսադեմին հասանք Քանաքեռ և տեղավորվեցինք

կեղտոտ ու ցուրտ կազարմաներում։ Նոր հասկացանք, որ ավանդույրան մի քանի կետերից է սկսվել, և մեզ այլ ֆրոնտ են փոխադրել։

Լուրեր են պտտվում Ախտան գրավելու մասին, սակայն ստույգ տեղեկություններ չկան։ Ցեվ ապրում ենք սպասումի ծանր վայրկյաններ, ժամեր, օրեր՝ կեղտոտ ու ցուրտ կազարմաներում։

ԳՆԴԱՑԻՐՆ ԱՎՏՈՅԻ ՎՐԱ

Շոֆերը մատներին փչելով, յուղ է լցնում ավտոմոբիլի պտուտակներին ու զգուշությամբ «խոզը տալի»։ Ամուր կազմվածքով մի զինվորական ձեռքերի վրա բարձր բռնած՝ բերում է գնդացիրն ու հարմարեցնում ավտոյի վրա։ Ծանրաքայլ մոտենում է գնդի հրամանատարը, դասակապետներից մեկին ինչ որ բան պատվիրում և թաղվում ավտոյի փափուկ բարձերի մեջ։

— Ճուտիկ, վե՛ր բարձրացիր, գնանք,—կարգադրում է նա ավտոյի կողքին կանգնած պատանուն.—դու արծվի պես սրատես ես և շատ նման հոտառու,—կատակով ավելացնում է նա։

Նստում է նաև գնդի հմուտ հետախույզներից մեկը՝ Վեզի-Բասարցի Սբատը։

Ավտոն սլանում է Ախտայի ուղղությամբ։

— Ատրճանակները պատրաստ պահեցեք, Սբատ, գնդացրի հետևն անցիր,—հրամայում է հրամանատարը։

Սառը պողպատից ցուրտը կտրում անցնում է մինչև ոսկրներն, ու զենքերը կարծես կպչում են նրանց ձեռքերից։

Օդը ցրտից այնքան է թանձրացել, որ շնչել չի լինում։ Ավտոյից առաջացած շոր ու ցուրտ քամին շնչահեղձ է անում հետախույզներին։ Ահա հեռևում թմբի տակ ցրտից կուչ է եկել Պաղնի գյուղը։ Ձնյած փետրվարյան

առնամանիքին, գյուղում ինչ որ արտասովոր շարժում է նկատվում։ Մարդիկ խուճապով վազվզում են փողոցներում։

— Դանդաղեցրու,—լսվեց հրամանը։

— Ընկեր հրամանատար, մեկը փորսող մոտ կամրջի տակը,—ազդարարում է Ճուտիկը։ Նայում են առաջ։ Ներքի ձորակից ցերկու գլուխ մերթ ցերևում, մերթ ծածկվում են։ Ցերևում՝ և ինչվոր մարդիկ ներքևից կուզեկուզ դեպի կամուրջն են շտապում։ Բայց ովքեր են։ Գուցե մերոնք են, պետք է պարզել։ Զենքերը պատրաստ շարժվում են առաջ։ Կամրջի ցերկու կողքից թմբի ցեցրին նկատվում է գլուխների շարքն ու հրացանների փողերը։

— Կանգնե՛լ,—լսվում է հրամանը և միանգամից վեր են բարձրանում 15-ի չափ գլուխներ։ Ավտոն կանգ է առնում։ Պարզ նկատվում է, որ նրանք են։ Ահա խմբապետական կարճ փափախները։ Գնդացիրից ու ատրճանակներից տեղում է արճճի կարկուտը։ Խումբը խուճապի մատնված՝ թափվում է ձորը, և մինչ զգուշությամբ գլուխները կհանեյին թաքստոցից, ավտոն արդեն քամու արագությամբ սլանում էր դեպի յետ։ Մինչև բլուրն անցնելը, նրանց հաջողվեց միքանի անգամ խառնիխուռն կրակել։ Գնդակները վզվզացին աջ ու ձախ։ Մեկը ճեղքեց անիվի ռեզինը, լսվեց ուժեղ պայթյուն և ավտոն իր վնասված «վոտքը» քաշ տալով, մի կերպ իրեն գցեց բլրի հետևը...

ԽԱՆԳԱՐՎԱԾ ՑԵՐԱԶՆԵՐԸ

Զորքը խաղաղ ննջում է չոր ու սառը նառերի[1] վրա։

Հաստատ կարելի չէ պնդել, վոր նրանց մեծ մասը յերազում գնացել է իրենց գյուղը, ուր թոնրից դուրեկան տաքությունը դանդաղ ծծվում է գուլպաների, շալվարի մեջ, դանդաղ վեր բարձրանում և դուրեկան մի թմրություն է բերում մարդուն։ Այդ իհարկե գյոկչեցի Հակոն է տեսնում։ Ղազախեցի Մաթոսը շեքը դեմ է արել թեժացած վառարանին (իսկ յեթե տավարած է յեղել՝ անպայման բուխարիկին) և կարտոֆիլը լցրած կեծացած մոխրի մեջ, շուտ-շուտ փայտով բզբզում է, քաղցած է, շատ քաղցած։ Նա անհամբեր սպասում է կարտոֆիլի խորովելուն։ Իսկ գյոկչեցի Հակոն յերևի հարցնում է՝ «Աղե, թանապուրը չեփա՞վ, մի տաք-տաք փորս քաշեմ»։ Իսկ դրսում բուքն է վոռնում քաղցած շնագայլի նման այնքան չարագուշակ։ Յեվ բուքը հեռվից ինչ վոր ձայներ է բերում, դոփյուն, զենքի շրխկոց ու զարմանակալ շշուկներ...

«Ղափ, ղափ, ղափ» ճարճատում է սառած ձյունը։ Սառցալուսով ինչ վոր ստվերներ են յերևում։ Ինչ վոր ահավոր բան կա խորհրդավոր այդ շշուկների ու ձայների մեջ։ Ապա գիշերային լռությունը ճեղքում է խոպոտ ու հուժկու հրամանը—«Ոն անդր հառաջ»։ Լսվում է խառնիխուռն «ուռաներ» ու վայրիվերո հրաձգության ձայներ։

Բլուրների յետևից դուրս են թափվում խմբապետ Մարտիրոսի խմբերն ու կրակելով վրա տալիս զորանոցներին։ Կարմիր պահակախումբը, փոքրաթիվ հետախույզներն ու ժամապահները իսկույն չոքում են պատերի տակ ու արագ-արագ կրակում։ Ղազախեցի Մաթոսի առաջից մի ակնթարթում անհայտանում է կրակից նոր հանած

[1] Նառ — զինվորական մեծ թախտ։

«փուլ-փուլ» կարտոֆիլները, վեր է թռչում ու բղավում.

— Աղա Ծուտիկ, Աբաս, ինչ շոր հագնելու ժամանակ ա, տվեք, յես դրանց...—Յերեք հրացաններ պատուհանից վորոտում են միաբերան։ Կազարմային մոտենալ ցանկացող խումբը շշկլված ցրվում է։ Մեկը վոտքից բռնեց ու նորից ձյունի վրա։

— Ը՛ը, յես քո ճակատի մեռոնը... դե կեր։—Յեվ Ծուտիկը կարաբինը ուղղում է պատի տակից վազող մաուզերիստին։

— Աղա Մաթոս, քեզ վոր սպանեն, բա կնիկդ անմարդ վո՞նց ա ապրելու,—ծիծաղով ասում է նա ու շտապ փամփուշտները դատարկում փամփուշտատուփի մեջ։

— Ինչ անդարդ, անխելք գյադա յես տո, հանաքի վախտ ես գտել, շան տղերքը գոռում են, շորներդ հագեք, մերոնք նահանջում են։—Ծուտիկը արագ-արագ կրակում է մոտեցող խմբի վրա։ Մաթոսն ու Աբասը շտապ հագնում են վոտնամաններն ու դուրս թռչում։ Ծուտիկը կուչ է գալիս թախտի հետևը, վոտնամաններն ու շինելը հագնում և մյուս պատուհանով իրեն դուրս շպրտում հենց այն ժամանակ, յերբ մի խումբ արդեն դռներով ներս է խուժում ու մթի մեջ խարխափելով առաջ գալիս։

Կազարմաների տակ քարերի ու թփերի հետև դարան մտած մի խումբ մարտիկներ մինչև լուսաբաց յետ են շպրտում հրոսակախմբերի հարձակումները և մեր զորքերին հնարավորություն են տալիս անվնաս նահանջել և ամրանալ Յերևանի ծայրամասերի այգիներում։

ՀԵՌԱԳՐԱԼԱՐԵՐԸ ՂԺԺՈՒՄ ԵՆ

Հարյուրավոր գծերով մտքի արագությամբ վազում է ելեկտրական տոկը և հրահանգներ տանում իր հետ։

— Կենտրոն, կենտրոն, կենտրո՞նն է, տվեք ընկեր Կ-ի կաբինետը, զբաղվա՞ծ է. թո՛ւհ, սատանան տանի։—Յեվ զանգահեր մարդը գցում է հեռախոսը սեղանին, ջղայնացած քայլում սենյակում։ Հեռախոսը զնգահարում է։ Փողը վերցնում է ու լսում անհանգիստ։

— Ի՞նչ, Մարտիրոսի խմբերը, ել վոր կողմից, յերբե՞ք... Ինչ եմ հրամայո՞ւմ. հրամայում եմ մինչև վերջին շունչը պաշտպանել քաղաքը, մինչև Հեղկոմի կարգադրությունը. բոլոր միջոցները ձեռք առնել, վորպեսզի թշնամու արտիլերիան չկարողանա ռմբակոծել կենտրոնական հիմնարկները և քաղաքի խաղաղ ազգաբնակչությանը։

Կարում է, միացնում ռազմամթերքների պահեստն ու հրամայում.

— Տապ ամբողջ ռազմամթերքը բարձել, մի քիչ փամփուշտ հասցնել ֆրոնտ, իսկ մնացածը պատրաստ պահել, մինչև մեր կարգադրությունը, կատարել անմիջապես, լսո՞ւմ ես...

Ապա նորից է զանգահարում։

— Ցենտրալնայա, տվեք ընկեր Կ-ի կաբինետը, պատրա՞ստ է, շնորհակալություն։ Հեղկո՞մ, ընկ. Կ-ն է՞, հա՞, բարև ձեզ, ֆրոնտից ինչ տեղեկությո՞ւն, հենց դրա մասին եմ զեկուցում ձեզ։ Ինչպես գիտեք, քաղաքը յերեք կողմից շրջապատված է, մաուզերիստները, կուլակները կարողացել են նոր խմբեր ուղարկել Քանաքեռի, Բաշ-Գյառնիի և Յեղվարդի կողմերից։ Մեր ուժե՞րը, մեր ուժերը չնչին են, Ղազախից վոչ մի լուր, բոլորովին կտրված ենք՝ չնչին զորքով ու չնչին պաշարով։ Ի՞նչ, հա լավ, յես հենց այդպես էլ կարծում եյի, կարգադրված է ռազմամթերքները բարձել ֆուրգոնները, դուք ուրեմն խոսեք Յեկա և քաղաքից դուրս յեկեք տասնհինգ րոպեյից վոչ ուշ, ցը...

ՊԵՏՔ Է ՓՐԿԵԼ ԳԼԽԱՎՈՐ ՇՏԱԲԸ...

Մասնիճաղանչ ամբոխը լցվում եր այգիները և սվինամարտի բռնվում կարմիրների հետ։ Զանգվի մյուս ափից թշնամու ջոկերը զառիվայրերով գլորվում եյին ցած ու աշխատում եյին գետն անցնել։ Մեր ուժերը ջլատված են ու չնչին։ Քաղաքի անհագին շրջապատի բոլոր կետերում զորք ունենալու հնարավորություն չկա։ Սակայն պետք է կռվել մինչև արյան վերջին կաթիլը՝ Յեկան ու Հեղկոմը ազատելու համար։ Այդ հրամանը թեև հենց նոր հասավ առաջավոր շարքերին, սակայն դեռ վաղուց յուրաքանչյուր մարտիկի հրամայել եր հեղափոխական բնազդը։ Կոնդի մոտ թշնամու վաշտերից մեկը պատռում է շղթան ու խուժում քաղաք։

—Տղերք, դեպի աջ, շուտ։—Յեվ Աբասը, Ծուռիկն ու Մանուկը, անբաժան այդ յեռյակը յոթ-ութ հոգու հետ միացած, հրացանների կեսերից բռնած վազում են առաջ ու պատերի տակից խաչաձև կրակով հեղեղի առաջն առնում։ Դիրքն ամուր է, դեռ կարելի յե դիմադրել...

Մանուկի ձախ թևի դաստակը տաքացել է, հրացանը դողում է ձեռքին։

— Անտերը կպա՜վ։—Նա նայեց, շինելի թևը արագ կարմրեց։ «Զախն ա, վոչինչ», մրթմրթաց նա ու շարունակեց կրակել աղբի կողքով վազող մաուզերիստների վրա։

* * *

Ռազմամթերքի կարավանը արագությամբ դուրս յեկավ քաղաքից ու կարմիր վաշտերի պաշտպանության տակ շարժվեց Ղամարլվի ուղղությամբ։

Յերկու ամեհի զրահապատներ յեկան ու փնչալով կանգ առան կայարանում։

Կանգնած ավտոմոբիլներից մի խումբ մարդիկ դուրս յեկան ու բարձրացան գնացքը։ Զրահապատները հպարտությամբ իրենց պողպատե պատերի մեջ առան այնքան թանգագին բեռն ու սուլելով, քամու արագությամբ սլացան լայնարձակ ու ձյունածածկ դաշտով։

Հեղափոխության գլխավոր շտաբը փրկված եր...

ՎՏԱՆԳԱՎՈՐ ՀՅՈՒՐԵՐ

Մի խումբ ձիավորներ ձորակի նեղլիկ ճանապարհով իջնում են ցած։

Նրանց գլուխները փաթաթված է բաշլղներով, որոնց ծայրերից, բարակ մազերի վրա փետրվարյան ցրտաշունչ քամին հեռու լեռներից բերել ու շարել է ձյան հատիկները, որոնք այժմ թույլ պապղում են ձմեռային արևի նվաղած ճառագայթների տակ։

Ձիավորները լուռ են։ Իսկ նրանց ղեկավարը, խոժոռադեմ մի մարդ, անընդհատ մտրակում է ձին ու չերբեմն էլ կանգնեցնում ու հեռադիտակով առաջի բլուրներին է նայում։

Ձիավորները բոլորն էլ սպառազինված են հրացաններով, ատրճանակներով և մանավանդ մաուզերներով։ Մի քանիսի կարճ բուխարա փափախները, գլխներին տաճկական ձևով փաթաթած բաշլղներն ու ուսերից աջ ու ձախ գցած փամփշտակալները ինչ որ հայդուկային տեսք են տալիս նրանց։

Խումբը մագլցեց մի բլուրով և դուրս եկավ Վ. գյուղի վրա։ Խմբապետը ձիու գլուխը թեքեց գյուղի միակ երկհարկանի քարաշեն տան կողմը։ Բակից դուրս թռան երկու հաստավիզ ու բրդոտ շներ և սկսեցին կատաղած պըտտել ձիերի շուրջը։ Տնից դուրս եկավ մի հարս, նայեց տարականների կողմն ու գլուխը կախ գցեց։

— Զաքոն տանն է, խրոխտ ձայնով հարցրեց պետն ու վավաշոտ հայացքով սկսեց զննել կնոջը։ Հարսը գլխի թեթև շարժումով դրական պատասխան տվեց ու ներս մտավ։ Մի քանի վայրկյան անց պատշգամբ դուրս եկավ

վզիը հաստ, հաստլիկ բեխերով ու խիտ հոնքերով մի մարդ և ուրախությունից գրեթե բղավեց.

— Բարով, բարով, պարոն Սմբատ, տնաշեն, ցրտից մեռաք, ձիերից իջեք, իմ աչքի վրա տեղ ունեք,— ապա դառնալով գոմի կողմը, բղավեց.—տղա Համփո, Համփո, ալ մեջքդ կոտրի, դուրս արի ես ձիերը տեղավորի։

Հյուրերը շարվեցին վառարանի շուրջը։ Տանտերը, գյուղի կոմիսարն էր։ Նա նորբերին ուղարկեց գյուղի ներքին թաղը և հեռու էլ պատվիրեց.

—Միլեցի հետ կգնաս Ավագենց Արտաշեսիցը մի լավ ոչխար կբերես, ասա՝ գյուղի ղոնաղներին կերակրելու հերթը քոնն ա, պարոն Սմբաթի համար ենք տանում, տեՏս, չաղ լինի հա։

— Ես գիշեր մեզ տեղավորելու չես, տղերքին լավ պահիր, տես ինչ իգիթներ են, մեծ մասը իմ նախկին գըլդի ասատիճանավորներից են, կարծեմ միայն սրանք են ագամվել չեկայի ճանկերից,—ասաց խմբապետն ու մաուզերը վզից հանելով, սկսեց բաշլղի կապն արձակել։

— Հենց հիմի ամբողջ գյուղը պիտի հավաքես,—ավելացրեց նա։

Կես ժամ չանցած՝ ոչխարի խորոված տաք-տաք ներս բերին։

Պինդ կշտանալուց ու Ղամարլվի գինին վրան խմելուց հետո վեր կացան, զենքերը կապեցին ու շտապեցին դեպի կիսավեր դպրոցի դահլիճը։

«ՁԵԶ ԵՄ ԴԻՄՈՒՄ, ՀԱՅԿԱԶՅԱՆ ԿՈՐՅՈՒՆՆԵՐ»

— Ինչ է, չլինի դուք չենք գալիս ձեր գյուղի մարդկանց, բայլշևիկների միտինգներին հո կովերի չեղջյուրներից էլ դրոշակներ կկախեք։ Սրիկա շան վորդիք, այս բոպեյիս ամբողջ գյուղը պետք է հավաքվի,—վորոտաց խըմբապետ Սմբատն ու սկսեց գայրացած շրջել դահլիճում։

կոմիսարը միլիցիոներների հետ անհասուն շրջեց ու բոլորին քարշ տվեց դեպի գյուղ։

—Յեղբայր, թողեք մեր սև օրին ընկած մնանք, ինչ եք չարչարում։—Ու գանգատվելով, արթարթալով, հյուծված մարդիկ վոտները թուլ-թուլ քարշ եյին տալիս ձյունածածկ սառույցի վրայով, մտնում դահլիճ ու կուչ գալիս մի անկյունում։

Սակայն միքանիսի վոգևորությանը չափ չկար։

Վերջին ամիսներում տերտերը գյուղամիջում առաջին անգամ յերևաց և այն էլ շատ զվարթ տրամադրությամբ։ Նա նույնիսկ խմբապետի գալու լուրն առնելուն պես շտապել եր մոտակից հանել իր տալաս փարաջան, վորը տասնյոթ տարում տասնյոթ անգամ եր հագել, այն էլ միայն ամեն զատկի շաբաթ օրերին։

Խմբապետ Սմբատը կանգնեց մի աթոռի վրա, զարթ ձայնով նախ սկսեց նախատել «անարյուն հայրենակիցներին», վոր «2-3 յերկար ու ձիգ ամիսներ տարել են կարմիր բռնապետության լուծը», ապա հայտարարեց, վոր իրենց «քաջարի ջոկատների առջև բոլշևիկները մինչև Նախիջևան մի շնչում են ճղել,—մնում է միքիչ հուպ տալ, Պարսկաստանի սահմանում բոլորին դեմ անել Արաքսին ու հայրենիքի դավաճաններին, ազգուրաց սրիկաններին խեղդել Արաքսի ջրերում, վանքի շների վրա չպիտի փչացնել մեր բարեբար Անգլիայի տված ռազմամթերքը»։

Ապա հետզհետե վոգևորվելով, նա սկսեց յեռ գալ, ձեռների շարժումներով նկարագրել հայկազյան կորյունների սխրագործությունները և չկարողանալով հավասարակշռությունը պահպանել աթոռի վրա, ցատկեց ցած ու գոռեց վորքան հնարավոր է ազդու դարձնել իր ճառը.

— Յեղբայրնե՛ր, հայրենակիցնե՛ր, կարմիր շների դեմ պիտի զենք վերցնի և՛ մանուկը, և՛ զառամյալ ծերունին։ Այդ շները տապորներով մորթոտում են ձեր զավակներին ... Նրանց...

— Վո՜ւշ... տապորնե՞ր...—լսվեց մի քանի տեղերից սարսափահար ձայներ։

— Այո՛, տապորով են մորթում՝ այդ գազանները, մոր գրկից խլում են յերեխան և սվինի ծայրը հանում, պղծում են ամեն տեսակի սրբություն, անգամ մայր աթոռը, լուսավորչական յեկեղեցին, մեր դարավոր թշնամուց՝ թյուրքից դրանք հարյուր անգամ վատ են, յեղբայրներ, զենքի դիմեք ձեր արատավորված պատիվը տաք արյունով լվանալու։

Մի քանիսը ծափահարեցին և առաջ յեկան ու զենք ցուցակագրեցին և խնդրեցին։ Մնացածին տեղն ու տեղը պարտադրեցին տներում ինչքան զենք ունեն, շտապ վերցնել և ներկայանալ։

Մարդիկ դժկամությամբ իրար նայեցին ու վեր կացան։ Նրանց աչքերից հուսահատությունն եր կաթում և տուն եյին գնում մոլոր քայլերով։ Ո՞ւր գնալ, ո՞ւմ դեմ, ինչի՞ համար։ Ախր չէ՞ վոր մերոնք են, հայ են, «հայ-հայի դե՞մ»․ Իսկ կոմիսարի դեմ, վոչինչ, կարելի չէ, խմբապետ Սմատին էլ կարելի չէ պատին դեմ անել, հենց արնախում աչքերից է յերևում, թե ինչ պատուղ է, բայց դե արի Մակոսենց Ածուլի վրա կրակիր, ախր վո՞նց սպանես են մարդուն, վոր կոմիսարի, տերտերի, զորքաների ձեռից հողը խլեց, քեզ տվավ։ Յեվ վերջապես քաղցած, ակլոր, ձմեռվա բուք բորանին ո՞ւր գնանք։

— Չե, Արմենակ, մորթեն էլ, գնացողը չեմ։

— Ո՞ւմ մորթեն, ադա, բա չես դրանց պես ողամարդ եմ։ Կաց տեսնենք ում մերը ողա կբերի։

Յեվ մի խումբ ողերք վորոշեցին ֆրոնտ չգնալ։

ԽԱՉԻ ՈՐՀՆՈՒԹՅԱՄԲ...ՃՈՃՎՈՒՄ ԵՐ ՄԱՐՄԻՆԸ...

Լույսը դեռ չբացված սկսնալ ավին։ Մի քանիսը, տաք հագնված, բաշլղներով փաթաթված ու սեփական ձիերի

վրա նստած՝ դուրս յեկան: Քաղաքացիական հագուստը հագին, մի կապտած ձի հեծած՝ գյուղամեջ յեկավ նաև Տեր Ամբակումը: Նա մաուզերը հանած՝ անվերջ անեծքներ էր թափում.

— Իժի ծնունդները էլ են քնելու, իսկույն հավաքեցեք էդ անիծյալներին:

Պլետը նորից շրխկաց և սկսեց գործել իր հին սովորության համաձայն: 2—3 ամսվա դադարից հետո գյուղամիջում նորից մարդիկ պառկեցրին և մտրակը սկսեց շրփալ ոդում ու կապտացնել առանց այդ էլ ցրտից կապտած մարմինները: Հարևան անից մեկին քարշ են տալիս: Արմենակն է: Մայրը պատռված շորերով ու հերարձակ կախվել է մաուզերիստների թևերից:

— Հիվանդ ա, անաստվածներ, ո՞ւր եք տանում, հիվանդ ա:—Մեկը կնոջ մազերից բռնեց, քարշ տվեց գցեց մարագն ու դուռը կողպեց վրան:

— Սրիկան բոլշևիկ է, պարոն Սմբատ, Հեղկոմի անդամ է յեղել, այժմ էլ հրաժարվում է ֆրոնտ գնալ:

— Մենակ յես չեմ, սաղ գյուղը չի ուզում, մաուզերի ուժով եք տանում, ո՞ւմ դեմ են ձեզ տանում, այ խեղճ հարևաններ,—ո՞ւմ դեմ... բայց...—հրացանի կոթով մեկը ծանր մի հարված հասցրեց նրա գլխին, բառը կիսատ մնաց կոկորդում և փռվեց կոշտ սառույցների վրա:

— Իսկույն կախաղան բարձրացնել այդ շանը,—վորոտաց խմբապետը:

Սարսուռը պատեց բոլորին: Իրար իմաց տվին: Նեղլիկ քուչաներից վարանոտ ու վախկոտ քայլերով սկսեցին հրապարակը հավաքվել թագնված գյուղացիները: Դպրոցի պատշգամբի գերաններից մեկից կախ է ընկել թոկն ու տարուբերվում է ոդում:

— Շո՛ւտ, մենք ժամանակ չունենք,—հրամայեց խմբապետ Սմբատը: Չորս հոգի կալանավորին սվինների ա-

ռաջ արած բերին: Նա բարձրացավ աթոռին, բռնեց Թոկի ողակից ու դողդոջյուն, բայց ամուր շեշտերով ասաց.

— Կկախվեմ, բայց մերոնց վրա գյուղը չեմ գցի: Ընկերներ, — ձայնը բարձրացրեց նա,— դո՛ւք էլ չկրակեք, մերոնք են, մեր...—փրփրած կոմիսարը ձեռքով պինդ բռնեց նրա բերանը, ողակը շտապ անցկացրեց վիզն ու աթոռը հրեց:



Սապնած թոկը սարսափելի ուժով սղմեց կոմունարի վիզը, նրա աչքերը մեծացան, դուրս ընկան բներից և սկսեց խռխռալ մորթած կենդանու նման:

Տերտերն աչքերը յերկնքին գցեց ու սկսեց աղոթք

մրմնջալ։ Ապա ձեռքով օդում խաչակնքեց և ուղղվելով ձիու վրա, իսկական զինվորականի դիրք ընդունեց։

Մարդիկ շուռ եկան, երեսները ծածկեցին ու խորը հոգոց հանեցին։ Կանայք վախից գալված ձայնով հեծկլտացին ու գոգնոցով աչքերը սրբեցին։ Ախր իրենց հարևան, էն տարվա նախրչի Արմենակին են խեղդում, էն սիրուն ծիծաղկոտ տղին...

Խմբապետ Սմբատը հրամայեց ձի նստել և ամբոխին հայտարարեց.

— Մենք այսպես ենք վարվում նրանց հետ, ովքեր ֆրոնտ չեն գնա կարմիր շների դեմ. դե, շարժվեցեք տուն...

Ֆրոնտ մեկնող խումբը շրջապատված ձիավոր-մաուզերիստներով, գլխիկոր դուրս եկավ գյուղից։ Գյուղամիջում ճոճվում էր կոմունարի մարմինն, իսկ մոտակա մարագի մեջ մեկն աղիողորմ բառաչում էր և կրծում ու չանգռտում կողպած մարագի դուռը...

ԶՐԱՀԱՊԱՏ ԱՎՏՈՆ

—Ահա և մեր բրոնևիկը,—հրճվանքից բացականչեց խմբապետ Սմբատն ու մտրակով ցույց տվեց ներքև, շոսեյով դանդաղ առաջ եկող սև կետը։ Ձիերը քայլերն արագացրին։ Խմբից մի քանիսը ետ ընկան։

— Առաջ,—հրամայեց խմբապետը։

— Պարոն Սմբատ, արեխս ծակ ա, ձյուն ա լցվում, ոտներս կասես իմը չեն, փետացել են,—մղկտաց գյուղացին։

— Ոչ մի խոսք, սատկող ընկերոջդ հրամանը լավ ես կատարում չէ՞, ֆրոնտը եկանք, ղալբությունդ բռնե՞ց, —բղավեց խմբապետն ու նրան ձիու առաջն արավ։

Ապա թաշկինակը թափ տվեց օդում և մաուզերից երկու անգամ կրակեց։ Ավտոմոբիլը կանգ առավ։ Դաշ-

տում։ Կանգ առավ նաև նրան ուղեկցող վաշտը, որը նույնպես կազմված էր մերկանդամ ու աղքատ մարդկանցից, որոնց զենքի ուժով էին ֆրոնտ բերել։

Հասան։ Մի քանիսը վոգևորվեցին խմբերի միացումից։ Հայրենասիրական և «ազատության» նվիրված ճառեր էլ ասացին։

«Զրահապատ» կոչվածը բեռնատար չախչախ մի ավտոմոբիլ էր, որի վրա տեղավորել էին երկու փոքրիկ լեռնային թնդանոթներ ու մի գնդացիր։

Խումբը մտնում էր Ավշար գյուղը։ Այստեղ էր ամրացած կամավոր կոմունարներից կազմված ատրյադի ջոկերից մեկը։

Ճիշտն ասած մեր դրությունն ուղղակի հուսահատական էր։ Մեր ունեցած-չունեցածը կոմունարների տաբյաղն էր և 3-րդ գունդը։ Երեք կողմից հարձակվող թըշնամու առաջ մենք հետզհետե նահանջել ու ամրացել էինք Դավալվի մոտերքը։ Ես սկսում եմ այնտեղից, երբ մենք արդեն հակահարձակման առաջին քայլերն էինք անում։ Իսկ թե ինչ դժվարին պայմաններում էինք գործի գնում մեր ռազմական պլանները, ինչ քաղց, մերկություն ու տանջանքներ ենք տեսել այդ կռվում՝ դրա մասին վկայում են Դավալվի քարքարոտ բլուրներն ու Ղամարլվի արգավանդ հարթությունները։

ՊԱՏԱՆԻՆ ՊԱՏՎԻ ԲՌՆԵՑ

Կարմիրներից մի խումբ հետախույզներ, Ծուռիկի հետ միասին, դուրս եկան գյուղից և հենց կամուրջը անցան թե չէ՝ այգիներում տեսան երկու պատանիներ ձյունի մեջ պառկած։ Մեկը հրացանի կոթով բզեց.

— Վերկացեք, էյ, ո՞վքեր եք։—Պատանիները սարսափահար վեր թռան և ճանաչելով կարմիրներին, ուրա-

պնդվեցին: Մեկը՝ Ղամարլվեցի Արտաշը կանգնեց, աշխուժությամբ զինվորական պատիվ բռնեց ու զեկուցեց.

— Ընկեր պետ, մենք Ղամարլվից ենք. կոմյերիտականներ ենք, դաշնակները գյուղը թալանեցին և ավերեցին մեր խրճիթները: «Մենք կոմսոմոլիստներ ենք, ուզում եյին մեզ խփել՝ փախանք չոլերն ընկանք: Ցես փնտռում եմ յեղբորս՝ Կարապետ Պետրոսյանին, կարծեմ ձեզ մոտ պետք է լինի»: — Հետախույզները նայում են «չեստ» տված փոքրիկներին ու ծիծաղում:

— Կարոն մեր գնդումն է, տո, — բացականչեց Բաշգյառնեցի Վիրաբը: — Ադա, դու Կարոյի ախպերն ե՞ս, տո այ լակոտ, եսքան փոքր կոմսոմոլ կլի՞: — Ցեվ Վիրաբը հաղթ բազուկներով Արտաշին բարձրացրեց, օդում ճոճեց ու դրրեց գետին:

— Չէ բալամ, թե մեր բոլոր կոմսոմոլներն են այդպես, մեր բանը բուրդ ա, — կատակեց նա: Ծուտիկը խեթխեթ նայեց նրան: Կոմսոմոլները վիրավորվեցին:

— Դե վոր մենք պետք չենք, դուք էլ կոմունիստ եք ու պոլկի հետախույզ, դե ասեք տեսնեմ ձեր դիմացը ինչ կա, — համարձակ վրա տվեց Արտաշի ընկերը՝ բարակ Սամսոնը:

— Ինչ կա վոր, բոլ ձյուն կա:

— Ե՞դ ա ձեր հունարը, — ծիծաղեցին նրանք: Ապա Արտաշը լուրջ տեսք՝ ընդունելով, զեկուցեց. — Դիմացի դաշտով գալիս է թշնամու զրահապատ ավտոմոբիլը և մի յերկու հարյուրի չափ զորք, նրանք մտան փոսը, մի քիչ հետո կերևան:

— Այ ղոչաղ կոմսոմոլներ: Դե եստեղ կուչ յեկեք, մենք բլուրը բարձրանանք, տեսնենք ինչ կա: — Նրանք շղթա տվին ու կուզեկուզ սկսեցին բարձրանալ բլրի լանջերով:

ՎՈՐՍՆ ԻՐ ՎՈՏՔՈՎ

«Ջրահապատը» քավթառ կովի նման չերերալով առաջ է գալիս: Ծուտիկը չի համբերում, մատը բնազդաբար դեպի հրացանի շնիկն է գնում:

— Վիրաբ, կրակենք:

— Չէ տո, չի կարելի, պետք է շուտ վերադառնալ և հայտնել շտաբին:

— Այշի, եստեղ ինչ կա, վոր շտաբին էլ իմաց տանք, գլուխս կտամ, թե վոր սրանց հարյուրից իննսուն հինգը կռվել ա ուզում, այշի, մի գալպ ավեք տենամ, — ասաց Արամն ու հրացանի փակը բանալով, ավտոմոբիլին նշան բռնեց: Վեց հրացաններ վորոտացին միաբերան: Գնդակները ավտոմոբիլի առաջ ձյունի փոքրիկ ամպիկներ բարձրացրին:

— Շղթա կապէլ, պա՛ռկ-ի-ր, հրացաններից, գնդացիրներից, թնդանոթներից, կրա՜կ, — բղավեց խմբապետ Սմբատն ու մաուզերը հանելով, մտավ ավտոմոբիլի հետևը: Թնդանոթաձիգներից մեկը փնթփնթալով անցավ թնդանոթի հետևն ու արկը[1] վերցրեց, վոր լցնի, մեկ էլ մի գնդակ շրխկալով կպավ թնդանոթի փողին: Թնդանոթաձիգը նետեց արկն ու ցած թռավ: Մի քանիսը հրացանները ձգեցին ու փախան: Առաջացավ ընդհանուր խուճապ: Լայնարձակ դաշտով դեպի մոտակա գյուղերը, դեպի աներըն են վազում մարդիկ, վորոնք կռվելու վոչ մի միտք չունեն: Խմբապետ Սմբատը ձին մտրակեց ու փրփուրը բերանին, սրա նրա վրա կրակելով, ձին քշեց փախչող զորքի հետևից և մի րոպեյում նրանց անցավ: Ծուտիկը ծիծաղից փորը բռնել էր ու ընկել քարի տակ:

— Ադա, վո՞նց են ճղում է, աննամուս շան տղերքը, Վիրաբ, մի կրակի տեսնենք, գյուլեն խմբապետ Սմբատի հետևից կհասնի՞:

[1] Արկ—ռումբ:

— Սարսաղ, կարծում ես եդ քո հունարն ա հա՞։ Բալամ, նրանք մեզանից ղոչաղ տղերք են, համա հաշիվ շատ կա,—դե հիմի ինչ անենք, թե դուրս գանք, կտեսնեն վոր քիչ ենք, անիրավները յետ կգան։

Մինչ նրանք վիճում էին «զրահապատը» մի կերպ գրավելու մասին, մեկ էլ լսվեց դղրդոց, ավտոմոբիլը ծուխ արձակեց ու շարժվեց առաջ։

— Ադա, վորն իրա վոտքով ա գալի։

— Բա ինչ ես կարծում, նա չէ ա հեղափոխվել, գալիս ա բոլշևիկ գրվի. արի, ղուրբան, արի։—Յեվ Վիրաբը ձեռքը մեկնեց ու սկսեց ձեռքով, վոտքով, պռոշների թրթռոցով կանչել այնպես, ինչպես նախրչին հորթին է կանչում։

Մինչ ընկերները ծիծաղում էին Վիրաբի ոգևորության վրա, մեկ էլ ավտոմոբիլից մի գլուխ բարձրացավ, ոդում մի գլխարկ սկսեց թափահարվել։ Հետախույզները վազեցին առաջ, հասան ավտոյին, բարձրացան վրան ու ամուր սղմելով շոֆերի ձեռքը, նստեցին սառը թնդանոթների վրա։

— Ո՞ւր ես քշում, ընկեր,—հարցրեց Մանուկը։

— Մերոնց մոտ, կարմիրների մոտ,—պատասխանեց նա և աչքը անկած հեռավոր բլուրներին, գործի դրեց պառաված «զրահապատի» վերջին ուժերը...։

ՍԵՎ ՈՂԱԿԻ, ՂՌՂՌԱՑՈՂ ՓՈՐԵՐԻ ՅԵՎ ՋՐՈՒ ՄՍԻ ՄԱՍԻՆ

Սև ողակը սղմվում, նեղանում էր։

Նժդեհի ու Յապոնի հրոսակախմբերն արդեն գրավել էին Դարալագյազը, ճանապարհին ամեն ինչ տակով անելով, անոգնական գյուղերը թալանելով, առաջ էին շարժվում։

Միայն մարդիկ չէին մոբիլիզացիայի յենթարկվում։ Առաջին հերթին «մոբիլիզացիայի» էին յենթարկվում հացը, անասունները, հավերը։

Ահա գյուղի լղար հոտը լանջերին, փորով յետ է տալիս ձյունն ու չորացած ծղոտները կրծում։ Այդ տարի վոչխարներն էլ էին իրենց տերերի նման քաղցած ու նիհար։ Հովիվը քարերի արանքից չորացած ծղոտ է հավաքել ու կրակ անելու փորձեր է կատարում ու անդադար շփում է ցրտից կապտած մատները։ Ահա յերկու բաշլղավորներ դուրս յեկան նրա գլխավերևը։

— Ինչո՞ւ ֆրոնտում չես։ Առաջ անցիր։—Յեվ հրացանի ուժով հովվին քշում են, հոտն էլ հետը։

Հարևան գյուղում բնակված հայդուկային խումբն այդ յերեկո վոչխարների մի մասը հոշոտում է, մնացածը մընում է վաղվա համար։

Գյուղից-գյուղ, տնից-տուն լուրեր են տարածվում բոլշևիկյան «տապորնի կամանդի» մասին։ Իզուր են շատերը թերահավատությամբ գլուխները շարժում։

— Վա՜... աչքովս եմ տեսել, վոր գյուղը մտնում են, բոլորին կոտորում են տապորներով,—ձեռն ու վոտը շարժելով գյուղամիջում պատմում է հասավոր մի գյուղացի։

Յեվ սարսափած ամբոխը ունեցած-չունեցածը բարձում է սայլերին ու քշում Նժդեհի հրոսակների ուղեկցությամբ՝ ինքն էլ չգիտի, թե ուր:

Քիչ չեն և նրանք, վորոնք «տապորնի կամանդից» ահաբեկված՝ զենք են վերցնում ու միանում հրոսակախմբերին:

Յեվ սև ոգակը անընդհատ նեղանում ու սեղմվում է: Մեր դրությունը բավական աննախանձելի յե: Մեզ յենթակա խորհրդային «հանրապետությունը» Ղամարլուն եր իր շրջակա գյուղերով: Զորքերի հիմնական ուժերը Ավշար գյուղումն են կենտրոնացած: Խմբապետ Մարտիրոսն էլ Բաշ-Գյառնից է նեղում: Սակայն թշնամուց ավելի՛ շատ մեզ նեղում է քաղցը… Որերով հացի յերես չենք տեսնում:

Մի քանիսն արդեն աչք են տնկել փամփուշտ տեղափոխող մեր միակ ձիու վրա: Զարմանալի բան: Լղար, քոսոտ և մեջքը վորդոտ այդ կենդանին, վոր հիմիկվա պայմաններում միայն զզվանք կարող եր առաջացնել, այն օրերին մեր աչքում գեղեցկանում, փափկանում եր, և թվում եր, թե հեռևի մսերը կորաձև դուրս են ընկել, իսկ մազերը հարթ են ու պսպղում են արևի տակ (թեև արև էլ չկար): Ով է իմանում, այդ ֆանտազիան հավանաբար սովից ղողացող փորից եր գալիս: Ինչ վոր է, էլ ամաչելու տեղ չեր, և մի որ էլ ասի.

— Տղերք, Ջեյրանին չպառկեցնե՞նք:—Նրանք իրար նայեցին և ուրախության փայլ նկատվեց նրանց աչքերում: Լուռ համաձայնվեցին:

Ես անգամ արդեն մեր պոլկը իսկական «տապորնի կամանդա» դարձավ: Վրա թափվեցին ու տապորներով, սրերով սկսեցին կտրատել մորթած, բայց դեռ հոգին չավանդած խեղճ կենդանուն:

— Տղերք, այնպես՝ արեք քաղդեկը չիմանա, ամոթ է:

— Ո՛ւ ո՛ւֆ, ինչ խորոված միս ունի…

— Այգա, ձին ինչո՞վ է հարամ,—ինքն իրեն համոզում է Սբբասը,—խոզն է հարամ, վոր ամեն ինչ էլ ուտում է, կերեք արխային, ամմա ինչ փափուկ միս ունի՜…

Յերկու որ էլ դրանով յոլա գնացինք:

Պիտի ասեմ, վոր գյուղացիները թեև հաց չունեյին, բայց անկեղծորեն ոգնում եյին ինչով կարող եյին: Մեկ էլ տեսար, հարևան տնից մի պառավ սրսրվելով առաջ յեկավ, փեշը բացեց ու դեմ արավ.

— Կերեք, բալեք ջան. ձեր մերը քոռանա, այ նանի ազիզ բալեք, յարաբ իմ Սհակն էլ ա ձեզ պես սոված յեղե՞լ:
—Յեվ մինչ պառավը խորոշմած յերեսով արցունքներ է հոսեցնում, մենք նրա փեշից դուրս ենք տալիս ծիրանի չիրը, չամիչը, փշատը: Ա՛յդ ունեյին և այդ էլ չեյին խնայում:

— Տերը մեռած գարունը չեկավ, մի դաշտ դուրս գայինք, խոտ արածեյինք: Թե մի կգարունքմնա՝ մեզ հաղթել չի լինի, կանաչը բո՛լ, կեր ու կավեր,—կատակում եր Վիրաբը:

— Այչի, սրտներդ լեն պահեցեք, բա դեռ վո՞նց ա
ամիսներով սոված մնում,—լրացնում եր Սբաաը:
Յեվ օրերն անցնում եյին ծանր ու տաղտկալի: Մեր
առաջավոր խմբերը յերբեմն կռվի եյին բռնվում դաշնակցական զորքերի հետ ու հանդարտ նահանջում, ամրանում
Խոր-Վիրապի մոտերքը: Վճռական գրոհի պատրաստություն եյինք տեսնում:

ՀՐԱՄԱՆԸ

— Ծուտիկ, դաշնակները Յուվայի մոտերքում պիտի լինեն, պետք է Հայկոյի հետ գնաք, անցնեք սահմանն ու ամենաճշգրիտ տեղեկություններ բերեք նրանց ուժերի մասին,— հրահանգեց գնդի հրամանատարը և չեշտակի նայեց պատանու աչքերի մեջ:

Խնդիրը ծանր եր ու շատ վտանգավոր, պատանին մի փոքր շփոթվեց, ապա սիրտ արավ ու ասաց.

— Ընկեր Բաղդասարյան, տեղը հարթ է և ձյուն, մեզ իսկույն կխփեն։—Ապա ավելի շփոթվելով՝ շարունակեց կարծես ինքն իրեն.—ասենք խփվելուց չեմ վախենում, բայց գործը կիսատ կմնա, թողեք հետախուզենք, բայց սահմանն անցնելը դժվար է։

Հրամանատարը համոզված եր, վոր պատանին միայն գործի շահը նկատի ունի, ուստի այդ համարձակ առարկությունը նրան չզայրացրեց։ Նա հանդարտ ու ամուր շեշտով ասաց.

— Այս գիշեր մենք հարձակվում ենք, ողակը մի քիչ լայնացնելու ծրագրով, մեռեք, բայց հետախուզեցեք։ Ճիշտ տեղեկություններից է կախված մեր տակտիկան, լսում ես, թեկուզ մեկն ու մեկդ սպանվելու յել լինի, պետք է հետախուզեք,—վերջացրեց հրամանատարը վճռական տոնով։

Ապա նա ընկերաբար հասկացրեց պատանուն, վոր թշնամու այժմյան դիրքը այդ շրջանում նրա ամենաամուր դիրքն է։ Այդտեղից թշնամին մեզ ուղղակի խեղդում է, մեր տեղը վատ է, տերիտորիան չափազանց փոքր։ Թշնամուն քշել այդ դիրքերից, նշանակում է նախադրյալներ ստեղծել նրան մի շնչում մինչև Յերևան քշելու համար։

Այս ծրագրին ծանոթանալով, պատանու դեմքը պայծառացավ.

— Պատրաստ եմ, ընկեր հրամանատար,—խրոխտ կանչեց նա զինվորական պատվի բռնելով և արագ շուռ յեկավ ու վճռական քայլերով դուրս գնաց շտաբից։

ԳԵՂՋԿՈՒՀԻ ՀԱՅԿՈՆ

Լուսինը կարծես կաթ է թափում ձյունածածկ դաշտերի վրա։ Սառնամանիքն ամեն ինչ ձյունի ու սառույցի

պատյանի մեջ է դրել։ Ոդը կապարի նման ծանրացել է
ու սառցի շնչով փչում է խիզախ այն եյակների վրա,
վորոնք ամայի այդ տափաստանում կուզեկուզ, ցամաքած
ջրանցքների հունով առաջ են շարժվում։ Տղան՝ մեզ ծա-
նոթ Ծուտիկը՝ հագել է մի գյուղացուց վերցրած ջրա շո-
րերը՝ պատռտված մի արխալուղ, տրեխներ, իսկ գլխին
ծայրը պատռտված մի փափախ։ Հայկոն՝ յերիտասարդ մի
կին իր գեղջկական շորերի մեջ է։ Նա թեև դեռ ջահել է, բայց
տարիների զրկանքները, հոգեմաշ ու չարքաշ կյանքը գյու-
ղի զոռբաների մոտ, մշակությունն իր կնիքն է դրել նրա
կոշտ դեմքին, այնպես վոր պատահական անցորդը կյեն-
թադրեր, վոր Ծուտիկը նրա վորդին է։

Հայկոն այդ շրջանի գյուղերից է։ Ամբապետ Մար-
տիրոսի հրոսակները թալանեցին և ապա այրեցին նրա
տունը, վորի փլատակների տակ մնաց նրա յերկու տա-
րեկան այնքան փափլիկ յերեխան...

Ինքը և ամուսինը՝ բոլշևիկ Արութը փախան կար-
միրների հետ և յերդվեցին զենքը ձեռքներին կռվել մինչև
վերջին շունչը։

Ամուսինն այժմ Դարալագյազի ֆրոնտումն է, կռվում
է Նժդեհի դեմ, իսկ ինքը մի քանի անգամ խիզախ հե-
տախուզություններ կատարելուց հետո վերջին շաբթում
արդեն հետախուզական խմբերի հետ եր աշխատում և յեր-
բեմն ել բավական պատասխանատու հանձնարարություն-
ներ եր ստանում։

Յեվ նրան միշտ ել հաջողվում եր խնդիրները հաջող
լուծել գլխավորապես այն պատճառով, վոր նրա գեղջկա-
կան անմեղ դեմքը, ցնցոտիները և վերջապես կին լինելը
թշնամու մեջ վոչ մի կասկած չեր առաջացնում դեպի
ինքը։ Ո՞ւմ մտքով կանցներ, վոր թշվառ այդ գեղջկուհու
կրծքի տակ բաբախում է անձնուրաց բոլշևիկի սիրտը...

Նրանք շատ դանդաղ են առաջ շարժվում։ Փոսում

կոտակված ձյան կեղևը ջարդվում է, և նրանք մինչև գոտկատեղը խրվում են ձյունի մեջ։

Ծուտիկն անդադար շփում է փետացած ձեռները և յերբեմն էլ կարմրած ականջները ջուխտ ձեռքով ամուր սեղմում։

— Ծուտո ջան, շատ ես մրսում,—քրոջը հատուկ քնքշանքով շշնջաց Հայկոն։ Ծուտիկն ամաչեց և աշխուժ առաջ անցավ։

— Մրսելը հեչ, դու էն ասա՝ ես գյուղում քեզ չեն ճանաչի՞,—պատասխանեց նա։

— Չէ, դժվար թե, մի պառավ խնամի ունեմ, նա յէլ սաղ ձմեռը քյուրսու տակիցը դուրս չի գալիս։

ԱՆՊԱՇՏՊԱՆ ՊՈՍՏԵՐԸ

Ձյունապատ դաշտի սպիտակ ֆոնի վրա մի մութ-գորշ գունդված է յերևում։ Ցուլան է։ Դաշնակցականների բանակատեղին։ Յերկու ուրվականները կուզեկուզ մոտենում են այգիներին ու զգուշությամբ առաջ շարժվում։

Մի բոստանչու տնակից դուրս յեկան պահակներն ու նկատելով առաջ շարժվող զույգին, ուշադրությունները սրեցին։

— Ո՞վ եք, կանգնեցեք,—հրամայեցին նրանք։ Ծուտիկն արխալուղի տակից հանեց ռումբը և քիչ էր մնում նետի, Հայկոն նրա ձեռքից բռնեց։

Նրանք խաղողի թմբերի արանքով անտարբեր շարժվում են դեպի գյուղը։

Պայթեցին մի քանի հրացաններ։ Դիմացից մի քանի պահակներ աջ ու ձախ կրակեցին ու նստեցին տեղները։ Նրանցից յերկուսը մտան չարդախն ու հրացանները ցած դրին։ Ծուտիկն ու Հայկոն բարձրացան խաղողի թումբը, ձեռքերը վեր բարձրացրին և Հայկոն իր կանացի ձայնով կանչեց.

— Ես գեղցի յենք, ցախ ենք տանում.—ու հանդարտ առաջ անցան։

Պահակները ցրվեցին ու ցրտից փետացած վոտները գետնին ամուր խփելով, մտան գյուղ՝ ամեն մեկը մի անկյունում քնելու համար։

Ինչ պոստ, ինչ բան, Ծուտիկը պարզ տեսնում է դիրքերում ընկած յերկու գնդացիրների պսպղող փողերը։

ԹՇՆԱՄՈՒ ՏԱՆ ՄԵՋ

Մտան գյուղ ու կուչ յեկան թշնամու շտաբի առաջ։

Զինվորներ, տանջված դեմքերով գյուղացիներ, դան-դատավորներ, մտնում են շտաբ ու դուրս գալիս։ Կարծես բոլորի դեմքերին էլ նկատվում է դժգոհությունը, ձանձրույթը, թշվառությունը։ Մի քանի հոգի մոտեցան ծըպտյալներին։

— Ովքե՞ր եք, ինչ եք անում այստեղ։

— Հարևան գյուղն ենք գնում, տեղ չունենք։—Ապա Հայկոն կանացի մի շատ համով խոսակցություն սկսեց զինվորների հետ։ Սկսվեց տաք վիճաբանությունը։ Հայկոն ծածկված կերպով հասկացրեց, վոր բոլշևիկները «տապորնի կոմանդա» չունեն։

— Ունենան-չունենան, դիփ մեկ ա, ինչքան էլ վոր վատ մարդիկ լինեն, մերոնք նրանց հետ կռվողը չեն, ենքան են դեզերտիր ընկնում...—ծոր տվեց մեկը։

— Ինչի՞, պարոն Մարտիրոսը լավ գործ ունի, իգիթ տղերք են,—բորբոքեց Հայկոն։

— Թա հա՛, ինչից ես խաբա՞ր, վոր թվանքը դիրքի մեջ շրխկալով վեր գցեն ու փախնեն, լա՛վ ա,—ասաց գյոկչեցի մի զինվոր։

— Ասա, շտաբում տեղեկություն ստացան, վոր բոլշևիկները Ախտայի կողմից գալում են,—շշնջաց մեկը։

Ծուտիկը շունչը պահեց և իբր թե անտարբեր սկսեց արեխի թելերը քանդել։

— Ե՛, մենք զորք շատ ունենք, ինչ եք վախենում,—ասաց նա տրեխը թափ տալով։ Նա հույս ուներ մի կերպ թշնամու ուժերի քանակն իմանալ։

Մի յերկուսը քմծիծաղ տվին։

— Ինձ կամավոր վերցրեք,—ասաց Ծուտիկը, ես էլ մի բանով կօգնեմ ձեզ,—ավելացրեց նա։

— Մի բատալիոն զորքը, են էլ էս զորքը, բան չի անի, դու էլ, քեզ պես հարյուրն էլ գա, չեկած, հա չեկած մի հաշիվ ա, բան չի դուրս գա։

— Են, դուք գիտեք, ես էլ կգնամ բարեկամություն կանեմ,—ասաց նա, տրեխը հագավ, վեր կացավ ու գյուղի խուլ փողոցներով առաջ շարժվեցին։

«ԳԵՐԻ ԸՆԿԱԾ» ԳՆԴԱՑԻՐՆԵՐԸ

Նրանց դեմքերը վառվում էր հրճվանքից. գրեթե բոլոր կարևոր գաղտնիքները—բոլշևիկների գունդը Ախտայից, զորքի քանակը, զինվորների տրամադրությունը—բոլորն իմացված էր։

Մի քանի կարևոր խնդիրներ էլ պարզելուց հետո նրանք վերադարձան չեկած տեղերով։ Ահա պահակատեղին, ահա առաջավոր դիրքերը։ Այստեղ-այնտեղ փոսեր են քանդել և աջ ու ձախ թափթփել հրացանները, փամփուշտները։ Կատարյալ անտերություն։

Մարդ չկա։ Սառնամանիքն է թագավորում դաշտերում, ով ցրտահար լինելու տրամադրություն ունի։ «Ինչ դիսցիպլին ունեն»... մտածում է Ծուտիկը և մտքում հրճվում։ Նրանք կանգնել են «մաքսիմ» գնդացիրների մոտ ու նայում են ագահությամբ, վառված աչքերով։ «Մի կերպ փախցնել», արագ անցնում է նրանց մտքով։ Յեվ առանց մի բառ ասելու ամեն մեկը լծվում է մի գնդացիրի ու քարշ են տալիս այգու նեղլիկ ու հարթ կածաններով։

Բաց դաշտ են դուրս գալիս և շնչակտուր վազում առաջ։ Մտնում են մի փոս ու փամփուշտների ժապավենը անցկացնում. արդեն պատրաստ են։ Իսկ տեղը հարթ է. քանի հարյուր սրտոտ մարտիկներ է պետք «մաքսիմի» կարկուտին դիմավորելու համար։ Սպասում են սրտատրոփ։ Մարդ չկա։ Յեվ գնդացիրների փոքրիկ անիվները թեթև աղմկով ու արագությամբ գլորվում են ձյան ամուր ու հարթ կեղևի վրայով։ Շուտ-շուտ ետ են նայում տագնապով։ Սակայն մարդ չկա ու չկա։

Լուսադեմին նրանք շնչասպառ հասան շտաբի դուռը և գնդացիրների անիվները չխկչխկացնելով մոտեցան դռանը։

Շտաբում դեռևս աշխատում են։ Մի քանիսը, վորոնք գլուխները սեղանների վրա դրած ննջում էին, պահակի սպառնական ձայնից վեր թռան։

— Տո դուք եք, բա էդ ինչ են։

— Մեր պլեններն են, մրսած են, թող ներս տանենք։

— Չնայած պահակի ընդդիմադրության, նրանք չխկչխկացնելով գնդացիրները ներս տարան ու մուտքի մոտ փողերն ուղղեցին դեպի հրամանատարի կողմը։ Քարտեզի վրա մտազբաղ կռացած մարդիկ վեր թռան, ճանաչեցին, զվարթ ծիծաղելով դիմավորեցին նրանց։

Ծուտիկն առաջ յեկավ և կարճ զեկուցեց թշնամու ուժերի ու դրության մասին։ Գնդի հրամանատարը տեղից վեր կացավ, ամուր սեղմեց նրանց ձեռքն ու հուզված համբուրեց նրանց փոքրությունից վառվող ճակատները։ Արդեն ամեն ինչ հայտնի յեր։ Գունդը հարձակվելու պատրաստություններ եր տեսնում։

ԽԱՐՈՒՅԿԻ ՄՈՏ

Փլփլած մի չարդախի տակ մեղմ ճարճատում ե գոմից նոր դուրս բերված թարմ կրճոնը։

Կրակի ցոլքը խաղում ե ծխից սևացած ոճորքի վրա և մերթ-մերթ ել ընկնում ե գորշ գրատների մեջ փաթաթված մարդկանց հոգնած դեմքերին։

Աբասը արթուն ե. նա աչքը գցել ե վառվող արքադի վերջին կտորին ու խոր մտատանջության մեջ ե ընկել։

Աչքը բոցկլտող կրակից չհեռացնելով, նա ձեռքը մեքենայորեն մեկնում ե սրահի անկյունը, մի քանի ճախ վերցնում, դնում կրակի վրա ու նորից նայում ճարճատող արքադին։ Բոցը բարձրանում ե վեր և մի պահ լուսավորում սրահի մութ անկյունները, ուր հրացանները գրկած ննջում են հոգնած մարտիկները։

Յեվ Աբասին թվում ե, թե ահա վորտեղ վոր ե Մամոն, իր սևաչյա փոքրիկ տղան պետք ե դուրս վազի ու թռչի վառվող խարույկի վրայից, այնպես, ինչպես գյուղում ձմռան յերեկոները Մանուկի յերեխաների հետ խարույկ եյին անում ու թռչում վրայից՝ Մանուկենց բակում։

Նրա հայացքը ընկավ անկյունում խաղաղ ննջող Մանուկի դեմքին։

Քամուց ու ձմռան սառնամանիքից նրա դեմքը սևացել, մի առանձին մուգ փայլ ե ստացել և այժմ այս գիշեր խարույկի լույսի տակ լույսն անդրադարձնում ե բրոնզի նման։

Ինչ վոր մի տաքություն ե անցնում Աբասի սրտով Մանուկի անմեղ դեմքին նայելիս։ Իրար հետ քանի՜-քանի՜ փորձությունների յեն յենթարկվել...

Նա հիշում ե, թե ինչպես 19 թվին դաշնակցական հորդան վրա տվեց իրենց գյուղի վրա։ Ինքը Մամոյի թեվից բռնած փախչում ե դեպի բաց դաշտը... Դաշնակները նկատում են, ահա ուր վոր ե կխփեն։ Մանուկը թռչում ե իրենց «հայաթի» պատի վրայից, գնդակների տարափի տակով վազում հասնում ե ու փրկում.

-- Աբա՛ս, յերեխան դե՛ս տուր, քեզ գցիր բաղերը։

—Յեվ մի ակնթարթում յերեխեն շալակելով, կորչում ե գետնափոր խրճիթների ու ցեխի պատերի գորշության մեջ...

Այդ որից Աբասն ու Մանուկը ախպերացել եյին։ Խորհրդայնացման յերրորդ որն եր, վոր յերկուսն ել մտան կոմբջիջի մեջ։

Ծնողների այդ մտերմությունը ավելի ամրացավ յերեխաների մտերմությամբ։

Իսկ այժմ, յերբ խարույկը ճարճատում ե, Աբասի աչքի առաջ Մամոն ու Սուրիկը, Լալան ու Նարգիզը բակը թնդացնում են ուրախ ճիչերով, յետ-յետ են գնում ու իրար հետևից վազելով, գալիս թռչում խարույկի վրայից։ Մի վայրկյան նրանց մերկ ու սևացած վոտները կախվում են ծխի ու բոցերի մեջ և կարկատած փեշերի ծայրերը սկսում են պեծ-պեծին տալ։ Իսկ սրահում Ֆաթման ու Սիրանուշը յերջանկության ժպիտը դեմքերին մայրական խանդաղատանքով նայում են փոքրիկ չարաճճիներին...

Այդ գյուղը այժմ հակառակորդի ձեռքին ե։ Աբասի կուրծքը ուռչում ե ու սիրտը բաբախում վանդակն ընկած թռչունի նման։

Նա յերբեմն վեր ե կենում, դուրս գալիս սրահից ու նայում հեռու-հեռու դաշտը, ուր սպիտակ ու համատարած հարթության վրա հազիվ նշմարվում ե գորշ մի զանգված, հեռու ու մշուշապատ։

Աբասի հոգին կտրում ու անցնում է հարթավայրերում թանձրացած գիշերվա քողը, սլանում է տերևաթափ այգիների վրայով, անցնում է գորշ պատերը և կիսախուլ յերթիկից թափանցում պապական հին տունն, ուր քուրսու տակ ննջում է իր յերիտասարդ կինը, սուրմայած արտևանունքները սիրուն դարսած իրար վրա։ Իսկ նրա բաց կրծքին, թաթիկը մոր ծոցում գրած՝ անմեղ ժպիտը դեմքին Մամոն յերազում ով գիտի վոր թռչունի վրա յե քար նետում։

Նորից կրակի մոտ. Նրան նորից է պատում մղձավանջը։ Ահա արնոտ մի թաթ ծանրանում է անմեղ քնած այդ եյակների վրա. ահա բիրտ ուժով նրանք դուրս են բերվում քուրսու տակից, դուրս են բերվում անմեղ յերազների աշխարհից, ուր ով գիտի գուրգուրում, փաղաքշում եյին իրենց համար ամենից թանգագին մարդուն՝ Աբասին...

— Սիրանո՛ւշ, հասի՜ր, մորթեցին ես անաստվածները, —աղկտում է Ցաթման, ապա լսվում է Սիրանուշի աղեկտուր ճիչը, յերեխաների վերջին հեծկլտոցը... գազանային մռնչոց... խռխռոց... ապա ձիերի դոփյուն շատ մոտիկից...

Աբասը խելակորույս վեր թռավ տեղից, հրացանը մեկնեց մոտեցող ձիավորի կողմն ու կրակելով, խելակորույս գոչեց.

— Մազերիցը բաց թող, ասում եմ, բաց թող, ջիգյարդ կխառնեմ...

Ձիավորը ճարպկությամբ թռավ ձիուց ու պառկեց։ Յերկու հաղթ բազուկներ Աբասին գրկեցին հետևից ու կաշկանդեցին նրա ձեռները։ Մանուկն եր։

Հրացանի ձայնից սրահի անկյուններից վեր թռան մի քանի հոգի ու լսվեց փակաղակների ծուլ չխկչխկոց։

— Ագա, շան տղա, հո գժվել չե՞ս, ի՞նչ ես անում, հարիֆի տղին սպանում եյիր։

— Քիչ եր մնում իշի նահատակ լինեյի տո, զամմազ թուրք,—և ուրախ ծիծաղով մի պատանի վեր կացավ գետնից և խրտնած ձիու սանձը քաշելով, մոտեցավ խարույկին։ Ծուտիկն եր։

Աբասը շշմել եր. նա դեռ լիովին չեր սթափվել, կոկորդը սղմվում եր, սիրտը խփում ուժգին։

— Ախր Մանուկ, են անմեղ աղջիկը, են անմեղ յերեխեն ինչ են արել, յես դրանց...—ու Աբասը գլուխը թեքելով ծնկներին, յերեխայի նման սկսեց արտասվել։ Մանուկը հասկացավ։ Նրա հոգին ել խռովեց, բայց ընկերոջը սկսեց խրախուսել, հորդորել, վոր ամուր կենա։

— Աբաս ջան, քիչ մնաց հա...

— Տղե՛րք, բակի իմ ռեխին մտիկ չեք անում,—առաջ յեկավ Ծուտիկը,—ախր յես գործով եմ յեկել ձեզ մոտ։

— Հա՞, հրաման կա՞, վրա յենք տալի՞,—անհամբերությամբ տեղից վեր թռավ Աբասը։

— Տո մի համբերի, վրա յենք տալի, չե-չե փլավ ա,—հեթևերդ վեր քշտի։ Բալամ հլա հաշիվ կա, հեսաբ կա,—հեղինակավոր տոնով շարունակեց Ծուտիկը,—հլա մի պետք ե մեկ ել չափենք, մեկ ել հաշվենք, նոր մկրատի ռեխը տանք։

— Ե՜... դահրա տարաք ձեր չափելովը,—կտրեց նրան Աբասը և հուսահատությամբ ձեռքը շարժեց։ Նրան դուր չեր գալիս այդ կարգ ու կանոնը, որերով, շաբաթներով հետախուզելն ու պլաններ մշակելը։ Այդ ամենի մեջ նա տեսնում եր հանցավոր դանդաղկոտություն։ Վրա տալ միանգամից կամ փշրել կամ փշրվել, ահա Աբասի ռազմական «տակտիկան»։

Ինչքան մոտենում եյին իրենց գյուղին, այնքան Աբասը անհամբեր ու դյուրագրգիռ եր դառնում։

— Վե՞րջը,—նորից հարցրեց նա ջղային շարժումով։

— Վերջը են ա, բրիգադայի հրամանատար Միխա-

ռավը հրաման ա տվել, վոր չես, դու, մեկ էլ Մանուկը...—և Ծուտիկը կարճ պատմեց իրենց տրված խնդիրը։

Արասի դեմքը փայլեց ուրախությունից, իսկ Մանուկը ցանցառ բեխերի տակից ժպտաց։

— Հենց հիմի՞։

— Հենց հիմի։

ԱՄԵՆԻՑ ՄՈՏ ՅԵՎ ԱՄԵՆԻՑ ՀԵՌՈՒ

Աղամամութին յերեք մարտիկները կուզեկուզ, քարերի ու մացառների արանքով սկսեցին առաջ շարժվել։

Պայմանական նշաններ տալով, նրանք անցան կարմիրների առաջավոր պոստերն ու կես ժամ չանցած՝ կուզեկուզ մտան այն այգիները, որտեղից մի քիչ առաջ Ծուտիկն ու Հայկոն փախցրին գնդացիրները։

Ծանոթ տնակը դատարկ էր։ Դիրքերում թափթփված հրացանները մեղմ փողփողում էին լուսնի լույսի տակ։

Անցան։ Զգուշությամբ անցնում են գյուղի ամայի փողոցներով։ Կանգ առան։ Դեմ ու դեմ յերկու խրճիթ նայում են իրար։ Արասն ու Մանուկը լուռ ու սրտատրոփ նայեցին իրար։

— Արաս, յես եմ շատ կարոտե՞լ, թե՞ դու,—ուզեց կատակով բան հասկացնել Մանուկը։ Արասը հանդիմանությամբ նայեց ընկերոջը։ «Գործի չենք յեկել», խստությամբ ասաց նա, ապա կանգ առավ. մի քանի վայրկյան կանգ առավ և ներքին հուզմունքը զսպելով, ձեռքի մի վճռական շարժում արավ ու յերեսը շուռ տվեց այնքան կարոտով իրեն նայող հայրական խրճիթից։ Կարոտը ծանր արճճի նման ճնշում էր նրա սիրտը։

Մանուկը մի ծանր հոգոց հանեց ու խեղճ-խեղճ հետևեց նրան։

Հեռացող խրճիթի մութ սրահից կարծես հարազատ-

ների շունչը գալիս, թափանցում էր նրա ներսն ու մի ախորժելի տաքություն առաջ բերում այնտեղ։

Այսքան մոտիկ և այսքան հեռու...

ՂԱԶԱԽԵՑԻ ԱԿՈՓԻ ԴԱՍԱԿԸ

— Բերել են, ախպեր, զոռով են բերել։ Քանի-քանի անգամ ուզեցել ենք ճղենք՝ չի հաջողվել, դեզերտիրին մաշկում են, քեզ հավատացնում եմ, մաշկում են։ Աչքովս եմ տեսել, ձեռը, ոտը, ականջները կտրում են, վրան խաչ են տնկում ու գյուղե գյուղ ման տալի։

— Սս՞... պառկեցեք, տղերք, կտեսնեն, համ էլ կամաց...

— Մանուկ, ճար ունեք, տեսեք, խեղդված ենք մնում։

— Աղա Արութ, մի սողալով գնա Ակոփին ու իրան Թայֆին կանչի, շուտ։

Մեկը զգուշությամբ առաջ գնաց ու մտավ մի քարաշեն տան բակ։ Քիչ անց բակից յերեք հոգի դուրս յեկան ու մոտեցան խմբին։ Լուսինը պահ մի լուսավորեց առողջ լեռնականի առնական դեմքը։

Ծուտիկը վեր թռավ տեղից ու մի քանի վայրկյան մնաց կարկամած։

«Տո սա Ակոփը չի՞։ Պարտիզանական խմբի ղեկավար Ակոփը»։

— Ակո՞փ։

Լայնաթիկունք զինվորականը, որն ըստ յերևույթին հակառակորդ ուժերի հրամանատարներից էր, կռացավ, նայեց իր անունը տվողի դեմքը, հանդիպեց այնքա՜ն ծանոթ խաժ աչքերին և մի բան մտաբերելով, լայն թևերը բացեց ու զարմացած բացականչեց.

— Աղա Համե՞ս, դու՞ ես, աղա, էստեղ ի՞նչ ես անում, վո՞ր կողմն ես,—վրա տվեց Ակոփը ու զարմացած նայեց կարճ ժամանակամիջոցում այնքան փոխված Ծուտիկին։

— Ուրեմն դո՞ւ չել ես մեզ վրա գյուլլա քցում հա՞, Ակոփ, բա Հաղարծնի ծմակում արին թափողը բալշևիկի վրա գյուլլա կգցի՞:

— Սա՜... եդ հետո կիմանաս: Դու հլա շատ ես ջահել, դու են սաս՝ սրանք դրուստ ե՞ն ասում:

— Ի՞նչը:

— Վոր ցեպը ճղում ենք անց կենանք:—Հարցրեց Ակոփը մատը դեպի բլուրները մեկնելով:

— Հա, ձեր մատդրության մասին մերոնք լավ գիտեն, ձեր ուղարկած թուղթը մերոնք ստացել են, հենց դրա համար յեկանք: Ամա, ինչ պոստ եք պահում է՞,—ծիծաղով ավելացրեց Ծուռիկը:

— Դե վոր սրանց դասակապետը զգախեցի Ակոփն ըլի, պոստերն էլ եդ կլեն. հլա դու խամ ես, դու վոր գիտենաս կովի վախտը ասածու վռները վոնց ենք խանձո՜ւմ, բա, գիտես թե ձեր հունարն ա: Բա պուլեմյոտները ծվ փեշքեշ ավեց, վոր ես գիշեր տարար:

Ծուռիկը զարմանքից քար կարեց: Բայց զարմանալու ժամանակ չկար, դավադիրների խումբն ամեն րոպե կարող եր բռնվել:

Ակոփը կարգադրեց մի քանի հոգու՝ իր ամբողջ դասակը զգուշությամբ վեր հանեն և ուղարկեն դիմացի բլուրը:

Մի քանի րոպե չանցած այգիների պատերից անցնելով, գինվորները խումբ-խումբ, կենտ-կենտ մագլցում եյին բլրի լանջերով և գիրք մտնելով բլրի հետևում, հրացաններն ուղղում գյուղի կողմը, «իրենց» բանակի կողմը: Կես ժամ չանցած Ակոփը մի քանի ընկերների հետ ներկայացավ կարմիր բրիգադայի հրամանատարին և հայտնեց, վոր իր ամբողջ վաշտով միանում է կարմիրներին:

«ՊԱՇՏՊԱՆԵՑԵՔ ԲԼՈՒՐՆԵՐԸ»...

Վճռական գրոհի խնդիրը առանձին վեճ չառաջացրեց շտաբում: Յերեք կողմից շրջապատված թշնամու վաշտերով, կարմիր բրիգադային մնում եր կամ մի վճռական գրոհով յետ շպրտել թշնամուն, գրավել շրջակա գյուղերը և հենց այդ գյուղերի աշխատավորությունից ջոկատներ կազմել և կրկնակի ուժեղանալ, կամ... ձախորդության դեպքում, յեթե Դարալագյազում գործող Նժդեհի խմբերը իջան հարավ, պետք է կոտորվել մինչև վերջին մարդը, խեղդվել Արաքսի ջրերում, կամ կյանքը վտանգի յենթարկելով, վոտք դնել հարևան այն ժողովրդի հողը, վորին այնքան թշնամացրել եյին դաշնակները:

Շտաբում գնդի հրամանատարը առաջարկեց հյուսիսում և արևմուտքում տեղավորել մի քանի պաշտպանողական խմբեր, վորոնք ամրանալով բլուրներում, պետք է դիմադրեյին լեռներից գրոհող Մարտիրոսի և Քյուրդ Ղազոյի խմբերին, մինչև վոր մեր հիմնական զորամասերը դաշտավայրում հաշիվ տեսնեյին թշնամու գլխավոր ուժերի հետ: Դիմացի գյուղը և նրա վերև ձգվող բլրաշարքը թշնամու վողջ ֆրոնտի «միջնաբերդն» եր: Այդտեղ եր թշնամու և' ռազմամթերքը, և' գծի վրա աշխատող գրահագնացքը, և' ապրանքատար գնացքը, և' հակառակորդ բանակի շտաբը:

Իսկույն կարգադրվեց 4-րդ վաշտին անաղմուկ անցնել և բռնել հյուսիս-արևմտյան բլուրները:

— Ընկերնե՛ր, լավ իմացեք, վոր ձեր շղթան պատռելու դեպքում թշնամին վրա յե ընկնելու ուղիղ մեր թիկունքից և բաց դաշտում մեզնից վոչ մեկը կենդանի չի պրծնի:

—Բլուրները պաշտպանել կյանքի գնո՛վ...—գրնգաց հրամանատարի ձայնը: —Ախտալից մերոնք սրբում են թշնամուն: Թշնամու փախուստի ճանապարհը դեպի Պարսկաստան մենք ենք բռնել: Ցեվ ահա թակարդն ընկած թշնամին իր ամ-

բողջ ուժերը շպրտում է այս ֆրոնտը, իր փախուստի ճամբեն բացելու համար: Կամ մենք կկոտրվենք և թշնամին կփախչի մեր գլխների վրայով, կամ պողպատե պարիսպ կկազմենք և թշնամին ծունկի կգա: Դա կախված է այս վճռական գրոհից, իսկ այս մարտի վախճանը կախված է նրանից, թե դուք ինչպես կդիմադրեք լանջերից հոսող հորդաներին:

— Պաշտպանեցեք բլուրները ձեր արյան գնով,—նորից վորոտաց հրամանատարը:

Վաշտը կանգնած է աստղազարդ յերկնքի տակ: Հրամանատարի հնչող ու խրոխտ ձայնը թափանցեց մինչև նրանց հոգու խորքն ու ելեկտրական տոկի նման առաջ վազեց յերակներով: Մարտիկները մի մարդու նման հանեցին գլխարկներն ու կարծես անխոս յերդվեցին անմահանալ կռվել մինչև վերջին շունչը:

— Տղերք ջան, գիտեմ քաղցած եք,—հանկարծ հուզված խոսեց հրամանատարը,—կապտյորի մոտ միայն միքիչ քիշմիշ է մնացել, առացեք ու գնացեք:—Յեվ նրա աչքերում փայլեց արցունքը... Նա հուզված և հայրական սիրով նայում էր պատառոտված շինելների մեջ վոսկրոտ, տանջված դեմքերով այդ հերոսներին, վորոնք մատներին փչելով, իրար հրելով և ուրախ կատակելով կապտյորից ստանում եյին մի շերեփ քիշմիշը և խժռելով, անճոռնի քայլվածքով, մեկը հրացանն ուսը գցած, մյուսը անփույթ քարշ տալով, իջնում ձորը՝ դիմացի բլուրը բարձրանալու համար:

«ԶԵՆՔԻ՜»...

Մինչ վաշտը կտեղավորվեր բլուրներում, թշնամու քթի տակ բուն դրած մեզ ծանոթ խմբից յերեք հոգի կուզեկուզ գյուղ մտան:

Յերկհարկանի քարաշեն շենքի պատի լանջով ձգվում է հեռախոսի լարը:

— Ուսերիս բարձրացիր,—շշնջաց Մանուկն ու գլուխը պատին դեմ արավ: Պատանին ճարպկությամբ թռավ նրա մեջքին, գրպանից հանեց դանակն ու մի քանի րոպե չարչարվելուց հետո հազիվ կտրեց լարը:

— Արջի ճուտ, շուտ պրծիր է, մեջքս կոտրեցիր,
—տնքաց Մանուկն ու սրտնեղած ընկերի դանդաղկոտու-
թյունից, պատի ճեղքից ներս գցեց Վասակին, վորը վեր-
ջին ժամանակները դաշնակների շտաբում տելեֆոնիստ եր:
Իսկ ինքն ու Ծուտիկը հրացանների փողերը պատի ճեղ-
քից ներս մեկնեցին՝ ընկերոջը վտանգ սպառնալու դեպ-
քում պաշտպանելու համար:

Վասակը Ակոփի վաշտից եր և շտաբի յուրաքանչյուր ծակ ու ծուկին լավ ծանոթ եր: Նա կատվի նման փորսող տալով մոտեցավ պատշգամբին, դունչը մեկնեց պատուհանից ներս և հենց այն է՝ ձեռը մեկնում եր հեռախոսի ապարատին՝ պատի տակից ննջող պահակը վեր թռավ տեղից ու բղավեց.

— Կանգնի՛ր: —Հենց այդ ժամանակ յերկու հրացան
պայթեց և պահակը հրամանը բերանումը՝ փռվեց գետին:
Խլրտումն ընկավ շտաբը: Վասակը մի ակնթարթում կար-
ծես խլեց հեռախոսը և ընդհարվելով իր ընկերների հրա-
ցանների փողերի հետ՝ դուրս պրծավ պատի ճեղքից:
—Ծղիր, մի շնչում հասցրու, Վասակ,—շշնջաց Մանուկն
ու հրացանը լցրեց:

Օֆիցերներ, պահակներ, զինվորներ իսկույն լցրին
բակը: Հրամանների տարափ եր, վոր տեղում եր փրփրած
խմբապետը:

Մի քանիսը մոտեցան դարբասին:

— Ադա կրակիր, համա հրամայողներին տուր, ջոջե-
րը նրանք են:

Կիսամերկ դուրս թռավ կապիտանը, վերի հարկի
պատշգամբից բարակ ձայնով «զենքի՛» գոչեց ու կողքից
բռնելով, փռվեց գետնին:

Փավեց նաև փրփրած խմբապետը։ Մեկի մերկ ուսերին գցած շինելի վրա ինչ վոր վոսկի թելեր եյին շողշողում լուսնի տակ։

— Եդ էլ ա աֆիցեր, յես դրա...—և Մանուկը նշան դրեց ու վոտը քաշեց։ Շինելը քամու հետ դեն շպրտվեց և մի մերկ մարմին փավեց գետնին։

— Ընը՞... յես քու նանը,—սիրտը պնդեց Ծուռիկն ու մեկ էլ կրակեց։ Այս բոլորը կատարվեց մի քանի վայրկյանում։ Զինվորները չիմանալով վորտեղից է գալիս գնդակը, իրար խառնվեցին և չնայած վորտեղից վորտեղ լույս ընկած մի վաշտապետի հրամաններին, դռներով ու պատուհաններով թափվեցին շարքը։

— Դե ճղի, մեր տղա,—ասաց Մանուկն ու պատերի վրայից թռչկոտելով, բակից բակ անցնելով, մի շնչում հասան բլրում թառած խմբին։ Հենց նոր տեղ էր հասել նաև Վասակն ու դատարկ հեռախոսի փողը ականջին դրած հրամաններ էր տալիս։ «Աջ թևը փոխադրեցեք յերեք գունդ, թշնամին փախչում է, կոնծի պո՞լկ—մարշ, կրակը սաստկացնել գրահագնացքից, հոբիցային թնդանոթներից համազարկ տալ» և փողակը խփելով վոտքին, դառնությամբ գոչեց.

— Հայ տերդ մեռնի, մի եղնեյիր, ինչ կեղներ, սար թվանք ունենք, քամհինգ ջյուտ սալդաթ, հիսուն էլ բարութը ռեշնած պատռոն, դե արի կռվի։ Հայ քու տերը չմեռնի Յակուլի տարյադ. մեր միայն «ճոքիցի» ձենից սաղ Դոմբասը դմդմբում էր։ Մորեխի պես վրա կտայինք, մյունն ինչ գալաթ է երել...

— Դե, պապոնցդ ոդայում չես, նաղլի ժամանակ չի, շուտ Ասքանազին ու Մանուկին հետդ վերցրու, գնա գիծը միացրու,—կարգադրեց Ակոփը, Վասակին մի կողմ քաշեց, հրահանգներ տվեց ու հետախույզներ ուղարկեց գյուղ, թշնամու տրամադրությունը իմանալու համար։

ՀԵՌԱԽՈՍԱԳԻՐ ԽՄԲԱՊԵՏ ՊԱՐՈՆ ՄԱՐՏԻՐՈՍԻՆ

Վասակը գիտեր, թե վորտեղից է անցնում հեռախոսի գիծը։ Նա առաջ անցավ, վոստվոստելով հասավ մոտիկ ձորակը, զգուշությամբ շոշափեց քարերի արանքներն ու լարը գտավ։ Ապարատը պատրաստ էր։

Զանգահարեց. փողը դրեց ականջին ու սրտատրոփ ականջ դրեց. «Ալլո»—լսվեց պատասխանը։

— Ո՞վ է, հերթապահը, ընդունեցեք շտաբից հեռախոսագիր, պատրաստ եք, լավ, ընդունեցեք... «Խմբապետ պարոն Մարտիրոսին, շտաբի վորոշման համաձայն վերջին հարձակումը հետաձգվում է 24 ժամով, այո, այո, հետաձգվում է քսանյեվչորս ժամով, վերջակետ: Սպասեցեք նոր կարգադրության, միջակետ, ուշադրություն զորքերի հանգստին, վերջակետ, հակառակորդը մի կերպ կարկատում է իր ջլատված ուժերը, ստորակետ. նրա կողմից հարձակում չի սպասվում, վերջակետ:

Ֆրոնտի Հրամանատար՝ Քրմոյան։

«   » մարտի, 1921 թիվ։ Հանձնեց Վասակ Սիմոնյանը, ով ընդունեց, Մուկուչ Ազիզյա՞ն, ադա Մուկուչ, դու յե՞ս, տո, ինչ եք անում բա, յերբ եք վրա տալի հ՞ը, չի՞գես, ողուլ, հավ-մավ ճոթռեք դ՞ը. հա՞, բոլ խմեն դ՞ը... թամբրգ հարբած էն... այ ողուլ, իշու դրախտն...—Նրա խոսքը կիսատ մնաց, հանկարծ ներքևում մի բան փայլատակեց և դղրդաց ահռելի ուժով։ Գետինը ցնցվեց և վառոդի ծանր հոտը պատեց շրջակայքը։

Յերկու հոգի սատանաների նման կուզեկուզ բարձրացան բլուրը։

Մանուկը լուսնի լույսով ճանաչեց Արասի դեմքը։ Հետո պարզվեց, վոր նա կամուրջը պայթեցրել էր՝ հակառակորդի գրահապատի հարձակումը կանխելու նպատակով։

Սարալանջերին, վերին գյուղերում դարանած թշնամուն հեռախոսագրով քնացնելուց հետո, վաշտը մի սուր-

հանդակի միջոցով շտաբին տեղեկացրեց այդ բոլորի մասին՝ չմոռանալով հայտնել շտաբին, որ հակառակորդի ամբողջ զորքը ոտքի յե կանգնած և արդեն առաջապահ ջոկերը շոշափուկների նման ձգվում են դեպի բլուրները:

Բացվում է ջինջ և պայծառ մի առավոտ: Արևելքը շառագունում է, մարվում են վերջին աստղերը: Հեռվում հնչեց փողը և ողում բարձրացող հրթիռը մոտալուտ մարտն ազդարարեց:

Պղնձյա որկեստրը ցնցող մի մարշ նվագեց: Յերակներում արյունն արագացրեց իր վազքը: Յերեք հայրուր հոգուց կազմված փոքրիկ զորամասը շղթաներ տվեց ու մարտական պատրաստակամությամբ բլրի լանջերով սկսեց իջնել դաշտ: Վերադարձավ նաև հյուսիս ուղարկված վաշտը, որովհետև Վասակի հեռախոսագիրը ժամանակավորապես ապահովել եր թիկունքը: Վերին բլուրներում միքանի պահակային ջոկեր մնացին:

Մանուկն ել մնաց բլուրներում: Նա տենդով բռնվածի նման շուռ ու մուռ եր գալիս դիրքում ու աչքը չեր հեռացնում դաշտում տարածված գյուղի ծայրի մի գորշ հողակույտից, որի հետևում պատսպարված է իր հայկական խրճիթն այնքան թանգագին բնակիչներով: Բավական է մոլորված մի ռումբ, և խարխլած խրճիթն իր փլատակների տակ կթողնի այնքան թանգագին եյակներին: Յեվ Մանուկը մռնչում է, ուզում է առաջ նետվել դեպի գյուղը, բայց բլուրները պետք է պաշտպանել: Այդպես է հրամայել շտաբը:

ԱՆՈՂՈՐՄ ԳՆԴԱԿԸ

Մարտում ամենից սարսափելին հուսահատ հարձակումն է:

Զարդել թշնամուն այնքան կարճ ժամանակում, որ հյուսիսում գտնվող նրա զորամասերը ոգնության չհասնեն, այս եր խնդիրը:

Իսկ յեթե հասան․․․

Իզուր չէ, որ բատալյոնի հրամանատարը սևնժույգը
հեծած՝ մեկ հայտնվում է առաջին շարքերում, հրամաններ
տալիս, մի ապահով անկյունից հեռադիտակով անհանգիստ
նայում դեպի հյուսիս՝ լեռներին:

Մեր դրությունը լավ չեր: Թշնամին գնդացիրները
հանեց տանիքներն ու սկսեց արճճի կարկուտ տեղալ դաշ-
տում և բլրի լանջերում կուզեկուզ առաջ շարժվող կար-
միր շղթայի վրա: Այգիների թմբերը, պատերը, տուները,
գյուղի ծայրին թափած աղբակույտերը պատրաստի դիր-
քեր եյին թշնամու համար: Յեվ այդ դիրքերից տեղում եր
գնդացիրների տարափը...

Բոլորից առաջ վազող ջոկը կարծես ազատ է կրակից:
Մի քանի քայլ ես և նրանք իրենց կգցեն այգիներն ու
կամրանան: Նկատեցին:

— Տրա-տրա-տրա-տրա-տրա... Մոտիկ այգու ծառի
տակից սկսեց աշխատել Մաքսիմ գնդացիրը: Խիզախ ջոկի
չորս կողմը փոշու ամպիկներ բարձրացան: Առաջ վազող
մարտիկներից յերեքն ընկան:

— Պառկիր,—հրամայեց ջոկապետ Վիրաբն ու ընկավ
բերընքսիվայր: Պառկեցին առվի սառույցների վրա:

Ինչ ել որ լինի պետք է այգիներին հասնել, ամրա-
նալ և թշնամուն հնարավորություն չտալ դաշտի ու բլուր-
ների վրա կրակելու: Բայց գլուխ բարձրացնել չի լինի,
գնդացիրը քրքրում է առվի պռունգները:

Ծուտիկը փորսող տալով մոտեցավ Վիրաբին ու փըս-
փսաց. «Թող մի քանի հոգով առաջ վազենք»:

— Կփխեն,—կարճ պատասխանեց Վիրաբը:

— Մինչև ես պլիմոտը չխլենք, մերոնք չեն կարող ա-
ռաջ շարժվել:

— Տերը մեռածը մենակ յերեք պուկ կհնձի,—սասաց
ձևկն ու գլուխն զգուշությամբ վեր բարձրացրեց:

— Իսկույն կխփեն, գլուխներդ չբարձրացնեք, — կարգադրեց Ջոկապետը և հրամայեց յերկու անգամ համազարկ տալ այգիների կողմը: Կրակեցին: Վոչինչ չոգնեց:

— Արաս, մի վրա տանք, — փսփսաց Ծուտիկը: Արասի աչքերը փայլատակեցին: Հայրուր քայլի վրա յեր այն տունն, ուր իր հարազատներն եյին: Արդյոք կենդանի՞ յեն, թե՞... Արասի արյունը գլուխը տվեց:

— Աննամուսնե՛ր, լաչակ ա ձեր գլխինը, — բղավեց նա ընկերների վրա ու փոսից դուրս նետվեց: Ծուտիկը հետևեց նրան:

Հետևից հինգ հրացան սկսեցին աշխուժությամբ գործել՝ խիզախ մարտիկներին փրկելու համար: Սակայն սրանք խփվելուց խուսափելու համար վազում եյին կեռ ու մեռ և ընկնում եյին մերթ գնդակների տակ: Դիմացի այգուց նորից սկսեց գործել գնդացիրը: Յերկու կրակի տակ ընկան: Գնդակները վզվզում են աջ ու ձախ և ձյունի փոքրիկ ամպիկներ բարձրացնում նրանց շուրջը: Քսան քայլ ևս և նրանք կընկնեն այգիների մեջ:

— Վայ ձեր նամուսը... — հայհոյեց Արասն ու ընկավ: Հրացանը մի քանի քայլ հեռու թռավ նրանից: Պատանին առանց շփոթվելու վայրկենապես շալակեց նրան ու քարշ տալով, շնչասպառ հազիվ գցեց 4—5 քայլ հեռու գտնվող քարակույտի տակ: Այստեղ մի քիչ ապահով եր: Գնդացիրը դաշտում մեկիկ-մեկիկ նոսրացնում եր առաջ յեկող շարքերը...

ԱՐԾԱԹՅԱ ԾԽԱԽՈՏԱՏՈՒՓԸ

Ծուտիկը տենդոտ արագությամբ հանեց իր շորերը, կտավե կեղտոտ շապիկը պատառոտեց և վիրավորի գոտին արձակելով, սկսեց կապել նրա պատռված փորը: Բայց իզուր: Կապի տակից աղիքները կախվեցին ու թաղվեցին սառը ձյունի մեջ: Վիրավորի դեմքի մկանները կծկվեցին,

յերեսը ցավից ծռմռվեց, ապա գերբնական ճիգ թափելով, հենվեց ձախ ձեռքի վրա, աջով գրպանից հանեց արծաթյա ծխախոտատուփն ու Ծուտիկին մեկնելով, շշնջաց...

— Ագլոգ ախ-պեր...ը... հիշատակ, — ապա գլուխը բարձրացնելով, խամրած աչքերով նայեց դաշտին ու շշնջաց. «Մերոնք հաղթում են»:

— Հա, հա, պինդ կաց, Արաս ջան, մենք հաղթեցինք, ես ու նրանց էլ կպատենք, — ասաց Ծուտիկը մատը մեկնելով դեպի այգիները, վորի հետևում գտնվում եյին Արասի Թաթման, Մամոն ու Լալան: Արասի աչքերի մեջ արցունքը փայլեց: Արդյոք հրճվում եր նա մոտալուտ հաղթանակի հավատով, թե՞ արտասվում եր հարազատներին դեռ չտեսած մեռնելու համար, Ծուտիկը չհասկացավ: Նա վիրավորին մեջքի վրա պառկեցրեց, հուզմունքից դողալով բարձրացրեց կախված աղիքների ծայրն ու սկսեց զգուշությամբ դարսել պատռվածքի մեջ, վորտեղից տաք գոլորշին խփում եր նրա յերեսին, իսկ արյունը պատռվածքի պռունգներից ծլլում եր ցած, ծծվում սպիտակ ձյունի մեջ, կամ լճանում փորի խոռոչում: Արասը ձեռի մի շարժումով կարգադրեց թողնել և հազիվ մի քանի վանկ ասաց.

— Փա-խի... փախ... Մամոն կպաչես... — և տուփը մեկ էլ մեկնեց: Ծուտիկը բռնեց մեկնած ձեռքը, տուփը առավ և խորին կսկիծով չոքեց մեռնողի առաջ ու վերջին անգամ նայեց նրա խավարող աչքերի մեջ... Նրա թուխ դեմքին մի հանգստություն իջավ և քիչ անց արյունը դադարեց հոսել...:

Ուռաների ձայներն ու ձիաների դոփյունը սթափեցրին պատանուն: Նա գլուխը բարձրացրեց և տեսավ այգիների կողմից դեպի դաշտ արշավող հեծելազորը:

ԱՐՃՃԵ ԿԱՐԿՈՒՏԸ ԹԻԿՈՒՆՔԻՑ

Աջ թևում գործող Ղազախեցի Ակոփի վաշտի վերջին մարդիկ շտապով անցնում եյին բլուրը: «Նահանջում ե՞ն»,

տարափելի միտքը շամփրեց մահվան ողակի մեջ ընկած պատանու ուղեղը։ Նա պառկեց սպանվածի կողքին և գլուխը կոխեց նրա տակը։ Արշավող ձիերի սմբակներից սառույցի ու ձյան կտորները նրա մեջքին, գլխին խփվեցին։ Փոթորիկն անցնելուն պես նա գլուխը բարձրացրեց և տեսավ դաշտում իրար հետևից գլորվող ձիավորներին։ Դիմացի բլրից կարմիրների գնդացիրները կրակ եյին թափում արշավող հեծելազորի վրա։ Անտեր մնացած մի ձի խրտնած գալիս է։ Ծուտիկն իսկույն բարձրացավ տեղից, մի վայրկյանով ճանկեց ձիու քարշ յեկող սանձը, թռավ մեջքին ու մի ակնթարթում դուրս յեկավ այգիների մեջ։ Հաջորդ վայրկյանին նա արդեն կուզեկուզ առաջ եր վազում

դեպի այնքան ավերմունք գործող դաշնակցական գնդացիրը։ Ահա նա՝ Աբասի դահիճը՝ գնդացիրի հետևն անցած բաց ե թողնում լենտը-լենտի հետևից։ Մոտը մարդ չկա։ Ծուտիկը չոքեց ու նշան բռնեց ատրճանակով։ Թնդանոթների ու գնդացիրների վորոտի մեջ նրա ատրճանակի ձայնը ինքն էլ չլսեց։ Գնդացրորդը յետ թեքվեց և պառկեց կողքի վրա, իսկ գնդացիրի փողը կախ ընկավ։

— Ը՜, յես քու... —մռնչաց պատանին, վազեց, գնդացիրի թիկունքն անցավ ու 600 փամփուշտանոց մի ժապավեն անցկացնելով, սկսեց կարկուտը՝ արշավող հեծելազորի հետևից։ Ձիերն իրար խառնվեցին, ծառս-ծառս յեղան։ Շատերը բաց դաշտով քամու նման առաջ նետվեցին խելակորույս և Մաքսիմի գնդակներից շամփրվելով, խորտակվեցին հենց վազքի ժամանակ։

Վոչ վոք չիմացավ, թե ով ե խփում թիկունքից։ Հակառակորդ գումարտակապետի գլխում վայրկենապես մի միտք ծագեց, — շրջապատված ենք, անձնատուր լինել։ Իսկույն բարձրացավ սպիտակ դրոշակը և զինվորները ցած թռչելով ձիերից, թափեցին զենքերը։

Ձիավորների վրա տեղացող տարափը վայրկենապես դադարեց։ Բլուրից առաջ յեկան կարմիր ջոկերն ու ամբողջ հեծյալ գումարտակը գերի տարան։ Ծուտիկն ազատ շունչ քաշեց, հրճվանքից սկսեց թռչկոտել ու անզգուշությամբ բղավել, գոռգոռալ, ուրախության ճիչեր արձակել։ (Հիշենք, վոր նա դեռ 14—15 տարեկան «յերեխա յեր)։ Հետևից խոսակցության ձայներ լսելով, նա յետ նայեց և տեսավ՝ հակառակորդի մի ջոկ թփերի արանքով առաջ ե շարժվում։

Գնդացիրի փողը յետ դարձնելու ժամանակ չեղավ։ Նա պառկեց թմբի հետևն ու սկսեց կրակել ատրճանակից։

Հանկարծ նրա աչքերը հողով լցվեց. մի գնդակ խփեց հենց ուղիղ քթի առաջի ձյան տակից բացված հողակույտին։ Նա շշմած յետ ընկավ, պառկեց ձյունի վրա և փր-կության վոչ մի յելք չգտնելով, յերեսը թաղեց ձյունի մեջ ու շշմած սպասեց գնդակի հարվածին։ Հանկարծ կողքին հինգ հրացան միանգամից պայթեց ու մի ձեռ զգուշությամբ բարձրացնելով նրա գլուխը, սկսեց շոշափել ճակատը, վիզը, կուրծքը և ապա լսվեց մի ծանոթ ձայն.

— Աղա, հո չի՞ կպել։

Վիրաբն եր։ Նրա ջոկը փոսում կուչ եր յեկել և հե-

Ծելագորն անցնելուն պես վազել էր դեպի այգիներն ու կռվի բռնվել Ծուտիկի վրա հարձակվող ջոկի հետ։

Խիզախ ջոկը այգու պատերի տակով սկսեց առաջ շարժվել դեպի գյուղը։ Գյուղից թշնամու զորամասերը արագությամբ դեպի այգիներն եյին շտապում։

ԴԵՊԻ ՄԱՀՎԱՆ ԳԻՐԿԸ

Ոչ նրանց և ոչ էլ մեզ համար հայտնի չէր, թե Ակոփի վաշտը ինչո՞ւ յետ փախավ։

— Շան վորդին մեզ լավ խաբեց,— ասում էր Վիրաբն ու կրակում մոտեցող զորքերի վրա։ Ջոկը կտրվելով կարմիր զորամասերից, սկսեց որհասական պայքարը շատացող թշնամու դեմ։ Գնդակահարված բարակ վոստերը ծառերի ճյուղերից թափվում եյին դարանակալած մարտիկների վրա։ Խաղողի թաղված վոստերից շատերը բացվում, ջլատվում եյին գնդակների զարկերից։ Այգում կարծես խոզերը թմբերում «քանդ են արել»։ Ձյունի տակից այստեղ-այնտեղ հողը կարծես պայթում, դուրս է թռչում և սևացնում ձյունի յերեսը։

Վերջին փամփուշտներն են։ Շուտ ոգնության ոչ մի հույս չկա։

— Տղերք, սվինները պատրաստեցեք, մենք եժան մեռնողը չենք,— հրահանգեց Վիրաբն ու վերջին փամփուշտով մեկին գլորելով, սվինամերկ առաջ վազեց։ Հինգ հոգի բարձրագոչ ուռաներով հետևեցին նրան։

Ջոկը նետվեց դեպի մահվան գիրկը…

Դիմացի դաշնակցական խումբը համազարկ տվեց։ Մեղրեցի Ստեփանը փորից բռնեց ու նստեց ձյան վրա։

— Հառա՜ջ,— բղավեց Վիրաբն ու զարմացավ, յերբ տեսավ, վոր դաշնակցական ահագին վաշտը խառնիճաղանճ ու ու խելակորույս յետ է փախչում։

— Հառա՜ջ,— լսվեց մոտիկից և դեմ ու դեմ թմբի վրա

ՎԵՐՋՈՒՄ ՅԵՐԵՎԱՑ ԿԱՐՄԻՐ ՀԵԾԵԼԱԶՈՐԸ

հայտնվեց ղազախեցի Ակոփն իր վիթխարի հասակով։ Նրա հետևից մի վաշտ կարմիր-բանակայիններ լավայի պես թափվեցին գյուղը։ Այդ տեսնելով, դիմացի բլուրների քարերի արանքից վեր բարձրացան կարմիր շղթաներն ու վորոտընդոստ ուռաներով վազեցին դեպի գյուղը։ Վերջում յերևաց կարմիր կավալերիան, վորի ձիերի մեծ մասը քիչ առաջ դաշնակներից եր խլվել։

Վերջում պարզվեց, վոր Ակոփը իր վաշտով պտտվել է բլուրների հետևից, դուրս յեկել գյուղի մյուս կողմից և ջարդելով ձախ թևի պահակային ջոկը, մտել գյուղ։

ԹՆԴԱՆՈԹՆԵՐԻ ՓՈՂԵՐԸ ՀԵՏ ԴԱՐՁԱՆ

Թշնամուն այժմ խփում են մի կողմից Ակոփի վաշտը, մի կողմից հիմնական զորամասերը, յերրորդ կողմը Արաքս գետն է, իսկ գյուղի ներքի միակ փախչելու կողմը ընկած են ընդարձակ ճահճուտները։

Մի քանի հոգի մագլցեցին կտուրները, տիրացան գնդացիրներին ու նրանց փողերը ցած ուղղելով, սկսեցին հնձել դաշտ դուրս յեկած թշնամու առաջին շարքերը։

Գյուղի տակին մի փոսում տեղավորված եր թշնամու հրետանին, բաղկացած 3 լեռնային թնդանոթներից։ Թընդանոթաձիգները հենց վերջին «զալպի» եյին պատրաստվում, յերբ նրանց գլխավերևը հայտնվեց Ակոփը։

Դիրք մտնելով թնդանոթների տակ, յերկու հոգի հրացանները ուղղեցին սրա կողմը։

— Աղա, Տիգրա՜ն...—ձայն տվեց Ակոփն ու թաշկինակը շարժեց։ Իսկույն հրացանների փողերը յետ քաշվեցին, լսվեց ուրախ հռհռոց և լցրած թնդանոթների փողերը դանդաղությամբ ծռվեցին դեպի ձախ, անիվները տեղահան արին և այժմ թնդանոթներն ուղղված են դեպի նահանջող վաշտերը։

Ակոփը ժպտաց, գոհունակությամբ խորը շունչ քաշեց և բարձր ու ծանր կանչեց.

— Նշանացո՛ւյց 45, փողա՛կ... 0,86, թնդանոթո՛վ, կրա՛կ։—Յերեք թնդանոթները վորոտացին միաբերան։ Հեռվում նահանջող թշնամու առաջին շարքերում ձյունն ու քարը յերկինք թռան և զորքը՝ մեջը գայլ ընկած հոտի նման՝ ցրվեց ու սկսեց խուճապի մատնված հետ ու առաջ ծփալ...

ՋՐԱՀԱՊԱՏԸ ՀԱՐՎԱԾՈՒՄ Է

Վերևում լսվեց գուդոկի աղեկտուր ձայնը, ապա խուլ դղրդյուն և մի քանի րոպե չանցած՝ զրահագնացքը մոխրագույն վիշապի նման փնչալով, առաջ յեկավ, ապա քանդված կամուրջին դեմ առնելով, հուսահատ զայրույթով ծուխ արձակեց ռնչերից և սկսեց թնդանոթային և գնդացիրային կրակը գրավված գյուղի վրա։

Թշնամու նահանջող զորքերը սիրտ առան, պառկեցին հողերի սահմանների ու թմբերի հետևն ու սկսեցին հուսահատ պաշտպանվել։ Նրանց հետևում ճահիճն եր՝ թաց գերեզմանի նման, իսկ դիմացից գրոհում են թվով քիչ, բայց խիզախ ու համարձակ կոմունիստական ատրյադները։

Միակ հույսը զրահագնացքն է, նա յել կանգ է առել կես ճանապարհին։

(Հեյ գիտի Աբաս, վո՞նց մեկ ել չհիշեմ Աբասին, նա, վոր լուսադեմին թշնամու պահակների քթի տակ յերկաթուղու կամուրջը օդը հանեց, այժմ ալյանդակված մարմնով ընկած է թփի տակ, ձյունի վրա ու կիսաբաց խավարած աչքերը բևեռել է յերկնքի ջինջ կապույտին։

Իսկ մի կին, հինգ տարեկան յերեխայի ձեռքը բռնած, գնդակների տարափի տակ վազվզում է դիրքերում, գյուղամիջում, մոտենում է զինվորներին, նայում է նրանց դեմքերին, ապա վոչ մի տեղ փնտրածը չգտնելով, վազում

և հետ դեպի ձյունածածկ դաշտը, դեպի այգիներն, ուր այստեղ-այնտեղ ընկած են օրվա զոհերը: Սարսափով հետ է գցում սպանվածի յերեսին ընկած թևը, շուռ ու մուռ է տալիս փայտացած մարմինները ու ամբողջ մարմնով դողալով, նայում է մանկան, որի աչքերի մեջ սարսափն է քարացել:

Նա մանուկի աչքերի վառվող ածուխների մեջ կարդում է քարացած ճիչը, աղեկտուր հարցը՝ «Նա չի՞»: Փաթմայի սիրտը կտրտվում է մանկան այդ հայացքից և նա խուսափում է նրա յերեսին նայելուց)...

«ԾԵՐ ՎԻՇԱՊԸ» ԹԱԿԱՐԴՈՒՄ

Մեր առաջավոր ջոկերի գրոհից զրահապատը յետ փախավ: Հետո հասկացանք, որ զրահապատը փախցնելով, սխալ ենք կատարել: Այժմ զրահապատը բավական հեռվից է կրակում և ահագին ավերմունքներ է անում գյուղում: Մեր կատաղությանը չափ չկա, կռիվը յերկարում է, հյուծում բանակած թշնամին թնդանոթների ձայնից այժմ ամեն ինչ հասկացել է: Րոպե առ րոպե սպասում ենք մեր ճակատագրին: Իսկ զրահապատը դեռ շարունակում է ռմբակոծել և կասեցնել մեր հարձակումը: Յեվ մինչ մենք խճճվելու առաջ նետվեցինք՝ հեռվից լսվեց վաշտապետ Ակոփի հրամանը. «Նահանջե՛լ, քայլ առ քայլ»:

Կարծես մարտիկների գլխին սառը ջուր լցրին: Մի քանի հրացաններ թուլացող ձեռքերում իջան և դեմ առան ձյունոտ գետնին:

Վաշտը հարցական կերած՝ նայեց հրամանատարին ու պատասխանի սպասեց:

Ակոփը խորամանկորեն ժպտաց և քաղցր ասաց.

— Տղերք, նեղանալու վախտը չի, տակտիկա յե, պարյադկով նահանջեցեք, գնդի հրամանատարն է կարգադրել:

Յեվ յերբ նահանջեցին ու հասան գյուղին, զրահագնացքը սիրտ առած առաջ յեկավ մինչև քանդված կամուրջը:

Ակոփը աչքով արավ Ծուտիկին և խորամանկորեն ժպտաց թավ բեխերի տակ:

— Թող գա, դրա շինողի կռներին մատաղ, թող գա, մեզ շատ ա պետք:—Ապա ձայնը բարձրացնելով, կարգադրեց՝ «Կրակել հատ ու կենտ»:

Մոռացա ասել, որ մեր յեղած-չեղած յերկու թնդանոթները գյուղի հետևի բլրի մյուս յերեսում քողարկվել, կուչ եկին յեկել և համարյա չեյին մասնակցում կռվին, որովհետև մի քանի արկ եր մնացել, որը պահում եյինք վճռական րոպեների համար:

Արտիլերիայի հրամանատար Մարկոսյանի վոտքերը գետնին չեյին կպչում ուրախությունից: Նա արդեն այցելել եր մեր կողմն անցած հակառակորդի թնդանոթաձիգներին, խրախուսել եր և այժմ գնդի հրամանատարի մոտ հեռադիտակով նայում եր մոտեցող զրահագնացքին և ուրախությունից ձեռքերը շփում: Իսկ յերբ զրահագնացքը կանգ առավ վերջին կետում և սկսեց ռմբակոծել մեր դիրքերը, նա դիմեց գնդի հրամանատարին.

— Ժամանակը չէ՞, հրամայե՛մ։

— Այո։

— Իսկ դուք վստահում եք դրանց հմտությանը։

Մարկոսյանը տատանվեց։

— Կարող են դրանք անվրեպ կրակողներ լինել, բայց իմկատի ունեցեք, յեթե առաջին յերկու հարվածից գիծը չքանդեցիք, բրանեվիկը մեր ձեռքից դուրս կպրծնի։

— Ուրեմն։

— Այդ գործը հանձնարարել միայն և միայն Կլիչին։

— Ընկեր հրամանատար, նրա մոտ ընդամենը չորս սնարյադ է մնացել, բացի դրանից Կլիչը շատ է հեռու, կարող է վրիպել։

Գնդապետը խստությամբ նկատեց.

— Առաջին անգամը չի, վոր Կլիչը մեզ փրկում է վճռական մոմենտին, չորս փամփուշտը նրան բավական է։ Ապա դառնալով կողքին կանգնած յերիտասարդ դասակապետին՝

— Շտապ անցիր գյուղից կազմված կամավորական ջոկատի մոտ և հրամայիր կրակը դադարեցնեն։

— Մարկոսով, հեռախոսով ճիշտ հրահանգներ տուր Կլիչին, յեթե Կլիչը վրիպեց, ուրեմն չափը սխալ եք տվել և պատասխանատուն դուք եք։

Մարկոսյանը թռավ մոտակա կտուրը, նայեց գրահապատին, գործիքով ու աչքով մի քանի չափեր վերցրեց, ցած թռավ, վերցրեց հեռախոսի փողն ու սկսեց զանգահարել։

— Ալլո՛, ալլո՛, արտիլերիա, Կլի՞չ, բարև ախպեր, ինչ եք անում, պարապությունից սատկեցի՞ք, դե լցրու։ Պատրաստ ե՞. նշանացույց 105, փողակ 125, պատրաստ է, գիտե՞ս ուր ես կրակում, հասկացա՞ր, դե, յերկրորդ անգամ յեթե գիծը չփչացրիր, բրանեվիկը թռա՛վ, նո՛ւ, կրակիր, ախպեր...

Հսկա «հոբիցը» վորոտաց ծա՛նր ու խո՛ւլ։ Գետինը ցնցվեց ուժգին։ Մարկոսյանը նկատեց, թե ինչպես ռումբը գյուղի գլխից գժժալով, պատռեց օդը, ապա մեկ ակնթարթ հետո գրահապատից 50 քայլ դենը ծխի խոշոր սյուն բարձրացավ։

Գնդի հրամանատարը հեռադիտակով տեսավ, թե ինչպես գծի ջայլից մի մեծ կտոր վեր թռավ ու ընկավ գծի վրա։

«Կեցցե՛ս... դավոլնո... մալադեց» բառերը հեռախոսի արերով հասան Կլիչի ականջին և նա գոհ ժպտալով ձրգվեց ձյունի վրա ու սկսեց ատամով ջարդել գյուղից ստացած ծիրանաչրի կորիզները։

ՍՊԱՌՆԱՑՈՂ ՌՈՒՄԲԵՐԸ

Շտաբի հրահանգով ջոկերը ուսաներով առաջ նետվեցին։ Զրահագնացքը աղեկտուր սուլելով, սկսեց յետ փախչել և հասնելով քանդված գծին, սկսեց բոլոր թնդանոթներից ու գնդացիրներից կրակ թափել մոտեցող մարտիկների գլխին։

Սվինամերկ խմբերը կտորվելով, հասան բրանեվիկին, շրջապատեցին և գոռում-գոչումով սկսեցին սվինները խոթել թնդանոթների ծակերը։ «Պողպատե բերդը» անվնաս եր մնում ու շարունակում եր պաշտպանվել հուսահատությամբ։ Դա մեզ թանգ եր նստում։ Գծի տակ գնդացիրը չորս հոգու մի վայրկյանում պառկեցրեց։ ՝Մարտիկները կատաղած խփում եյին վիշապի պողպատե կողերին և զայրույթից ծառս լինում... փրփրում, կարծես ատամներով ուզում եյին խորտակել պողպատե պատերը, վորի ներսում մի խումբ մարդիկ ապահով նստած՝ կրակում են հա կրակում բոլոր տեսակի զենքերից։

Մեկ ել մի պատանի, յերկար շինելի փեշերը հավաքելով, թռավ վերև, մտավ մի քարի հետև և ահագին մի ռումբ բարձրացնելով, վորոտաց.

— Հետ փախեք, բրանեվիկը պայթեցնում եմ։— Այդ տեսնելով, չորս հոգի ռումբերը հանած վազեցին նրա մոտ և վեր բարձրացան մահաբեր գնդերը։ Կրակը վայրկենապես դադարեց։

— Անձնատուր, թե չէ կրուշենի կանենք։— Պաշտպանվելն այլևս իզուր էր։

Զրահապատի դիտարանից կարճ փափախավոր մի օֆիցեր գլուխը դուրս հանեց, ապա հարցական նայեց ներս՝ ընկերներին և ապա զրահապատի աշտարակի վրա բարձրացավ սպիտակ դրոշակն ու խեղդված մի ձայն կանչեց.

— Անձնատուր ենք լինում...



«ԲԱԲԱ, ՎԵՐ ԿԱՑ»...

— Նանա, այ բաբան,— ճչաց երեխան և մոր ձեռքը բաց թողնելով, վազեց դեպի քարակույտը։ Փաթմայի սիրտը սկսեց թպրտալ։ Շնչասպառ նայեց քարակույտի կողմը և իրոք տեսավ իր ձեռքով գործած մոխրագույն չուխան ու սև մոթալ փափախը։

«Ինչու՞ է պառկած», այս հարցը կայծակի նման շանթահարեց երիտասարդ կնոջ ուղեղը։ Նա դողալով մոտեցավ քարակույտին, կռացավ ցած ու կարծես երազում շշնջաց «Ասադ»... ապա կարմրած ձյունը կայծակի նման խփեց նրա աչքին։ Նա ձեռքը գցեց, ամուր բռնեց իր մազերից, լայնացած բիբերով նայեց ամուսնու ձյունին կպած բեխերին, կապտած դեմքին, ճիչ արձակեց ու սկսեց ձեռ-

քերով ձյուների մեջ բան փորնել... ապա հիստերիկ շարժումով սառույցից մի քար պոկեց և վորքան ուժ ուներ վազեց դեպի գյուղ։ Նա շնչասպառ կանգ առավ ռազմամթերքի սայլակների մոտ, մոլորված հայացքով նայեց չորս կողմը, արագ մոտեցավ պատի տակ նստած տելեֆոնիստներին, քարը ամուր ու ջղայնորեն խփեց պատին, մի ակնթարթում գետնից ճանկեց հրացաններից մեկն ու վազեց ճահիճի կողմն, ուր թշնամին որհասական կռիվ էր մղում գրոհող կարմիր ջոկատների դեմ...

Իսկ սևաչյա պատանին թափ է տալիս հոր փայտացած ձեռքն ու սարսափը դեմքին՝ լացակումած կանչում.

— Դե վեր կաց է, մթնեց, նանեն գնաց... բաբա։

Հեռվում վորոտները լռեցին, հաղթական ուռաների խառնիխուռն ձայներ լսվեցին, ապա ամեն ինչ լռեց ամայի դաշտերում...

—

Լուսադեմին սանիտարները վորբացած մանուկին գտան սառած հոր դիակի վրա... սաթի պես փայլուն արտևանքները ընդմիշտ խփած...

Նա գանգուր գլուխը դրել էր հոր կրծքին, քնել և փայտացել փետրվարյան պարզ երկնքի դաժան ցրտի տակ...

ԲԱՄԲԱԿԻ ԿԱՐՈՏԸ

— Ես ձմեռ էլ շուռ տվինք։

— Հա, ավինդը բացվեց,— պատասխանեց կարծես ինքն իրեն ձկնորսի խոսակիցն ու մտամոլոր նայեց Արաքսի վարարած ջրերին։

Սառցե կապանքներից նոր ազատված ջրերը դուրս են յեկել հունից, փրփրել ու սարերից բերած սառցակտորներն իրար խփելով, ափերի ու հատակի տիղմը լվանալով, առաջ են վազում վռնալով, մերթ-մերթ էլ հանդարտ պտույտներ անում՝ խոր ու հանգիստ տեղերում։

Աղալոն վեր կացավ, ուռկանը հավաքեց ու «յա բախտ» ասելով, գցեց ջուրը, ապա մի քանի վայրկյան պահելուց հետո ձեռքի պարանը թեթև թափ տվեց ու գլուխը բացասաբար շարժեց։

— Հը՞…

— Զատ չկա, տերը մեռած ձուկն էլ ա կտրվել,—խոսեց Աղալոն դառնացած և ուռկանի արանքներից տիղմն ու մամուռը թափ տալով։

— Է՜, աստծու անեծքը հասել ա պրծել,—ու Մակիչը աչքը դաշտերին գցելով, կարծես ինքն իրեն շշնջաց.

— Դուզերը չալեց, ձուն չմնաց։

Քիչ լռելուց հետո շարունակեց անվստահ տոնով՝

— Լսել եմ Բաշգյառնուց մի իշաբեռ գարու սերմ ես բերել։—Ապա ուզեց մի բան էլ ասել, բայց չվստահացավ։

— Իշաբեռ, չէ-չէ մի արաբա։ Հիմիկս մի իշաբեռ գարի բերելու համար մի իշաբեռ էլ փող պտի տանես, ծուր ա։ Մի շաբաթ առաջ աբող տարանք,—ծանր շարունակեց Աղալոն, ուռկանը գետափին փռելով։

— Հա՛, միթամ ես անգամ խաթր արին, փթին վեց հազար մանեթ տվին. դրա հաշիվը ծով ա պահըմ։ Ուրախ, շախին տուն չեկա, մի կարպետ էլ շալակեցի ու ճամբա ընկա Բաշգյառնի։ Հլա կնիկս էլ թե՝ «տնավերի մարդ, մի տուն փող ես տանում, էլ բաժինքիս խալիչեն ո՞ւր ես տանում»։ Ասի չէ, կնիկ, տեսնում ես դունյեն խարաբ ա, մարդիք կոպտոն[1] ուտելով են ապրում, թող մի ինչքան կարում սերմացու բերեմ, գոնյա նրա ումուդովը ապրենք։ Դե Մակիչ ջան, քուլփաթի տեր ես, դու գիտես հո ռանչպարը առանց ցանքսի, հո ես ձուկն առանց են ջրի։

— Հա՛, բա՛,—պատասխանեց Մակիչն ու բնազդաբար նայեց ափին ընկած ձկան բաց ու խուփ անող բերանին։

«Հմի Վանիկս էլ ա ըսենց բերանը բաց ու խուփ անում», կսկիծով մտածեց Մակիչը և հոգոց հանելով բացականչեց.

— Տերդ մեռնի, բամբա՛կ, ո՞ւր ես… լուսի պես լիս տաս։

— Ախպերս վոր դու չես,—դանդաղ շարունակեց Աղալոն, աչքը պղտոր ալիքներից չհեռացնելով,—գնացի վոնց վոր ասում են, ոխտը սար, ոխտը ձոր կտրեցի, հասա Բաշգյառնի։ Էլ են Բաշգյառնին չի, հարամիքը բուն՝դրած, էլ սթար չեն թողել։ Սաղ որը շամփուրները ձեռներին տներն ընկած ցորնի հորի յեն ման գալի։

— Ո՞վ, յադա,—հարցրեց Մակիչը զարմացած հոնքերը վեր քաշելով։

— Շները, բա հո զուր չեն ասել, թե տունը քանդողը տանիցը կլի։ Հայ են իրանց արևովը, ձեր հայ ասողի… —և նա վրդովված մի յուղալի հիշոց բաց թողեց իր ակնարկած մարդկանց հասցեյին։—Յարաբ էդ շան վորդկերանց ճակատին հայ-քրիստոնեյի մեռոն կա՞, թե չէ։ Ասում են շաբաթը մի հետ պլետի ռեխն են տալիս մարդկանց, սուրվի պես քշում Դավալվի կողմերը՝ թե մեր դուշմանը հմի յել բայլշևիկն ա, գնում են, գլուխները ջարդած յետ գալի ու գազազած-փրփրած չոքում խեղճ ժողովրդի բկին։ Է՛, յանի վոր մինն ասեմ, ասա ի՞նչ ա քոռը ջաններդ ընկել, դաշնակս վորն ա, բայլշևիկը վորն ա, են ա հայ չեք, լուսավորչական եք, տեղներդ վեր ընկեք, մենք էլ մեր ցավին, մեր ցանքսին կենանք։—Յեվ Աղալո բիձեն դառնացած սրտով լռեց։

— Էդ ասա յա՛, էդ ասա,—արձագանքեց Մակիչը։

— Հա, էդ էլի ասում, ասին թե ունենա՝ էլի Հաթամ աղեն կունենա։ Գնացի՝ տանն էր։

— Նա քոռնա մարդ ա, ես կործերին կխառնվեր, —խոսքը կտրեց Մակիչը։

— Հա՜,—ծոր տվեց Աղալոն,—են էլ վո՛նց, սաղ ո՞րը մահուզերը հանած զորք ա հավաքում, էդ, էդ, էդ, հարա-

[1] Կոպտոն—քուսպ։

մին իրան ձեռովը կրակ ա տվել Դովլաթանց Սարգսի տու-նը, թամուզ մոխիր շինել, թե ասմ ա՝ «դե թող կինն ու յերեխեքն էլ չոլերը թափեն, բալշեվիկ դրվեն»։ Հարևաննե-րը պատմում են ու ախ քաշում։

— Հա, Մակիչ ջան, ախպերս վոր դու յես, դրա տուն գնացի։ Առաջ չեմ ու չում արավ թե, գաա չկա, տարին խառն ա, կարալ չեմ։ Շատ մուննաթ արի, վերջը թե՝ աշ-նան չորս գոշանի սև գարի ունեմ, փութն էլ քու խաթեր համար երկու հարիր հազար ա։

— Պահ քու տերդ մեռնի,—բացականչեց Մակիչը։

— Սան դեյմա [1] միլիոնի մեջ հարաքյաթ չկա։ Խալչեն էլ ավի, մի տոպրակ փող էլ ավի, երկու փութ գարի շա-լակած եկա։ Են էլ տեղ հասավ, չհասավ, երեխեքը վրա ավին, վորը հում, վորը խաշած կերան։

— Ձե, ես տարի ցանքս ոլմազ [2],—ասաց հուսահատ ու բարձր։

— Հա՛յ տերդ մեռնի, բամբակ, ուր ես։

— Գեդտի գյալմադի [3], էլ պրծավ, բամբակի յե-րես չենք տեսնի։

Ե՛, նստելով բան չի դառնա, տանեցանց աչքը հմի ջուր դառավ, յա բախտ, մին էլ գցեմ։—Յեվ ձկնորս Ազա-լոն ծանր-ծանր վեր կացավ, ուռկանը հավաքեց, մի քանի քայլ արավ դեպի գետն ու մի բան հիշելով, հետ դառավ։

— Եսոր զոռ խաբարներ իմացա։—Մակիչը հարցական նայեց նրան։ Ազալոն նորից նստեց և դեմքին հանդիսավոր տոն տալով, ցած ձայնով ասաց.—Տաշլիկենց տղեն ֆրոն-տից փախել ա, եսոր պատահեց, ասըմ ա բալշեվիկներն Ախ-տեն իլել են։

Մակիչը «եհ» արավ ու հուսահատությամբ ձեռքը շարժեց։

— Հյա յավաշ, մենակ եդ չի։ Բա հրեն է, մեր գնչի առաջին Ղարաբաղտաղլվի դամչկոտներումը դաշնակներին

[1] «Դու մի ասիլ»։

[2] Ոլմազ—չի լինի։

[3] «Գնացել է, չի գա»։

ցը քանի մարդ են խեղդել։ Ասըմ ա յերեք կողմից վրա յեն տվել, ճլկուտներին դեմ են արել, վոնց են դեմ արե՜լ... Ե՞ն ինչ վոր հասարակ սալդաթն ա՝ ուռա տալով խառնը-վել են բալշեվիկներին, ախպերացել, ինչ վոր խմբապետ-ներն ու ափիցերներն են, դրանց քոքը կտրի, թամուզ ճլկուտներումը խրվել են, բաթմիշ էլել։

— Ե՛, դու խեր բան ասա, խեր, դու կառավարու-թյուն ասա, մոքամ նստի տակռակալի [1], քոքը պնդանա, վոր յես ու դու յել բամբակ ցանենք, բամբակ։ Միտդ ա, վոր յես ու դու յել բամբակ ցանենք, համա դե ումն ես դուզերը. ասենք մենք էլ գաա չունեյինք, համա դե ումն ու վոր եր, ես սաղ դուզերը սիպտակին եր տալիս փա-թիլներիցը, շենութուն, շենություն եր, մենք էլ արանք-ներումը ապրում եյինք։

— Հմի, Մակիչ, սրանք վոր յեկան, արանքներումը չենք ապրելու, ջիգ [2] սուփրի են վերի ծերումն ենք նըս-տելու։

— Ձե՛, գաա չի դուրս գա։

— Ես մարդասպանությունը, դաշնակ-մաշնակ իրար յախից բռնելը, վոր չի, ել լիություն կլի, մենակ թե, Մակիչ, հվատաս վոչ, վոր մենք առանց ռսի կապրենք...

ՅԵՐԱՄԸ ԿՈՐՑՐԱԾ «ԿՌՈՒՆԿՆԵՐԸ»

Ազալոն հանկարծ խոսքը կտրելով, նայեց գետափով առաջացող մարդկանց։

— Ռսի անում ավի, ես վոնց վոր թե ռսներ են։

— Հա, սալդաթ են երևում. խեղճ ողեք, ցեխի մեջ կոլել են։

Մի խումբ զինվորներ մոտեցան և կակազելով, աղա-վաղված հայերենով հարցրին.

— Ախպեռ ջան, հա՞յ...

— Հա, հայ յենք, -պատասխանեց Ազալոն, աչքը հա-

[1] Արմատակալի։

[2] Բոլորովին։

ռած նորեկների ցեխի մեջ կորած փոսերին ու պատռոտված շինելներին։

— Ի՛նկեր, չորագ[1] կա՞։ Տո՞ւն կա։

— Չորագ չկա, համա էս բաղերից դենը ինչքան ուզես տուն կա։

— Դաշնա՞կ.—հարցրեց զինվորներից մեկը, մատը դեպի մոտակա գյուղն ուղղելով։

— Չէ, չեզոք ենք, մեր սամթերում հլա դաշնակները չեն յերևացել։

Զինվորը կարծես թե հասկացավ, ռուսերեն ինչ վոր բան ասաց ընկերներին և խնդրեց գյուղացիներին իրենց գյուղը ցույց տալ։

Նրանք հենց նոր սկսեցին շարժվել, յերբ յերևացին զինվորների նոր խմբեր։ Մոտեցան։

Պարարտ սևահողը հենց նոր հալված ձյան ջուրը ծծել է ու կակղել մինչև խորքերը։ Կարկատած և շատերի տակերն էլ պոկված զինվորական բաշմակները մինչև ճտկերը խրվում են ցեխի մեջ և դուրս գալիս ահագին ցեխ վերցնում հետները։

Զինվորները հազիվ են ցեխից պոկ գալի։ Սովը, հոգնածությունը, տանջանքը իր կնիքն է դրել նրանց բոլորի դեմքին։

Նրանք չգիտեն, թե վորտեղից են գալիս և ուր են գնում։ Խմբապետական հրոսակների անսպասելի հարձակումը ցրել էր նրանց ուժերը։ 3 վաշտից կազմված գումարտակը կռվի ժամանակ կորվել էր հիմնական զորամասերից, անցել էր բազմաթիվ գյուղեր և դեմ առնելով Արագին, հետ էր դարձել ու պատսպարվել Խոր-Վիրապի շրջակայքի գյուղերում։ Որեր ու շաբաթներ հոգեմաշ բրպասողական դրությունը, քաղցը մարտիկներից շատերի մեջ մեռցրել էր կորովը։

[1] Ռուս զինվորները մեր լավաշ հացին «չուրագ» էյին ասում։

Այդ էր պատճառը, վոր յերբ գումարտակի հրամանատարը առաջարկեց ընտրել այդ ուղղությունը, մի քանիսը դժգոհեցին.

— Մեռնելու յենք, թողեք այստեղ հանգիստ մեռնենք, էլ ո՞ւր եք մեզ էս ցեխերին չարչարում։—Յեվ շատերը հուսահատված, այդ անծանոթ վայրում բոպե առ բոպե սպասում էյին թշնամուն անձնատուր լինելու կամ վերջին անգամ մարտի բռնվելու և կոտորվելու համար։

Ծանր և հոգեմաշ որեր…

Այս նոր գյուղում գումարտակը մի կերպ տեղավորվեց և մարդիկ ուղարկեց շրջակայքը հետախուզելու։ Գիտեյին, վոր յերեք կողմից շրջապատված են թշնամիներով, բոպե առ բոպե սպասում են նրանց գրոհին, բայց նրանք չկան։ Ավելի սրտոտները ցանկանում էյին գոնե թշնամուն տեսնել, պատռել ֆրոնտն և ուր վոր դուրս գալ, թեկուզ բաց կռվում կոտորվել՝ կոտորելով թշնամուն։ Դա քաղցած մեռնելուց հազար անգամ պատվաբեր էր։

— Ընկերնե՛ր, յես ձեզ նորից խնդրում եմ, նորից հրամայում եմ, ի սեր մեր գործի ձեռք չտալ գյուղացիների ունեցվածքին,—ասաց յերեկոյան գումարտակի հրամանատարը ազդու ձայնով, վորի մեջ պարզ զգացվում էր թախանձանքի շեշտը։

— Մի քանի որ էլ և դրությունը կպարզվի. դե, ընկերներ, առայժմ յոլա գնացեք գյուղացիների այս նվերով, սրանից ավելին չունեն այս մարդիկ։

Կապտյորը բացեց տոպրակի բերանն ու սկսեց բաժանել բամբակի քուսպը…

Բանակայինները ագյուսի նման պինդ զանգվածի կըտորները ձեռքներին՝ ցրվեցին տները։ Այդ որը գյուղը կենդանացավ։ Վախի, կասկածանքի հետ միասին շատերը աշխատում էյին թաքցնել, պահել իրենց բերկրանքը։

— Կասես ռմները հաղթել են, հ՞ը, էլ պրծանք… մարտ չխտի—դարդ չխտի[1]։

Խեղճերը չգիտեյին, վոր մշուշում յերամը կորցրած և

[1] «Մարտը գնաց—դարդը գնաց»։

ամեն բույն լաչինին[1] սպասող կռունկների չեն պատահել…

Գարնանամուտի գիշերը իր սև թևերը փռեց դաշտերի վրա։ Ձեթի ճրագները մեկիկ-մեկիկ մարվեցին։ Հոգնած քուն մտան զինվորները ու յերազի թևով տեղափոխվեցին իրենց անծայրածիր դաշտերը, իրենց փայլուն կոկլիկ ու մաքուր սպիտակացրած խրճիթներն, ուր ապրում են իրենց շիկահեր ու կապուտաչյա հարազատները…

Իսկ դրսում գիշերային հովը բերում է պահակի վոռնաձայնն ու վարարած գետի վշշոցը։

ԲԱԶԵՆԵՐԸ ՎՈՐՍԻ ՅԵՆ ՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ

Կես գիշերից անց, գյուղի վերև թառած յերկհարկանի սրբատաշ քարով նոր կառուցված շենքում լույս վառվեց։ Սենյակում պատի վրա գծագրվեց յերեք հոգու սիլուետները, վորից մեկի սրածայր վեղարն ու արտասովոր յերկար մորուքի շողքը դողդողացող լույսի տակ տարուբերվում եր դիմացի պատի սպիտակ ֆոնի վրա։

Ապա գոմի դուռը հանդարտ ճռռաց, մեկը զգուշությամբ դուրս բերեց ձին, յերեք հոգի, յերեք ուրվականների նման դուրս յեկան սենյակից և կանգ առան բարձր պարիսպներով շրջապատված բակի մեջ։

Նրանցից մեկը հաստ բեխերով, արծվաքիթ և ամուր կազմվածքով մի մարդ՝ կռացավ, համբուրեց վեղարավոր մարդու ձեռքը, մյուսին էլ ձեռք տվեց ու թռավ ձիու վրա։

«Տերը պահապան լինի քեզ», մրմնջաց վեղարավորը և մթնում ձեռքը տարածելով ոդի մեջ, խաչակնքեց ձիավորին, վորը դարբասից դուրս յեկավ և չորս կողմը դիտելով, Յերևանի ճամբան բռնեց։

Բազեները վորսի եյին պատրաստվում…

[1] Լաչին — կռունկներին կոտորող գիշակեր թռչուն է։

ՊԱՏԱՆԻՆ ԵՇՈՎ

Քրքրված տրեխներով, ցնցոտիները հագին, հոգնած ու քամահար դեմքով մի պատանի հա բզում է իշին և ինքն իրեն սրտնեղում.

— Զոշ է՛, անտեր, որը ճաշ դառավ։ — Հարյուր յերբորդ անգամ կրկնում է նա ու յերբեմն էլ կանգնեցնում, ուղղում իշի վրա գցած խուրջինի թայը։

Փողոցում վխտող մաուզերավոր մարդիկ նրա վրա ուշադրություն չդարձրին։ Յերեկոյան դեմ նա մտավ Թաղագյուղ։ Կտրեց անցավ գյուղամեջն ու ծռվեց դեպի այգիները, ուր թթի տակ կուչ յեկած տնակից միապաղաղ «Թըլլըկը-չըլլըկն» եր լսվում։ Քսենոֆոնի ժամանակներից մնացած մեկ քարանի ջրաղաց եր դա։ Պատանին եշը կապեց ջրաղացի դռան ուռենուց, խուրջինը անքալով ներս տարավ ու դրեց աղխորորմ զռացող քարի մոտ։ Ալրաթաթախ մի մարդ մոտեցավ նրան, արագ-արագ թարթեց աչքերի ալրոտած-սպիտակած թարթիչներն ու հարցրեց.

— Դա՞ն ի։

— Հա։

— Իսր ի՞ պետք։

— Հա՛, — պատասխանեց պատանին և քիչ տատանվելուց հետո ասաց. — Թող եստեղ մի քիչ մնա, յես մտնեմ գյուղը խնամուս մոտ ու գամ։

Ապա նա դուրս յեկավ, մտավ մի այգի, նայեց բարձրաբերձ ու վողորկ բարդիներին։ Նրանցից մեկի վրա արագիլի բուն նկատեց, պատանու դեմքով ուրախ ու խորամանկ մի ժպիտ սահեց։ Նա չորս կողմը նայեց, գոտին արձակեց, ողակ արավ, հագցրեց վոտների մեջ և ծառի վողորկ բունը գրկելով, կատվի նման սկսեց մագլցել ծառն ի վեր։

ԽԻՏ ՍԱՂԱՐԹՆԵՐԻ ՄԻՋԻՑ

Վերջապես նա կատարին է՝ բնի մոտ։

Նա գրպանից հանեց մատնաչափ մի փոքրիկ գործիք (վորը Ղամարլվի մոտ մի սպանված ոֆիցերի գրպանից եր թռցրել) և ծայրերից քաշեց։ Իրար մեջ հագցրած խողովակները դուրս յեկան և ստացվեց մի յերկար խողովակ։

Նա թագնվեց նոր բացված տերևների արանքում և խողովակն աչքին դնելով, սկսեց զննել չորս կողմը։ Նայեց Ղամարլվի կողմը և հրճվանքով տեսավ, վոր մեծ ճանապարհով մի մեծ զորագունդ մոտեցել է գյուղին։ Ահա գրնդի աբոզը: Վերջում թնդանոթներն են գալիս, իսկ գնդի առաջին բա՛րձր ծածանվում է ալ-կարմիր դրոշակը։

Նա թեքվեց դեպի արևմուտք, դեպի թշնամու թիկունքը։ Ահա հեռու վրաններ են խփած։ Վրանների առաջ, նոր դուրս յեկած կանաչ տափարակներում արեգակի վերջին շողերի տակ փայլում են զենքերի կույտերը։ Զինվորները վրանների առաջ խումբ-խումբ պառկած են։ «Ինչքան ել շատ են սրիկաները», անցավ պատանու մտքով։ Ապա նա սկսեց մոտավոր հաշիվներ անել, «6—7 հարյուր, մի այդքան ել բլուրներում, չե՛, շատ են», մրմնջաց նա։ Մոտիկ դաշտում նա հավաքված ճախ ու ճուխ նկատեց, վորոնց հետևում մարդկանց գլուխներ յերևացին։ «Սրիկաները գնդացիրները քողարկում են», ապա մի լավ հայհոյեց և անհանգստությամբ նկատեց, վոր Յերևանի կողմից մի գումարտակ հեծելազոր է գալիս։

— Ոհո, ես հո շանից շատ են։—Ապա անհանգստությամբ նկատեց, վոր վրանները հավաքում են և զորքը առաջ շարժվելու պատրաստություն է տեսնում։

— Տո, դախ ի՞նչ ես անելի, հարամի լակոտ,—բղավեց մեկը ներքևից։ Պատանին իսկույն հեռադիտակը ծայրերից հուպ տվեց, գրպանը կոխեց և ցած նայեց։

— Ուզում եմ տեսնեմ բնում ձու կա՞։

— Եդ ո՞ւմ պոնն ես քանդելի,—բղավեց այգետերն ու մի քար վերցրեց գետնից։

— Ձե, ես անաստուծն ինձ իշի նահատակ կանի, գոնե կռվում մեռնեյինք,—մտածեց պատանին, զգուշությամբ իջավ ցած ու քաղցր լեզվով դիմեց.

— Բիձա ջան, ինձ հոտաղ չե՞ս բռնի։

— Դե ռադ յել, բնավեր քյոփողլի, դախ տունս են թալանելի, կո յել բաղս են քանդելի,—բղավեց վրդոված գյուղացին և պատանուն մի քանի աքացի տալով, դուրս շպրտեց այգուց։ Ներսում ամբարված թույնը «անմեղ» պատանու վրա չեր թափում։

ԶԳՈ՛ՒՇ ԹԱԿԱՐԴԻՑ

Պատանին քոթակից հազիվ ազատված, պատերի տակով արագությամբ գնաց դեպի գյուղի մյուս կողմը, ուր արդեն հասել եր կարմիր գումարտակը։ Վայրկյանները թանգ եյին։ «Տնաքանդները ինչպես ել արխային ճամբա յեն ընկել, կասես հարսանիք են գնում», ինքն իրեն սկսեց կշտամբել գումարտակի հրամանատարին։ Յեվ իրոք, գյուղն արագ դատարկող մուզերիստները ըստ յերևույթին կարմիրներին արխայնացնելու և թակարդի մեջ գցելու նպատակով եյին նահանջում։ Գոնե այդպես եր կարծում պատանին՝ թիկունքի ահագին ուժն ուսումնասիրելուց հետո։ Նա գրեթե վազեվազ հասավ գյուղի ծայրին և գյուղ մտնող զորամասի առաջը կտրեց.

— Տո, ջաղացպանի ողնական, գործերը վո՞նց են,—զվարթ ձայնով հարցրեց 4-րդ վաշտի հրամանատար Զոկաբովը։ Նրա տրամադրությունը շատ բարձր եր յերևում, իսկական հաղթողի տրամադրություն։

— Հանաքի ժամանակ չե, ընկեր հրամանատար, դուք շատ արխային թշնամու բերանն եք մտել, զգույշ կացեք, վոր ձեզ չխժռեն։

— Ո՞ն, ադա Ճուտիկ, կարգին սարատեղ ես դառել, նկատեց Զոկարոն հանաքով։

— Սարագեկը—գառը գլուեմ վուչ, մի բան աչքովս տեսա, վոր սրանք պատառ նահանջում են, վոր վրա տան, բոլորիդ գերի վերցնեն։—Ցեվ նա մանրամասն նկարագրեց իր տեսածը, թշնամու ուժերի քանակը, շարժումը, պատրաստությունները և այլն։

— Նու, մենք գյուղ կմտնենք,—վճռեց Զոկարոն,—իսկ դու, Ճուտիկ, տես ինչ ես անելու, եշդ ու կորեկդ վօրտեղ են։

— Ձրաղացում։

— Վազիր, առանց աղալ իշիդ վրա գցիր ու մտիր հակառակորդի բանակը տանող ճամբան, հետախուզիր թիկունքը և շատ տեղեկություններ բեր։ Հնարքները թողնում եմ քեզ, այլուրտալիր, համ էլ գաչաչ բոյդ ու եշը քեզ կփրկեն։ Դե վազիր, մատաղ։

Ճուտիկի հաղորդած տեղեկությունները հանգիստ դեպի թշնամու թակարդը քայլող զորամասին վարկյանապես զգաստացրին։

Զոկարոն խիկույն հրամայեց շղթա կապել, մանել գյուղ, գնդացիրները տեղավորել կտուրների վրա և թույլ չտալ թշնամուն մինչև յերեկո գյուղ մանի։

Նա մտածում եր այսպես.—դիմացը դաշտ է, լույսով նահանջել, նշանակում է կոտորվել։ Կդիմադրենք մինչև մութն ընկնելը, ապա կնահանջենք կանոնավոր և առանց կորուստի։

ԿԵՂԾ ԼԱՑՆ ԵԼ ՁԻ ՈԳՆՈՒՄ

Նորից եշն առաջին Ճուտիկը դուրս յեկավ գուղից և քշեց Յերևան տանող ճանապարհով։ Նա անհանգստությամբ տեսավ, վոր թշնամին ամբողջ ճակատով առաջ է շարժվում մարտական գրությամբ։ Մի քանի րոպե անց՝

ակսվեց գնդացիրային կրակը։ Հետևից՝ տների ցածլիկ կըտուրներից վեց գնդացիր միասին սկսեցին ճարճատել։ Պատանին իր եշի հետ արդեն խառնվել եր հակառակորդի բանակին ու աղխողոր գտում եր։

— Վա՜յ, նանի ջան, ձեզ մատաղ, ինձ կսպանեն։

—Ձինվորները մի ապահով տեղ հավաքվել են ու ծիծաղում են «վախլուկ իշապանի» վրա։

— Ծո ողուլ, ուրկե կուգաս,—հարցեց կարճ բուխարա գլխարկով և փայլուն ատամներով մի սպա։

— Մշակ ոդա յեմ, տարա կորեկն աղամ, բայլշևիկները վրա տվին, փախա,—պատասխանեց պատանին թևքով աչքերը սրբելով։

— Իսկ սա ինչ է, իշու ձագ,—հարցրեց նորից ոփիցերն ու մորակի արծաթյա կոթով ցույց տվեց պատանու գրպանից ծայրը յերևող հեռադիտակը։ Ապա ձեռքը մեկնեց հանեց, զննեց և կասկածանքով նայեց նրան։

— Պարոն աֆիցեր, ճամբին գտա,—թոթովեց պատանին և մի կեղծ հոգոց հանեց։

— Առաջ անցիր,—յեղավ հրամանը։

Մութն ընկել եր, յերբ նա զորքի հետ մտավ գյուղը։ Ճանապարհին, գյուղի կողքերին, այստեղ-այնտեղ թափթփած եյին դիակներ, վիրավորներ։ Գնդացիրներն իրենց հունձն եյին կատարել։

Պատանու սիրտը թնդաց ուրախությունից։ Այդ նացթանակ—«նահանջի» պատվն իրեն եր պատկանում։

Թշնամուն մի լավ ջարդ տալուց հետո կարմիր գումարտակը կանոնավոր և առանց կորուստների նահանջել եր դեպի կարմիրների հիմնական զորամասերը և ամրացել հարևան գյուղում։

ՃՈՒՏԻԿԸ ԴԱՇՆԱԿՆԵՐԻ ՏԵԼԵՖՈՆԻՍՏ

Ճուտիկին ներկայացրին գնդի շտաբի պետին։ Լավ եր, կասկածոտ ոփիցերը վոսկոր ճանկած շան նման հեռադիտակը թագցրեց ու անհայտացավ։

— Ղո՞չաղ տղա չես,—հարցրեց պետը: Նրա քեֆը տեղն էր չերևում և կասկածելի պատանին նրա մեջ հակակրանք չէր առաջ բերում:

—Այո, ձերդ գերազանցություն,—պատասխանեց պատանին և կրունկներն իրար խփելով, պատվի կանգնեց: Այդ դուր չեկավ պետին:

— Կուզե՞ս մեզ մոտ ծառայել, փոքրիկ,—ասաց նա:

— Պատրաստ եմ, ձերդ գերազանցություն:

— Ի՞նչ կարող ես կատարել,—հարցրեց պետը բեխերի տակ ժպտալով:

— Այծի նման կբարձրանամ բլուրները և տելեֆոնի գիծ կտանեմ, ձերդ գերազանցություն:—Այդ արդեն և՛ զվարճալի չեր, և՛ դուրեկան: Շտաբի պետը զվարթ մի «մալադեց» ասաց և կարգադրեց նրան նշանակել տելեֆոնիստների մոտ մանր աշխատանքներ կատարելու:

Նա կերակուր էր տանում տելեֆոնիստների համար, վրանն էր մաքրում, հեռախոսագրերը տանում էր շտաբ և շտաբից էլ հեռախոսագրիչների մոտ և չերբեմն էլ գիշերները հերթապահ էր կանգնում հեռախոսի մոտ ու զանգահարելու դեպքում զարթեցնում տելեֆոնիստին:

ԾԻՐԱՆԱԳՈՒՅՆ ՑՈՒՔԵՐԸ

Բայց նրա «տելեֆոնիստությունը» միայն չերկու օր տևեց: Յերրորդ գիշերը Ա. գյուղում ինչ որ աղաղակ նրան վեր հանեց քնից: Նա դուրս չեկավ վրանից և գնաց դեպի հարևան տունը, վորտեղից կանացի ճիչ էր լսվում: Յեվ նրա առաջ բացվեց հետևյալ տեսարանը. մի խումբ հարբած մաուզերիստներ գոմից դուրս են քաշել մի ՝չքավորի ունեցած-չունեցած չերկու վոչխարներն ու պահանջում են մորթել:

— Դո՛ւ, քավթա՛ռ, պիտի քո ձեռքովը մորթես, պառավդ պիտի կրակը թեժացնի, իսկ հարսդ, հ՛, մարալ է,

մարա՜լ:—Յեվ ոռոռվելով դեպի դեռատի կինը գնալով, շարունակեց.

— Իսկ սա, ես հուրի-մալաքը պետք է խորովի ու իրեն սուրբ ձեռքովը մեզ ուտեցնի:

— Հրամանը հրաման ա, ձեր նասաբը...—բղավեց — Հրամանը հրաման ա, ձեր նասաբը...—բղավեց չերկարավիզ զինվորն ու մաուզերի փողը դեմ արավ ծերունու կրծքին: Պառավ կինը ճչաց ու ծերունու արխալուղի դոշից բռնելով, հետ քաշեց ու ինքը կուրծքը դեմ տվավ:

— Դե տվեք ելի, անզգամներ,—ճչաց նա կատաղած:

— Բայշևիկ եք հա՞, խմանզներ, իտա քավթառ

— Բայշևիկ եք հա՞, խմանզներ, իտա քավթառ դլուխդ ազցան կանեմ,—բղավեց մաուզերխտներից մեկն ու քացով ծանր խփեց պառավի փորին: Խեղճը չկարողացավ ծղոտուն հանել և ջարդված հին պուտկի նման գլորվեց անշնչացած:

Սյունի չետևից առաջ չեկավ մի առողջ դեռատի կին և աչքերից կայծեր թափելով, հատ-հատ ու մուրճի հարվածների նման ասաց.

— Այո՛, բոլ-շի-վիկ ենք, գազաններ, բոլ-շի-վիկ ենք, — Այո՛, բոլ-շի-վիկ ենք, գազաններ, բոլ-շի-վիկ ենք, մարդս բայշևիկ Սարգիսն ա, ձեր պարուչիկին սատկացնողը, իմացա՞ք, դե խփեցեք:—Նա գլուխը հետ գցեց և կուրծքը դեմ տվեց: Այդ վայրկյանին նա այնքան հպարտ էր, այնքան խիզախ և այնքան հմայող, վոր մաուզերիստները ոռոռվելով հետ-հետ գնացին ու ծռվելով մտան շտաբ:

Ծուռիկը դեռ նոր էր վրանը մտել, չերբ նորից աղմուկ ու վայնասուն լսվեց: Ինչ-վոր լույսի ծիրանագույն ցոլքեր ընկան վրանի ներսը: Նա դուրս չեկավ ու նայեց գյուղի կողմը: Բայշևիկ Սիմոնի խրճիթը հրդեհվում էր...

Այդ գիշեր Ծուռիկը ծանր մտատանջությունից չկարողացավ քնել:

«ՂԱՄԱՐԼՎԻ ՖՐՈՆՏԻ ՊԱՐՈՆ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԻՆ»...

Լուսադեմին մեկը վոտնամանի ծայրով բզեց նրա կողքին:

—Եյ, գյադա, բոլի մրափես, վեր, ես հեռախոսագրերը

շուտ շտաբ հասցրու,—հրամայեց ավագ հեռախոսագրիչը, յերեք կտոր թղթեր պայուսակի մեջ դնելով ու Ծուտիկին հանձնելով։—Ուրիշի ձեռքն ընկնի, կաշիդ կքերթեմ,—ավելացրեց նա։

Վրանից դուրս գալուն պես Ծուտիկը մտավ մի քանդված գոմ, հանեց առաջին հեռախոսագիրն ու կակազելով կարդաց։

Ղամարլվի ֆրոնտի հրամանատարին

Ըստ Խ. գյուղի կոմիսարի բերած տեղեկության Խոր-Վիրապի մոտ կարմիր զորամասերի հետ վոչ մի կապ չունեցող ռուսական մի ատրյադ կա, բաղկացած յերեք վաշտից։ Առաջարկում եմ անմիջապես 500 հեծյալներով յեվ 400 հետեվակով շրջապատել յեվ գերել ատրյադը»:

Հայաստանի Հանրապետության զինված ուժերի սպարապետ՝ X

«   » ապրիլ 1921 թիվ.

Յ ե ր և ա ն.

Մյուս հեռախոսագիրը՝ Ղամարլվի ֆրոնտի հրամանատար պարոն Թրմոյանին.

Խիստ գաղտնի, անձամբ.

«Ձեր պահանջված պարենն այլեվս հնարավոր չէ ուղարկել, յեղածը յերկու որ առաջ ուղարկված է Ախտայի ֆրոնտը, վորտեղ դրությունը լրջորեն վտանգված է։ Պարենը պահանջված չափով վերցնել գյուղացիներից»։

Ստորագրությունը նույնը։

Յերրորդ թուղթը՝ «Անմիջապես հեծյալ գունդը ուղարկել մեր տրամադրության տակ՝ Ախտայի ֆրոնտն ուղարկելու համար։ Օպերացիան կատարել գիշերով, զորաշարժերով ցույց տալ թշնամուն, վոր Յերեվանից նոր ուժեր են ստացված»։

Նույնը.

Ծուտիկը գողեգող նայեց չորս կողմը, մտածեց փախչել, մեկ էլ վորոշեց թղթերը շտաբ տանել։ «Մեկ է, անգիր գիտեմ, լուրը վոնց լինի կհասցնեմ», վորոշեց նա ու մտնելով շտաբ, հեռախոսագրերը դրեց փայլուն ուսադիրներով և խոժոռ դեմքով գնդապետի առաջ։ Գնդապետը աչքի անցկացրեց թղթերը, ինքնաբավականությամբ բեխերը «ոլորեց» և անցավ մյուս սենյակն, ուր բավական յերկար ժամանակ շտաբը խորհրդակցում եր։

Ապա դուրս յեկան յերեք մարդ, նույնպիսի ուսադիրներով և չերքեզկան հագին փափախավոր ու զենքի մեջ կորած մի մարդ։

Ծուտիկը ճանաչեց իրեն գործի դնող շտաբի պետին։

— Մոտս յեկ,—մատով արավ շտաբի պետը։

Ծուտիկը համարձակությամբ մոտեցավ։

— Զախորդության դեպքում սրան չեն ճանաչի, խոկոկան անմեղ մշակ է,—ապա ոֆիցերների հետ ռուսերեն մի բան փոխանակելուց հետո ասաց.

— Նու, լավ։—Նա գրպանից հանեց ինչվոր պլաններ, ռազմական քարտեզներ, հեռախոսագրերի և մի յերկտողի հետ միասին դրեց ծրարների մեջ, ապա դարսեց մի պայուսակի մեջ, կողպեց ու ասաց.—Այս պայուսակը հենց հիմա կհասցնես Բաշ-Գյառնի՝ խմբապետ պարոն Մարտիրոսին։—Ապա մի քանի խիստ պատվերներ տալուց հետո անցագիրը հանձնեց Ծուտիկին և հերթապահին կարգադրեց մի լավ ձի դուրս բերել գոմից։

Գոմի առաջ Ծուտիկը հենց պատրաստվում եր ձի նստելու, մեկ էլ թարսի պես նրա առաջ ցցվեց իրեն բանող պորուչիկը և խստությամբ հարցրեց.

— Ո՞ւր ես պատրաստվում։

— Բաշ-Գյառնի, պարոն պորուչիկ։

— Ի՞նչ գործով։

— Շտաբի հանձնարարությամբ կարևոր թղթեր եմ տանում, պարոն պարուչիկ:

Պարուչիկը մի կասկածոտ հայացք գցեց պատանու վրա ու հրամայեց վերադառնալ շտաբ:

«Տան վորդին գործը խարաբ արավ, բալամ, գլխիդ ճարը տես, թե չե կորած ես», մտածեց Ծուտիկը և շփոթմունքը հազիվ թաքցնելով, ասաց.

— Ես րոպեյից կգամ, պարոն պարուչիկ, թղթերը հեռախոսագրիչի մոտ են, գնամ վերցնեմ: — Յեվ կարգադրության չսպասելով, թռավ ձիու մեջքին ու քշեց գյուղամիջով:

ՓԱԽՈՒՍՏ

Շտաբում իրարանցումն ընկավ այն ժամանակ, յերբ Ծուտիկն արդեն առաջավոր պահակախմբերին ցույց եր տալիս անցագիրը: Վերջին պոստում յերկար կանգնեցրին, ամեն ինչ ստուգելուց հետո Ծուտիկը հենց վոր ձին մտրակ-



եց ու դիմացի ստորոտը հասավ, հեռվից փախուստի ազդանշանը խփող կրակոցներ լսվեցին: Մի քանի րոպե անց՝ մի խումբ ձիավորներ կանգ առան վերջին պոստում և փախստականի ուղղությունն ստանալով, արշավեցին բլրի կողմը: Մյուս բլրի լանջին յերևաց պատանի ձիավորը: Հեծ-

յալ խումբը սկսեց անկանոն կրակել, պահակները նույնպես:

Փախստականը տեսնելով, վոր կրակի տակ բլուրն անցնելը վտանգավոր ե, թաշկինակը ճոճեց և վայրկենապես ձիու գլուխը հետ թեքեց:

Պահակներն ու ձիավորները կանգ առան, դադարեցրին կրակը և սպասեցին նրա վերադարձին, սակայն պատանին ձորը մտնելուն պես ձին մտրակեց և քշեց դեպի լեռները, վերևից բլուրները անցնելու նպատակով: Տեսնելով, վոր պատանին ձորից դուրս չեկավ, խումբը սրարշավ բարձրացավ բլուրն ու փախստականին տեսավ ձորի վերև: Մինչ սրանք սկսեցին կրակել՝ Ծուտիկը վերևից բլուրն անցավ, մյուս լանջով իջավ ցած և սկսեց քամու նման սլանալ դաշտավայրով: Նա դեպի լեռները չեր քշում, վորովհետև այնտեղ եյին բանակել Քյուրդ Ղազոյի ու Մարտիրոսի հրոսակները: Սակայն դաշտը վտանգավոր եր: Խումբը մի քանի րոպեյում բարձրացավ բլրի գագաթն ու դաշտում փախստականին տեսնելով, անկանոն կրակոցներով, գոռգոռոցով ու հայհոյանքներով արշավեց նրա հետևից:

ԲԱՑ ԴԱՇՏՈՎ՝ ԶՈՀԻ ՀԵՏԵՎԻՑ

Ձին կորել ե փրփուրի մեջ: Այլևս ուժ չկա: Դիմացում փոքր բլուր ե յերևում, բայց դեռ մոտ յերկու վերստ

պետք կարել բլուրին հասնելու համար։ Իջնել հնարավոր չէ, պաշտպանվելու տեղ չկա։

Նա մտրակում է ձիուն անողոք, իսկ գնդակները սուլում են աջ ու ձախ, ականջի մոտով, գլխի վերև։ Ահա մեկը քերծեց աջ ազդրը։ Ոչինչ, չի կպել։

Նրանք ավելի արագ են քշում։ Մոտենում են։ Ահա ուր որ է կհասնեն։ Արդեն նրա ականջին պարզ հնչում է սպառնալիքը՝

— Կանգնի՛ր, շան որդի, խփեցինք։—Ծուռիկը մի վայրկյան իրեն կորցրեց, ուզեց ցած թռչել ու պաշտպանվել. ապա ձեռքը կողքը տարավ, և հետ նայեց կրակելու համար. նոր գլխի ընկավ, որ ինքը զենք չունի։ Մի քանի րոպե ևս և նա ձիերի ոտքերի տակ է։ Այս անգամ մահը պատանուն սարսափելի թվաց. «ռուսական ատրյադը կորավ, սրի կքաշեն». և այս միտքը շամփրեց պատանու ուղեղը։ Նա խելակորույս սկսեց մտրակել ուժասպառ կենդանուն և հուսահատ սկսեց բղավել։

Հանկարծ լսվեց համազարկի ձայն, պայթյունները շառացան, գնդացիրն սկսեց կարկտալով մաղել, նրա շուրջը մեղուների նման սկսեցին բզզալ գնդակները։ Համազարկերից ու գնդակների տարափից խլացած՝ նա մինչև բլուրը հասնելը չհասկացավ, թե ինչ է կատարվում իր շուրջը։ Միայն բլրին հասնելուն պես քարերի հետև գլուխներ յերևացին և մեկը գոռաց.

— Ջիուց իջի՛ր ու քարի քամակը մտի՛ր։—Ծուռիկը մեքենայորեն հնազանդվեց, թռավ ցած ու շնչասպառ պառկեց գետնին։ Նա շնչասպառ հետ նայեց ու տեսավ դաշտում դեպի հետ փախչող ձիավոր խումբը և շատ զարմացավ։

Ապա շոշափեց իրեն, շոշափեց պայուսակը և նրա միտքը հանկարծ թնդաց ուրախությունից՝ «ուրեմն յերազ

չէ, ուրեմն ազատվել է, ուրեմն ատրյադը փրկված է»։ Ապա նա հևիհև բլուրը բարձրացավ ու բղավեց.

— Շո՛ւտ, շո՛ւտ շո՛ւտ, ինձ հասցրեք գնդի հրամանատարի մոտ,—ապա պայուսակը ցույց տալով, թռավ պոստի համար փամփուշտ բերող ձիու մեջքին և մտրակելով, քամու նման սլացավ բաց դաշտով…

ԹՈՒՆՈՏ ՀԱՅԱՑՔԸ

Շտաբում հեռախոսագիրն ագահությամբ աչքի անցկացնելուց հետո հրամանատարը գոչեց.

—Հինգ րոպեյում յերրորդ եսկադրոնը ձիերի վրա։— Դրսում հնչեցրին ռազմի փողը։ Յեվ մինչ շտաբը լցված զինվորականները գործից անտեղյակ նայում եյին, հրամանատարը վեր կացավ, առաջ յեկավ, բռնեց պատանու սառած ձեռն ու հուզված ասաց.

— Շտաբի անունից շնորհակալություն եմ հայտնում, —ապա դառնալով ընկերներին, ձայնը բարձրացրեց.—լավ պահեցեք ու փայփայեցեք այս փոքրիկին, սա հեղափոխության անգնահատելի ծառայություն ե մատուցում։—Յեվ յերկու խոսքով պատմեց կատարվածն ու ցույց տվեց հեռախոսագրերը։ Յերեք զույգ ուժեղ բազուկներ Ծուտիկին ոդը թռցրին։ Իսկ անկյունից մի զույգ աչքեր չարությամբ լի նայում եյին որվա հերոսին։ Ծուտիկի յերեսը վառվում եր վոգևորությունից։ Նա հազիվ ազատվեց «ողջույնի ճանապարհորդությունից» և հանդիպելով անկյունի թունոտ հայացքին՝ սառավ։ Կարծես գլխին սառը ջուր լցրին։ Կապիտան Արամյանն եր։ «Ինչի յե խեթում, չլինի թե սրիկան ելի հինն ե հիշել», անցավ պատանու մտքով։ Նա մեխվել եր տեղում և կարծես սուր հայացքով պայքարում եր հակառակորդի դեմ։ Բոլորը յերեսներն անկյունի կողմը դարձրին։ Կապիտանը թեթև շփոթվեց, ապա բռնազբոսիկ ժպիտ փայլեցնելով, անկյունից առաջ յեկավ և սեղմելով պատանու ձեռքն ասաց.

— Շնորհավորում եմ ձեր հերոսությունը։

Նրա ձայնի կեղծ շեշտը և աչքերի չար փայլը նորից

ցնցեցին պատանուն. «իսկական թշնամի յե», մտածեց նա, ձեռքը գրեթե խլելով կապիտանի ձեռքից։ Դրսում հնչող հեծելազորային մարշը ցնցեց պատանուն, նա շտապ դուրս յեկավ և թռավ կապույտ ձիու մեջքին։

*
* *

Եսկադրոնն արշավում ե ցեխոտ ճամբաներով՝ Թա-
կարդն ընկած ռուսական զորամասերին փրկելու համար։
Հակառակորդ բանակում խլրտում ընկել եր։ Իսկ
տեղական կուլակությունը պատրաստվում եր անծանոթ
վայրերում թաղել շշկլված զորամասին։

Րոպեները կյանք արժեն։

Պետք ե շտապել։

ՆՆՋՈՒՄ ԵՆ ՌՈՒՄԲԻ ՎՐԱ

Յերկու որ ե, վոր այն տունը, վորտեղից գիշերվա
մութին դուրս յեկավ խորհրդավոր ձիավորը, տենդային
պատրաստության մեջ ե։

Քաղցած զորամասը պահանջեց գյուղի ունևորներից
հաց տալ։

Յերկհարկանի տունը կարուկ կերպով ընդդիմացավ։
Բոյկոտ արին նաև մյուս ունևորները։ Գյուղում լուր տա-
րածվեց, թե ռուսներն ամբողջ գյուղը բնաջինջ են անելու,
վոր հացը վերցնեն։

Շատերը հավատացին դրան։

—Ջանըմ, քաղցած մարդն ամեն ինչ կանի։

— Տո, ասին ինչ կա, սիրտը շատ ա ցավում հայի
համար, եսոր կուտի, եգուց բեխերը կըբեի ու դրաղ կը-
քաշվի։

— Հա բաս, դըուստ ա, — հաստատում եր ձիթհանքի
Սարգիսը, դեղնած մորուսը շփելով,—այ խալ՚լս, տավար
հո չեք, յերեկ չե՞ր, վոր թուրքին քշեց մինչև Յերզնկա

ու մի որ էլ թողեց, հետ քաշվեց, թե՝ «ինչ գործ ունեմ Տաճկաստանում»: Թուրքն էլ անսաս[1] յեկավ, մեր բլին չերեց: Ռուսը կանի, ջանըմ, ռուսից հավատալու ա:

Յեվ սպիտակ տունը դարձավ կուլակների շտաբը: Շրջակա գյուղերից ամեն գիշեր զինված մարդիկ եյին այցելում սպիտակ տունը, հրահանգներ ստանում և գնում:

Այդ յերեկո կոմիսար Առաքելը Յերևանից նոր եր վերադարձել և գոհունակությամբ ժպտալով թեյ եր խմում: Բաշլըղներով փաթաթված չորս հոգի շարվել են թախտի վրա և հարցական դառած նայում են «կոմիսարին»:

— Ջիները մազի տակին են,— ասաց նա ու խորամանկ ժպտաց: «Հյուրերը» կարծես մի ծանր բեռից ազատվեցին: Նրանց աչքերը պսպղացին հրճվանքից:

— Բաս մենք հեչ էլի,— խոսեց հարևան գյուղի «փրկության կոմիտեյի» նախագահը.— ուրեմն մենք կնկա պես գլուխներս լաչակ կապենք սպասենք հա...

— Հը՞մ... գործը դուք ու մենք ենք անելու,— ասաց կոմիսարը խորհրդավոր ժպիտը դեմքին խաղացնելով, ապա բաժակը մի կողմը դրեց և առաջ թեքվելով, դավադիր աչքերը հառեց նրանց յերեսին ու հազիվ լսելի ձայնով ասաց.

— Նամուսն էլ մի բան ա, սրանք վոր կան, հիմի ղուզղուն[2] տեսած հավերի պես կուչ են յեկել:

— Լավ, ինչ կարող ենք անել կազմակերպված զորքի դեմ,— անհամբերությամբ հարցրեց խմբապետ Միսակը: Մյուսներն անհանգիստ շարժումներ արին և առաջ թեքվեցին, գլուխ գլխի տվին, վոր լսեն կոմիսարի հեղինակավոր կարծիքը:

— Հենց հմի զինաթափ պետք ե անենք, ես ե վճիռը:

—«Հյուրերից» մեկը ցնցվեց:

— Շատ չե, մեր մարդկանցից ամեն մեկը թող իրան ղոնաղներին զինաթափ անի:

[1] Անսաս — անձայն:

[2] Ղուզղուն — ուրուր:

Համաձայնվեցին:

Մի քանի հոգի այդ յերեկո չար վհուկների նման տընից տուն անցնելով, հրահանգներ տվին իրենց մարդկանց: Հարևան գյուղերից դաղատագողի գյուղ մտան մի քանի մանր խմբեր՝ զենքերը փեշերի տակ թաքցրած: Զորամասի շտաբի կողքի մարագում բուն դրեց մի խումբ՝ կոմիսար Առաքելի գլխավորությամբ:

Իսկ հյուծված ու հուսահատ զինվորներն ամեն ինչ թողած բախտի կամքին՝ խաղաղ ննջում եյին հնամաշ գը-բաների մեջ՝ չկասկածելով, վոր հանգստանում են ռումբի վրա...

ԴԺՈԽԱՅԻՆ ԳԻՇԵՐԸ

Դարանակալ թշնամին կես գիշերին սկսեց համազարկերը գյուղի մի քանի կետերից:

Պահակները վազեցին կրակոցների կողմը:

Նրանց դեմը կտրեցին մի խումբ մարդիկ և սկսեցին մաուզերներից կրակ բացել:

Ո՞վքեր են, ինչ ուժ ունեն: Չորս կողմը խավարն է ու թշնամին աներևույթ:

Պահակախումբը սկսեց հուսահատ կրակել: Հարևան տներից դուրս թափվեցին քնաթաթախ կարմիր-բանակայինները: Նրանց մեծ մասի զենքը խլված եր տներում՝ քնած ժամանակ: Դուրս թափվեց նաև լեղաճաք ազգաբնակչությունը: Բարձրացավ անասելի վայնասուն ու ժխոր: Փողոցներում վազվզում եյին զինվորներ, մարդիկ և կրակում անդադար, աննպատակ:

Դժոխային ժխորն անծանոթ ու անհյուրընկալ վայրում շփոթ ու սարսափ ե առաջ բերել զինաթափված ու քնահարամ կարմիր-բանակայինների մեջ:

Յեվ սարսափելի խավարում նրանց յերևակայության մեջ մարդիկ են դառնում ու շարժվում ծառերի մութ սիլու-

եմները, այստեղ ու այնտեղ թափթփված դերանները նրանց աչքում թնդանոթներ են յերևում՝ ահարկու յերախները բացած։ Մահն իր ժանտ դեմքն է ցույց տալիս և խավարն անտակ գերեզմանի նման նայում է սարսափահար մարդկանց։

«Գոնե լուսանար»…

Տաբլից մի խումբ մարտիկներ, հրամանատարի գլխավորությամբ «ուռա» գոչելով, առաջ են վազում գյուղի ծուռ ու մուռ փողոցներով և ճանապարհն անխնա մաքրում» են։

— Ե՛ս կողմ, ե՛ս կողմ։

— Առաջը կտրեք, չես դրանց խոր խոքինը…—բղավեց մեկը յեկեղեցու բակից և դարանակալ խումբը կտրեց ճանապարհը։

«Ադամամթի» աղոտ լույսով նրանք ճանաչեցին հրամանատարին և մաուզերներն ուղղեցին այն կողմը։

— Տախկարո՜յ…—լսվեց հրամանը, ապա լսվեց հուսահատ «ուռա»-յի ձայնը և հրամանատարական կազմը սվինամերկ առաջ վազեց դեպի հրազեններից ժայթքող բոցերը…

ՅԵՐԳԸ ՎՈՐՈՏՈՒՄ Է

Հուսահատ կռիվն իր վախճանին եր հասնում։ Թակարդն ընկած գլինվորները մեկիկ-մեկիկ զենքերը ցած եյին դնում, իսկ յեկեղեցու բակում սվինամերկ խումբը յերեք հոգի կորցնելուց հետո մոտ եր անձնատուր լինելուն։

Հանկարծ հեռվից լսվեց կրակոցներ, ապա ձիերի խրխինջ և ամբակների ուժգին դոփյուն։ Վաղորդյան սառն օդը կարծես պատռվեց և պղնձե որկեստրի ցնցող «մարշը» տարածվեց գյուղի վրա։

«Смело мы в бой пойдем
за власть советов
и как один умрем
в борьбе за это»

Ծանոթ յերգի հնչյունները կտրեցին անցան խարխլած պատերը, ճեղքելով խրճիթները մտան, ալիք-ալիք վողողեցին փողոցները և անհուն բերկրանք առաջ բերին հուսաբեկ ու մոլորված խմբի մեջ։ Կարծես մի հզոր ձեռք ուժգին թափով նրանց յետ պահեց անդունդից։ Խմբապետ Միսակի խումբը փորձեց հեռևի դարբասով ճղել յեկեղեցու բակից։

— Զշարժվե՛լ, պայթեցրե՛, ձեռներդ վե՛ր,—լսվեց հրաման դռան մուտքի մոտ և մաուզերիստները տեսնելով ոդում ճոճվող ռումբները, սարսափած յետ-յետ գնացին ու զենքերը թափելով, ձեռքերը վեր ցցեցին։ Չորս հոգի ռումբերը բարձրացրած առաջ յեկան և սկսեցին զենքերը հավաքել։

— Ոհ, ոհ, ինչ լազաթին մաուզեր ա,—ասաց պատանին և մինչև նա նոր բացվող լույսի տակ տնտղում եր խմբապետից խլած մաուզերը, բակից հինգ հոգի առաջ յեկան և ուրախության արցունքն աչքերին գրկախառնվեցին իրենց ազատարարներին։

— Բրատցի… բրատցի[1]… անդադար կրկնում եյին նրանք և համբուրվում անծանոթ կոմունարների հետ։

— Կոլյա՜, Կոլյա՜,—գոչեց Ծուտիկն ու գրկաբաց վազեց դեպի կապույտաչյա կարմիր-բանակայինը։ Սա ճանաչեց իր հին ընկերոջը, վորին թողել եր Եջմիածնի կայարանում և այն օրվանից չգիտեր ապանվե՞ց, թե ապրում է։

Սրտաշարժ տեսարան եր։ Տարիներ թվող օրերի տանջանքներից հետո մոլորված զորամասը փրկվեց կորուստից և կազմեց մեր ֆրոնտի խիզախ ուժերից մեկը։

[1] Յեղբայրնե՜ր… յեղբայրնե՜ր…

Դավադիր խմբերն իսկույն զինաթափ արվեցին: Գարնանային արևի առաջին շողերի տակ ընդարձակ հրապարակում հնչեց վաղուց իվեր լռած գառմոշկայի ուրախ ձայնը:

Սկսվեց գեղջկական աշխույժ պարը: Իսկ սանիտարները գյուղացիների ոգնությամբ հավաքում եյին վիրավորներին ու նրանց վերքերը դարմանում:

Այդ գործամասերին ազատելը մեր դրությունը բավական լավացրեց: Այժմ մեր թե ֆրոնտն ե լայնացել և թե մեր ուժերն ավելացել են ռուսական վաշտերով: Յեվ առանց ժամանակ կորցնելու մենք սկսեցինք ամբողջ ֆրոնտով հարձակումը՝ մինչև Յերևան մի շնչում գնալու նպատակով:

Տեսնել եր պետք, թե ինչպես եյին կռվում մեր ռուս ընկերները: Նրանք, վոր անծանոթ վայրում թակարդ ընկած՝ հուսահատվել ու խեղճացել եյին, այժմ դեմ առ դեմ տեսնում եյին թշնամուն և իսկապես առյուծների նման եյին կռվում:

Առանձնապես սարսափելի յե, յերբ «ռուսը» դուրս ե գալիս սվինամարտի: Հենց վոր ռուսական վաշտը դուրս եր գալիս դիրքերից ու վորոտընդոստ ուռաներով վազում առաջ, դիմացից թշնամին պոկ եր գալիս ու ճղում առանց հետ նայելու:

ԿԼԻՉ ՅԵՂԲԱՅՐՆԵՐԸ

Սույդ կռիվներում մեր գլխովը հազար ու մի փորձանք անցավ: Վո՞ր մեկը պատմեմ: Յես ուզում եմ պատմել միայն Կլիչ յեղբայրների մասին:

Մեր թնդանոթաձիգ Կլիչն արդեն ձեզ ծանոթ ե (նա, վոր թնդանոթով զրահագնացքի գիծը քանդեց):

Նրա ավագ յեղբայրը, վորին նույնպես Կլիչ եյին ասում, մեր թշնամու ամենահմուտ թնդանոթաձիգն եր: Նա, պիտի ասեմ, վոր մեզ շատ ու շատ վնասներ հասցրեց: Մեր Կլիչն ել, ինչպես տեսանք վերևում, պակաս չեր հարվածում:

Յեվ Կլիչ յեղբայրներն ատամ եյին կրճտացնում իրար վրա:

Հաճախ եյի լսում մեր Կլիչից.

— Ախ, գավաճան շան վորդի, թե մի թոփի ռեխը կընկնես...— Յեվ իսկապես նա արծվի աչքերով շարունակ դիտում եր թշնամուն և աշխատում եր ճանաչել թշնամի յեղբորն ու «թոփի ռեխը տալ»:

— Մեռած բան ա, մեծ թիքան ականջն եմ թողնելու:

Յեվ մի որ ել յերկու յեղբայրները պատահեցին ու թունդ պատահեցին: Ընթերցո՛ղ, այն, ինչ վոր պատմում եմ, անհավատալի կթվա, բայց յես իրական բան եմ պատմում, վոր կատարվել ե 1921 թվի գարնանը Ղամարլվի դաշտերում:

Այսպես յեղավ:

ՓՈՔՐԻԿ «ԿԱՊԻՏԱՆԸ»

1921 թվի կարծեմ մարտի վերջերին մենք թշնամուց դիրք-դիրքի հետևից վերցնելով, հասանք Ղամարլվի այգիները:

Առավոտյան դրոհով մտանք գյուղ։ Յերկհարկանի մի շենքի առաջից անցնելիս մեկ էլ տեսանք գլխներիս լավաշներ է թափվում, ինչ լավաշնե՜ր...։ Մենք էլ ամիսներով լավաշ հացի յերես չենք տեսել։ Ել վերև նայելու ժամանակ չեղավ, սկսեցինք իրարից խլել ու ագահությամբ խժռել։ Խեղդվելով, վիզներս ձգելով վոնց ենք ուտո՜ւմ։ Յերկար ժամանակ հաց չուտելուց կոկորդներս նեղացել եյին։ Յեվ այժմ այդ նեղլիկ խողովակը բռնվել և դավաճանում է մեր գայլային ախորժակին։

— Տո, իրար միք ուտի, շուն շան վորդիք, շատ կա,—բալկոնից լսվեց ծանոթ խանձված ձայնն ու մեկն սկսեց լիաթոք ծիծաղել։ Վերև նայեցինք, տեսանք մի պատանի ոֆիցեր, սակայն նոր ու սիրուն շորերը հագին։ Նրա փոքրիկ վոտները գրկել են սիրուն լաքած «սապոկները», իսկ ուսերին փայլում են կապիտանի վոսկեթել ուսադիրները։ Մինչ մենք բերաններս բաց վեր ենք նայում, նա ծիծաղելով տուն է մտնում, գիրկը լիքը սպիտակ լոշեր բերում թափում ցած և ծիծաղից թուլանում։ Քաղցած զինվորները գնալով շատանում են լավաշի գլխին։

— Սրիկան մեզ կաշառում է, վոր ճղի,—բղավեց մեկն ու հրացանի փողն ուղղեց փոքրիկ «կապիտանի» կողմը։ «Կապիտանը» հետևը դեմ արավ ու ծիծաղալով ասաց. «Դե կրակիր» ու սկսեց թուլանալ ուժգին ծիծաղից։

Զինվորը կատաղեց և նշան բռնեց, վոր կրակի՝ մի թխադեմ զինվոր ձեռքը ձգեց, բռնեց հրացանի կիսից.

— Տո, ես հո Ծուտիկի ձենն ա, մի՛ կրակի։—Հարայ հրոցով սանդուխքներից սալդաթավարի վեր բարձրացանք, «կապիտանին» մոտիկից զննեցինք։ Իսկապես Ծուտիկն է։ Նա դուռը բացեց և ընկերներին անխոս առաջնորդեց սենյակի ներսը։ Ներս մտնելուն պես նա ուղիղ կանգնեց, ձգվեց ու զինվորական պատվի բռնելով, զեկուցեց, դեպի սենյակի խորքը նայելով.

— Ձերդ գերազանցություն, կապիտան, կարելի՞ չէ դավալվեցի Վիրաբին իր տկլոր գյադեքովը ներս թողնել։ Ներս մտնողները շեմքից գլուխները յերկարացրին և տեսան «Նիկելյա» փառավոր մահճակալի վրա կուչ է յեկել գրեթե մերկ մի մարդ և դողալով նայում է «չեստ տված» պատանուն։

Տղերքը լոշը բերաններումը փոթկացրին ու սկսեցին ծիծաղել։ Լոշի կտորը մեկի «կասիկը» թռավ և սկսեց հազալ ու խեղդվել։ Ծիծաղը սաստկացավ։ Ծուտիկը հենց տեղն ու տեղը պատմեց, վոր առավոտը շուտ միքանի կահոզով ծպտյալ մտել են գյուղ, ինքն ուղիղ յեկել է կապիտանի տունը, ներս մտել և տարճանակը դեմ անելով, հրամայել է շորերը հանել։

— Այդպես չէ՞, պարոն կապիտան, հո գլուխս չեմ գովում,—հարցրեց նա մերկ մարդուն։ Մարդը մեքենայորեն գլուխը շարժեց։ Ընդհանուր ծիծաղ բարձրացավ։

— Դե տղերք, շուլուխի ժամանակ չի, հնչեց Վիրաբի ձայնը։ Դուրս յեկանք։

— Բա ես նապաստակին ինչ անենք,—ասաց Ծուտիկը պատշգամբում։ Վիրաբը կարմիր-բանակայիններից մեկին պատվիրեց՝ գերի կապիտանին շատ քաղաքավարի տանել շտաբ։

— Շորերը տուր իրան, ամոթ ա,—ասաց Վիրաբը։

Ծուտիկը դժկամությամբ հանվեց, շորերը ներս գցեց, նորից իր ջերը հագավ ու առաջ անցան։

ՍԱՊՅՈՐՆԵՐԸ ԿՐԱԿԻ ՏԱԿ ԵՆ

Գյուղից այս կողմն ընկնող դաշտում կռիվը սաստկանում էր։ Մենք ուզում եյինք մինչև Նորագավիթ մի շնչում քշել։ Դրա համար գործի եյինք դնում մեր գրահապատը՝ ճամբա բացելու համար։ Սակայն թշնամին կարողանում էր ամեն րոպե խոչընդոտներ դնել գրահապատի

առաջ։ Մի տեղ գիծն եր կտրում, մի տեղ կամուրջն եր պայթեցնում, իսկ հաճախ ել դատարկ տակառներ եյին գցում յերկու գծի մեջտեղը և խափանում զրահապատի արշավին։

Զրահապատը աշտարակից և պողպատե կողերից անընդհատ կրակ ժայթքելով առաջ յեկավ և դեմ առնելով խորտակված կամուրջին, կանգ առավ ու հուսակտուր ծըղրտաց։

Վիրաբն ու Ծուտիկը հենց այդ ժամանակ ընկերների հետ դաշտ եյին դուրս յեկել և հասնելով դիրքերին, սկսել եյին կրակել դիմացում խլրտող թշնամու վրա։ Կողքին մի քանի զինվորներ ընկել եյին կողք-կողքի և ծուլ-ծուլ զրույց եյին անում ու հոգնած ծնոտներով «զրավված» լավաշի մնացորդներն եյին ծամում։

Հանկարծ ականջ խլացնող պայթյուն լսվեց և մոտիկ գործող գնդացիրը յետ շպրտվեց։

— Վայ, հորդ հոգին, Կլիչ.—մռնչաց Վիրաբը ու աչքը գցեց դիմացի բլրին, վորի հետևից ոդը շեշտակի ճեղքելով, գալիս եյին թշնամու թնդանոթի զարկերն ու ավերմունք գործում դիրքերում։

Սակրավոր վաշտից մի ջոկ կուզեկուզ առաջ վազեց՝ քանդված կամուրջը շինելու համար։

Սև ձին հեծած՝ յերևաց նաև Ակոփը։

— Աղա, ամոթ չի՞, ինչ եք դիրքերում պարապ վեր թափել,—հանդիմանեց նա Վիրաբին ու Ծուտիկին,—չեք տեսնում կրակ են թափում սապյորների գլխին, գնացեք պաշտպանեցեք, թող կամուրջը շինեն,—կարգադրեց նա և շտապ հեռացավ։

Վիրաբն ու Ծուտիկը յերեք հոգի յել վերցրին ու հրացանների կեսերից բռնած՝ վազեցին դեպի զրահապատը։ Քանդված կամուրջի փոսում դիրք մտնելով, նրանք սկսեցին կրակ բացել թշնամու վրա, վորն աշխատում եր ինչ

գնով ել լինի խափանել կամուրջի նորոգումը։ Իսկ զրահապատն անհամբեր յետ ու առաջ եր շարժվում ու անընդհատ կրակում։

ՅԵՂԲՈՐ ԹՆԴԱՆՈԹԻՆ…

Տեղ հասնելով, մենք տեսանք, վոր նորոգելու համար շատ ժամանակ չի պահանջվում։ Կարծես ամեն ինչ լավ եր գնում։ Գնդակները մեզ համար անվնաս եյին անցնում, փոսումն եյինք։ Մեկ ել մեզնից շատ մոտիկ պայթեց թնդանոթի արկը։ Թշնամին թնդանոթն եր գործի դնում՝ մեզ այնտեղից քշելու համար։ Դրան վորպես պատասխան ներքևի փոսից վորոտացին մեր թնդանոթները։

— Ջան Կլիչ, սկսվեց,—ուրախացանք մենք։ Սկսվեց Կլիչ յեղբայրների կռիվը։ Մեր Կլիչն ամեն ինչ թողած՝ նշան եր բռնում թշնամու թնդանոթին։ Հետախույզներից մեկը հայտնել եր, վոր բլրի հետևի թնդանոթը, վորը խրփում ե կամուրջը նորոգող խմբին, հենց Կլիչի թնդանոթն ե։ Մինչ մեր Կլիչը յերկրորդ արկն եր դնում փողի մեջ, հանկարծ քանդված կամուրջի տակի հողն ու քարը խլացուցիչ դղրդոցով յերկինք թռան… Մի զույգ վոտներ յերևացին օդում ու մի մարմին ահռելի ուժով շպրտվեց կամուրջի գլուխը։

— Ախ, յես քո կերած կաթը…

Կլիչը կատաղությունից դողացող մատներով փակեց փականակն ու միքանի վայրկյան շունչը պահելով, սկսեց նշան դնել յեղբոր թնդանոթին։ Հսկա «հոբից»-ը վորոտաց ու թափ տվեց թաղված անիվները։ Փթանոց արկը գվվաց օդում և ահռելի ուժով խփեց հակառակորդի թընդանոթին։ Ջախջախված թնդանոթը հետ շպրտվեց և հողի մեջ թաղեց թշնամու ամենահմուտ թնդանոթաձգին՝ Կլիչին… Կրտսեր յեղբայրը հեռադիտակն աչքերին մի քանի վայրկյան շշմած մնաց. ապա նրա սրտից կարծես վաղուց ճնշող քարն ընկավ։

— Ոխայ, դե գնա ջհաննամը, դավաճան շան վորդի,— բացականչեց յեղբոր դահիճն ու կարծես անհագին ծանրությունից թեթևացած՝ հանդարտ թնդանոթի բերանը թեքեց դեպի ձախ թևը, ուր գործում եյին թշնամու քողարկված գնդացիրները:

Ազատվելով հակառակորդի թնդանոթի ռումբներից, կարմիր սալդաները պայթյունից դժվժացող ականջներով շարունակեցին կիսատ մնացած գործը, մի քանի րոպեյից հետո կամուրջը պատրաստ եր:

Նրանք զգուշությամբ ցած բերին գծի վրա շպրտված իրենց ընկերոջ այլանդակված դիակը:

Զրահագնացքն ուրախ սուլոցով սուրաց առաջ ու սկսեց հարվածել նահանջող թշնամուն: Որը մթնում եր: Վերջալույսի վարդագույն շողերի տակ այստեղ-այնտեղ առկայծում են գրոհող խմբերի մերկ սվինները:

ԿԱՊԻՏԱՆ ԱՐԱՄՅԱՆԻ ՓԱԽՈՒՍՏԸ

—Վիրաբ, կապիտանն աչքիս ալա-բուլա՞ չա՞յե-
րևում,—ասաց մի օր Ծուտիկը:
— Վո՞ր կապիտանը:
— Արամյանը:
— Ինչի՞ց ա չերևում:
— Շատ ա խեթ-խեթ մտիկ անում:—Ցավ նա կատյոլը
— Շատ ա խեթ-խեթ մտիկ անում:—Ցավ նա կատյոլը
—— Շատ ա խեթ-խեթ մտիկ անում:—Ցավ նա կատյոլը
խարույկի վրա կախ տալուց հետո պատմեց, թե ինչպես
նախկին կապիտանն անկյունից ատելությամբ նայում եր
իրեն և ընդհանրապես նա շտաբում իրեն այնպես ե պա-
հում, կարծես ռումբի վրա նստած լինի:
— Դատարկ բաներ են, ջանըմ, Արամյանն ազնիվ
մարդ ա, նրա միտքը վոր ծուռ լիներ, ինչի յեր մեր կողմն
անցնում, են ա կմնար դաշնակների մոտ, ելի:
— Չե, Վիրաբ, ինչ կուզես ասա, իմ սիրտը վկայում
ա, վոր դա բարի պտուղ չի:—Վիրաբն ուսերը թոթվեց:
—— Ո՞վ գիտի, հիմի ախպորն ել չի կարելի հավատալ,
ուր մնաց դաշնակցական կապիտանին:
Վեճը փակեցին: Ծուտիկը ծառի բնին թիկն տված
ընկերներին կանչեց: Կորեկի հացը բրդեցին տաք ջրի մեջ
և մեծ ախորժակով ուտելուց հետո պառկեցին գարնանային զով յերկնքի տակ և անուշ քուն մտան:
Քիչ անց, սպիտակ վրանից մեկը գաղտնագողի դուրս
յեկավ և կուզեկուզ անցավ ծառերի արանքով:
—- Պոստերն եմ ստուգում,—պատասխանեց նա պահակին, ցույց տվեց անցագիրն ու կորավ այգիներում:
Լուսադեմին խլրտումն ընկավ շտաբում: Կապիտան
Արամյանը փախել եր:

Հավանաբար այժմ նա խմբապետներին գլխին հավաքած՝ դուրս է տալիս մեր ռազմական գաղտնիքները։ Այդ փախուստը մեզ բավական ծանր դրության մեջ դրեց։ Հարկավոր էր արագ փոխել այն ծրագրերը, վորոնք հայտնի եյին փախչող կապիտանին։

Հարկավոր էր ուժերի վերադասավորում և տակտիկական մանյովրաներ կատարել՝ թշնամուն շփոթեցնելու համար։

— Ախր յես ասում եյի չէ՞... շան վորդին մեզ ենպես էր նայում, վոնց վոր թուրքը խոզի մսին,— կրկնում էր Ծուտիկը և ափսոսում, վոր վորսը ձեռքից բաց է թողել։ Անցածն անցած էր, հարկավոր էր հնարներ մտածել «դժբախտության» հետևանքները կանխելու համար։

Մինչ մենք գրոհի եյինք պատրաստվում, ամեն ինչ կատարվեց մեր սպասածի ճիշտ հակառակը։ Հենց նույն օրը յերեք կետից մեզ վրա հարձակվեցին Մարտիրոսի, Քյուրդ-Ղազոյի և Խնկոյի խմբերը։ Չկարողանալով դիմադրել թվով գերազանց թշնամու գրոհներին, մենք Ղամարլուն տվինք և նահանջելով, ամրացանք Ավշարի գյուղում։

Դժգոհությունն ու ձանձրույթն աճում էր այն ընկերների մեջ, վորոնք վոգևորված մեր հաջողություններից՝ Յերևանն արդեն մերն եյին համարում։ Շատերը տրտնջում եյին, վոր մեզ մոտ դաշնակցական բանակի օֆիցերներին ջոկեր և նույնիսկ վաշտեր են հանձնում։

Միքանի ժամվա ընթացքում կատարված փոփոխության հետևանքով մեր ձեռքից թռավ ամեն ինչ և շատերի մեջ չքացան վարդագույն հեռանկարները։

— Ա՜խ, կապիտան, թե ձեռքս ընկնես, միտք հում-հում եմ ծվատելու,— ասում էր Ծուտիկն ու նախատում Վիրաբին նրա միամտության համար։ Նրան թվում էր, թե բոլոր դժբախտությունների պատճառը կապիտանի դավաճանությունն է։ Յեվ նա մտքում հնարներ էր վորոնում

կապիտանին ճանկը գցելու համար, բայց շուտով ինքն ընկավ նրա ճանկը։

Այդ կատարվեց այսպես։

ՓՐԿԱՐԱՐ ԱՅԵՐՈՊԼԱՆԸ

Գարունը նոր էր բացվել։ Ջրերի ափերին գլուխները խոնարհած ուռենիները նոր բացված հազարավոր տերևներով ժպտում էին գարնան կենսաբեր արևին։ Հոգնած բանակայինները պառկում էին նոր բուսած կանաչի վրա և յերեսներն արևին դեմ արած՝ թմրում ու յերազում իրենց տունը, հարազատներին և ծանոթ հանդերն ու ծաղկավետ մարգագետինները։ Այժմ լավ էր, փետրվարյան դաժան ցրտերից ազատվել եյինք, սակայն օրերով հացի յերես չեյինք տեսնում։ Քաղցը մզում էր մեր սիրտն ու կտրտում աղիքները։ Մեկը մյուսին հաջորդող անհաջողությունները հուսալքում եյին առաջ բերել միքանիսի մեջ։

Հուսահատությունն ավելի կատաղանար, յեթե մի թեթև դեպք մեր մեջ հույսի նոր կայծեր չառաջացներ։

Մի առավոտ, յերբ առվի ափին ծուլ-ծուլ մեր շորերն եյինք լվանում ու փռում կանաչի վրա, մեկ էլ վերևից գոռոց լսվեց։

Վերև նայեցինք։ Ահա պողպատե թռչունը ճեղքում է սպիտակ ամպերն ու գալիս է ուղիղ դեպի մեզ։

—Այերոպլանը, այերոպլանը,—բացականչեցինք մենք։

Խրճիթներից դուրս թափվեցին կարմիր-բանակայինները, գեղջկուհիները, յերեխաները և ուրախ բացականչություններով լցրին օդը։ Շատերն ահով դեպի զենքերը վազեցին։ Միքանիսը նույնիսկ անկանոն սկսեցին կրակել դեպի վեր։ «Չլինի՞ թե հիմի էլ այերոպլան են գործադրում մեր դեմ», մտածեցինք մենք և սկսեցինք ահով դիտել պողպատե թռչունին։ Քիչ էր մնում թնդանոթներից կրակ բացենք խիզախ «թռչունի» վրա, մեկ էլ նկատեցինք, վոր այերոպլանից մի դրոշակ կախվեց։

— Աստղը, աստղը,—ուրախ բացականչեց հրամանատարը, հեռադիտակն աչքերից ցած առնելով:

— Մերն է:

— Մերն է, մերը:

Դիմացի բլուրի վրա հավաքվել են թշնամու խմբերն ու անհանգստությամբ դիտում են աէրոպլանին: Միքանի վայրկյան չանցած՝ նրանք սկսեցին համազարկեր տեղալ նրա վրա: Սավառնակը պտույտ գործեց, թեքվեց աջ և թռավ Փոքր Մասիսի կողմը: Բավական հեռանալուց հետո նա նորից ձախ ծռվեց, պտույտներ գործեց Նախիջևանի վրա և իջավ ցած:

Հրամանատարությունը վաղուց գիտեր, վոր Ռուսաստանից սավառնակով վոսկի յեն փոխադրելու Խորհրդային յերկրից անջատված մեր զորամասերի համար:

Յեվ յերբ հրամանատարը բարձրացավ մի քարի վրա և հայտարարեց, վոր աէրոպլանն ոգնություն է բերել մեզ համար Ռուսաստանից, տրամադրություններս բարձրացավ և ուռաներով թնդացրինք շրջակայքը:

Դիմացի բլուրներում թշնամու զինվորները հետաքրքրությամբ նայում եյին ու չեյին հասկանում մեր ուրախության պատճառը: Ով գիտե ինչեր եյին յենթադրում և սարսռում մեր անսպասելի ուրախությունից:

Մյուս որը Նախիջևանից բավական քանակությամբ հաց բերին, վորը վոսկով գնել եյին Պարսկաստանից: Այդ որը մենք առաջին անգամ «հինգ չեsվlrs» հաց ստացանք:

Այդ որը մեզ համար (ավելի շուտ մեր փորի համար) իսկական հարսանիք եր:

ԳՐՈՀԻ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ուրեմն մեզ չեն մոռացել: Ուրեմն վիթխարի «Ռուսաստանը» մեր թիկունքումն է: Ուրեմն այնքան ապահով ենք, վոր թշնամու գլխի վրայով ել ենք աէրոպլան քշում:

Յեվ այդ որը մեր մաքի հորիզոնը դուրս յեկավ մեր նեղլիկ ֆրոնտի նեղլիկ սահմաններից։ Առաջին անգամ լրիվին զգացինք մեր ուժը և մոտալուտ հաղթանակի գիտակցությունը արագացրեց մեր սրտի բաբախյունը։

Նոր շունչ առած՝ վճռական գրոհի պատրաստվեցինք։

Առաջին գործն այս եր. գնդի հրամանատար Բաղդասարյանը հենց այդ որն իր մոտ կանչեց Ծուտիկին և ձեռքը նրա ուսին դնելով, ասաց.

— Ծուտիկ ջան, շորերդ փոխիր, անցիր թշնամու թիկունքը, հետախուզիր Աղբաշ, Արտաշար և Դարղալու գյուղերը։

— Մենա՞կ,—հարցրեց պատանին։

— Չե, քեզ հետ Հայկոն կգա, ելի մայր ու վորդի կդառնաք ու կշրջեք։ Կուզե՞ք մուրացկանի պարկ ճարեմ ձեզ համար, – կատակեց նա։

— Յես դուրս կպրծնեմ, ընկեր հրամանատար, մի մատծի, միայն ասա, թե ինչ ենք պարզելու։

— Վորոշել թշնամու ուժերի չափը և պարզել, թե վո՞ր կետում ինչքա՞ն ուժ ունեն։ Պարզիր, թե թշնամու վո՞ր կետը չի պաշտպանված, վոր...

—Լավ, մնացածը գիտեմ,—կտրեց պատանին և վազեց Հայկոյի մոտ։

Նա Հայկոյին գտավ կանաչ ուռենու տակ, զինվորների գուլպաները կարկատելիս։ Միքանի զինվորներ ուրախ կատակներ եյին անում գեղջկուհի հետախույզի հետ, իսկ նա սրտնեղած եր յերևում։

—Դե, հողեմ գլուխդ, քո սրտիցը չունեմ, յախիցս պոկ արի,— ասում եր նա «յալանչի Մկոյին», վորը ծիծաղաշարժ ոյինբազությունններով ուզում եր ուրախացնել վշտացած կնոջը։

Հայկոյին գնդում քրոջ նման սիրում եյինք և ամեն կերպ աշխատում եյինք ուրախ պահել։ Բայց նրա վիշտը

շատ եր խորը յերևում։ Հաճախ, յերբ ժպտում եր, պարզ յերևում եր, վոր կարծես մեր խաթրը չկոտրելու համար եր ժպտում։ Սակայն նրա աչքերի տխրագին փայլը, թախծոտ հայացքը վկայում եյին նրա խռոված ներքինի մասին։

Վորդու այլանդակված դեմքը՝ խրճիթի փլատակների տակ—նրա աչքի առաջից չեր հեռանում։ Իսկ ամուսնու մասին վոչ մի տեղեկություն չկար։ Մի ամիս առաջ Դարալագյազից յեկած մի ջոկապետ պատմել եր, վոր Արմենակը պուլեմյոտչիկ ե և կռվում ե Յապոնի խմբերի դեմ։

— Իգիթ տղա յե, իգիթ, ինչպես ե հնձում պոլիմոտով, վոնց վոր սուր գերանդին հասած արտի մեջ,—ավելացրել եր նա։ Իսկ այդ որվանից քանի-քանի ձախորդություններ եր յեկել Դարալագյազում գործող մեր զորամասերի գլխին։ Քանի-քա՛նի անանուն հերոսներ եյին ընկել անծանոթ լեռներում, քարերի ու թփերի տակ։ Ի՞նչ իմանաս, վոր Արմենակն ել չի ընկած մի կորած-մոլորած փոսի մեջ անտեր ու հարամու բերանում...

Յեվ յերիտասարդ կնոջ սիրտը կծկվում եր ցավից ու անդադար կրկնում եր.

— Ախ, սրան ել վերջ կա՞, թե չե։

—Տո, մորաքուր ջան, ի՞նչ ես նոթերդ կախել,—լսվեց պատանու ուրախ կանչը։

Հայկոն գլուխը վեր քաշեց և մելամաղձոտ նայեց պատանու խաշված դեմքին։

— Ննկություն անելու ժամանակ չի, վեր կաց, վրա յենք տալիս։—Ապա Ծուտիկը բռնեց նրա թևից, վեր քաշեց ու կարճ զեկուցեց հրամանատարի կարգադրության մասին։

Հայկոն ուրախացավ։ Նստակյաց կյանքը միայն անցյալի տխուր հուշերն եր զարթեցնում նրա մեջ։ Յեվ գեղջկուհի Հայկոն իր վիշտը մոռանում եր միայն թնդանոթների վորոտների մեջ և հետախուզական զինվորի աշխատանքներում։

ԾՊՏՅԱԼ ՀԵՏԱԽՈՒՅԶՆԵՐԸ

Մի-մի կապոց փայտ շալակած՝ նրանք շրջում են այգիներում և գաղտագողի նայում այստեղ-այնտեղ մեկնված զինվորներին և բուրգեր կապած հրացաններին: Ցախը դնում են ցած և քաղցր զրուցում զինվորների հետ: Ապա առաջ են շարժվում, ծառերից չորացած ճյուղեր պոկում, դարսում իրար վրա, կապում և մանրամասն հետախուզում շրջակայքը: Նրանք այդ որը մերթ ցախ հավաքելով, մերթ բրիչները ձեռքերին արմատիք քանդելով, ամբողջ ֆրոնտի յերկարությամբ կտրեցին և տեսան, թե վո՛ր կետերում է կենտրոնացած թշնամին և վո՛ր տարածություններն են անպաշտպան: Մի գյուղացուց նրանք իմացան, վոր յոթ վերստ հեռու հարևան գյուղում մի քանի վաշտ կա: Նշաններից յերևաց, վոր ա՛յդ է թշնամու ունեցած-չունեցած պահեստի ուժը:

Ամենից կարևորը.—պարզվեց, վոր թշնամին իր բոլոր գնդացիրները, թնդանոթները և ունեցած զորքը բլուրներն է հանել, զորաշարժեր է անում և այդպիսով մեր աչքում ահագին ուժ է յերևցնում:

— Քամակը դատարկ ա, կքշենք,— ուրախացած շշնջաց Ծուտիկը:

Յերեկոյան դեմ Հայկոն յեղած տեղեկությունները տարավ շտաբ, իսկ Ծուտիկը մտավ Աղբաշ գյուղը:

ԿԱՊԻՏԱՆԻ ՃԱՆԿԵՐԻ ՄԵՋ

Պահակի աչքին կասկածելի թվաց ցնցոտիները հագին մի պատանի, վորը պտտում եր շտաբի շուրջն ու մի կերպ աշխատում եր ներս խցկվել բակը: Քիչ անց մի ուրիշ պատանի յեզներն առաջն արած բակը մտավ: Ցնցոտիներով պատանին խառնվեց յեզներին և նրանց տերը ձևանալով, մտավ բակ ու սկսեց անհանգիստ դիտել թափթփված զենքերը,

հեռախոսը և գլխեց ուղղակի պահեստի կողմը: Պահակը հասավ հետևից, վզից բռնեց և տարավ շտաբ:

— Կոմիսար Թաշտաուրի բարեկամն եմ, մեր գառն եմ փնտրում, չկա...

Նրա խոսքը կիսատ մնաց, դուռը բացվեց և ներս մտավ բարձրահասակ, փայլուն ուսադիրներով կապիտանը: «Այ թե թակարդն ընկա հա», մտածեց պատանին և չորս կողմը նայեց՝ ճղելու համար:

— Ո՛, այդ դո՞ւք եք, սիրելի Ծուտիկ, շատ ուրախ եմ, շատ ուրախ եմ, վոր մեզ այցի յեք յեկել,—բացականչեց կապիտան Արամյանը և դառնալով հարցաքննող պրապորշչիկին, ասաց.

— Դուք բռնել եք մեր թշնամու ամենաճարպիկ հետախույզին:—Սեղանի շուրջը նստած աստիճանավորները վեր թռան և զարմանքով լի հայացքները հառեցին ցնցոտիապատ պատանուն: Ծուտիկը կուչ յեկավ ու տեղը քարացավ: Նա տեսավ մոտալուտ մահվան ուրվականը և ուժերը հավաքելով, ասաց.

— Պարոն կապիտան, յեթե ինձ խփեք, մեծ վնասներ կտանաք, վորովհետև յես պարոն Սմբատին շատ կարևոր ռազմական գաղտնիքներ ունեմ հաղորդելու: Ուղարկեցեք ինձ պարոն Սմբատի մոտ, այնուհետև՝ դուք գիտեք:—Կապիտանը մի քանի վայրկյան տատանվեց, ապա հրամայեց ֆելդֆեբելին.

— Դրան քսան մտրակ: Ուժեղ պահակախմբով ուղարկեցեք պարոն Սմբատի մոտ և ասացեք, վոր վտանգավոր շպիոն է, կապիտան Արամյանն անձամբ ճանաչում է:—Քիչ անց մյուս սենյակում լսվեց պատանու բղավոցը և մտրակի ծանր ու համաչափ զարկերի ձայնը:

Մի քանի րոպեից հետո չորս հոգուց բաղկացած պահակախումբը ջարդված ու արյունլվա պատանուն վոտքով տարավ Աղհամզալու գյուղը և ներկայացրեց խմբապետ Սմբատին:

ԽՄԲԱՊԵՏ ՍՄԲԱՏԻ ԱՌԱՋ

Լայն կրծքով, վիթխարի հասակով, հաստ թշերով ու պարանոցով և շիկավուն գանգրահեր մազերով մարդը բավական քաղաքավարի ընդունեց պատանուն։ Չնայած իր խստաբարո բնավորությանը, այս անգամ «Պալկովնիկ Սըմբատը» նույնիսկ չփրփրեց, երբ պահակախմբի պետը ներկայացնելով պատանուն, ուղիղ ձգվեց, ձեռքը ճակատին դրեց ու զեկուցեց, որ ներկայացվող կալանավորը թըշնամու հետախույզներից է։ Խմբապետ Սմբատը չէր ճանաչում պատանուն, բարեբախտաբար պահակապետն էլ մոռացավ հայտնել, որ կալանավորը հուշակավոր Ծուտիկն է, շատերից հետախուզվող փախչողը։

— Նստեք, — ասաց Սմբատն ու նստելով գրասեղանի հետևում, սկսեց խուզարկու հայացքով զննել պատանուն։ Պահակապետը հարգանքով պատվի բռնեց և շուռ եկավ, որ գնա, մեկ էլ կարծես մի բան հիշելով ետ դարձավ, նորից ձեռքը ճակատին դրեց և մեղավորի նման կմկմաց։

— Ձերդ գը-գը... գերազանցություն, կալանավորը շպիոն Ծուտ...

— Լավ, լավ, մի երկարացնի, գնա՛, մարշ։ — Պահակը խմբապետի խիստ հայացքից շփոթվելով, շուռ եկավ ու վախվխելով դուրս գնաց։

Ծուտիկի խեղճացած, անմեղի կեղծ արտահայտություն ստացած դեմքը, փոքրիկ հասակը, կարկատած շորերը դիտելով, խմբապետը ամաչեց նույնիսկ մտածել, որ ողորմելի այս էակը թշնամի կարող է լինել։

— Ո՞վ է քեզ ուղարկել և ի՞նչ խնդիր է տվել, — ձայնը կեղծ խստացրեց խմբապետը։

Պատանին համարձակ տոնով սկսեց.

— Ես փախել եմ կարմիրների մոտից և գնում եմ Ղամարլու խմբապետ Մարտիրոսի մոտ, մի քանի շպիոններ կան՝ բռնել տալու։

— Ի՞նչ շպիոններ, — հետաքրքրվեց խմբապետն ու ականջները սրեց։ Պատանին կեղծ քմծիծաղ տվեց ու շարունակեց.

— Ի՞նչ շպիոններ... այս գյուղերում քի՞չ են կոմունիստները։ Այ, ես գիտեմ Ղամարլվից, Յուվալից 5—6 մարդու, որոնք շորները փոխած շրջում են ձեր գրաված գյուղերում, գաղտնի ժողովներ են անում և ձեր թիկունքում ապստամբություն են պատրաստում։

— Ի՞նչ, ապստամբությո՞ւն, — մռնչաց խմբապետը և լիովին հավատալով պատանու ասածներին, մեղմությամբ և արագ-արագ ասաց.

— Դե ուրեմն շուտ, քեզ մի լավ ձի և թիկնապահներ կտրամադրեմ, շտապ հասիր պարոն Մարտիրոսի մոտ և սրիկաներին բռնել տուր։ Անա, վերցրու։ Այս ասելով խմբապետը դարակը բացեց և մի կապոց «ճախարակ» թղթադրամ հանելով, մեկնեց պատանուն։ Այդ գործը հաջող ավարտելուն պես քեզ նվերներ եմ տալու և նշանակելու եմ ավագ հետախույզ։

— Ի՞նչ եք անում, պարոն Սմբատ, — նեղացավ պատանին և հետ-հետ քաշվեց։ — Ես միայն իմ պարտքն եմ կատարում, սրիկաները մեր գյուղը թալանեցին, կռվում մեր հարևան Արասին խփեցին, ընկերոջս կնոջը բռնաբարելով սպանեցին, էլ որն ասեմ, մեկ-մեկ արյունները պետք է խմեմ, որ սիրտս հովանա։ — Յեվ Ծուտիկն ատելությամբ լցված դեպի դաշնակ-մաուզերիստները, դաշնակցական խմբապետին ցույց տվեց ձախ հոնքը.

— Տեսնո՞ւմ եք, պարոն Սմբատ, այդ շներն են վոտի տակ տվել ու սապոգով խփել։ Զարխեջի մոտ բռնեցին ու մի լավ ջարդելուց ու բանտ դնելուց հետո աքսորեցին։ Այդ շների արյունը պետք է թափեմ, որ սիրտս հովանա։

Խմբապետը հրճվանքով ու կարեկցությամբ նայում էր պատանու կայծեր արձակող աչքերին։ Այդ րոպեին Ծու-

ռիկը հենց նոր բռնված վագրի ձագի յեր նմանվում, վորը ժանիքները ցցած, արնակալած աչքերով վանդակի ճաղերի արանքից նայում է իր ազատությունը կապողի աչքերին։

Խմբապետի մտքով կարո՞ղ եր անցնել, վոր կալանավորված մի խղճուկ պատանի կարող է այդքան աղբ թափել իր և իր կուսակցության վրա։

— Յեվ յերբ յես իմ վրեժն եմ ուզում հանել սրիկաներից,— շարունակեց պատանին վրդովված,— կապիտան Արամյանը առանց հարցաքննելու ինձ քսան մտրակ է խփում,— վերջին բառերն արտասանելիս նրա շրթունքները դողդողացին ու աչքերում արցունքի կաթիլներ յերևացին։

— Ի՞նչ, մտրակ է խփե՞լ,— մռնչաց խմբապետն ու վեր կենալով տեղից, դիմեց դեպի դուռը։

— Ե՜յ, ո՞վ կա այդտեղ։— Ներս մտավ ադյուտանտը և պատվի բռնեց.

— Ի՞նչ եք հրամայում, պարոն գնդապետ։

Խմբապետի մեջ կապիտանն իր փայլուն դիրքով միայն հակակրանք եր առաջ բերում։ Մանավանդ նրա վերջին ծառայությունը (կարմիրներից փախչելը) վողջ հրամանատարության մեջ հարգանք եր առաջ բերել դեպի ինքը։ Այդ եր, վոր չեր կարողանում տանել խմբապետ Սմբատը։ Նա, վոր յերկար տարիներ Անդրանիկ փաշայի աջ թևն է յեղել, այսոր ավելի քիչ հարգանք վայելի, քան մի ինչ վոր լպստված կապիտան։

Յեվ խմբապետ Սմբատը հակառակորդին քշելու համար առիթը ոգտագործեց։ Նա շտապ մի հրաման գրեց, վորով մի քանի մեղադրանքների հետ միասին կապիտանին մեղադրում եր «թշնամու ճանկերից փախած մեր լավագույն հետախույզին առանց քննելու, ինքնագլուխ ռոզգի-տալու» մեջ։ Վերջում ասված եր.

«Առաջարկում եմ անմիջապես հրամանատարությունից հանձնել պարոն Մուշեղին յեվ ներկայանալ շտաբին»։

Հրամանը սուրհանդակին հանձնելուց հետո, խմբապետը բավական ժամանակ վրդովված անց ու դարձ արավ, ապա դառնալով պատանուն, ասաց։

— Արդեն ուշ է, ճանապարհները վտանգավոր են, մնա, առավոտյան շուտ կգնաս։— Ապա ադյուտանտին պատվիրեց, վոր առավոտյան լույսը չբացված՝ մի լավ ձի տրամադրեն նրան։ Պահակներին կարգադրվեց, վոր պատանուն լուսադեմին դուրս թողնեն։ Անցագիրը ևս պատրաստ եր։ Այնուհետև խմբապետը հարց ու փորձ արավ պատանուն թշնամու ուժերի և մտադրությունների մասին։

Վերևում մենք տեսանք, վոր մերոնք վճռական գրոհի յեն պատրաստվում։ Իսկ Ծուռիկը խմբապետին հավատացրեց, վոր կարմիրները պատրաստվում են նահանջելու Նախիջևան, վորովհետև ըստ լուրերի «Նժդեհը Դարալագյազից գոռում է»։ Ապա մի քանի սուտ ու սխալ տեղեկություններ տվեց և հետո խնդրեց իրեն թույլ տան քնելու հենց այդտեղ՝ մի անկյունում։

Խմբապետը մի ոֆիցերի հարևան սենյակը առաջարկեց, բայց Ծուռիկը հրաժարվեց, պատճառաբանելով, վոր գիշերն է դուրս գալու, չի ուզում անհանգստացնել ոֆիցերին։

— Եյ, լավ շորեր բերեք տղայի համար,— հրամայեց խմբապետը։ Քիչ անց՝ բերին և Ծուռիկին հագցրին նոր կարած զինվորական շորերը, բոլորն անգլիական։ Նա միջանցքում իր ցնցոտիները հանեց, դուրս գցեց, նոր շորերը հագավ և անգլիական շինելի մեջ փաթաթվելով, պառկեց գրասենյակի մի անկյունում թափված անգլիական թամբերի վրա։

ԳԻՇԵՐԱՅԻՆ ՆՎԵՐ ԽՄԲԱՊԵՏ ՍՄԲԱՏԻՆ

Գիշերվա մինչև ժամը մեկը շտաբում ոֆիցերները և խմբապետները խորհրդակցում եյին և նոր տեղեկությունների հիման վրա մշակում հարձակման պլանը։ Շատ ուշ ներս մտավ զինված մի մարդ և ինչ որ հեռախոսագիր տվեց խմբապետ Սմբատին։ Սա կարդաց և ցույց տվեց մյուսներին։ Նկատվում եր, վոր բոլորն ել մտահոգության մեջ ընկան։ Վերջում յերբ վեր կացան, Ծուռիկը այսքանը միայն լսեց—«լավ ե, վոր չգիտեն, թե չե չեն նահանջի։ Ուրեմն չմոռանաք, գրոհում ենք վաղը յերեկոյան»։

Ապա Ծուռիկը նկատեց, թե ինչպես սեղանի վրայի բոլոր թղթերը խմբապետը հավաքեց, դրեց դարակը, ձգվեց ահագին հասակով, հորանջեց և հոգնածությունից որորվելով, դուրս գնաց։

Ծուռիկը մնաց մենակ և քիչ անց բաց դռնից տեսավ, թե ինչպես պահակը ամբողջ մարմնով հենվել ե պատին ու ննջում ե։

Ծուռիկն ամեն կերպ աշխատում ե հաղթահարել հետզհետե իրեն տիրապետող քունը, սակայն իզուր, անդամները թմրում են ցավից ու հոգնածությունից և կոպերը հետզհետե ծանրանում են։ Կես քուն, կես արթուն՝ նա կանացի թեթև ճիչ լսեց։ Վեր թռավ և լուսնի շողքով տեսավ մի կարճ մարդ ինչվոր աղջկա թևն ընկած տանում ե դեպի խորքի դուռը։ Աղջիկը հևում ե, հիստերիկ շարժումներ ե անում և աշխատում ե դիմադրել, իսկ կարճահասակ մարդը կամաց թշշացնում ե նրա ականջին. «Սս... խմբապետը կիմանա, կխփի...»։

Խորքի դուռը բացվեց և յերևաց խմբապետի յերկար հասակը՝ գիշերային շորերով։ Նա առաջ յեկավ, գրկեց աղջկան ու ներս տարավ։ Դուռը ծածկվեց ու հետևից լսվեց բանալու չրխկոցը։ Ի՞նչ անասնական ժպիտ կար այդ մարդու դեմքին։ Ծուռիկը զզվանքով ու կատաղությամբ յերեսը դարձ-

րեց և սկսեց մտածել խեղճ աղջկա մասին։ Նրա քունը փախավ և սկսեց շուռ ու մուռ գալ թամբերի վրա, վորոնք վոչ մի կերպ չեյին հարմարվում նրա տակ և ցավեցնում եյին նրա կողերը։

ԹԱՆԳԱԳԻՆ ՊԱՅՈՒՍԱԿԸ

Պատի ժամացույցը չորսը խփեց։ Ծուռիկը վեր կացավ անկյունից, շինելը հագավ, գոտին ամուր կապեց և մոտեցավ շտաբի պետի սեղանին։ Նա զգուշությամբ քաշեց սեղանի դարակը և մթնում՝ չիմանալով ինչը վերցնի, ինչը թողնի, յեղած բոլոր թղթերը հավաքեց, զգուշությամբ խոթեց պայուսակի մեջ և շինելի տակ գոտկին ամրացնելով, հանդարտ դուրս յեկավ։

Ննջող պահապանը նրա ոտնաձայնից հանկարծակիի յեկավ, վեր թռավ և ճանաչելով որպես «թանգագին հյուրին», ժպտալով հարցրեց.

— Հիմա՞ յես ուզում գնալ։

— Այո։

— Ես բողեյխս։

Մի քանի րոպե չանցած՝ Ծուռիկը արդեն ձիու վրա յեր։ Գյուղի ծայրին մթնում պահակները տնտղեցին նրա անցագիրը և բաց թողեցին։ Նա Ղամարլվի ճամբան բռնեց։

Ճանապարհի յերկու կողքերին տեղ-տեղ կրակներ են վառվում և լուսավորում են շրջապատող բացօթյա գիշերող մարդկանց մռայլ դեմքերը։ Արձակված յեզները կրծում են նոր ծլած կանաչը, իսկ միջնադարյան սայլերը իրենց կմախքացած կողերն են ցցել։ Յեվ թվում ե, թե ծայր չունի գաղթականության այդ շարանը։

— Ո՞ւր եք գնում, բիձա,—հարցնում ե Ծուռիկը ձին կանգնեցնելով։

— Զայնամի ենք եթալի,— պատասխանում ե գյուղացին սրտնեղած։ Դաշնակների տարածած «տապորնի կամանդի» զոհերն են։

Լույսն արդեն բացվում ե։ Հիմա ուր վոր ե կհետապնդեն իրեն։ Ապա հիշելով դժբախտ աղջկան, ինքն իրեն քմքածիծաղ տվեց. «չե այս անգամ գոնե անտեղի չանցավ, կմրափի մինչև կեսոր», — մտածեց նա և ձիու գլուխը թեքեց, ճանապարհից դուրս յեկավ և քարքարոտ բլուրներով Ավշարի ուղղությունը բռնեց։ Նա արդեն հինգ տարի նման ճանաչում եր ճակատը և գիտեր թշնամու շղթան վորտեղ ե կտրվում։

Թշնամուց աննկատ մնալու համար նա ձիուց իջավ, ձին մի թփից կապեց և քարերի արանքներով մտավ այն ձորակը, վորտեղ մի քանի վերստի վրա պոստեր չկային։

ԻՆՉ ԵՆ ՊԱՏՄՈՒՄ ԹՂԹԵՐԸ

Արևածագի հետ նա մտավ Ավշար և ներկայացավ գնդի հրամանատարին, վորը նրան ընդունեց ժպիտը դեմքին։

—Տղա, անգլիական օֆիցեր ես դարձել,— ասաց հրամանատարը, նայելով Ծուտիկի անգլիական նոր շինելի պղնձյա կոճակների առյուծներին։

Հետախուզության արդյունքների մասին մանրամասը զեկուցելուց հետո Ծուտիկը գոտին արձակեց և պայուսակը բացելով, թղթերը շուռ տվեց սեղանի վրա։

— Զոկեցեք, բերել եմ ինչ վոր ճանկս ե ընկել։—Հրամանատարը հետախոսագրերի, ռազմական պլանների և դաշնակցական «Ազատ Հայաստան» թերթի համարների կույտը տեսնելով, հիացմունքով բացականչեց.

— Մալադեց։—Ապա կարգադրեց Ծուտիկին վորպես նվեր տալ 5 ֆունտ քիշմիշ և 1000 ռուբլի չեկ փող։ Մինչ Ծուտիկը Ակոփին, Մանուկին և յերեք ուրիշ ընկերների գլխին հավաքած՝ խժռում եյին Նախիջևանից ստացված չամիչը, շտաբում գնդի հրամանատարը, զինկոմը և մի քանի վաշտապետներ աչքի եյին անցկացնում թշնամու հետախոսագրերն ու քարտեզները։ Հենց այդ ժամանակ Ծուտիկը ներս ընկավ և չամիչը բերանին ղղլացրեց.

— Ընկեր հրամանատար, եդ թղթերից մեկը կարդալիս խմբապետները մռութները շատ փիս կախեցին, մի տես ինչ բան ա։

Հրամանատարը բարեսրտությամբ ժպտաց.

— Տեսել ենք, այսոր կիմանաս, թե ինչու եյին մռութները կախել։ Միայն մի բան իմացիր, վոր թշնամու ամբողջ գաղտնիքները բերել ես, ապրես, այժմ գնա պառկի հանգստացիր։ Դե, մարշ։

Զարաբատիկ հետախոսագիրը պահանջում եր խմբապետ Սմբատից խորամանկ մանյովրաներով ֆրոնտի ձախ թևի ամբողջ գունդը շտապ ուղարկել Յերևան՝ քաղաքը պաշտպանելու համար։

Ծուտիկին կանչեցին։

—Թշնամու ձախ թևում վորևե փոփոխություն չնկատեցի՞ր, — հարցրեց հրամանատարը։

— Ընկեր հրամանատար, յերեկ յերբ յես հետախուզում եյի, թշնամու ձախ թևը ուժեղ եր, ամեն ինչ կարգին եր, բայց այսոր առավոտյան բլուրներում համարյա մարդ չեր մնացել, միայն պահակներ են։ Գաղթական սայլվորները ասացին, վոր գիշերը դեպի յետ շատ զորք ե գնացել։

Հրամանատարի դեմքը փայլեց ուրախությունից և նա ձեռքերը բավականությամբ շփելով, յեզրակացրեց։

— Լավ, ուրեմն Յերևանի հրամանը կատարված ե։

Այնուհետև Ծուտիկը քարտեզի վրա ցույց տվեց, թե թշնամու աջ թևի վոր կետերն են դատարկ, վորտեղից կարելի կլինի թշնամու «ծոցը մտնել» և նրան խուճապի մատնել։

ԳԵՐԻՆԵՐԸ ԿՈՄՈՒՆԱՐԿԱՅՈՎ

Կես ժամ չանցած՝ յերկու վաշտ կարմիր-բանակայիններ Ծուտիկի ցույց տված «պատռվածքներով» ներս խու-

մեջ թշնամու տերիտորիան և սկսեց զբաղեցնել նրան, մինչև վոր ղազախեցի Ակոփի վաշտը գաղտնի պատ յեկավ քարքարոտ բլրով, ջարդեց ձախ թևի փոքրաթիվ պահակներին և անցավ թշնամու թիկունքը:

Թշնամու ամբողջ արտիլերիան և մոտ 300 հոգի գերի վերցրինք: Գերիներից իսկույն խմբապետներն ու ոֆիցերները առանձնացվեցին, իսկ շարքայինների գլխներին հինգթևյան աստղավոր կոմունարկաներ դրին ու խառնելով կարմիր վաշտերին, առանց ժամանակ կորցնելու արշավեցին Ղամարլուի վրա, ուր բուն եր դրել խմբապետ Մարտիրոսը:

Այսպես «այցի գնաց» Ծուտիկը խմբապետ Մարտիրոսին: Բայց Նրան այնտեղ չգտան: Խմբապետը լսելով Սմբատի զորքերի խայտառակ պարտության լուրը, մինչև Յերևան մի շնչում եր ճղել:

Մյուս որը և հաջորդ գիշերը նահանջող թշնամուն անընդհատ հալածելով, կանգ առանք Յերևանի աչքի առաջ՝ Նորագավիթ գյուղում: Մնում եր պարզել թշնամու ուժերը, դասավորությունները և գրոհել քաղաքի վրա:

Այդ գործը Ռազմժողկոմ ընկ. Ավիսը հանձնարարեց Ծուտիկին:

ԹՇՆԱՄՈՒ ՄԱՅՐԱՔԱՂԱՔՈՒՄ

Տեղում է վաղ գարնան առաջին անձրևը: Թիթեղյա տանիքներից ջուրը հոսում է մաշված ու քանդված մայթերի վրա և արագ աճում է կակուղ ցեխը տենդագին յերթևեկող ամբոխի վոտների տակ: Ղանթարի տակ «բան ճանկելու» դուրս յեկած բազմությունը իրար խառնվեց: Ծուտիկը տեսավ, թե ինչպես Ղանթարի տակ, արկղները փակվելու ժամանակ բազմությունը հորձանք տվեց: Արկղները բարձրացան օդում, մարդիկ մթերքների հետ կոխկրտվեցին ցեխի մեջ և խլեցին, տարան ով ինչ կարող եր: Նրա կողքով հեծնե անցավ մի «խուժան»՝ ամերիկյան հակից փախցրած յերկար վերարկուները ցեխի մեջ քարշ տալով:

Անձրևը կտրեց և նա նայեց ծակ վոտնամաններից ներս հոսող ցեխաջրին: Ապա բարձրացավ բուլվար: Նրան դիմավորեց լրագրավաճառների ականջ ծակող կանչը՝ «Ազատ Հայաստան... ազատ Հայաստան... հետաքրքիր լուրեր ֆրոնտից»: Նա վազող լրագրավաճառին կանգնեցրեց.

— Թերթում ինչ լուրեր կան:

— Հետաքրքի՜ր, հետաքրքի՜ր,—յերգելով առաց լրագրավաճառը,—բոլշևիկները ճզում են, Ղամարլուն մեր... —Նրա խոսքը բերանում մնաց, ծանր ապտակից աչքերը «կայծակին տվին»:

—Ել եդպես բաներ չասես,—ասաց Ծուտիկը, 20 ռուբլի չեկ տվեց, մի թերթ վերցրեց ու գնաց: Հետևից լրագրավաճառը դեռ փրփրած հայհոյում եր:

ԹԵՐԹԸ ԲՌՌՈՒՄ Ե...

Նա նստեց քաղաքային ժամացույցի տակ և սկսեց նայել թերթին: Առաջին հայացքից աչքի խփեցին աֆիշային խոշոր տառերը:

ԱԶԱՏ ՀԱՅԱՍՏԱՆ

ՈՐԳԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՓՐԿՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵՅԻ

Դրա տակը խոշոր սև տառերով

> Ղամարլվի ֆրոնտում ջարդված թըշնամին իր վերջին շունչն է ապրում.
>
> «Յուրաքանչյուր ազնիվ հայ, վոր հարգում է իր ազգի, յեկեղեցու և ընտանիքի պատիվը, պատանուց սկսած մինչև ալեհեր ծերունին, պետք է զենք վերցնի և կռվի յերթա բարբարոս բոլշևիկների դեմ»:

Ապա հենց խմբագրականի տեղ տպված եր Հայաստանի Փրկության Կոմիտեյի նախագահ Ս. Վրացյանի ստորագրությամբ յերկու հրաման.

Առաջին հրամանը մինչեվ 50 տարեկան քաղաքացիների մոբիլիզացիա յեր հայտարարում, իսկ յերկրորդով Հայաստանի նախագահը կեղծավոր լեզվով ուզում եր համոզել «հայրենիքի զավակներին», վոր չհավատան այն լուրերին, թե իբր թշնամին հաղթում է Ղամարլվի ֆրոնտում: «Սուտ լուրեր, ստոր պրովոկացիաներն ել բոլշեվիկների աղտոտ ժառանգություն մնաց: Կհրավիրեմ բոլոր ազնիվ քաղաքացիներին, այսուհետեվ հավատալ միմիայն կա-

ռավարության պաշտոնական հաղորդագրություններուն: Հայաստանի Փրկության Կոմիտեյի նախագահ՝ Ս. Վրացյան»:

Ծուռիկի կատաղությունը բերեց մեծ տառերով տըպված հետևյալ լուրը. «Անհավատ բոլշեվիկները թալանեցին Ավշարի յեկեղեցին յեվ այն իրենց հրոսակախմբի արտաքնոցը դարձրին»:

«Ախ, լիրբ շան վորդի, բա վոր Հայաստանի նախագահն եդքան սուտ ասի, բա ել ինչի՞ չես հրաման գրում պրովոկացիաների դեմ»: Յեվ Ծուռիկը ներքին շրթունքը կծեց ու յեղունգով պոկեց Վրացյանի ստորագրությունները:

Թերթի առաջին յերեսի վերջին անկյունում նրա աչքովն ընկավ դաշնակցության կենտրոնական բյուրոյի դիմումը՝ ուղղված «աշխարհի բոլոր ազնիվ սոցիալիստներին, 2-րդ սոցիալիստական ինտերնացիոնալին յեվ... 3-րդ միջազգայնականին (ինտերնացիոնալին)»:

—Կոմինտերնին, այ քեզ ախմախություն...—Յեվ Ծուռիկը թերթը ծնկներին սկսեց իրեն-իրեն հռհռալ: Յեվ նա իրավունք ուներ, ինչպես այդ դիմումի մեջ դաշնակները բոլշևիկյան կուսակցությունների կենտրոնին՝ Կոմինտերնին խնդրում եյին ազատել Հայաստանը են ել ուրիշ... բոլշևիկներից:

— Հո՞րի կխնդաս, իշու ձագ,—բոռաց մեկը դեմից: Միլիցիոներ ե:

— Ծղոտ բոլշևիկների հետևից կխնդամ,—պատասխանեց պատանին և ցույց տվեց թերթը:—Վորտե՞ղ է դաշնակցության գլխավոր շտաբը,—հարցրեց նա:

— Ծո, փոլքոտ լամուկ, ընչի՞ ռեխիդ գյորա չես խոսի,—հայհոյեց միլիցիոներն ու թքոտելով հեռացավ:

ԱՅԼԱՆԴԱԿՎԱԾ ԴԻԱԿԸ

Հանկարծ Նալբանդյան փողոցից խառնիճաղանճ մի բազմություն դուրս յեկավ և թեքվեց դեպի ժամացույցի տակի հրապարակը։ Ամբոխի առջևից գնում էր մի սայլ, նրա կողքերից յերկուական ձիավոր զինվորներ։ Իսկ հետևում անկանոն շարքերով ամեն գույնի մարդիկ, մեծ մասամբ արդեն ալեհեր կամ մազերը «չալած»։

— Ես ինչ ա,—հարցրեց նա մեկին։

— Մոբլիզացի։

— Ո՞ւմ։

— Քու չես, հիթսուն տարեկաններին։—Նա հրմշտելով առաջ անցավ և սայլի մոտ մնաց քարացած։ Սայլի մեջ ընկած էր հոշոտված մի դիակ։ Նրա քիթը կտրված էր արմատից և յերեսին կախված՝ տարուբերվում էր սայլի թխթխկոցից։ Յերեսը կտրտված էր խանչալով, իսկ խավարած աչքերից մեկը դուրս էր պրծել բնից։ Նրա կրծքին անկած էր մի փայտ, որի վրա մի կտոր տախտակ էր ամրացրած։ Կրծքին տնկել եյին այնպես, ինչպես Հողժողկոմատի փորձնական այգիներում «ղըռ» հողի մեջ մուրճի հարվածների ուժով իր համար տեղ է բացում «ընիրը», որպեսզի վրայի տախտակի վրա կարդաս՝ «մուսկատ», «խաչաբաշ», «խծապտուկ»։ Այդ տախտակներն են քեզ ծանոթացնում անծանոթ խաղողի տեսակների հետ։ Դիակի մսի մեջ տնկած տախտակն էլ այդ մարդու «տեսակը» հասարակությանը հայտարարելու համար էր՝

«Դասալիք զինվոր
ազգի դավաճան»

Պատանու մարմնով սարսուռ անցավ։

ԳԼԽԱՎՈՐ ՇՏԱԲՈՒՄ

Նա մեկից խնդրեց ցույց տալ դաշնակցության գլխավոր շտաբի շենքը և ծռվելով ձախ՝ կանգ առավ յերկհարկանի սև շենքի առաջ։ Ժամապահը կանգնեցրեց։

— Պոլկովնիկ Թարխանյանի հետ կարևոր գործ ունեմ։

— Մարշ, աչքիս չերևաս,—բղավեց ժամապահը, նայելով հնամաշ շինելով և պատռված գլխարկով պատանուն։ Ծուտիկը կեղծ վիրավորված, ջղայնությամբ գրպանից հանեց խմբապետ Սմբատի տված անցագիրը (Ղամարլու գընալու համար) և խիստ տոնով ասաց.

— Ֆրոնտից եմ գալիս, պարոն Սմբատից հանձնարարական ունեմ, ներս թողեցեք առանց ուշացնելու։—Պահակը նայեց անցագրին, ապա պատանուն զարմանքով աչքի անցկացրեց ոտքից գլուխ և կեղծ հարգանքով ճանապարհ տվեց։

Պատանին համարձակ քայլերով բարձրացավ վեր, մըտավ գրասենյակներից մեկը և աշխատակիցներից մեկին խնդրեց ցույց տալ գլխավոր շտաբի պետի կաբինետը։ Արդեն մթնել էր։ Աշխատակիցը՝ բարեկիրթ մի յերիտասարդ, մոտեցավ պատին, ելեկտրական կոճակը պտտեց։ Լույսերը վառվեցին։

— Այս կորիդորի աջ անկյունից անցեք։ Բայց վոչ, վոչ, նա այժմ այնտեղ չէ։ Ապա «աշխատակիցը» կռացավ մեքենագրուհու վրա, սիրալիր ժպտաց և սկսեց թելադրել։ Նա ըստ յերևույթին իր մեքենագրուհով այնպես էր տարվել, վոր չնկատեց, թե ինչպես անծանոթ պատանին անցավ կորիդորը, զգուշությամբ շտաբի պետի կաբինետի դուռը բացեց և ներս մտնելուն պես ներսից կողպեց։ Թե ինչ ավերածություն էր անում նա փակ կաբինետում, վոչ վոք չիմացավ։ Միայն յերբ դուրս յեկավ, դըռան չրխկոցից «աշխատակիցը» վեր թռավ և սարսափած բղավեց.

— Այդտեղ ի՞նչ գործ ունեք:

— Հեչ, ուզում եմ գնամ, դուռը չեմ գտնում,— չքմեղացավ պատանին: «Աշխատակիցը» նրա հետ գնաց դուրս և շենքի յերկար կարիդորի մյուս ծայրում կանգնած պահակին մատով կանչելու նշան արավ:

Պահակը մոտեցավ և անցագիր պահանջեց:

— Չունեմ:

— Առանց պրոպուսկի դուրս չեմ թողնի:

— Դե գնանք կամենդանտից վերցնեմ:— Իջան ներքին հարկը: Ծուտիկը մեկ էլ շոշափեց գրպանի թղթերը և հանդարտ՝ ձեռքը մեկնեց պատին ու պատեց ելեկտրական կոճակը: Լույսերը հանգան: Մինչ պահակը բղավեց ու շշկված սկսեց պատերը շոշափել, Ծուտիկը բաց պատուհանից իրեն գցեց մութ մի սենյակ, այնտեղից էլ հետևի պատուհանից թռավ ցած և անհետացավ հարևան տան բակում:

ՓՐԿԵԼ ՁԱԽ ԹԵՎԸ

— Իսկ քո կարծիքով կարո՞ղ ենք քաղաք մտնել, —հարցրեց Ավխը պատանուն, կարծես թե հետը կատակելու համար: Ծուտիկը իսկական ռազմագետի տեսք ընդունեց և դրական պատասխան տվեց: Նա իրեն հմուտ հետախույզ համարելով, այն կարծիքն եր հայտնել, վոր թշնամին պատրաստվում է փախչելու, վորովհետև այդ են վկայում ռազմամթերքի սայլերի շարանն ու մինչև 50 տարեկան քաղաքացիների մոբիլիզացիան:

— Քանի մարդ տուր, ընկեր Ավխ, ես բոլեկյս դըրանց պետությունը տապալեմ,— ասաց նա խնդալով: Ավխը բարեսրտությամբ ժպտաց:

— Այս անգամ, սիրելիս, սխալվել ես: Իսկ քո բերած դոկումենտներն ուրիշ բան չեն ասում: Թեև կարիք չկար ասելու, բայց իմացիր, թե ինչ արժեքավոր բաներ

ես բերել: Այ, օրինակ, այս ռուսերեն թուղթն ասում է, վոր պոլկովնիկ Թարխանյանի կարգադրությամբ, Ախտայի շրջանից խմբապետ Աղաբեկը իր 300 ձիավորներով պետք է ժամը 4-ին լինի Փարաքար գյուղում, վորտեղից պետք է հարձակվի մեր ձախ թևի վրա յեվ շրջապատի կարմիր բանակը: Ո՞ւրեմն: Ի՞նչ կեզրակացնես: —Ծուտիկը՝ կմկմաց:

— Հապա՛, սիրելիս, հիմա ճիշտ քո հակառակը՝ յես յեզրակացնում եմ, վոր թշնամին մեզանից առայժմ ուժեղ է և ռուսական զորամասերը հեռու չեն: Չէ՞:

— Հա՛, նոր հասկացա. Թե չէ նրանց Աղաբեկը Ախտայից չեր գա մեր ֆրոնտը:

— Այդպես, ռազմագետ դարձիր, Ծուտ ջան, այդպես...

Ճիշտն ասած Ծուտիկին հենց ենպես քեֆի համար եյին խոսեցնում և զվարճանում եյին պրիմիտիվ ու ղազախփարչինի «ռազմագիտության» համար: Միայն նրա բերած տվյալներն իրոք վոր անգնահատելի եյին: Այդ տվյալների հիման վրա շտաբը վորոշեց քաղաք չմտնել և Ալոփի վաշտը շտապ ուղարկել ձախ թևը:

Հաջորդ օրը հեռախոսը հայտնեց՝ «խմբապետ Աղաբեկի գրոհը յետ է շպրտված: Գերված է 50 ձիավոր յեվ չորս թեթև գնդացիր: № վաշտի հրամանատար՝ Հակոբ ՂԱԶԱՐՅԱՆ:

*
* *

Յերկու օրից հետո մեր գունդը, քաղաք մտնելու ուժ չունենալով, նահանջեց Ավշար և ապա, գունդը՝ վորպես ֆրոնտի ամենամարտունակ զորամասը՝ տեղափոխվեց Բոյուք-Վեդու ֆրոնտը: Այս անգամ կռիվը տաքացավ լեռներում, դաշտավայրերում հալվող ձյան վրա...

Անասելի տանջանքներ կրեցինք այդ լեռներում։ Բոյուք-Վեդին յերեք անգամ ձեռքից ձեռք անցավ։ Վերջին անգամ գյուղը մեր ձեռքին եր։ Բայց թշնամու ուժերի ու մտադրությունների մասին վոչ մի տեղեկություն չունեյինք։

Այդ 1921 թվի մարտի 17-ին եր։ Հերոս պատանին նորից մագլցեց զառիվայրերը, կուզեկուզ անցավ քարերի արանքով, փորսող տվեց հարթավայրերում, պառկեց առուներում և հենց այդ որը թշնամու թիկունքում իր սովորականի պես սկսեց մերթ բախչաներից ցախ հավաքել, մերթ ձյան տակից նոր գլուխը հանող ձնծաղիկը հանել արմատից։

Ճիշտն ասած՝ յես էլ չեմ կարող ասել, թե նա ինչպիսի հնարքներ է բանեցրել, բայց գնդի հրամանատար ընկ. Բաղդասարյանի վկայությամբ Ծուտիկը հենց նույն որը պատռել է ֆրոնտը, ներկայացրել է իրեն մանրամասն տվյալներ թշնամու ուժերի մասին և պնդել է, վոր թշնամին Բոյուք-Վեդիի վրա հարձակվելու հաստատ մտադրություն ունի։

Չնայած մեր ձեռք առած միջոցներին՝ հաջորդ որը մենք գյուղը հանձնեցինք ուժերով գերազանց թշնամուն։ Վերջին գրոհի եյինք պատրաստվում։ Մյուս որը գրոհելու եյինք ամբողջ ճակատով մեկ՝ այն հաշվով, վոր թշնամուն յետ շպրտենք Բոյուք-Վեդիից և գրավենք դեպի Յերևան ընկնող ամրությունները։

ՎԵՐՋԻՆ ԳՐՈՀԻ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այդ որը տենդային դրության մեջ եյինք։ Բաժանե-
ցին վերջին հացը և մորթեցին վերջին յեզը։ «Կապտորը»
նույնիսկ կասյոններով գինի յել բաժանեց։ Պինդ կերանք
ու ձյունից նոր ազատված բլուրների վրա քոչարին քաքե-
ցինք։ Դիմացի բլրի վրա հակառակորդի առաջավոր ջոկե-
րը զարմանքով դիտում եյին մեզ։
Մենք սկսեցինք ձայն տալ ու խոսել նրանց հետ։
— Դեռ կորեկ եք ուտում — ծաղրանքով հարցրին հա-
կառակորդ բանակից։
-- Իսկ դուք ինչ եք ուտում. — պատասխանեց մերոն-
ցից մեկը։
— Յերկու փունտ ու կե՛ս... յերկու փունտ ու կե՛ս...
— Յերկու փունտ ու կե՛ս... յերկու փունտ ու կե՛ս...
սեւնկի, սեւնկի հաց... — բղավեց դաշնակցական զինվորն ու
մի կտոր հաց (գույցե և քար) սկսեց ճոճել օդում։
— Դրա համար եք մի շնչում քառասուն վերստ ճըր-
դում, — կծեց Մանուկը։ Տղերքը հռհռացին։
— Տղերք, լավ չի, կվիրավորվեն, նրանց պետք է
մեր կողմը քաշել, — ասաց Ակոփն ու առաջ գնալով, քաղցր
գրույցի բռնվեց նրանց հետ։ Նրանք ճիշտ է, չհանձնվե-
ցին, բայց տրամադրություններից յերևում եր, վոր մեզ
վրա կրակելու վոչ մի մտադրություն չունեն։

ՏՈՆԱԿԱՆ ԳԻՇԵՐԸ

Հենց այդ գիշեր Ծուտիկն ու Հայկոն ջրիներով փամ-
փուշտ եյին կրում դիրքերը։ Վերջին անգամ նրանք յեկան
ու պատապարվեցին փոսում կուչ յեկած մի խոշոր վրա-

նում, ուր տեղավորված եր շտաբը։ Հրամանատարները ննջում եյին, իսկ զինկոմը հենվել եր թամբին ու ծխում եր անընդհատ։ Շուտով նա յել քնեց։ Ծուտիկը պառկեց խոնավ հատակին և փորձեց քնել։ Ցուրտ եր ու թաց։ Լեռներից յեկող սառը քամին անարգել թափանցում եր վրանի ներսը։ Կես քուն, կես արթուն նա ինչ վոր տզզոց լսեց։ Տելեֆոնն եր զանգահարում։ Փողը դրեց ականջին ու սկսեց լսել։ Ապա ձայն տվեց.

— Ընկեր զինկոմ, ընկեր Իշխանյան։—Զինկոմը զարթնեց։—Ի՞նչ ա նշանակում--Երիվանի կրասնիի զանյալի:

— Ի՞նչ, ի՞նչ,—վեր թռավ զինկոմն ու փողակը խլելով, դրեց ականջին, ապա հուսախաբված ելի ցած դրեց։

— Կատակի ժամանակ ես գտե՞լ,—ասաց նա։

— Խաչը վկա, ընկեր զինկոմ, տելեֆոնը ասաց, այ, այ, հիմի յել ա ասում,—ասաց նա փողակը զինկոմին տալով։

Զինկոմը փողակը ականջին դրեց, յերկու բառ ռուսերեն ասաց և հանկարծ ուրախությունից գրեթե ճչաց.

— Սարկիսո՛վ, Մուշե՛ղ, տավարիշչի... վեր կացեք, շան վորդիք, դայոշ Երիվան։

Վրանի անկյուններից, թումբերի արանքներից քնաթաթախ բարձրացան կարմիր հրամանատարները և դանդաղությամբ հասկանալով բանի եյությունը, ուրախ-ուրախ դուրս թափվեցին վրանից։ Մի քանի րոպե չանցած՝ ամբողջ գունդը վոտքի վրա յեր։ Իսկույն խարույկներ վառեցին բլուրների վրա։ Գարմոշկայի, սազանդարի ու տեղական պարկապզուկի աններդաշնակ ձայները խառնվեցին խառնիխուռն յերգերին։ Խարույկների շուրջը խմբերով սկսեցին քոչարի թռչել ու ամուր գարկերով գետինը դողացնել։ Բոցը բարձրացավ ու լուսավորեց շրջակայքը։ Դիրքերում շվարած թշնամու համար մենք գիշերվա այդ պահին, բարձր բլուրների վրա և վողողված խարույկի լույսով յերևի պար բռնած չարքերի եյինք նման։

ՎԵՐՋԻՆ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ

Լուսաբացին սկսեցինք գրոհը ամբողջ ճակատով և կես ժամ չանցած՝ գրավեցինք յերկու շարք բլուրներ։ Թշնամին ծածկվեց գյուղի գորշ պատերի հետևը, գնդացիրները հանեց տանիքներն ու սկսեց արճճի կարկուտ տեղալ բլուրների վրա։

Բլուրների հետևից սկսեց գործել կարմիր հրետանին։ Ռումբերը սկսեցին վոռնալով ճեղքել մեր գլխավերևի օդն ու խփվել պարսպների և ճանապարհների պատերին։

Բալշևիկ թնդանոթաձիգը հատուկ խնամքով աշխատում եր տներին վոչ մի վնաս չպատճառել։

Մոտ յերեսուն հոգուց բաղկացած մի խումբ դուրս յեկավ բլրի յետևից և բարձրացող «ուռաներով» բլրի լանջով վազեց դեպի բլրի տակի ձորը։ Թշնամին բլուրների վրա գնդացիրներից այնպիսի կրակ բացեց, վոր այլևս շարժվել անհնար եր։ Այդ ջոկը ձորում կավի բռնվեց գյուղից ցած հոսող թշնամու հետ։ Հետ դառնալ հնարավոր չեր, բլրի լանջին բոլորին կկոտորեյին։

— Ողակներո՜վ, հառա՛ջ։—Հրամայեց Ակոփն ու կարգադրեց սաստկացնել կրակը՝ օգնության գնացող ողակներին պաշտպանելու համար։ Մի քանի ողակներ պառկելով, վեր կենալով—առաջ վազեցին։

— Տո, գլուխդ ցած, Մանուկ,—բղավեց Ծուտիկը և հենց վոր ընկերոջ փեշից քաշեց, սա անիվի տակն ընկած արևածաղկի կոթի նման ծալվեց։ Հրացանը ձեռքից վայր ընկավ։ Ծուտիկն արագ շալակեց ընկերոջն ու քարշ տալով, վազեց դեպի ձորը։ Հանկարծ նրա ձախ վոտքը յետ թռավ և նա արյունաթաթախ ընկերոջ հետ գլորվեց ցած ու ընկավ մի քարի հետև։

Նա ցավագին նայեց ծունկից թափվող արյան վրա և աչքն ընկավ ընկերոջ խամրած բիբերին... «Խեղճ Մանուկ, արդեն հոգին ավանդեց», մտածեց նա և քարի հետև թաք-

նվեց։ Հանկարծ բարձրագույն «ուռա»-ներից թնդաց ձորը։ Նա գլուխը վեր բարձրացրեց և տեսավ գյուղի հետևի բլուրներից լավայի նման գյուղը հոսող ռուսական ավխնամերկ զորքերին և բերկրանքով գոչեց՝ «ուռա՜»...։ Ապա նրա աչքերի առաջ կարծես ճաճեր վազվզացին և կոպերը ծանրացան։ Վերջին վայրկյանին նա լսեց Հայկոյի ձայնը, վոտքի վրա զգաց նրա ձեռքի հպումն ու ընկղմվեց քաղցր անըրգայության մեջ...։

Իսկ գիմացի լանջին, գլխաթափված թշնամու աչքի առաջ, ուրախության արցունքն աչքերին հայ ու թուրք բանակայինները գրկախառնվում եյին ռուս մարտիկներին, նրանց, վորոնք ճղեցին Ախտայի լեռների մարդաբույ ձյունն ու գազազած սամումի նման Բոյուք-Վեդի հասան։

Վերջին ու վճռական գրոհը ավարտվեց։ Մարտիկներն այդ գիշեր քաղցր ննջեցին հաղթանակի ուրախ ժպիտը դեմքերին։

Միայն հերոս պատանին եր կուտակվում վիրավոր վոտքի ցավից ու հետախույզ ընկերոջը խնդրում.

— Հայկո, ջո՜ւր...

*
* *

Յերեք որ հանգստանալուց հետո Յերևանից գունդը Դարալագյազի ֆրոնտը գնալու հրաման ստացավ։

ԿԱՐՄԻՐ ԴՐՈՇԻ ՇՔԱՆՇԱՆԸ

Զորասյուները կանոնավոր քառակուսիներով կանգնած են նոր կանաչած դաշտում։ Տաքուր ավխները փայլփլում են գարնանային արևի տակ։ Որկեստրն ուրախ յեղանակներ է նվագում։ Գնդի հրամանատարը կապույտ նժույգը հեծած՝ առաջ յեկավ և ընդունեց պարադը։

Մուզիկան սկսեց «Տուրեցկի մարշ» նվագել։ Ձիերն սկսեցին անհամբերությամբ գետինը դոփել։

Կանգնեց գիլ ծղրոտց և գնացքը կանգ առավ կայարանում։ Յերկու հոգի վիրավոր պատանու թևերն ընկած բարձրացրին վագոնի աստիճանների վրա։

Հրամանատարն իջավ ձիուց, կանգնեց վագոնի աստիճաններին, ձեռքը դրեց վիրավոր պատանու ուսին և դառնալով զորասյուներին, գիլ ձայնով սկսեց.

— Ընկերնե՛ր, թշնամու գնդակը մեր շարքերից ժամանակավորապես հանում է մեր անփոխարինելի հետախույզին, մեր բոլորի սիրելի [illegible]ին։ Թույլ տվեք Ձեր բոլորի և Ռազմա-Հեղափոխական Խորհրդի անունից շնոր-

ՀՍՍՌ-Арм. ССР

հակալություն հայտնել ընկ. Ծուտիկին, հեղափոխությանը կատարած անգնահատելի ծառայության համար։ —Ապա նա պայուսակից հանեց Ռազմահեղափոխական Խորհրդի որոշումն ու կարդաց բարձր ձայնով ու հատ-հատ՝

«Գնահատելով ընկեր Ծուտիկի կատարած հերոսական աշխատանքը Կամարլվի ֆրոնտում՝ Ռազմահեղափոխական Խորհուրդը որոշեց միջնորդել Կենտգործկոմի առաջ ընկ. Ծուտիկին պարգևատրելու ԿԱՐՄԻՐ ԴՐՈՇԻ ՇՔԱՆՇԱՆՈՎ»։

Եվ մինչ հրամանատարը հուզված պատանու՝ ճակատն էր համբուրում, հազար հինգ հարյուր բերան միանգամից «ուռա» որոտացին և որկեստրը ցնցող մի մարշ նվագեց։

Երրորդ զանգը խփեց։ Շոգեշարժը սուլեց և փնչալով սկսեց շարժել պողպատյա բազուկները։

— Հայկո, բարձրացիր, դու պետք է խնամես նրան, —հորդորեց հրամանատարը։

— Բա Դարալագյազը, բա...—նա քիչ էր մնում ասի՝ «բա Արմենակին չտեսնեմ», մեկ էլ կարմրեց և ներքին հուզմունքը զսպելով, բարձրացավ վեր։

Ծուտիկը նրա օգնությամբ գլուխը հանեց վագոնի պատուհանից և դեպի Դարալագյազ շարժվող զորամասերի հետևից գոչեց ինչքան ուժ ուներ.

— Ընկերնե՜ր... յես դեռ կգամ, կգամ...- Նրա ձայնը խլացավ յերկարատև ուռաների և գնացքի անիվների խուլ աղմուկի մեջ։

———

Առողջանալուց հետո Ծուտիկը մասնակցեց Դարալագյազի կռիվներին և շատ ոլժներ բերեց խմբապետ Յապոնի գլխին։ Դրա մասին կպատմենք մի այլ անգամ։

(2) 713-1930թ

Գինը 2 ռ. 50 կոպ.

В. Ананян

В ОГНЕННОЙ ЦЕПИ

Госиздат ССР Армении
Эривань 1930

ՀՀ Ազգային գրադարան
NL0327804